

ՀՀ ԳԱԱ Կ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԲՆԱՏԻՏՈՒՏ

ԶԱՐՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ-2007

Հանրապետական գիտական նուսաւորանի գեղուցումներ
(Երևան, ապրիլի 3-4, 2007 թ.)

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р.АЧАРЯНА НАН РА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ-2007

Доклады республиканской научной сессии
(*Ереван, апрель 3-4, 2007 г.*)

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA

JAHUKIAN READINGS-2007

Republican Scientific session reports
(*Yerevan, April 3-4, 2007*)



YEREVAN
<VAN ARYAN>
2007

ЕРЕВАН
“ВАН АРЬЯН”
2007

ՀՀ ԳԱԱ հ. ԱԺԱՊՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԲՆԱՏՔՆՈՒՅՑ

ԶԱՌՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ-2007

Հանրապետական զիտական նստաշրջանի գելուցումներ
(Երևան, ապրիլի 3-4, 2007թ.)



ԵՐԵՎԱՆ

ԱՎ

ՀԱՅԱՍՏԱՆ
2007

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ԴՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.23
Զ 229

ԶԱՅՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ-2007
Զ 229 Դանրապետական գիտական նստաշոջանի գեկուցումներ
(Երևան, 2007 թ., ապրիլի 3-4).-Եր.:
«Վան Արյան», 2007, 192 էջ:

Խմբագրական խորհուրդ՝
Լ. ՂՈՎՐՅԱՆԻՍՅԱՆ (Նախագահ),
Ա. ԳԱԼՈՅՅԱՆ, Ս. ՊԱՊԻԿՅԱՆ,
Ն. ՂՈՎՐՅԱՆԻՍՅԱՆ, Ն. ՍԱՐԳՍՅԱՆ,
Ռ. ՈՒՌՈՒՏՅԱՆ (պատասխանատու քարտուղարներ)

Զ 4602020100
854(01)2007 2007 ԳՄԴ 81.23

ISBN 978-99941-67-66-1

© ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտ, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աղարիսյան Մելադա ՀԱՅԵՐԵՆԻ ԳԼՈՏԱԼԱՅԱԾ ԲԱՂԱՍՅԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՔԸ 7
Ավագյան Արմենուի ԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱՄԱՏԱՅՅՈՅՉԱԿԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
Ավետիքյան Տիգրան ՏՈՎՈՒՄՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ 24
Բարսեղյան Ամայա ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԿԱՊԱՅՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 29
Սևալի Արդին Անվան ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ 33
Բօդյանյան Մարին ՄԵԼԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ
ԼԵԶՎԱԿԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ 33
Գալստյան Անահիտ ՀԱՅԵՐԵՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՄԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑԸ 42
Գալստյան Մերգել ԲԱՅԱԿԱՆ ԲԱՈԱԿԱՅՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԵՐԱՅԱԿԱՆ
ԿԱՌՈՒՅՆԱՅՑԲԵՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՆՈՒՄ 49
Գրիգորյան Սովոաննա ՆՈՐԱՀԱՅՅԱՅ ԲԱՋՔՐ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՑՈՒ ՆԵՐԲՈՂՅԱՆՈՒՄ 57
Գևորգյան Գայանե ՀԱՅԵՐԵՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱԽՎԱԼԻՆ ՑՈՒՅՑԱՆՆԵՐԸ 63
Դալայան Տոք ՀԱՅ-ՕՍՄԱԿԱՆ ՄԻ ՖԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՈՒՐՁ 72
Զարարյան Հավիաննեն ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆԵՐԵՎԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՍՏԱՏ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ԶՈՒԳԱՎԵՆՎԵՐԸ ՄԱՍԱՆԿԱԾԻՔ ՀԱՅԵՐԵՆՆՈՒՄ 79
Խաչատրյան Օֆելյա ՄՈՎՎԵՆ ԽՈՐԽՆԱՅՈՒ «ՀԱՅՈՅ ՊԱՄՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԱՎԱՅՅՈՒ 87
Հանեսյան Անահիտ ԲԱՌԱՎԱՆԿԱՆ ԿՎՏԱԿՈՒՄՆԵՐ
(Բ.Ի.թ, Գ.Ա.Ի.թ, Խ.Բ.Ի.թ, Կ.Ն.Ի.թ) 93
Հովհաննեսյան Լավիենտի ԵՐԱԾԾՈՒԹՅՈՒՆ ԽԱՎԱՏԱՅԻՆ ԽՄԻ
ԲԱՅԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ 101
Հովսեփյան Լիճան ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՆԻ ՁԵՎԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՔՆԵՐՆ ՈՒ ԱԿՁԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 112
Մեսրոպյան Հայկանոց ԱՄԱՍԻՐ ԲԱՌԱՎԱՆՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՆԻ ԲԱՐՄԱՆՆԵՐՈՒՄ 118
Միքայելյան Ժաննա ԳՈՅԱԿԱՆԻ ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ
ԿԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՈՆՆԵՐՈՒՄ 123
Միսիրարյան Գայանե ԹԱՅՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՍՄԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԻ-ԶԱՍՄԱԿԵԱՆ ՀԱՅ ԱՇՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ 129
Մկրտչյան Նելլի ԲԱՋԵՐԻ ԽԱՎԱՏԱՆԵՐԻ ՍԵԿՆԱԲԱՆՈՒՄ ՖՐԱՇԻՆԿՈՍ
ՈՒ-ԱԼՌԱՅԻ «ՀԱՅԵՐԵՆՆ-ԼԱՏԻՆԵՐԵՆ ԲԱՌԱՎԱՆՈՒՄ» 137
Չազոյան Գոհար ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒԹԵՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԾ
Ա.ՏԵՐՏԵՐՅԱՆԻ 6-րդ ՄԻՒԽՈՆԻԱՅՈՒՄ 142
Պապիկյան Միքա ԲԵՄ ՏԵՐՄԻՆԻ ՄԱՍԻՆ 147
Սարգսյան Արտեմ ՊՈՒՐՊՈՒՐ ՊՈՒՏԱՆԱ ՀԱՅԵՐԵՆ ԾԱՎՈՍԱՆ ՀԱՐԹԻ ԾՈՒՐՁ 155
Սարգսյան Նկեր ՊԱՏՈՒՄԻ ԺԱՄՐԸ ԽՈՍԿԱՅՅՈՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ 160
Սահմարյան Տարիկ ԿՐԿՆԱՍԵՐ ԲԱՅԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՆՈՒՄ 165
Միմնյան Նեկոտք ԲԱՌԱՎԱԿԱՆԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ
ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 171
Տիյան Սուամենա ԽԱՏԵՐՁԵՅՄԻ ՀԱՅԵՐԵՆ ՏՄԵՐԵՐԱԿ ՄԱՍԻՆ 175
Ուռուսյան Ռոբերտ ԼԵԶՎԱ ՁԵՎԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՀԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ 179
Ուռուսյան Ռոբերտ, Սահմարյան Նինա
ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԼԵԶՎՈՒՄ 187



ՀԱՅԵՐԵՆԻ ԳԼՈՏԱԼԱՑԱԾ ԲԱՂԱՇԱՅՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Սեպտյան Աղաքելյան
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լինգվի ինստիտուտ

Հայ լեզվաբնորյան մեջ զլոտալացած բաղաձայնների հարցը շատ քիչ դեսպերում է շոշափվել, որի հետևանքով լուսերեն (նաև միջազգային) բառության մեջ այս հայության մասին առաջարկությունը նոյնական է: Կամ այս հայության մասին առաջարկությունը առաջարկության մասին է: Այս հայության մասին առաջարկությունը առաջարկության մասին է: Այս հայության մասին առաջարկությունը այս հայության մասին է: Այս հայության մասին առաջարկությունը այս հայության մասին է: Այս հայության մասին առաջարկությունը այս հայության մասին է:

Տերպայնացումը հնչյունի լրացական հասլանիշ է՝ ըստ արտաքերման տեղի, հետևաբար սպազմի միավորը երկֆոկոս է [Յնդեր, էջ 135-136]: Այսինքն՝ տվյալ հնչյունի արտաքերման հիմնական տեղի ձևավորմանը, որը սովորաբար մեր զգայարանների միջոցով տեսանելի և ընկալելի է լինում, զուգահեռ մասնակցում է հնչարապերական ապարատի մեջ այլ մաս ևս, որի ճշգրիտ գործունեությունը կարելի է որոշել սուրբերի օգնությամբ:

Լեզվաբնական գրականության մեջ խնդրո առարկս բաղաձայնների նկարագրությունները երբեմն միմյանց չեն համապատասխանում, և դրանց բնույթը մնում է շղարշով պատված: Դրա պատճառը, հսկանաբար, այն է, որ այդ հնչյունները, ինչպես մասնագետներն են նշում, դժվար են արգում փորձառական հետազոտության, քանի որ դրանք ուսումնասիրվում են ունեազնեազբության մեջողով [Յնդեր, էջ 136]: Այսուամենայնիվ, եղած կարծիքները ի մի բերելով, կարելի է որոշ պատկերացում կազմել այդ հնչյունների հիմնական հատկությունների մասին: Տերպայնացած բաղաձայնների արտասանության ժամանակ ձայնալարերը հավկում են միմյանց և փակում քաքերից եկալ օդի ճանապարհը: Այդ հնչյունների իրացումը տեղի է ունենում երկու պայրյունով՝ առաջինը՝ բերանի համապատասխան հատկածում՝ հիմնական արտաքերման տեղում, և երկրորդը՝ ձայնածերպում, ինչն էլ նրանց լրացական հատկանիշն է: Այսպիսի գործընթացը զբերե բացառում է ձայնալարերի քրոռումը, որի արդյունքում սուսպիս են խուլ բաղաձայններ [Dictionnaire, էջ 182, 237]:

Հաակապես անցյալ դարի լեզվաբնական հեղինակները նշանակած տերմիններին որպես հոմանիշներ օգտագործվել են նաև ֆարինգալ, ֆարինգալազո-

ваниհայ, Փարինգալաւազաց բառուծելերը, բանի որ, ինչպէս երևում է, այդ հնչյունների արապքերությանը մասնակցում է ոչ միայն ձայնածերպի, այլ նաև ըմսյանը, որի պատերը լարվում են, և տևի է ունենում որոշ չափի կծկում [Յնիդեր, նոյն տեղում]: Ուրեմն՝ այդպիսի լրացական հաստկանիշ ունեցող բարդաւայնները կարենի է, կոչել նաև ըմպանացած, գործընթացը՝ ըմպանացում, իսկ հիմնական հատկանիշով բնութագրվողները՝ ըմպանային: Այսօր ամենից լայն շրջանառվող հոմանիշը զբաժանվում է (ուս. առեւտ) անդրմինն է, որը ծագում է լատիներեն շյետո, -եր բայից և նշանակում է «նետել, դուրս զցել» [անս Լատիներուսկան շաբաթ]: Հարմար բարգմանուրյուն չգտնելով՝ բառն օգտագործում ենք անզլերեն արտասանուրյամբ՝ էջեկտիվ:

Հայերենի, այսպէս կոչված, պարզ խոպ հպակասների և կիսաշփականների (ալ, կ, ա, ծ, ճ) շարքի հնչարսարերական յուրահատկությունների սարքերությունները բարբառներում միշտ էլ ընկալելի են եղել: Դեռ 19-րդ դարի վերջերին որոշ լեզվաբաններ (Սիվերս, Մեյե, Աճայշտի) ուշադրություն են դարձրել արևելյան բարբառների (հատկապես Արարատյան) հիշյալ խոլերին, որոնք, ըստ նրանց, չի կարենի նոյնացնել եվրոպական լեզուների համապատասխան՝ իսկապէս պարզ խոպ բաղաձայններին: Դրանք ավելի շունչ նմանվում են հյուսիսկավակասյան լեզուների այդ հնչյուններին: Այս տեսակեալին հայջորդեցին հայերենի արևելյան բարբառներում՝ կովկասյան ենթաշերսի առկայությանը վերաբերադարձ տարրեր վարկածներ:

Կովկասյան լեզուների խնդրո առարկա բաղաձայնները, կարծեն թե, բավարար չափով փորձառական և համակարգային բննուրյան են ենթարկվել: Տարրեր լեզվաբաններ դրանց տարրեր անվանումներ են տվել՝ էջեկտիվ, ֆարինգալ, գլուտալ, արբուլալիվ:

Հ. Աճայշտի, ինչպէս հայտնի է, Փարիզում 19-րդ դարի վերջերին արքա Ռուսովոյի հնչյունաբանական բարուտորիայում առաջին անգամ քննել է հայերենի վեց բարբառային միավաների (Պոլսի, Ասլաներգի, Նուլիի, Շուշիի, Մուշի, Սեբաստիայի) հնչյունները [Աճայշտի, էջ 248-250]: Սակայն հիշյալ բաղաձայնները մեզ ենթարքբերադ տեսանկյունով չեն հետազոտվել՝ համապատասխան սարքերի՝ ոչ բավարար կարողությունների պատճառով:

Հայերենի հնչյուններին վերաբերադ՝ մեզ հայտնի վյուս փորձառական բննուրյունը կատարել է Վ. Ալենը անցյալ դարի 40-ական թվականների վերջերին: Նա ուսումնասիրել է նորջությացի Զ. Ամիրխանյանի խառը իր բարբառով և արևելակայ գրական լեզվով աերատի ընթերցմամբ, որի ժամանակ նոյնպես, ինչպէս երևում է, ի հայտ է եկել այս հաղորդավարի բարբառային արտասանուրյունը: Հեղինակը նրա արտասանած խոլ հպակասները և կիսաշփականները (ալ, կ, ա, ծ, ճ) կոչում են էջեկտիվներ: Նև զանում է, որ բաղաձայնների «էջեկտիվ» շաբթերի ծերպային սլայրյունը (glottal plosion) երբեք շատ ուժեղ չէ, և ավելի բոյլ է բառամիջի անշեշտ փանկի սկզբում»:

«Բատի և շեշտված վանկի սկզբուն, սակայն, ծերաբյնացումը տկնիայադրեան առկա է և ճասամբ նկատելի (թե ոչ ուժեղ) բառափեջում» [Allen, էջ 188]:

Ա. Խաչատրյանը, ի մի քերելով առկա փորձառական հետազոտությունների և իր խակ կատարած նոր ուսումնամիտրությունների արդյունքները, մասնամասն նկարագրել է գրական արևելահայերենի հնչյունները ինչպես առանձին արտասահմանամբ, այնպես էլ խարդում: Նա խնդրու առարկան բաղադայնները համարում է «ուժեղ (լարված) խոլիք» [Խաչատրյան, էջ 91]: Հեղինակը ծերաբյնացումը (բնականացում, էջեկտիվացում)՝ որպես հայերն ինչպատճենացնում ոչ լրացրական, ոչ էլ առավել և, բուն հատկանիշները բննիւնա: Մայսի շնչեղ ծայշենթերի առիրով նշում է, որ Վ. Ալեքսը Նոր Չորդայի բարրախի «այդ հնչյունների յուրահաստուկ առանձնահատկությունը համարում է լուրդյունը (ոչ կոկորդայնացումը), ի տարբերություն պարզ խոլիքի, որոնք նա համարում է կոկորդայնացած (ejective)» [նոյնի, էջ 140]:

Գրական արևելահայերենի արտասահմական նորմները ձևափորվել են իմբնականում Արարատյան բարբառի հնչյունական յուրահաստկությունների հենքի վրա: Ուրեմն ներադրելի է, որ գրական լեզվի պարզ խոլ հայկաններն ու կիսաշփականները ժառանգեն են Երևանի և նրա շրջակա բնակավայրերի բարբառային մնավորների համապատասխան բաղաձայնների հատկանիշները, իսկ վերջինների շարքում որոշ լեզվաբաններ առանձնացնում են նաև բնականացումը: Համեմայնդեպս, լսողությամբ՝ գրական և բարբառային հնչյունների միջև տարբերություններ չեն ընկալվում: Ա. Խաչատրյանը, կարծում ենք, այս հարցին չի անդրադարձել՝ Երևանում նոր մոլարդական համապատասխան փորձարարական հետազոտություններ կատարելու գրեթե անհնար լինելու պատճառով:

Հայերենի խնդրու առարկա բաղաձայնների փորձարարական մեջ այլ ուսումնասիրություն մեզ հայտնի չէ: Մինչդեռ Վ. Խաչանովի և մ՛. Գամկրելիների առաջ քաշած նոր վարկածի համաձայն՝ նեղենքրապական նախավեզվի բաղաձայնական համակարգը ունեցել է ծերաբյնացած բաղաձայններ: Այս առնչությունը լեզվաբանության մեջ հիշյալ հնչյունների նկատմամբ հետաքրքրությունը կարծեն զնալով մեծանում է:

Հեղեփոխական նախավեզվի բաղաձայնական համակարգի վերականգնված ավանդական տարրերակի վերաբերյալ դիտողություններ հաճախ են արվել: Առաջարկվել են և եռաստիճան, և երկաստիճան, ինչպես նաև ծերաբյնացած ու ոչ ծերաբյնացած շարքերով հակադրվող հայկաններ ունեցող կադապարներ, որոնց գործառությամբ հեղինակները, բվում է, կարողանում են և. և. Լեզվների հնչյունական համակարգերուն առկա անհամապատասխանություններում որոշակի օրինաչափություններ տեսնել: Սակայն այդ վարկածները նեղենքրապականների կողմից լայն ընդունելություն չեն գտնել՝ դրանց բավարար չսկսով իմբնավորված չփնելու պատճառով:

ԹՇ. Գամկրելիձեն և Վ. Խվաճովը անցյալ դարի 70-ական թվականներին տարրեր հոգածներով սկսեցին առաջ բաշել մի նոր վարկած, ըստ որի, ինչպես նշվեց, հ.-ե. նախալեզվում գործառել է բաղաձայնների ծերպայնացած հավականների շարք ունեցող համակարգ: Նրանք իրենց տեսակետները ավելի մարդաբան հետազոտություններով և հատկապես զանազան լեզուների ախարսանական ու պատճառահամեմատական տվյալներով փաստրված ներկայացրին ծավալուն մենագրությամբ [Գամկրելական աշխատանքները]: Նրանց վարկածի իշխանագործան, այսպէս կոչված, մեխը հ.-ե. լեզուներում նրկչրբանային սլարդ ձայնեղ հավականի զրերե բացակայությունն է: Այդպիսի բաղաձայնի կորուստը, ինչպես ախարսանական ուսումնասիրություններն են ցոյց տալիս, բնորոշ է ծերպայնացած հավականներով շարքին: Հետևաբար հ.-ե. սլարդ ձայնեղ համարվող հավականները իրականում խոլ ծերպայնացած (էջեկտիվ) բաղաձայններ են եղել: Մյուս կողմից, շնչեղ ձայնեղ հավականներ, որոնց առկայությունը հ.-ե. նախալեզվում անառարկելի է համարվում, ունեցող համակարգում, ըստ ախարսանական տվյալների, մեծ հաճախականությամբ գործառում է նաև համապատասխան շնչեղ խոլերի շարքը: Այս ամենը հաշվի առնելով՝ հ.-ե. նախալեզվի հավական բաղաձայնները կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

(p') b^h p^h
t' d^h t^h
K' G^h K^h

Այստեղ ծերպայնացած շարքում ը'-ն ընդգրկված է մեծ վերապահությամբ [Գամկրելական աշխատանքները, տ. I, էջ 12-15]:

Հեղինակները, հենցելով Վ. Ալեքի երաժարակած Նոր Զույգայի բարբառի բաղաձայնների վերը նշած փորձարարական հետազոտության արդյունքների վրա, գտնում են, որ հայերենի բաղաձայնական համակարգը հ.-ե. լեզուների մեջ ամենահաճախականներից մեկն է: Նրանք գրում են. «Հնդկական հավականների ծերպայնացած շարքը հայերենում արտացոլվել է որպես ոչ ձայնեղ հավականների շարք, որոնք հայերենի՝ մի շարք ժամանակակից բարբառներում հանդես են զալիս որպես ծերպայնացածներ: Գոյուրյուն ունի ներադրություն, որ իին հայերենում նոյնպես հավականների այդ շարքը ծերպայնացած էր: Եթե դա ճիշտ է, ապա հայերենի ծերպայնացածների շարքը պետք է համարել հնդկարպական ծերպայնացած հավականների անմիջական շարունակությունը» [Գամկրելական աշխատանքները, տ. I, էջ 41]: ԹՇ. Գամկրելիձեն և Վ. Խվաճովը զանում են, որ հայերենի հնատախությունը տվելի վստահորեն արտահայտվում է հնդկարպական շնչեղ ձայնեղների գործառության առումով: Հայերեն բարբառներում շնչեղ ձայնեղ հավականները և կասաշփականները, ինչպես և հ.-ե. նախալեզվի տարածքային այն տարրերակում, որից զարգացել է իին հայերենը, զործառում են

բառասկզբում, իսկ մաքոր ձայնեղմերը՝ բառամիջում: Այդպիսով հ.-ե. հպականիները հայերենում արտացոլվել են հետևյալ ձևով:

I	II III →	I	II III
(p') b ^h /b p ^[h]		p ^[l] b ^[h] p ^h	
t' d ^h /d t ^[h]		t ^[l] d ^[h] t ^h	
K' G ^h /GK ^[h]		K ^[l] G ^[h] K ^h	

Ինչպես տևանում ենք, հայերենում հ.-ե. բաղաձայնների տեղաշարժ տեղի չի տնօւցել՝ *t'om -> տուն, *d^hur -> դրոն (դ-ն շնչնդ է), * p^{[h]et-} > հետ, p^{[h]ot-} > ուտ և այլն [Գամկրելիդե, ռ. I, էջ 41- 45]:

Թ. Գամկրելիների և Վ. Խվանովի առաջ բաշխծ այս տեսուրյունը, որ հնդկրոպարանների շրջանում լսյն արձագանք զտավ, ոչ բռլորն են ընդունում: Այնուամենայնիվ, թիչ չեն նաև դրա կողմնակիցները: Ը. դր Լամբերտերին, օրինակ, գտնում է, որ այն հնդկրոպարանուրյան բնագավառում «այ խական կոպենինիկոսյան եեղաշշրջում է» [Lamberterie, էջ 31]:

Հարզող Ֆլեմինգը, սակայն, այդ տեսուրյունը կասկածի տակ է դնում, քանի որ ծագումնարանական խնդիրներն, ըստ նրա, չի կարելի լուծել տիպարանական մերոդներով: Իր տեսակետոց նա աշխատում է իմճճավորել դարձյալ հայերենի ծերպայնացած բաղաձայնների օրինակավ:

Հ. Ֆլեմինգը, ինչպես ինքն է գրում, հինգ տարի շարունակ ուսումնասիրել է տարբեր լեզուների ծերպայնացած բաղաձայնները և կարգանում է ցանկացած լեզվում լսողությամբ հստակորեն որոշել դրանց առկայությունը կամ բացակայությունը [Fleming, էջ 158]: Հեղինակը հետագառն է ԱՍՆ ծնված և կրթուրյան ստացած մի հայուսու խոսքը, որի նախնիները գաղղել են Սալմասափից և ընտանիքում այսօր էլ խոսում են հարազատ բարբառով: Նա իր հաղորդակարի կողմից ընձեռած նյութը համեմատել է մեկ այլ՝ արևմտահասյերենով խոսողի հնչյունական յուրահատկությունների հետ:

Հ. Ֆլեմինգը, ինեվելով իր լսողական ընկալման վրա, Սալմասափի Ալուշիի արարերությամբ այ, կ, տ, ծ, ՛ բաղաձայնները բնուրագրում է որպես ծերպայնացածներ: Ըստ նրա՝ այդ հնչյունները ակնհայտորեն նման են ամեարիքի՝ Երովաշիայում գործառող սեմական լեզվի համապատասխան բաղաձայններին, որոնք նա ժամանակին լսվ ուսումնասիրել է [Fleming, նոյն տեղում]:

Բարբառախոսից բաղաձ տվյալները հեղինակը քննել է հայագետ Քերու Վլորսի մասնակցությամբ, և միասին եկել են այն եզրակացության, որ, այսպես կոչված, «Ալուշիի բարբառը» ունի պարզ խուլ, պարզ ձայնեղ ու ծերպայնացած բաղաձայններ [Fleming, էջ 175]: Այսինքն՝ շնչեղ խուլ շարքի անդամները նա համարում է պարզ խուլեր, և այնքան էլ հստակ չէ՝ դարձյալ լսողական ընկալմանը, քն՞ տիպարանական ընդհանրությի վրա հենվելով է որոշում այդ հնչյունների բնույթը: Նա ինքն էլ նշում, որ ծերպայնացած

բաղաձայնները հաճախ ինչուրսյին հակադրություն են կազմում ոչ թե շնչեղ, այլ պարզ խուլերի հետ:

Ուսումնափրուրյան արդյունքներից ելնելով՝ Հ. Ֆլեմինգը կատարում է ուշագրավ եզրահանգումներ: Նա գանում է, որ արևելահայերննի և արևմտահայերննի՝ հստկապես բաղաձայնական համակարգերի տարբերությունները են: Հնագույնը ծերպայնացած բաղաձայններ ունեցող, այսինքն՝ արևելահայ բարբառներն են: «Ալնուշիի բարբառը» նախահայերննին ավելի մոտ է, քան դասական հայերննին: Հեղինակը նոյնական գոտում է, որ հ.-ե. նախալեզուն ունեցել է ծերպայնացած բաղաձայններ: Այդ տեսակետը, սակայն, բխում է ոչ թե ախաբանական վերլուծություններից, այլ ենց ցեղակից լեզուների, ինչպես օրինակ՝ հայերննի ընձեռութ փաստերից: Ընդունելով լեզուների նոստրատիկ ցեղակցուրյան գաղափարը՝ Հ. Ֆլեմինգը հայերնում ծերպայնացած բաղաձայնները համարում է նոստրատիկ լեզվաբնդիմաբարյան շրջանում սեմական ճյուղից մնացած ժառանգություն: Կավկասյան ազդեցությունը հայերննի վրա թիւ հավանական է, քանի որ հայերնում այդ բաղաձայնները ավելի շատ են ու մեծ զործառություն ունեն: Մինչդեռ Երովովիսյի մոտ 70 սեմական լեզուների և «Ալնուշիի բարբառի» բաղաձայնական համակարգները նման են [Fleming, էջ 182-183]:

Քերա Նարսը հայերննի հնչյունաբանությանը նվիրված իր աշխատառությունում քոլորավին նոր մոտեցումով է հետազոտել մեր արդի բարբառների հնչյունական համակարգերը: Ընդհանոր հնչյունաբանության մերազներով թննել է հնչյունների ֆիզիկական ու զործառական հատկանիշները և տեքստային, և համակարգային մակարդակներում: Կատարել է ուսումնամիտուրյան արդյունքներից բխող հետաքրքիր տեսական հետևություններ: Սակայն աշխատանքում լինդր առարկա բաղաձայնների վերաբերյալ մեզ հետաքրքրող տեսանկյունից քննություն չենք գտնում [տես Վաս]:

Հայերննի ծերպայնացած բաղաձայնների հարցը, ինչպես տեսնում ենք, դրաւ է զալիս զուտ հայերննագիտառյան շրջանակներից: Բայց հայերննագիտուրյան սահմաններում անզամ այն բավարար չափավ ուսումնասիրված չէ: Մենք չենք պարզել, թե հայերննի ապահովային ո՞ր միավորներին են հասկանալու բնորոշ այդ հնչյունները, նրանց առկայությամբ ու զործառությամբ համակարգային ի՞նչ յորականակրություններ են ի հայտ զալիս, պատմական ի՞նչ փոփոխություններ կարող են առաջանալ: Ըստ Հ. Ֆլեմինգի, օրինակ, արևմտահայ բարբառներում խուլ > ձայնեղ անցումը պայմանավորված է նաև խուլ հալականների և կիսաշվականների ծերպայնացած լինելու փաստով [Fleming, էջ 158]:

Հրասպարակի վրա այդ բաղաձայններին վերաբերող միայն Վ. Ալենի կատարած՝ մեկ բարբառախոսի կեսդարյա վաղեմություն ունեցող հնչյունների փորձարարական քննության տվյալներն են, որոնց վրա էլ հենվում են հասկանալս օւսար հնչյունափուլութերը: Հ. Ֆլեմինգի ուսումնափրուրյունը, որ-

բան էլ կարեար ներդրում համարենք տվյալ բնագավառում, խնդրի լուծում, բնականարար, չի տալիս:

Արդի և հայերենագիտության, և բնդիան բազես լեզվաբանության տեսանկյունից հրատապ է հայերեն բարբառային մխավորների՝ հետևապես հեշտությամբ բազմակողմանի փորձարարական հետազոտության ներարկելը: Ճիշտ է, տարիների ընթացքում բավականին բարբառային ոտուննասիրություններ են հրատարակվել, ԳԱԱ լեզվի խմսիտուսում մեծ բանակորյանք համապատասխան ճյուրեր են հավաքվել, սակայն հայերեն բարբառային մխավորների աստիճանական մակացման հետևանքով սրդեն կորցնում ենք կենդանի խոսքի ոտուննասիրությունը:

Ներկայացվող խնդիրը, ինչպես հայերեն բարբառների շնչեղ ձայնեղ բաղադայններին վերաբերող՝ անցյալ դարի 50-60-ական բավականական ծավալված բանավիճը, կարծում ենք, վաղ քեզ ուզ դարձյալ լսյն բննարկումների հյուր է գտնեալու: Խսկ հայերենագիտությանը դրան պատրասն չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հ. Աճառյան, Լիակատար թերականություն հայոց լեզվի, հ. VI, Երևան, 1971:
Ս. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույրաբնուրյուն, Երևան, 1988:
Տ. Բ. Գամկրելյան, Վաչ. Ե. Իվանով, Հնդօւրոպեյսկий լեզв и индоевропейцы, Ենիսև, 1984.
И. Х. Дворецкий, Латинско-русский словарь, Москва, 1976.
Р. А. Зицадзе, Общая фонетика, Москва, 1979.
W. S. Allen, Notes on the phonetics of an Eastern Armenian speaker, Transactions of the Philological Society of America, 1950.
Dictionnaire de linguistique, Paris, 1973.
Harold C. Fleming, Glottalization in Eastern Armenian, The Journal of Indo-European Studies, Vol. 28, Number 1 & 2, Spring/Summer 2000.
Charles de Lamberterie, Méthode comparative et approche typologique: regards croisés sur les deux disciplines, La linguistique, Vol. 34, Paris, 1 / 1998.
Bert Vaux, The Phonology of Armenian, Oxford, 1998.

ԴԱՐՁՈՒՅԹՆԵՐԻ ՈՇԱՍՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՆԱՀՅԱԼԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Արմենուի Ավագյան
գ. ՊՄ-ի հայոց լեզվի ամբիոն,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտ

Դարձույթներն այն լեզվական միջոցներն են, որոնք առարկաներն ու երևոյթները ներկայացնում են անուղղակիորեն: Սրանք գրողի պատկերավոր մտածողության արտահայտությունն են. ինչի շնորհիվ հեղինակը հասնում է խորի գոնիավորման ու գեղարվեստական արժեքի բարձրացման: Դարձույթներն օգնում են յուրաքանչյուր գրողի՝ ասելու ոչ միայն «ինչ», այլև «ինչպէս», այսինքն՝ սրանք մտածողության կաղապարներ են, որոնց նկատմամբ ամեն մի ստեղծագործող յուրովի մոտեցում է հանդես բերում: Սրանով է պայմանավորվում գրողի ոճի ինքնատիպությունը: Դարձույթներն են բացահայտում հեղինակի անհատական ոճը, բանի որ «խոսքը արտահայտված մտածողություն է»¹, իսկ գրողի հմտությունն ու պատկերավոր մտածողությունը դրսկորվում են հենց իր խորի, իր կերտած գեղարվեստական պատկերի միջոցով:

Ա. Անանյանի վեպերի լեզվառճական տառմնասիրությունը ցոյց է տալիս, որ հեղինակի պատկերավորման արվեստում առանձնահատուկ դեր ունեն փոխարերությունը, համեմատությունը, չափազանցությունը, անձնավորումը, շրջասույրը, մակդիրն ու փոխանունությունը: Ոճավորման բոլոր այս միջոցները փոխարերական մտածողության արդյունք են:

Փոխարերությունը այլաբանության մի ձև է, որ դրսերի և արտահայտությունների ոչ ուղղակի իմաստներով գործածության շնորհիվ՝ հենցվելով երևոյթների նմանության վրա: Իսկ առարկաների ու երևոյթների միջև ինչպէս ներքին, այնպէս էլ արարքին նմանություն գտնելը կամ միմյանց գորգորդելն արդեն բարդ ստեղծագործական աշխատանք է, որով էլ ընդգծվում են գրողի անհատականությունն ու ինքնատիպությունը: Անտիկ աշխարհի մեծ մտածող Արիստոտելը, զնականական փերը, նկատել է. «...Պոեզիայի բռնը զեղեցկություններից միայն դա է, որ ստորեւ չի կարելի, այն իսկական տաղանդի նշան է, բանի որ գտնել մետափորներ, նշանակում է՝ կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը»:²

Անանյանը ոչ միայն հմտութեն օգտվել է մեր լեզվի գրական և ժողովրդայակացական տարբերակների ընձեռած հնարավորություններից, այլև դրանք հարսացրել է յուրովի: Ընդհանրական կամ «պատկերավոր համալեզվային»³ փոխարերությունների կողմին առ կերտել է նաև անհատական

Փոխարերություններ՝ չափազանցուրյան և համեմտուրյան տարրերով։ Այսպիս տնենալով կարկուտի հաստիկների առատուրյունը, հարվածի ուժը և այլ հասկուրյուններ, հեղինակն այդ բառի հիման վրա կերտել է մի շարք հաջողված Փոխարերություններ. «Բարենքից ու զյուլի դիմացի գերեզմանաւոններից սկսեց տեղալ արճճե կարկուտ (ԿՕՄ, 52), «... արագ անցա ու բարձրացա տանձուտի պրնկի ծառերից մեկը։ Թափ տվի՝ տանձի կարկուտ տեղաց» (ՈՒՏԿ, 195)։

Իր նուրբ դիտողականուրյան և պատկերավոր մտածողուրյան շնորհիվ հեղինակը ասելիքը ներկայացնում է ոչ քե ուղղակիորեն, այլ «Չուռ տված»⁴, որպէս դիմացինին ևս նտորելու, վերլուծելու հնարավորություն է ընձեռվում։ Փոխանակ ասելու, քե ծերունին կարմքեց, հեղինակը զրում է. «Ծերմակ մազերով շրջանովկած ծերունու դալուկ այստերք վայրկենսավեն իրդեհվեցին» (ՀԳ, 427), որպէս ել խոսքը դարձել է գեղարվեստական, պատկերը՝ տեսանելի։ Կամ մեկ այլ տեղ սարսափելու, սարսուլու պահը ներկայացվում է այսպիս։ «Տղայի մարմնով կարծես մքջուններ վազեցին» (ՍԱ, 195)։

Փոխարերությամբ հարուստ է ոչ միայն հեղինակի, այլև հերոսների խոսքը։ Սա բոյլ է տախի պատկերացում կազմել տվյալ հերոսի մատածելուկերպի, բնավորության, կարգավիճակի մասին։ Հեղինակը փոխարերությունը դարձնում է միջոց կերպարները տիպականացնելու համար։ Օրինակ, ծերունի Ասսաւուրը («Սևանի ավիին»), որը ժողովրդական իմաստուրյան կրողն ու մարմնացումն է, ինչ-ոք տեղ՝ նաև խորհրդանշական կերպար, բնականարար նրա խոսքը, ի տարրերություն մյուս հերոսների, համեմված է ժողովրդական բառ ու բանով և հասկալեն ժողովրդական լեզվամտածողուրյանն այնքան բնորոշ դարձվածքներով, որոնց միջոցավ են արտահայտվում ծերունու խարինաստ մտքերը։ Դարձվածքներն, ըստ Էորյան, լեզվական առումով կարելի է համարել ժողովրդական փոխարերություններ։ Ինչպես նշում է Ս. Մելքոնյանը. «Ժողովրդական փոխարերությունների մեջ պատկանելի տեղ են գրադեցնում դարձվածքները, որոնք անխափ վերախմաստավորված բառական մխավորներ են։ Ի տարրերություն փոխարերական նշանակությամբ հանդես եկող սովորական բառերի, որոնք կարող են և ուղղակի նշանակությամբ օգտագործվել, դարձվածքները միայն փոխարերական խմաստով են օժտված»⁵։ Եվ այդ դարձվածքները, հանդես զալով նախադասության մեջ, ամբողջուրյամբ կամ նաև ամբողջ կարող են փոխարերական խմաստ հապորդել նրան. «Սևանա ծովի ձկան մեջքը դրանք են կուռում (ՍԱ, 31), «Սախիկ, մարդ ձեզ պես մոզի վախտը (Երիտասարդ-ընդզումը՝ Ա.Ա.)⁶ չի համբերում, կրակում է խմբի մեջտեղը ...» (ՍԱ, 1953թ., էջ 26): «Հանար չի է», վարսուն արարի է ուս ենք մաշտում, սար ու ձոր ոսի տակ տալիս...

⁴ Այս և հետուագա օրինակներում փակագծերում տրվող լինգգումները, բացաւորությունները մերը են։

(բայլել, կարել անցնել») (ՍԱ, 38): «Երեխեր իո չեն, առյուծի ճտեր են, այսուժի քաջ, անվախ» (ՍԱ, 42):

Նման փոխարերություններ կամ նաև հեղինակային խոսքում. «Ճնշեցին ծերունու հույսերը (հուսախարվել) և դրանից հետո հանգով նրա ներսում այն կրակը (ոգեռորությունը կորցնել), որ ուժ էր տալիս նրան» (ՀԳ, 427) կամ «Ժնմերս խուզած (քեարափակած, հուսահատված) իշանը երկնքից, որ սավառնում էինք» (ՈՒՏԿ, 306):

Վ. Անանյանը կարողանում է հմտորեն կողմնորոշվել խոսքային միջավայրում, գգալ և պատկերավոր վերաբառադրել նրբությունները: Եթե տարբեր միջավայրի հերոսներ են խոսում, հեղինակի վարակետության շնորհիվ ընթերցողն անմիջապես կուսիում է դա, օրինակ՝ զիտնականների խոսքը («Անսեն ավիճի»), որ ճշգրիտ է, զիտական, զնո՞ծ դարձույթներից:

Հեղինակն առանց դարձվածքների էլ կարողանում է կերտել ժողովրդական փոխարերություններ, որոնք միաժամանակ կարող են լինել անհատական: Մրանք նպաստում են խոսքի ժողովրդայնացմանը. նրան հասդրություն կենդանության: Օրինակ՝ «Դասնից դադաւած (վիրավորված, ազրված) Սարս վիզ էր ճարել և ... ուղարկել վաշլապվին» (ՀՎՓԲ, 210): Նման դեպքերում հեղինակը կարողանում է հմուտ բարենտրությամբ դիպուկ ու խորք ներկայացնել ոչ միայն իրականությունը, այլ նաև մարդու ներքին հոգեվիճակը: Ինչպես նշում է Ս. Մելքոնյանը. «Ժողովրդական փոխարերությունները մի առանձին արտահայտչականությամբ են օժագում այն դեպքում, երբ դրանց մեջ առաջին սլան է մղվում բառական այն նշանակությունը, որն առավել չափով հարազատորնեն է արտացոլում ժողովրդի նուածողությունը»⁶:

Տարբերակելով փոխարերություն և փոխարերությունները՝ Ֆ. Խղդաքյանը դարձվածքների կապակցությամբ նկատում է, որ «Ժողովրդի խոսակցական լեզուն առհասարակ շատ հարուստ է փոխարերություններով: Նրա բառապաշարում մեծ քիչ կազմող դարձվածքների մի ճարպ իրենց բնույթով փոխարերությներ են: Օրինակ՝ զլուխ քերել (հաջողությամբ ավարտել) և այլն»⁷: Ընդ որում, փոխարերության ասելով նա նկատի ունի «դարձույթ, որ իիմնված է բառերի փոխարերական զրծածության վրա՝ ըստ նրանց արտահայտած առարկաների, երևույթների, արտաքին կամ ներքին նմանության»⁸. Խոկ փոխարերության հիմքում դնում է «...առարկաների ու երևույթների հատուկ հատկանիշներ՝ եներվ նրանց միջև եղուծ նմանության, կցորդական կամ բանակային գանազան հարաբերություններից»⁹:

Փոխարերության ճանաչման հիմքում, որպես միասնական սկզբունքներ, ընկած են առարկաների, երևույթների, իրողությունների արտաքին ձևի, ներքին հատկությունների կամ զրծածությունների նմանությունը և նրանց ազրեցությամբ ծագող բարդ գուգորդությունների, տպավորությունների նմանությունը¹⁰, ինտեարաք դրանք արտեհելք առանձին ենթատեսակների, մեր

կարծիքով, նպատակահարմար չէ: Այսպես՝ «Քիչ անց հեռու դաշտում մի սև կետ երևաց և ծովով ժապավեն կապեց օդում» (ԿՕՄ, 114) օրինակում մեկտեղվութ են փոխարերության երեք սկզբունքներն եւ, ինչի շնորհիվ պահը վերարտադրվել է մեծ վարպետությամբ:

Վ. Անսամյանի ստեղծագործություններում ջիշ չեն նաև անհատական փոխարերություններով կերտված ամբողջական հաստվածներ ու պարբերություններ, որոնք խորը ենքնատերստ են պարունակում: Դրանց կերտմանը միաժամանակ օգնում են և՛ գրողի գեղարվեստական մուածողությունը, և՛ պատկերակոր վառ երևակայությունը, և՛ որսորդ-բնագետի անձնական փորձն ու անմիջական տպավորությունները: Օրինակ, ամռան տուպին ցամաքող, ջրագրկվող գետնկը հեղինակը նկարագրում է այսպես. «... ճուել եմ շողից բարակած գետակն ու ակն եմ տալիս նրա սպարաբերի տակը, քանի ու պուճախը» (ՈՒՏԿ, 127), կամ «...Գիշերը ձյունը դադարել էր, մի աներևույթ ձեռք երկնքից վերցրել էր երկիրը ծածկող ամպե վերնակը և միջմոլորակային կտրող սառնությունն իջնում էր ցած, բարացնում ամռեն լիչ» (ՀԳ, 325):

Ի տարբերություն ուղղակի, պարզ նկարագրական խորի՝ փոխարերությամբ խորը ավելի սեղմ ու հակիրճ է, բայց լայն է բախտակալությամբ: Օրինակ՝ «Գիտնականներն եղ տեսակ բաները պետք է մեզ նման որսկաններից իմաստան... բա որ ասում եմ բնության գիրքն եւ կարդացե՞՞ր» (ՍԱ, 38): Ընդգծվածով հեղինակն իր խմասուուն հերոսի միջոցով ոչ միայն ուզում է կոչ անել, որ մարդը փորձի հասկանալ բնության գաղտնիքները, պարզի նրա առեղծվածը, այլև ճանաչի նրա օրենքները: Կամ՝ նորի ու հեի սլայրարը հեղինակը պատկերում է հորդացած ջրով և լճացած-ճահճացած ջրով ամրարտակը խորտակելու փոխարերական պատկերի միջոցով. «...ամրարտակը պատովում է և լճացած-ճահճացած ջրով դուրս է հորդում այնպիսի բափով, որ այլև սոսածն առնելը դառնում է անհնար... նորդացած ջրերը վասի հետ երթեան խորտակում տանում էին նաև շատ պետքական բաներ, որ ստեղծել էր մեր ժողովուրդն իր աշխատանքի ու տառապանքի ընթացքում» (ՈՒՏԿ, 499):

Վ. Անանյանի արձակում հաճախակի կիրառվող դարձույթներից է անձնավորումը, երբ կենդանիներին կամ անշունչ առարկաներին ռաճական որոշակի նպատակներավ վերագրվում են մարդկային հասկություններ:

Անձնավորման և փոխարերության միջև սահմաններ դնելը գրեթե տեսնար է, քանի որ անձնավորմը փոխարերության դրսարաւմներից մեկն է և ձևավորվում է փոխարերության հիման վրա: Անս բնության մի սլահ, որ հեղինակի գեղարվեստական մուածողության շնորհիվ վեր ածվել է հիմարանչ պատկեր-տեսարանի: «Լուսինը կարծես կար է բափում ձյունածածկ դաշտերի վրա» (ԿՕՄ, 182): Լուսինի անձնավորմը (կար բափելը) ընթերցողի մեջ շարժապատճերի տպավորություն է առաջացնում. հեղինակը շունչ

ու շարժում է հսկորդել պատկերին, և ընթերցողը կարծես տեսնում է լուսի աղօս լոյսի տուկ տարածված ձյունածածկ դաշտը, որ լուսի կտրնազոյն լոյսի ու ձյան սպիտակուրյան միջոցով ստեղծվում է գունային ներլաշնակուրյուն՝ բնուրյան անդորրի մեջ: Կամ «Արեք հենց նոր պոռենիլը բավուա ների մեջ դրեց ու իր վիշերը հավաքեց անտառու ծորերից» (ԱՕՄ, 95), որտեղ արևի անձնավորումը գուգուկցվում է վոլխարեւուրյան հետ, և արևի ճաւագայքներն անվանվում են «արևի վիշեր», «Խոսհարքի մեջ ծղրիդներն սկսել են իրենց համերգը» (ՈՒՏԿ, 358), «Զրով-Լեռ-բայի կողմից զալիս զյուղի վրա բախիծ էր փուռ հետացող երգը՝ անդարձանալի մորմորի նման» (ՀՎՓՇ, 444), «-Գ-իշերս էլի լսեցի հավերի խոսակցուրյունը: Իրենց ճոտերին քնքուշ ծայսով կանչում էին. «Դուրս եկե՞ք, ... մեր բալիկներ»: Շոտերից մեկը ձվի միջից պատասխանեց. «Դու ո՞վ ես...» (ԱԱ, 97):

Բնուրյան և կենդանական աշխարհի գեղարվեստական անձնավորման առումով առանձնապես հետաքրքիր է հետևյալ պատկերը. «...Շատ բարի սիրա է ունենում եղ Կարինեն, էնքան բարի, որ երբ հանդի է դուրս զալիս, խոտերը նրա սոցք խոնարիկում են ու հարգանքով ճամփու տուխս, եղինիկները հետվից հմայված նրան են նայում, ծաղկիկները իրար ականջի քչիչում են, բե՛ «ւուրինեն է զալիս», լսի քոչունները նրա տեսքից ուրախացած՝ երգ են տառմ, նրա զեկեցիւրյունն ու բարի սիրաը զգվում» (ԱԱ, 152):¹¹

Նման նկարագրուրյունները հիմք են տալիս մեզ լիովին համաձայնել զրաբննադրաւ Ս. Ազարյանի հետ, թե «Վայսրասն Անանյանը նաև բնանկարիչ է՝ հայրենի բնուրյան գոյններն ու զծերը, խաղերն ու զաղանիքները, բնքչուրյունն ու դարերի շունչն ու հոգին խորապես զգացող բնանկարիչ»¹²:

Անձնավորման ճիշցոցով հեղինակը կարողանում է արտահայտել բնուրյան այս կամ այն երևոյթից ստացած իր մարքանարար տպավորուրյուններն ու զգացմունքները: Եվ դա անում է այնքան վարպետորեն ու կասարելապես, որ առի է տալիս ոմանց՝ անհիմն մեղադրելու իրեն կենդանիներին կամ բնուրյան երևոյթները անձնավորելու հստցում: Նրանք կարծում են, թե մարդկայնացնելով բնուրյունն ու կենդանիներին, զրոյն անանում է մարդուն, ստորադասում է նրան կենդանուց կամ հավասարուրյան նշան դնում կենդանու և մարդու միջև: Իրականում իր մեծարքանակ անձնավորումներով, դրանց պատկերավոր ու տեղին զործածուրյունիք «Վ. Անանյանը ընդարձակեց կենդանագրուրյան սահմանները, կենդանական աշխարհը ներկայացնելով իրեւ իր յուրահատուկ ձևերով ասլորդ աշխարհ, որ չեն բացառվում և «խելացի զործածուրյունները», և հոգեկան ապրումները, և բարյական ինչ-ինչ նորմաններ՝ մայրական բնազդ, ծննդագործուրյան կարու և այլն»¹³:

Անանյանի վիպական արծակում (հասկապես արկածային և պատերազմական բնամաներով վեպերում) պատկերավորման ինքնատիպ միջոց է չափազանցուրյունը: Սա պայմանավորված է ոչ միայն ստեղծագործուրյան

Մանրապյին կամ թեմատիկ առանձնահատկությամբ, այլև հեղինակի ժողովրդային լեզվամասածողությամբ: Եթեև վերջինիս դրսերման իխմանական նույնակ և արդյունք՝ չսփափանցությունն ունի խոր արմատներ, նրանով են կերտվել ժողովրդական բանահյուսության լավագույն էջերն ու կարսը, որոնցում ժողովորդը ձգուել է այս կամ այն հերոսի, գործողության կամ իրողության առավել տալավորիչ արտահայտման: Նոյն նախատեսկությանն ունի նաև Անանյանը: Օրինակ՝ «Ակրվի թերուծ սունկը կարմիր պեճերի վրայից այնպիսի բորբոքիք տարածեց Մազյալի ծորում, որ չուշարսավվելու համար զլուխներս առանք, փալսանք դեպի ծճակը» (ՈՏԿ, 126): Ոճական այս հնարքի շնորհիվ հեղինակին հաջողվել է ներկայացնել հորրարուծ սպատանիների քաղցի չափը՝ միաժամանակ ընդգծելով նրանց գոտած ոտեղիքի անգնահատելի լինելը:

Եթեմն Անանյանը չափազանցության միջոցով կերտում է այնպիսի տեսարաններ, պատկերում այնպիսի իրավիճակներ, որոնցում ակնքախ դարձած իրողության կողքին տուկս է և հումոր, և հեղինանք. «Մի զիշեր, շատ ուշ, մեր վրանը խիստ ցնցվեց: Տաշտերում կարը սկսվեց ալեկոծվել՝ դուրս գալով ավերից, խկ ուրեքը սկսեցին ճրբճրապ: Մայրս վեր բռակ իր անդից, ևս ևլ հետոր: Հասկացա, որ մեր զոմեցն է, մեջըլ քրում է» (ԿՕՍ, 37):

Նման դեպքերում հեղինակը գրեթե հասնում է սահմանագույն գրութեակ, որ «չափազանցության ծայրահեղ աստիճանն է, «երբ միտունավոր կերսրով խախտվում է իրականության արտաքին համամասնությանը՝ նրան տարվ այլանդակ, ծիծաղելի անսովոր տեսք»¹³:

Չափազանցությունն տուկս է նաև իմաստում ծերունու խոսքում, որը դիմացինի ուշադրությունը գրավելու, իր պատմությունը հետաքրքիր դարձնելու նպատակով օգտվում է ժողովրդական այս արտահայտչանիջոցից: Օրինակ՝ «...Գիլիի ափի մասովի կղզիներից մեկը հանկարծ երկու անգամ մեծացել է: Դու մի սափ զիշերը մի ուրիշ կղզի անդից պակվել է ու վերևից եկել դիմ առել դրան»: (ՍԱ, 43): Նման դեպքերում հեղինակն էլ է կասկածում. «Որսորդական փչո՞ց էր, թե իրականություն» (ՍԱ, 43):

Դարձույթներն ունեն մեկ նախատեկ. նախատել կատարյալ գեղարվեստական խոսքի կերտմամբ: Այս ստումով ուշադրության են արժանի Անանյանի կերտած համեմատությունները, որոնց միջոցով ընդգծվում է զրոյի վերաբերմունքը որևէ անձի կամ երևոյի նկատմամբ, բացահայտվում գրադի զեղարվեստական վարպետության, աշխարհայացքային և այլ հարցեր: Անանյանը նորագույն է թերում այստեղ ևս. նրա կերտած համեմատությունները ինքնատիպ են, նագեցած բարձությամբ, և դրանցից ամեն մեկը նրա զեղարվեստական խոսքում ունի իր արդարացված նախական ու լիիրավ տեղը: Դրանք այսպիս ասած՝ դիպուկ համեմատություններն են, «որպես անծանոր կամ թիւ ծանոր երևոյթները ներկայացնում են նրանց նման, բայց լուս ծանոր երևոյթների միջոցով»¹⁴: Անանյանն իր ստեղծագոր-

ծորյուններում համեմատությունները կատացում է և՛ բառային միջոցներով (նման, պես, ինչպես, ոճոց որ և այլ), և՛ առանց դրանց: Այսպես՝ «...այստեղ ու այնտեղ բարփակած զերանները նրանց աշրում քննանորներ են երևում՝ ահարկու երախները բացած» (ԿՕՄ, 240), «„, լամբազեան Մուրազլ-րրաւիկան ֆրանտում սարասփ տարածող այդ «աննախանջ իերոսը» կոտրված ճյուղի նման կախ ընկավ ձիուց» (ԿՕՄ, 95-96), «Նրա հեակից մի վաշա կարմիրբանակոյիններ լավայի պես (անսպասելի, արագ) բափեցին զյուր» (ԿՕՄ, 208), «... զարք մեջը զայլ ընկած հոտի նման ցրվեց ու սկսեց խուճապի մատնված հետ ու առաջ ծփալ...» (ԿՕՄ, 209), «- Դու արծվի պես սրատես ես ու շան նման հոտսառու» (ԿՕՄ, 162): Ինչպես վերջին օրինակներից է երևում, և որ շան հոտկանշական է Անահյանի համար, որևէ արարքի, անձի կամ երևոյթի համեմատության հիմքում գերազանցաւած քննորյան երևոյթները, կենդանիները կամ նրանց արարքներն են: Սա է անանյանական սկզբունքը, մեծ քնազեաի ու քնորյան փիլիսոփայի կարգախոսը:

Համեմատություններում Անահյանը երբեմն գործածում է կարծես, կարծես թէ, տես և նման եղանակավորող բառեր: «Նրա մեղրոտ շորերի վրա այնքան ճանճ էր հավաքվել, որ կարծես ամառափ շոգին ճանճահար եղած զոմշածազ լիներ» (ՍԱ, 200), «...ջրերի մեջ մամունները տճել, իրար էին խճճել ու բանել ամրող նեղուցի մակերեսը: Կարծես կանուս բորդ փոփոխ վարդակ լիներ ջրի երեսին» (ՍԱ, 57): Նման դեսլիքնում հեղինակը չի ընդհանրացնում տեսարանի համեմատական ապագորությունը, այլ սույլ հայտնում է անհստական կարծիք, որը վայրկենական ազդեցության արդյունք է: Նման համեմատությունները Լ.Եզնելյանն ամփանում է «քենական համեմատություններ»¹⁵:

Եթեմն հեղինակը նկարագրում է երևոյթը և հետո նոր տավիս այն քնորյագրող բառի համեմատությունը. «Դնացք փորոց եկել է, խալ այժմ դանդաղ, եզան ասյլի նման շարժվում է դեսի Սանահին» (ԿՕՄ, 129): Այս և նման կիրառությունները տվյալ իմաստը շեշտելու, սաստկացնելու նպատակարմանը զուգահեռ պարզունակում են նաև մեկնական իմաստ:

Վ. Անահյանի կերտած համեմատությունների հաջողության գաղտնիքն այն է, որ հեղինակը կարծողաւում է նմանարյան, առնչության ընդհանուր զիշ գտնել այնպիսի անհամատեղելի առարկաների և երևոյթների միջև, որոնք երբեւ չեն համատեղվել: Սա զրոյի պատկերավոր մտածողության, հմուտ քառօգտագործման լավագույն վկայություններից է: Ինչպես նշում է Պ.Պողոսյանը. «Միմյանցից հետո և անհամատեղելի առարկաների ու երևոյթների մեջ ընդհանրություն գտնելը և դրանց զուգակշռելի դարձնելը ոչ միայն նորք ճաշակի, սրամատության և բանաստեղծական շնորհքի, այլև իմացության արտահայտություն է»¹⁶: Ասկածի վառ վկայությունն է անանյանական հետեւյալ համեմատությունը, որ հետաքրքիր զուգահեռ է տարվում բարի և

մարդկային դեմքի միջև։ «Ան ժայռերի մեջտեղով, նրանց լոյնքով մի քանի թիվեր էին ձգվում՝ ծեր մարդու ճակատին զրովահեռ շարված կնճիմների նման» (ՍԱ, 158):

Նման կիրառություններն ավելի շատ սուբյեկտիվ քնույթ ունեն։ Մրանցում ընդգծվում է ենդինակի վերաբերմունքը համեմատվող առարկաների նկատմամբ։ Այս դեպքում բացակայում է «համեմատվող առարկաների համար ընդհանուր հատկանիշը (կամ հատկանիշները), որի հիման վրա կատարվում է նրանց համադրամբ»¹⁷:

Վ. Անանյանի վխաղական արձակի լեզվառական քննությունը ցույց է տալիս, որ տարրեր դարձույթների դրսևորման հաճախականության հարցում կարևոր նախապայման է ստեղծագործության թեմատիկան։ Սակայն գրողի ամենաշատ զրութանակ ոճական դարձույթներից է շրջասույրը (շրջասույրուն), որն առկա է նրա բալքը ստեղծագործություններում՝ անկախ նրանց ծավալից ու քեմատիկայից։

Շրջասույրը փոխարերարյան վրա հիմնված այն ոճական դարձույթն է, որի հիմքում առարկայի, նրեւույթի ուղղակի անվանումը փոխարինվում է նրա ավելի ծավալուն, նկարագրական արտահայտությամբ։ Այն օգնում է գրողին ամրողությամբ ու համակողմանի ներկայացնել որևէ անձ կամ երեւոյթ, հասնել կերպարների լիարժեք, բազմակողմանի բնուրագրման ու ախաղականացման, բանի որ շրջասույրյան մեջ խոսացված են տվյալ անձի կամ երեւոյթի հիմնական, բնորոշ գծերը։ Հաճախ Անտենյանն իր գործածած շրջասույրը ներկայացնում է չափերտներով, կամ էլ փակազգերում տալիս է դրանց մեջնարտնուրյունը։ «...ասաց «զիտնական բալան» (այդպես էր ծերունին միշտ կոչում Արմենին՝ նրա խոհեմուրյան ու խելքի համար)» (ՍԱ, 30), «Այդ ժամանակ շաբարը «ուս սպիտս էր դատեր», խակ «աստանի քշշան» (այդպես էին ասում նոր լոյս ընկած ամերիկական տախարինին) անունն էինք միայն լսելք» (ԿՕՄ, 31):

Անանյանի կազմած շրջասույրներն ըստ բակադրիչների բանակի կարենի է բաժանել երկու խճին՝ երկրադադրիչ և բազմաբադրիչ։ Երկրադադրիչ շրջասույրները կազմված են երկու բառից. օրինակ՝ «Հիսուսում էին նրա ներկույթսան կազմվածքով (հայրանդամ, ամրակազմ)» (ՍԱ, 170), «-Ընդունեցեք վետրավորների բազմաժառներին (արձվաճաւու)» (ՍԱ, 204), «...Ահա սլովական բոշունը (ինքնարխիու) ճեղքում է սպիտակ ամպերը...» (ԿՕՄ, 251), «Պոդպատե թերողը (զրուիազնացը) անվնաս էր մնում» (ԿՕՄ, 213), «-Այ կարմիր կլասուր (կարմիր բանակային, բոլշևիկ) Ամ թերեւ-ասաց Միարկամը պատասխուն ներկայացնելով» (ԿՕՄ, 108), «...մաճուռներն իրար ենսն միացան և նավք մնաց «կանաչ պարտների» (մաճուռի ցանցը, շերտը) մեջ խճնված» (ՍԱ, 57):

Բազմաբադրիչ շրջասույրները կազմված են երեք և ավելի բառերից. «Ներքեւում, խակ անտառի վրա օդից կախված յոք գոյնի կամաքը...

(ծիսածանը)» (ԿՕՄ, 54), «– Բնող վայր դիր, շորերդ հանիք ու կորիք, թէ չէ ծովիսը փորդ կլցնեմ (կլրակեմ)» (ԿՕՄ, 53):

Բազմապատճիք շրջասույրների մեջ ուշագրավ են հաստկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ կառույցները, որտեղ հատկացուցիչը շրջասույրի կազմամ էլ սլահպանում է իր ուղղակի իմաստը և շարակիուսակուն պաշտօնը, իսկ հատկացյալը որոշիչ-որոշյալի կատակցությամբ շրջասույրն է, որը կարենի է փոխարինել իրեն համարժեք մնել բառով՝ վերածնելով երկրադադրիչ՝ հատկացուցիչ-հատկացյալ կառույցի: Այսպես՝ «Լճի շորջը սլար բնած լեռները բարացած նայում կմ Սևանի ջինջ հայելուն (ջրերին)» (ՍԱ, 267), «...ուսումնասիրում ենք եղեգնուտների քևափոք բնակչության (բույունների) կյանքը, սովորույթունները» (ՍԱ, 77):

Անանյանին հարսկասու ոճական հնար է նաև վեպերի հատվածները շրջասույրներով վերնազբելը, որով ենթինակը ձգտում է կենարոնացնել ընթերցողի ուշադրությունը, լրացուցիչ հետաքրքրություն ստուգացնել նյուրի նկատմամբ, սաեղծել լրավոծ պահեր: Օրինակ՝ «Բազեները (կամավորները) որպի են սլատրտստվում» (ԿՕՄ, 222), «Ծնչունք և անշունչ քիսեր (ինկուրսուորներ)» (ՍԱ, 79), «Ամրարտակը (իմն բաղարակքության կապանը-ները) պատուիլ է...» (ՈՒՏԿ, 499):

Վ. Անանյանի կազմած շրջասույրները հաճախ դրսերվում են այլարանության միջոցով. «...իսկ առայժմ ինձ ոչ ոք չալիսի տեսնի, եղ շների (հակառակորդի) բերանից մի քանի անգամ հսզիվ եմ ազատվել» (ԿՕՄ, 136), «...Գնա՛, բալսմ, զլուխսդ պլրացցու եղ գելերի (հակառակորդի) ձեռքից» (ԿՕՄ, 137):

Քննարկվածներից բացի Անանյանի վիպական արձակում տեղ են գտել նաև դարձույրների այլ տեսակներ ևս, ինչպես, օրինակ՝ փոխանունությունը («Մեր կոլյոտզի անունը մինչև Մոսկվա կեասնի(Մոսկվայի դեկանարության)» (ՍԱ, 77), «Ուրեմն այնքան ապահով ենք, որ քշնամու զլափի վրայով (հակառակորդի տարսածքով) լի ենք աերոսլան քշում» (ԿՕՄ, 253), մակդիրները (մժեղի ամպ (ՈՒՏԿ, 126), ամպն վերմակ (ՀԳ, 325), սասցի շունչ (ԿՕՄ, 183) և փոխարերության վրա իմմնված այլ ոճական միջոցներ, որոնք ոչ միայն հարստացրել են նրա լեզուն, հաղորդել նրան ինքնաստիպ հնայք ու զրավշություն, այլև օգնել են զրողին ձեռք բերելու մյուս մողավրդաշունչ զրողներից ակնհայտորեն տարբերվող ոճական ուրույն ձեռագիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Ելյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979:
2. Ս. Գյուրուղաղյան, Ալ. Շիրվանգաղենի լեզվական մշակույրը, Երևան, 1966:
3. Լ. Եղիկյան, Հրանտ Մարկոսյանի արձակի խորարվեասի մի քանի հարցեր, Երևան, 1986:
4. Լ. Եղիկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003:

5. Ֆ. Խըլարյան, Ոճաբանական բառարան, Երևան, 2000:
6. Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, բառազիտուրյան, Երևան, 1993:
7. Ա. Ստեփանյան, Թումանյանի պատճենավայրի թեզուն և ոճը, Երևան, 1969:
8. Ա. Ստեփանյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984:
9. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճաբանության հիմներներ, Երևան, 1990:
10. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի հիմներներ, Երևան, 1991:
11. Գ. Զահոնյան, Էդ. Արսյան, «Ասոքելյան», Վ. Զահոնյան, Հայոց լեզու, I մաս, Ա. պրակ, Երևան, 1980:
12. Գ. Զահոնյան, Գ. Խըլարյան, Հայոց լեզու, Երևան, 1994:

ՀԱՍՏԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԿՕՄ - Կրակի օրակի մեջ
2. ՀՎՓԲ - Հիմն վրանի փոքրիկ բնակվածը
3. ՀԳ - Հովհանսեանի գերիները
4. ՍՍ - Սևանի աղին
5. ՈՒՏԿ - Ո՞ր են տանում կածանենք

¹ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճաբանության հիմներներ, Երևան, 1990, էջ 86:

² Արխանուտել, Պողոսյիկա, Երևան 1955, էջ 202:

³ Ա.Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, բառազիտուրյան, Երևան, 1993, էջ 37:

⁴ Պ. Սևան, Երկերի ժողովածու, 1976, հ. 6, էջ 433:

⁵ Ա.Ա. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, էջ 104:

⁶ Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 103:

⁷ Ֆ. Հ. Խըլարյան, Ոճաբանական բառարան, Երևան, 2000, էջ 166:

⁸ Ն. տ., էջ 165:

⁹ Ն. տ., էջ 165:

¹⁰ Ա. Մարգարյան, ն. տ., էջ 34:

¹¹ Ա. Ակսուբարյան, Դեսպի աղբյուրը լուսի, Երևան, 1979, էջ 196:

¹² Ն. տ., էջ 195:

¹³ Լ. Եղիկյան, Ոճազիտուրյան, Երևան, 2003, էջ 356:

¹⁴ Գ. Զահոնյան, Գ. Խըլարյան, Հայոց լեզու, Երևան, 1994, էջ 33:

¹⁵ Լ. Եղիկյան, Ոճազիտուրյան, էջ 344:

¹⁶ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի հիմներներ, Երևան, 1991, էջ 10:

¹⁷ Լ. Եղիկյան, Ոճազիտուրյան, Երևան, 2000, էջ 340:

Տոհմանունը միևնույն նախնուց սերած լինելու ինքնազխուկցությամբ արյունակից մարդկանց խմբի անունն է, որ երեմն նույնացվում է ազգանունիւնը:

Ելմերվ հայկական անվանազխատկան համակարգի ընձեռած վաստելից՝ մենք հստակորեն տարբերում ենք տոհմանվան երկու դրակարում՝ իշխանական տոհմանուններ և ժողովրդական տոհմանուններ: Անվանումները որոշ պայմանականություն ունեն. լուսարանվոր նյութը ներկայացնում է ոչ միայն իշխաններին: Մինչեւ, եթե ենթենք «վշշոտներ» իմաստային դաշտից, ապա այս արդարացված է:

Այս հոդվածում կրավարարվենք դրանց բանակազմության բնությամբ:

1. Իշխանական տոհմանուններ

Քննության համար օգտվում ենք ՀԱՀ «Գահնամակ» և «Զորանամակ» բառակազմական նյութերից և հստկապես Գահնամակի երկու վարկածներից՝ ըստ Խորենացու և «Ներսեսի Վարք» -ի: Խորենացու մոտ վկայված են 62 տեղեր, զահեր և պատվաստիճաններ, իսկ «Ներսեսի Վարք» -ում՝ 154: Բառակազմորեն դրանք ներկայացվում են երկու կադապարով՝ ա) հիմք + տոհմանվանակերտ ածանց, թեր, բդեշիւ և մեկ դեսլը՝ դատավոր՝ թաւենի դատավոր:

Ածանցներ	Գահնամակ՝ ըստ «Ներսեսի Վարք» -ի	Գահնամակ՝ ըստ Խորենացու	Զորանամակ
-անի	≈40	19	29
-յան	≈35	15	18
-եցի	≈13	9	19
х + տեր	25	12	2
-ական	6	4	3
այլք	22	15	14

Առաջին՝ հիմք + Տա կադապարով կազմություններում հանդես են զալիս -ունի, -սմ², -եցի, նաև -ացի և -ական ածանցները, որոնց բաշխութը և բառակազմական պատկերը ներկայացրինք աղյուսակի տեսքով:

Տոհմանվանական հիմքերի իմաստարանական, ինչպես նաև ածանցների զուգորդելիության և այլ հարցեր առանձին քննության կարիք ունեն և դուրս են սույն հոդվածի նպատակներից: Ուզո՞ւմ ենք ավելացնել, որ, չնայած անցյալ դարի 20-30-ական թ.թ. արհավիրքներին, երբ Տեղով ազգանունները նույնիսկ հալածվում էին, ժամանակի վորոձությանը դիմացել և

մինչև մեր օրերն է հասել տոհմանունների մի փոքր թիվ՝ Ամատունի, Արծրունի, Արշակունի, Բագրատունի, Գնրունի, Գնտունի, Դիմարյանն, Խորխսունի, Կամարականն, Մանդակունի, Մամիկոնյան, Շահապունի, Պակապունի, Ռշտունի, Սղբունի, Սրբունի, Վահունի, Քաջազնունի, Քաջրերունի, որտե՛ տնձնանուն - հայրանուն - ազգանուն մարդանվաճակն համակարգում զրադացնում են երրորդ՝ ազգանվան դիրքը:

Մեր որոշ վերապահությամբ ենք վերաբերվում այն կարծիքին, թե կրտներք մեր իշխանական տների ժառանգներն են: Ընդհանուր տառամբ նման հնարավորությունը չի բացառվում, բայց պետք չէ անտեսել այն հնարավորությունը, որ դրանք պարզապես նասունքներ են, իինը, ավանդությանը պահպան են: Մեր ժողովրդին այդքան բնորոշ գծի դրսերման արգասիք: Այս շերտի մասին ասելիքը ամբողջացնելու համար նշենք, որ հնարավոր է նաև, որ վերը քերված ազգանունների նորակազմություն լինեն, եթե ազգային ինքնազիտակցության վերելքի տարիներին վերածնվեցին նաև այս կարգի որոշ ձևեր, օրինակ՝ Մելիսակունի:

Մեր ազգանունարտանում առկա է նաև Կարազյան ազգանունը: Կարծում ենք, որ այն սերված է հայկական ուշ միջնադարյան հշանավոր մի տոհմանունից՝ Կիրաք (Գիրաք, Գյարաք, Կյարաք - Միրմաններ): Մեր սանկիքը սպարտենք այսպես կոչված կրկնակ ածանցման դեպքերով՝ Ամատունի - Ամստունյան / Ամատունյանց, Արծրունի - Արծրունյան / Արծրունյանց, Գնրունի - Գնրունյան - Գնտունյան - Կնունյանց, Խորխսունի - Խորխսունյան, Ռշտունի - Ռշտունյան, Մանդակունի - Մանդակունյան, Բագրատունի - Բագրատունյան:

2. Ժողովրդական տոհմանուններ

Տոհմանվան վերը քերված սահմանումը ավելի շատ հասուն է այս խմբին, քանի որ միևնույն նախնուց սերված վիճելու և արյունակցական կասպով միավորվող՝ մարդկանց ինքնազիտակցությունը մեր օրերում ևս խստ հատուի է և հենց այդ պատճառով ժամանակներին դիմագրավող: Ավելին, նոյն տոհմանունը կրող որոշ գերդաստաններ և ընտանիքներ նոր ազգանուններ ունեն, որոնք համարում իմաստարանորեն չեն առնչվում տոհմանվան հետ, սակայն, վերջինս շարունակում է գործել՝ միավորելով իր մեջ նոր ստեղծվող ընտանիքներ: Հայտնի են նաև դեսպեր, եթե սկզբանական ոչ այնքան բարեհունչ և իմաստային առումով խոցելի տոհմանունները շարունակում են գործել ավանդորեն, քանի որ կրտները դրանցից դժվարությամբ ևս բաժանվում: Այսպես, գոյության ունի Բողջանք տոհմանունը, որ կազմված է բազ «աղյուսացույն» + էշ բաղադրիչներից: Թվում է, թե տոհմանվան ստանձին բաղադրիչների պատճառով կրտները կարող են հրաժարվել նրանից, բայց, ինչպես ասում են, մարներավ լիկ չի անցնում: Ավելին, տարրեր ամիբներով այդ տոհմի հասունության հասածներին

համելիսավորությամբ ընդունում են տոհմի շարքերը: Համեմատևած նաև Իշանք (Վահագնի, Լոռի), Իշանք (աշխատասեր, Եղեգնաս, Լոռի), Իշանք (Մարց, Լոռի), Իշանք (Չկալով, Լոռի, աճուադից շալակով փայտ քերելու համար): Եթե առաջին երեքի պատճենաբանվածությունը բավականին տարածված է, ապա վերջին օրինակը բավականին բարդ իրադրական հիմք ունի: Նախապատճեն երազել է զայլ դատակ, որպեսզի ուսի Ազու-Մզոյի էշերին, որ սար չգնա:

Ծողովքրական տոհմանունները ավելի շատ հատուկ են երկար ավանդույթ ունեցող զյուղերին: Քաղաքներում, օրինակ՝ Երևանում, դրանք սպատմական արժեք ունեն: Անցումային վիճակում են Գյումրին ու Վանաձորը, երբ հնարքնակները ինչ-որ դեսպրերում անվանվում են իրենց տոհմանուններով:

Նրանք բացակայում են նաև նոր ձևավորված բնակավայրերում՝ Նոր Գեղի, Նոր Երզնկա, որը բնակչությունը հավաքված է զանազան բնակություններից և, իրքն հավաքականություն, գորկ է նման ավանդույթներից և, հետևաբար, տոհմանուններից: Նման բնակավայրերում որոշ ժամանակ անց երևում են մականուններ, որոնք հետևազոյում կարող են տոհմանվան առաջացման աղբյուր դառնալ, իսկ դասական ժողովրդական տոհմանունները գրեթե բացառված են:

Տոհմանունը, իրքն հաստոկ անվան մի տեսակ, հաճախականներից մեկն է անձնանունից հետո, քանի որ համայնքի շրջանակներում գործում է անձնանուն - տոհմանուն - մականուն - հայրանուն - ազգանուն շարքը: Հասկանալի է, որ խոսքը առօրյա - խոսակցական լեզվի մասին է: Պատշտոնական ոճում՝ ծխաճայտաներ, զանազան ցուցակներ, ազգանունը գրավում է առաջին տեղը, իսկ տոհմանունը չի գործառվում:

Տոհմանունը վճռական է նաև իրար մոտ գտնվող մի բանի զյուղերի շրջանակներում, և եթե անձնանվան հետ այն այլև չի բավարարում անձը ներկայացնելու համար, ապա դիմում են մակոնվանը և վերջում միայն՝ սպասվածը:

Տոհմանունների և մասնավորապես նրանց բառակազմության ընթացակարգությունը կատարել ենք Հայաստանի բոլոր շրջանների⁵, հարեան հանրապետությունների, Հյուսիսային Կովկասի, Արևագիայի, Աջարիայի հայարքնակ վայրերի, իսկ Մնձուրու շնորհելիք՝ նույնիսկ Արևմտյան Հայաստանի մի քանի զյուղերի ավելի քան 172 բնակավայրերի շուրջ 5000 օրինակների նյուրի վրա:

Տոհմանունների իմաստաբանությունը ինքնուրույն ուսումնասիրության խնդիր է, որին արդեն ձեռնամուխ ենք եղել:

Ամենաբարդապես գծերով տոհմանուններում առկա են հետևյալ իմաստային խճերը՝

ա) **Անձնամում** (հայրանուն, պապանուն): Տերովենենք (Մնձուրի), Զոհրաբանք, Ունչանանք (Օհանջան) (ԼՂՀ, Հադրութի շրջ., Դալանլար),

Տերարրնանք (Սպիտակ), Հեղմարանք (Մուրստ, Խանլար), Օսմանք (Հովհանք, Կորի, Նոյեմբերյան): Այստեղ պետք է ավելացնել, որ եթե այս ենթախմբի ճնշող մեծամասնությունը կապվում է արական անձնանունների հետ, ապա հանդիպում են նաև իգական անձնանուններից սերվածներ՝ Մամիններ (Սարսանջ, Սպիտակ), Թոմարսնք (Լեռնապատ), Նամանք (Չոչևան, Նոյեմբերյան), Զավոյանք (Բազում), Մլարանք (Մարզակալիտ): Մեր ուսումնասիրայրանները ցույց են տվել, որ այս դեպքում պատճառաբանվածությունը կիմնականում երկուսն է՝ մեծ զերդաստանի զիվին կանգնած կամ զլոդի սրացապանության գործում ակնառու դեր ունեցող կին:

բ) *Մականում* Մտանանք (Լուսադրյուր, Սպիտակ), Տղրկենք (ազրուկի նման զործի կլանող) (Զավախը, Սամսար), Թանոստանք (Արծվաշեն), Ժուկովանք (իբր Ժուկովի սափիրին և եղել), Շղրերանք (Շղրիկ) (Կորի, Նոյեմբերյան), Ծառնք (նման) (Կրաշեն, Ալուրյան), Բուլիկենք (բաղանձան, Մարավիկ), Շեֆ Պապտանք (Կարճաջուր, Սպիտակ), Յերզյանանք (կարճահասասակ) (Հաղարծին), իմշալն նաև Աժդակայրյան (փոքրանարմին), Կոլատանք (Մղարք, Լոռի), Խմացարենք (շատ և զործածել իմացար բառը) (Խանդր, Զավախը):

զ) *Արմեստի, զրադմոնքի ամում* Նաղաշենք (Մնձուրի), Դարբնանք (Սարխաս, Զավախը), Դլարանք (Կորի), Պրանանք (պարսանազործ), Փրնչանք (Արան, Լոռի), Դուրզարանք (Ծահումյան), Նալբանդանք (Օծուն), Վանահիանք (Վագաշեն, Եշևան):

դ) *Տեղանում* Արդահանցոնք և Քերցոնք (Գանձա, Զավախը), Ղարաբաղցոնք (Ծահումյան, Մատնեու), Ղզենցոնք (Ղազախ, Դերեղ, Լոռի), Թիֆլիզոնք (Մելքոնի, Լոռի):

Ներկայացվածներից հպատակնեն անձնանուն և նականուն խմբերից յուրաքանչյուրն ունի իր ենթախմբերը՝ անձնանուն - կոչական, անձնանուն - վագարշական, անձնանուն - բարբառային, մականուն - դրական և բացասական իմաստով, արտաքին և ներքին հատկանիշ և այլն:

Տոհմանունների իմաստաբանությանը այս բոուցիկ անդրադարձոց հետո ներկայացնում ենք տոհմանունների բառակազմությունը:

Ներկայական կազմուրյունները ներկայացված են $x + \text{տոհմանում}$ կերտող բառ կատապարով, որը x -ը բազմազան դրսերումներ ունի, իսկ կերկրորդ բաղադրիչը՝ տոհմ անփոփոխակի գանձազան դրսերումներն են՝

տոհմ/աններ (Լոյտ տոհմ, Կարմիր իրծու տոհմ, Ն. Բագմարերդ, Թալին), Ավեսի, Խալֆի տոհմ (Լճաշեն),

բախտում (Մարգուրենց բախտում, Գիրքորի բախտում, Ալարան),

ազգ (Ախմոյ ազգ, Գևոյ ազգ, Ծովինար, Մարտոնի), Մուխսու, Նալբնդի, Զարյու ազգեր (Վարդենիս),

խայլի - Բիբրուի, Զուլքա խայլս (Մեծավան): Այստեղ ավելացնենք, որ սովորյա խոսքում առևմ բառը զբերե չի գործում: Ավելի շատ զործում են նրա հոմանիշները՝ ազգ, խայլս, բախտում, տոհմ նաև տոյմ:

Ածանցավոր կազմությունները ներկայացված են ավելի քան 15 ածանցներով, որոնցից -ենք, -ամք, -ոնք, -ոնք ընդհանրական են և գործել են բոլոր վայրերում: Ազելին, մյուս գենորերին զուգահեռ՝ այս ածանցով կազմություններ նույնակես հանդիպում են, այսպէս՝ Սոլոյի, Մանիշակի և Սիմոնանք, Սլայտանք, Թումոյանք (Սուսեր, Թալին): Նշված ածանցներով տոհմանուններ են կազմվել անձնանուններից՝ Հասրելենք (Մարտոնի), Հանեսանք (Բերդ), Մումինանք (Նավոր, Բերդ), Պեպոյանք (Բագրամ), Խոչունք (Լեռնանցք, Սպիտակ), Մնարութանք (Արան, Լոռի), Ըրբաւանանք (Շրվենանք, Կապան), Խարունանք (Վագոչեն, Իջևան), մականուններից՝ Փետունք (Նորաշեն, Տավոշ), Նեմեցանք, Շանճանք (Մղարք, Լոռի), Կակավենք, Քյոյլանք (Դդմաշեն), Փորձանքներ (Ախուրյան), Քրոյանք (Չափումյան, Մատնեուլ), Խողունք (Կրաշեն), անդամուններից՝ Ղարաբաղցոնք (Չափումյան, Մատնեուլ), Մշեցոնք (Բուշակ), Մշեցոնք (Գավառ), Քերցոնք, Արդահանցոր (Գանձա, Ջավախ), ազգանունից՝ Իզիրյանանք (Չափումյան, Մատնեուլ), արհեստի, գրադմունքի անունից՝ Դուրզարանք (Չափումյան, Մատնեուլ), Պեշնկանք (Վառարանազոր, Կրաշեն), Դամքչոնք (Խանդո, Ջավախ), Զունաչոնք, Դարբնանք (Ծիլքար), Ներկարարանք, Դալլարանք, Կլեշչոնք (Թովուոգ, Շամշադին), Զաքոնք (Փոքր Մանքաշ):

-ներ՝ Կատիճներ, Գևերներ (Ծովինար), Բաղեներ, Օջոներ, Փուրբոներ (Զաջուո), Բաղեմեր, Ենոքներ, Պևոններ (Արտճ),

-ու՝ Մոլսու, Բայալչու, Բոլլախու (Վարդենիս), Օսկերչու (Զրաշեն), Ժամկոչու, Շնձդու (Մարտոնի),

-ի՝ Սոլյի, Մանիշակի (Սուսեր, Թալին), Կոլտի (Վարդենիս), Արգարի, Բերուրի, Հերանոսի, Կուրշուոյի, Կոյսափի (Մարտոնի),

-ցի/ծի՝ Խանեցի, Շիկալկծի, Ռմկծի, Մկրծի (Ներքին Բազմաբերդ): Այս ածանցը ընդհանրական է համշենահայերի տոհմանվանակերտության դեսպոտ, օրինակ՝ Օվակլիմցի:

Տոհմանունների կազմությանը մասնակցել են նաև -լար, -որդ, -ուց, -ու ածանցները, որոնք շատ փոքր արգասավորություն ունեն և ներկայանում են մեկ - երկու օրինակներով՝ Սոլյար, Մլուար (Մեծավան), Արծվորդ (Ներքին Բազմաբերդ), Թանաց (Չափումյան), Աղաջանլու (Բագրչայ, Սիստան):

¹ Հմբատ. Աղայան Էդ. Արդի հայերենի բացարարան բառարան, Երևան, 1976, էջ 1453:

² Բերկլիս օրինակները, որ վերաբերում են Ե դ, կասկածի տակ են առնում Հք.Աճառյանի հետևյալ մխարը. «...6-րդ դարում հայերը պարսիկներից վերցնում են ամ, եամ (յամ) մասնիկը....» (Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ե., 359):

³ Չի բացառված ավելի ուշ՝ ազգանունների մասնիքան շրջանում Մամիկոնյան գործներաց:

⁴ Ներկայաշշին են ըստ տարածվածության:

⁵ Տվյալները ներկայացվում ենք ըստ ՀՀ շրջանային բաժանման և ոչ՝ մարզային:

ԾԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԽԱՎ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Ամայսա Բարսեղյան
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Ինչպես գլուխնք, շարակյուսուրյունը ուստմնասիրում է նախադասուրյանը, բառերի և նախադասուրյանների կապակցությունը: Բառերի կապակցությունը կարող է լինել սաղմբական (գեղեցիկ աղջիկ), խնդրասական (սիրել աղջկան) և համաձայնական (աղջիկը ստվորում է, աղջիկները ստվորում են): Վերջին դեպքում և առանձին դիտարկվում է ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը՝ որպես շարակյուսական:

Շարակյուսական կապակցություններից է նաև նախադասուրյունների կապակցությունը, որը լինում է շաղկապներով և շարակարությամբ: Բարդ նախադասուրյան բաղադրիչ նախադասուրյունները կապակցվում են նաև դերանուններով (նատկասն հարաբերական), որոնք հարաբերակայից են շաղկապներին: Հարաբերական դերանունները՝ որը, ով, իմշային և այլն, ի ստորերություն շաղկապների, գործի չեն նյութական իմաստից և նախադասուրյան անդամ են: Կապակցող շաղկապները և շաղկապական բառերը խոսքի մեջ արտահայտում են համաձայնական և ստորադասական հարաբերությունները: Այս կապակցման դերը ամեն մի շաղկապի դնարքում գործակցում է իմաստային յուրահատկությամբ:

Արդի մամուլում շարակյուսական կապակցությունները ոչ միշտ են ճիշտ կիրառվում: Այդ են վկայում մամուլում անդ գտած շարակյուսական կապակցությունների սիմուլ դրսւորումները: Շարակյուսական կապակցությունների այս ընդհանուր եղանակներից ու միջոցներից մենք կրնենք համաձայնության և առդրաւության եղանակները, հատկապես դրանց դրսւորման սիմուլ կապակցական ձևերը: Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

Համաձայնություն: Նախադասուրյան քերականական կարգերը հիմնականութեան են զայխ ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ: Այդ կարգերից է համաձայնությունը, որը, ինչպես հայտնի է, լինում է դեմքով և թվով: Համաձայնությունը, որպես քերականական կարգ, այնքան կարեար է, որ այն, բնականարար, շարակյուսուրյան ամեն մի դասագրքում էլ քննվել ու բննվում է:

Համաձայնությունը նախադասուրյան անդամների կապակցման եղանակ է, այս դրսւորվում է նրանով, որ իրար կապված անդամներն ստանում են միևնույն քերականական կարգը, որեմն և նամապատասխան քերականական ձևափորումը: Հին հայերենի նամնամատությամբ ժամանակակից հայերենում կապակցման այս եղանակը զգալի չափով սահմանափակել է իր ոլորտը: Ժամանակակից հայերենում ամենաբնորդը ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն է. դրա հիմքում ընկած է այն իրադարձությունը, որ ստորոգյալը ենթակայի էության կամ նրա քրեւ էական հատկանիշի դրսւորումն է, որը ենթակային է վերագրվում դեմքով: Եվ բնական է, որ այդ

կասլսկցուրյան բաղադրիչները՝ Ենքական ու ստորոգյալը, պեսար է համապատասխանն ճիմյանց: Միաժամանակ համաձայնությունն ունի շատ յուրահատկություններ՝ պայմանափորված տարրեր և անզանաներներով:

Ենքակայի և ստորոգյալի բվային համաձայնության ամենաընդիմուր և հայտնի օրինաչափությունն այն է, որ եզակի Ենքակայի հետ սովորաբար դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի Ենքակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: Ինչպես՝ «Արեգ բավական բարձրացել էր, ցողի կարիմները զորոշիացել էիմ» (ԱՌ, Երկ., 149):

Ենքակայի և ստորոգյալի համաձայնության հարցում հսկում մնե դեր է կատարում կատայցի ձևային կրգը: Եթե եզակի Ենքակայի գործողությանը մասնակից է նաև մեկ տրիչը, և դա արտահայտված է սեռական հոլովածեկի և հետ կասի միջոցով, ստորոգյալը դրվում է եզակի բվով (1, 192): Օրինակ՝ «Այդ օրը ես երս հետ կինո զնացի»: Ժեն հետ կապով կասվաղ բառով նշվում է գործողություն կատարող այլ առարկան (կամ առարկաներ), բայց դա չի ազդում Ենքակայի և ստորոգյալի համաձայնության վրա, քանի որ այդ առարկայի անունը չի դրվում Ենքակայի պաշտանով և որեմն չի ազդում Ենքակայի բվային հաստիանիշի վրա: Իսկ արդի մամուլում ստորոգյալը նման դեսպրեսում երբեմն դրվում է հոգնակի բվով: Այս հարցում դեր է կատարում այն տրամաբանական հիմունքը, որ միասնության պարագայի ցույց տված առարկան նույնական կատարում է գործողություն (ինչպես Ենքական), թեն լրացում է: Այսպես՝ «Մենք այս երկրի սյուներն ենք, – երեկի «Հայելի» ակումբում հայտարարեց «Գրանի հոլինդզի» նախազան Հրանտ Վարդանյանը, որը Աժ պատգամավոր Խաչատրու Սուրբիայանի հետ բանավիճելու էիմ եկեր» (Առ., 12.4.2007): «Կրրական համակարգը, առողջապահական համակարգի հետ, ըստ միջազգային գեկույցների ամենասարածվածն էն Հայաստանում» (ԶԻ, 6.3.2007): «Ճիշտը եզակի ծներն են՝ որք եկել էր, համակարգը ամենասարածվածն է

Հավաքական գոյականները, որոնք ձևով եզակի են, սակայն ունեն հոգնակի իմաստ, համաձայնվում են, որպես օրինաչափություն, ձևային կողմով, այսինքն՝ ունենում են եզակի բվով ստորոգյալ: Արենյանն այս երևույթն անվանում է բակառություն: «Սիրայի ամբող ընտանիքը, բացի երից, գրադդում են երաժշտությամբ» (Հայկ. Ժամ., 12.12.2006): «Ճիշտը՝ ընտանիքը գրադդում է

Երբ բազմակի Ենքականները կապված են կամ շաղկաւով, ունենում են եզակի ստորոգյալ: «Գ-ԱԱ-ն միակ պետական մարմինն է, որի միջոցով զիտնականները կարող են ազդել հանքարանությունն ընթացող զիտական գործընթացների վրա, իսկ ԿԳ ճախարարությունը կամ գործակալությունը կարող են կատարել միայն գործադիր գործառույթ» (Առ., 12.4.2007): «Ճիշտը եզակի ձևում է:

Ժողովրդախոսակցական ոճի դրսւորում պեսար է համարել հոգնակի Ենքակայի փոխարեն եզակի Ենքակայի գործածությունը: Ինչպես՝ «Մենք նման դեսպրեին շատ ցավազին ենք արձագանքում, դա ընդիմուր պատմամշակութային արժեքներ են» (Դր., 14.6. 2005): Սա գրական եզզի կանոնների խավատում է: «Ճիշտ ծնեն և՝ Գրանք արժեքներ են:

Առդրույթների բառերի ստորադասական կասկակցության այնպիսի ձև է, որի մամանուկ լրացրովը փափոխության չի կրամ զերադաս տեղամբ իմաստային կամ քերականական հատկանիշների պահանջով (2, հ. 3, 406): Սակայն առդրույթների բառերի շարադասությունից է կախված կոսպակցության ճիշտ կամ սխալ դրսելորտմբը: Արդի մանուլում ատրաւծված են հման սխալ դրսելորտմներ: Ինչպես գիտենք, եթե որոշյալը ունի հարաբերական և որակական ածականներով որոշիչներ, ապա հարաբերական ածականը պետք է դրվի որևէ կանոնականից առաջ: Քանի որ հարաբերական ածականը ունի ատարկայական հմաստ և զորկ է հսկեմատեխնոլոգիան հատկանիշից, որակական ածականից հետո դրվելով, վերջինս կվերաբերի նաև նրան: Ինչպես՝ «Հայտնի խարերդային ծանրորդ վասիլի Ալեքսանը, որը հանդես էր զայխ ամենածանը բաշային կարգում, համաշխարհային ոնկորդը բարեկապում էր 0,5 կգ-ով» (Եր., 12.2.2007): Ճիշտ ձևն է՝ խարերդային հայտնի ծանրորդ: «Պարոն Օսկանյանը, վաստորեն խոստովանեց, որ Հայստանի դեկավարության համար և՝ Աղբամարը, և ժողովական տարածքում գտնվող այլ հայկական հուշարձանները լոկ խազարարու են ժողովական դիմ մղվող հավերժական սպայքարում» (ԶԲ, 3.4.2007): Ճիշտ ձևն է՝ հայկական այլ հուշարձաններ: «Դրանից հետո, ինսրին, տարրեր միջազգային կազմակերպություններում կրկին հանդիպել ենք» (Հայկ. Ժամ., 30.3.2007): Ճիշտ ձևն է՝ միջազգային տարրեր կազմակերպություններում: «Նրանք լածում էին սեփական հողը, հայրենի եղերքը պաշտպանելու բարդ ազգային խնդիրը» (Եր., 3.5.2007): Ճիշտ ձևն է՝ ազգային բարդ խնդիրը:

Անձիշտապես որոշյալին պետք է նախորդեն մի շարք և մի քանի որաշիները: Ինչպես՝ «Գյուտափողվում հանդես եկան մի շարք մշակութային գործիչներ և զիանականներ» (ՀՀ, 7.2.2007): Ճիշտ ձևն է՝ մշակույրի մի շարք գործիչներ: «Մասնագետներին շփոքարյան մեջ են զցել վաստարդում անդ զուած արտուրյի մի բանի հասնող կետեր» (Աւ., 24.2.2007): Ճիշտ ձևն է՝ արտուրյի հասնող մի բանի կետեր:

Եթե որոշյալն ունի ածական և դերանուն որոշիչներ, ապա ածական որոշիչից առաջ է դրվում դերանուն որոշիչը: Ինչպես՝ «Կոստոյին անկախություն տպար հավանականությունը, աշխարհի բոլոր մյուս վայրերում անկախության համար պայքարողների շրջանում հույս առաջացավ» (Հայկ. Ժամ., 16.3.2007):

Հմտությունը կամ միջազգային հանրության աշքում ինքնորոշման իրավունքի հակամարտությունից աստիճանաբար վերածվել է անջատողական շարժման՝ իր տեղը գրավելով մյուս բոլոր անջատադական հակամարտությունների կողքին» (նու): Ճիշտ ձևն է՝ բոլոր մյուս անջատողական:

«Մի բականոն (երրեմն էլ անորոշ դերանունով) արտահայտված որոշիչը որպես կանոն դրվում է ածական որոշիչից առաջ» (3, հ. 3, 349): Մինչդեռ մանուլում կարդում ենք «Մուր ու ցորւ տարիներ էին, սովորական ցորւս մի օր Գերմանիայի կողականութարանի աշխատակիցներից մեկը բակեց դուռը» (Եր., 17.2.2006): Ճիշտ ձևն է՝ մի ցորւս օր:

Քաղաքական հատկացուցիչների հետ տեղի պարագան սպառաբար դրվում է, հատկացուցիչներից առաջ: Մինչդեռ մանուլում այդ կասպակցությունների սխալ ձևեր են գործածվում: Ինչպես՝ «Հանձնաժողովը քննարկել և հաստա-

տեղ է նաև գիտուրյան և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Ազակցուրյուն ՀՀ Ազիտսանժյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությունը» (ՀՀ, 3.2.2007): Շիշտ ձև է՝ ՀՀ Երևանի Ազիտսանժյանի անվան ֆիզիկայի ինստիտուտ: «Կորեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրապոլիտեն ՓԲԸ-ն կազմակերպում է մրցակցային բանակցություններ» (ՀՀ, 8.5.2007): Շիշտ ձև է՝ Երևանի Կորեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն ՓԲԸ-ն

Եթե լրացյալը ունի հաստկացուցիչ և որոշիչ լրացումներ, ապա հաստկացուցիչը պետք է նախորդի որոշիչ լրացմանը: Ինչպես՝ «Երկրի դեկանավարությունը հաշվի առնելով նախորդ երկու մշակույրի նախարարթերի դատը փորձը, այլև չի վստահում նրա կրտակցությանը» (ԶԻ, 10.2.2006): Շիշտ ձև է՝ մշակույրի նախորդ երկու նախարարների: «Նա ՕԵԿ-ի երրորդ մշակույրի նախարար է» (Հայկ. Ժամ., 8.2.2006): Շիշտ ձև է՝ ՕԵԿ-ի մշակույրի երրորդ նախարար:

Կամ՝ «Նախի անմիջապես առաջանում է ԼՀՀ նոր պաշտպանության նախարարի խնդիր» (Իր., 30.3.2007: Շիշտ ձև է՝ պաշտպանության նոր նախարար:

Անփոփելով նշեմք, որ համաձայնության քերականական կարգը, լինելով շարսկյուսական, հանդես է բերում տարրեր յուրահատկություններ՝ պայմանավորված թե՝ ներքակայի ու ստորոգյալի արտսահայտության միջոցների իմաստային հատկություններով, թե երենն խոսողի վերաբերմունքով: Ավելացնենք նաև, որ ներակայի և ստորոգյալի համաձայնության օրինաչափությունները զնալով ապելի են կայունանում, չնայած արդի մամուլում երբեմն տեղ են գտնում սխալ դրսերումներ: Արդի մամուլում ստորության կամակցությունների սխալ դրսերումները ապելի տարածված են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս.Պալասանյան, Քերականություն մայրենի ինքի (մաս I, Բ, Գ), Թիֆլիս, 1894:
2. Ս.Արքահամյան, Ն.Պանոնայան, Հ.Օհանյան, Խ.Բաղկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1976:

ՀԱՄԱՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ – Հայստանի Հանրապետություն (քեր)

Ար. – Արավար (քերը)

Հայկ. ժամ. – Հայկական ժամանակ (քերը)

ԶԻ – Զորբորդ իշխանություն (քերը)

Իր. – Իրավունք (քերը)

Ծո. – Ծովութեանում

ԱԲ, Երկ. – Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1986:

ԶԵՎԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ
ԼԵԶՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մարիմեն Բոգդանյան
Երևանի կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների
համապարսկության մասին

Զեր և բռվանդակության խնդիրը մշտապես նղել է ինչպես մտածողների, այնպես էլ լեզվաբանների ուղարքության կենարոնում։ Ընդ որում, այս խնդիրն իր ներքին առնչություն է լեզվի և մտածողության փոխարարելությանը, ինչպես նաև լեզվական և տրամաբանական կարգերի ուսումնասիրությանը։

Անտիկ շրջանում, միսած Արքատունելից, մեծ տեղ էր հատկացվում լեզվի բռվանդակային կաղման՝ կապված լեզվի և մտածողության անքանական կապի գիտակցման հետ, որի հիմքն վրա էլ ենթադրված էր արամարանության և քերականության փոխադարձ կապը։ Թեև, դրան զրուահենու, արդեն հոգմեական անտիկ լեզվաբանություն մեջ ի հայր է զալիս նաև ձևական մոտեցում՝ խոսքի մասերի առաջին ձևական, Օ. Եսայերսենի բնորչմամբ, ամենասրամիշ դասակարգումը։ Դա Վառոնի դասակարգումն է, որտեղ հեղինակը տարբերակում է չորս խոսքի մաս՝ հոգվեր ունեցող խոսքի մասեր (անուններ), ժամանակի կարգ ունեցող խոսքի մասեր (բայցեր), հոգվեր ու ժամանակի կարգ ունեցող խոսքի մասեր (բայածականներ) և հոգվեր ու ժամանակի կարգ չունեցող խոսքի մասեր (մասնիկներ)։¹

Վաղ միջնադարում հիմնականում առանց որևէ էական փոփոխության բնորչում էին անտիկ շրջանի քերականական համակարգը։ Հետագայում ի հայր նկան նաև ընդհանրական քերականության սաղմերը։ Քերականության նկարսգրության մեջ փորձեր էին արվում նաև համադրելու քերականական միավորների իմաստային և ձևական հատկանիշները։

Տրամաբանական քերականությունների շրջանում բռվանդակության սպեկի մեծ տեղ է հատկացվում։ Հենվելով Դեկարտի Փիլիսոփայության վրա՝ այս հոսանքի ներկայացուցիչները վորձում էին քերականության սկզբունքները բխունենալու բանականության օրինաչափություններից։

Արդեն XIX դարում, ի հակադրություն տրամաբանական քերականությունների, ձևավորվեց ձևական քերականությունը, որը հիմնականում բխում էր ձեւից՝ ձեր համարելով ելուկետ։ Այլ հարց է, թե ինչն է ձեւ համարվել։

Ձևական քերականությունը, որի ակունքները կարելի է գտնել Մոսկովյան դպրոցի ներկայացուցիչների, հատկապես Ֆ. Ֆորտոնիատովի աշխատություններում, ձև հասկացությունը սահմանափակում է բառի և բառեկամուկության արտարին հնչյունական կողմով։ Ընդ որում, նախապես այն համարելով գիտակցության մեջ տրամադրելու ունակություն², ձևական քերականության ներկայացուցիչները հետազայում այդպես են անվանում տվյալ

բարի քերականական ձևավորումը: Այսինքն՝ այն հակադրվում է ոչ միայն բռվանդակությանը, այլև նյուրական խմաստ ունեցող հիմնական ձևույթի ձևին, բայց որ սրանցից յուրաքանչյուրն ոճի իրեն հասուն նշանակությունը՝ նյուրական և ձևական, որոնք նոյնպես հակադրվում են միմյանց:

Ձևական քերականության մեկ այլ ներկայացուցիչ՝ Ա. Պեշկովիկին, ձեփ գտակափարզ Վորք-ինչ ընդլայնում է, զանելով, որ քերականական ձևը ավելի լայն հասկացություն է, քան առանձին բառի ձևի հասկացությունը: Քերականական ձևը, ըստ նրա, քերականական խմաստների լեզվական արտահայտության միջոցների ամբողջությանը է՝ և առանձին բառերի ձևերը, և բառակապակցությունների ձևերը, և նախադասությունների տեսակները, և բառերի դասավորակրյունը, և հնձերանգը, և ամբողջի հերատեքարը և այլն:

Ավելի ուշ կառուցվածքային լեզվարանության դպրոցների ներկայացուցիչները այլ տեսակներ են առաջ բաշխում ձևի մասին: Այսպես, Ժնևի դպրոցի հիմնադիր Ֆերդինանդ դը Սոսյուրը, ձևը հակադրելով ոչ թե բռվանդակությանը, այլ սուրսահմային, լեզուն համարում է ձև և ոչ սուրսատանց: Ըստ նրա՝ լեզուն բաղկացած է խմաստից և հնչյունից, որոնք միմյանցից կարելի է անջատել միայն վերացարկման միջոցով, որն անխուսափելիքըն կհանգեցնի կամ մարդու հոգերանության (քանի որ լեզվական նշանը նաև ընկալած է ոչ թե առարկայի և անվան միասնություն, այլ հասկացության և հնչյունական պատկերի և նրան վերագրում է երկկարգմանի հոգեկան բնույթ), կամ մարդու հնչույրաբանության: Հետևաբար լեզվարանն աշխատում է սահմանային ոլրառում, որտեղ զրագործվում են երկու տարրերն էլ այս զուգորդումը ձև և ոչ սուրսատանց: Այստեղ նա կարեարաւմ է ոչ թե այն նյութը, որից կազմվել է լեզվական միավորը, այլ այդ միավորի՝ համակարգում ունեցած հակադրությունները: Սրանով նա փորձում է հիմնավորել լեզվական համակարգի իմաստենաության իր դրույթը, որի մյուս վկայությունը լեզվական նշանի պայմանական բնույթի նրա սահմանումն է:

Այսպիսով, հանգելով այն եզրակացության, որ լեզվում ոչինչ չկա, բացի խմաս-սային և հնչյունական տարրերություններից, որոնք էլ համակարգում ստեղծում են հակադրություններ, Սոսյուրը պնդում է, որ չի կարող լինել ոչ մի ձևաբանություն առանց խմաստի հաշվառման, թեև նյուրական ձևի վոփոխությանը ամենից հեշտ է հետևել: Ավելի քիչ հիմքերով, ըստ նրա, կարելի է խոսել ձևեց դրս իմաստի մասին:

Կովկանակենի լեզվարանական դպրոցի հիմնադիր Լ. Եղմակը ընդհանրացնում է ձևի և սուրսատանցի (կամ հիմնանյութի) հասկացությունը արտահայտության և բռվանդակության պլանների համար՝ խոսելով արտահայտության և բռվանդակության պլանների ձևի և սուրսատանցի մասին³: Ըստ որում, Եղմակը ձևը հակադրում է ոչ միայն սուրսատանցին, այլև նյութին: Այն նյութը, որից կազմվում է արտահայտության պլանը, բռլոր լեզվուների համար կարող է լինել նոյնը, ինչպես, օրինակ՝ այն բռլոր հնչյունները, որ կարող է արտա-

թերել մարդու արտասանական ասլարատը: Այդ ամբողջ նյութի վրա պրոյեկտվում է տվյալ լեզվին բնորոշ արտահայտության ձևը: Հենց նա էլ ձևավորում է արտահայտության նյութը՝ այն դարձնելով արտահայտության սարսափանց: Նոյն կերպ էլ բովանդակության միևնույն նյութը յուրաքանչյուր լեզվում մասնաւում և ձևակերպում է յուրոքի՝ իրեն բնորոշ ձևին համապատասխան⁴:

Այսպիսով, ըստ Ելմալիի, լեզուն ինքնին ձև է: Ընդ որում, նա ձև է համարում թե՛ բովանդակային և թե՛ արտահայտության կողմբ: Նպատակ հետապնդելով քննելու լեզվական կառուցվածքը՝ որպես մարդու հարաբերությունների համակարգ, նա չի կարևորում հարաբերակցող միավորների հարցը: Գլխավորը Ելմալիի համար հարաբերությունն է, իսկ հարաբերությունն իմաստության դպրում լեզվաբանական քննության բնագավառից⁵:

Ամերիկյան նկարագրական դպրոցի ներկայացուցիչները, ինչպես, օրինակ, L. Բլումֆիլդը, լեզուն դիտելով որպես մարդու վարմունքի ձևերից մեկը, լեզվական միավորների նշանակությունը համարում է այն իրադրությունը, որի մեջ խոսողը զործածել է այդ ձևը և այն հակագրումը, որն առաջացել է լսողի մեջ: Այսպիսով, Բլումֆիլդը զրկում է բառը իր ընդհանրացնող արժեքից:

Զեական անալիտիզմի ներկայացուցիչներից Զ. Հառիսը, հետևելով Բլումֆիլդին, լեզվական վերլուծության նկազագույն միավոր է համարում ձևույրը: Լեզվական կառուցվածքը ասելով՝ Հառիսը հասկանում է ոչ թե բառերի, այլ ձևույրների հետևաղական շարքը: Ընդ որում, այսուղի նրան չի հետարքրքում ձևույրի բնույթը՝ նյութական կամ թերականական իմաստունենալը, որպես բառ, ածանց թե վերջավարություն հանդես գալը, այլ այն հանգամանքը, թե տվյալ ձևույրը ինչ դիրքում կարող է հանդես գալ, ինչ ձևույրների հետ կարող է զուգորդվել: Իմաստային կողմի անտեսումը Հառիսը հիմնավորում է նրանով, որ այն կարելի է լսովին փոխարինել միավորների բաշխման և զուգորդելիության զարգացմաների կիրառությամբ: Այսինքն, ըստ նրա, եթե երկու ձևույրներ տարրեր իմաստներ ունեն, ապա տարրերվում են իրենց բաշխմանվ:

Եթե վորձենք զուգադրել Ֆորտունատովի և կառուցվածքային դպրոցների ներկայացուցիչների՝ ձևի մասին ունեցած հայացքները, ապա կարող ենք տեսնել հետևյալ սկզբունքային տարրերությունը: Ֆորտունատովը համեմատարան էր և առաջին հերթին լեզվի բննությունը փորձում էր հանգեցնել հնդկութական լեզվաբանության մերողներին, այսինքն՝ բառի նիմքի և թերույթի առանձնացմանը. լեզվի՝ որպես ամրողական համակարգի ու նրա բաղադրիչների հարաբերության հարցը, թեև ընդգրկվում է նրա բննություններում, սակայն առաջնային չէ:

Կառուցվածքային դպրոցները լեզուն բննելիս, բնականարար, նկատի են ունենում լեզվի համակարգը: Իսկ թե ինչպես են նրանք բննում լեզվի

համակարգը, և ինչ դեր ունի այնաեղ լեզվական նշանը, ահա այստեղից էլ ըլլում են ձեփ և բռվանդակուրյան մասին նրանց ունեցած պրատկերացումները: Այսպես, Ելմալել լեզվական նշանը դիտում է որպես մի մխավոր, որը բաղկացած է բռվանդակուրյան ձեփ և արտահայտուրյան ձեփից: Նա նոյն պես, ինչպես և Սոսյուրը, լեզվական ձեփ քննում է սուրբառնցից անկայս և «արտահայտուրյան» ու «բռվանդակուրյան» համակարգերի միջև որևէ անհրաժեշտ կապ չի տեսնում: Ընդ որում, Ելմալել բռվանդակուրյան ձեփ մոտ է Հոմերովայի՝ լեզվի ներքին ձեփին:

Սոսյուրի և Ելմալելի ձեփ մեկնարանուրյունը նման է արխատաելյան հայեցակարգում ձեփ և մատերիայի հակադրուրյանը, որի համաձայն յուրաքանչյուր անհատ իր բաղկացած է մատերիայից (որևէ ֆիզիկական նյութից) և որոշակի ձեփից, որը դրվում է մատերիայի վրա և առարկային հաղորդում նոյնականուրյուն ինքն իր հետ ու ներքին կայտնուրյուն: Մատերիայի և ձեփ արխատուելյան հակադրուրյունը, մյուս կողմից, հետազոտում քերականների կողմից օգտագործվել է «ճյուրական իմաստի» և «ձեռական իմաստի», ինչպես նաև ինքնուրույն խոսքի մասերի և սպասարկութանքի տարբերակման համար:

Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ «ձեռ» զիտարառը գործածվում է երկու իմաստով. առաջինը վերաբերում է լեզվին ընդհանրասպառ, իսկ երկրորդը՝ լեզվական նշանի արտաքին կողմին:

Այն դեպքում, եթե «ձեռ» զիտարառը կիրառվում է ընդհանրասպառ լեզվի վերաբերյալ, ապա համապատասխանում է Ֆ. Սոսյուրի «արտահայտուրյուն» և Լ. Ելմալելի «արտահայտուրյան պլան» տերմինին և նշանակում է նյուրական միջոցների ոլորտ, որութիւն ծառայում են լեզվական հաղորդումների փոխանցմանը: Այս առումով ձեզ հակադրվում է բռվանդակուրյանը, լեզվի իմաստային կողմին:

Իսկ եթե «ձեռ» զիտարառը գործածվում է մեկ լեզվական մխավորի վերաբերյալ, նշանակում է լեզվական նշանի արտաքին կողմը, նրա նյուրական ֆիզիկական էուրյունը և հակադրվում է բռվանդակուրյանը, իմաստին, հասկացուրյանը, գործառույթին: Այս առումով «ձեռ» զիտարառը համարժեք է միջնադարյան ավանդական քերականուրյունների ոչ «մնչում, հնչուն, ձայն» զիտարառին, որն ընկապվում է որպես *dictio*՝ «արտաքերման» այն մասը, որը խոսդի զիտակցուրյան մեջ արտացոլվում է նրա մյուս մասի՝ *significatio* «մշանակուրյան» հետ: Զեկ և բռվանդակուրյան հակադրուրյունը զուգադրվում է Սոսյուրի նշանակելիքի և նշանակյալի հակադրուրյան հետ: Իհարկե, նկարագրական դպրոցի ներկայացուցիչները լեզվական նշանի արտաքին կողմը, նրա նյուրական ֆիզիկական էուրյունը փորձում են փոխարինել բաշխումով (կապակցելիուրյամբ և շրջապատճել): Ճե համարելով հենց տվյալ ձևույթի բաշխումը:

Այսպիսով, «ձևականի» հասկացորյունը ամերիկյան նկարագրական լնգվարտնորյան մեջ ստարերվում է Նկրողական ավանդույթում կիրառվող համասկատական տերմինից: Ֆ. Ֆորտունատովի և Մուկվայի ֆորտունատովյան դպրոցի ներկայացուցիչները «ձևական» զիտաքառը զուգորդում են տառաջին հերքին բառի ձևի հասկացորյան հետ, այսինքն՝ հիճրի և թերույրի տառանձնացման: Այսպես, նրանք օւենք և կենցրու բառերը դասում էին անփոփոխ բառերի մեջ: Նկարագրական դպրոցի ներկայացուցիչներն ընդհակառակը, իմբը ընդունելով շարականական բաշխումը, այդ բառերը դասում էին երկու տարրեր ձևական դասերի մեջ՝ «գոյականական արտահայտուրյունների դաս» և «մակրայական արտահայտուրյունների դաս»⁶:

«Ձև» զիտաքառը կարող է զործածվել նաև ինչպես առանձին բառի, այնպես էլ տարրեր բառերի միևնույն զործառույթ ունեցող թերականական ձևերի դասի վերաբերյալ, օր՝ եզակի բվի սեռական հոլովի ձևը ներկայացված է հետևյալ բառաձևերում՝ *սեղամթ, ստրվա, ըմկերոց*:

Տարրերականություն է նաև «հարացուցային ձև» զիտաքառը, որը այս կամ այն բառի կամ համակցված բառերի՝ որպես ձևերի ամրող հարացուցային մի անդամի բնուրագիրն է: Այս բառերը, ունենալով նոյն գծային ձևը, կարող են ունենալ տարրեր հարացուցային ձևեր: Օր. չոլ զյականը, չոլ ածականը և չոլ մակրայը ուստեղենում, որոնք ըստ զծային ձևի, նոյն երկու ձևույրից են բարդացած՝ չլ-օ, հարացուցներում ունեն տարրեր ձևեր, բանի որ սյատկանում են տարրեր խոսքի մասերի⁷:

Այսպիսով, զործածվում են բառաձևներ և թերականական ձև տերմինները՝ նշելով համար հարացուցային շարքի անդամը, որն արտահայտում է բառիմաստի և թերականական իմաստի տվյալ համակցուրյունը: Զանազանում են ըստ կազմուրյան՝ այսրգ ձև, բաղադրյալ ձև, ածանցավոր ձև, ըստ խոսքիմասային պատկանելուրյան՝ անվանական ձև, դերանվանական ձև, բայական ձև, ըստ հարացուցային դրսնորման՝ հարացուցային ձև, հոլովական ձև, խոնարհման ձև և այլն: Ըստ հարացուցային շարքում ունեցած դերի ու զործառուրյան ժանրաբեռնվածուրյան՝ տարրերակում են ուղիղ ձև, ինչպես ուղղական հոլովլը հոլովական հարացուցում, անորոշ դերքայը՝ բայական հարացուցում և թեր ձևեր, ինչպես մյուս հոլովները հոլովական հարացուցում և մյուս բայաձևերը խոնարհման հարացուցում⁸: Հարելով այն տեսակետին, որ ամեն բառ ունի այնքան ձև, որքան հարացուցային ձև ունի տվյալ խոսքի մասը՝ Ե. Աղայանը բառի ուղիղ ձևը անվանում է բառի բացարձակ ձև, իսկ նրա թերականական ձևափոխուրյունները՝ թերականական ձևեր կամ բառաձևեր: Ընդհանուր առնամբ, խոսելով բառի ձևի մասին՝ Աղայանը նշում է նրա հնչույրային կազմն ու բառային շեշտը⁹:

Այսպիսով, «Ձև» զիտաքառի նշանակուրյունները տառաջին հայացքից ոչ մի ընդհանուր բառ չունեն և նոյնիսկ հակասում են իրար:

Զե ասելով կարելի է հասկանալ և լեզվի ձեր, և բառի ձեր իր տարրեր դրսերումներով, և քերականական ձեր բառի սահմաններում, և քերականական ձեր բառի սահմաններից դուրս: Նախասվես ձեր հակադրվում էր բառիմաստիճ, այնուհետև քերականական իմաստին՝ բառի սահմաններում, իսկ ավելի ուշ այն տարածվեց նաև քերականական այն ձևերի վրա, որոնք բառից դուրս էին, օրինակ՝ շեշտար, շարադասորյունը և այլն:

Ծչերան, օրինակ, լեզվում ձևական նշանների կազմը ընդլայնում է և նրանց մեջ ներառում բառերի զանազան փոփոխությունները՝ նախածանցները, վերջածանցները, վերջավորությունները, դարձվածքային շեշտը, հնչերանգը, շարադասորյունը, առանձին օժանդակ բառերը, շարակյուսական կապը և այլն¹⁰:

Ինչ վերաբերում է բռվանդակությանը, ապա այն էլ կարող է վերաբերել ինչպես լեզվին, այնպես էլ լեզվական նշանին:

Հայունի է, որ լեզվական բռվանդակությունը կապված է մի կողմից՝ լեզվական արտահայտության, մյուս կողմից՝ արտապեզզական իրականության հետ, որի հետևանքով լեզվական բռվանդակությունն իր մեջ ունի երկու շերտ՝ ներկեզվական նշանակություն, որը բխեցվում է տվյալ լեզվական արտահայտությունից և վերաբերական նշանակություն, որը տվյալ լեզվական նշանն ունի արտավեզվական իրականության հետ հարաբերակցության մեջ: Ընդ որում ներկեզվական նշանակությունը, ըստ Ա. Արքահամյանի, ընդհանրություններ ունի որպես ինքնին բաղադրություն համարվող ներքին ձևի ըմբռնման հետ¹¹:

Լեզվի բռվանդակության մասին ուշագրավ տեսակես է առաջ քաշել Ա. Հովհրոլոսդը, որը, ի հակացիու արտաքին ձևի, առաջարկում է լեզվի ներքին ձևի զարգացմանը: Ընդ որում հենց ներքին ձևն էլ նա նկատի ունի լեզուն ձև անվանելու:

Լեզվի ձև զիտարակության մասին ուշագրավ տեսակես է առնում ոչ միայն այսպես կոչված քերականական ձեր: Ըստ նրա, ձև հասկացությունը բառակապակցության և բառակազմության սահմաններից դուրս է: Հովհրոլոսդը ձեր պատկերացնում է մի կողմից՝ որպես տվյալ լեզվի առանձին տարրերի միասնականություն, որի միջոցով ժողովուրդը յուրացնում է ժառանգաբար իրեն փոխանցվող լեզուն, մյուս կողմից՝ որպես ոգու գործունեության մեջ այն մշտականն ու միօրինակը, որը տարարոշված հնչյունը բարձրացնում է մինչև մաքի արտահայտություն¹²:

Հովհրոլոսդի կարծիքով լեզուն միջնորդ է մարդու ներքին աշխարհի և արտաքին աշխարհի միջև: Ներքին ձևը հանդիս է զայխու հենց որպես լեզվի այն կողմից, որ հնարավորություն է տալիս հասկացությունները կապելու հնչյունների հետ: Յուրաքանչյուր լեզու, ըստ նրա, ունի իր ներքին ձևը, որը պայմանավորում է այդ լեզվի արտաքին ձեր: Խոսելով լեզվի արտաքին ձևի մասին՝ Հովհրոլոսդը հիշատակում է հետևյալ երեք ձևերը՝ լեզվի հնչյունական

ձևերը, լեզվի թերականական ձևերը, որոնք պարունակում են բառագուգումների և բառակազմության կանոնները և լեզվի ստուգաբանական ձևերը, այսինքն՝ բառարմատների ձևավորումը¹³:

Ներքին ձևը տվյալ լեզվին հասող հնչյունական նյութի և ժողովրդի ոգու միավորների միջցոցն է: Լեզվի ձևը բույլ է տալիս որոշելու, թե ինչպես է արտահայտվում ժողովրդի աշխարհայացքը:

Լեզվի ձևի և բառանդակության մասին Հոմբուդաի տեսակետը իր ազգեցությունն է ունեցել Ա. Պոտերնյայի հայացքների զարգացման վրա, որը դրսառվել է բառի ներքին ձևի մասին նրա հետազոտաբարյուններում: Ըստ Ա. Պոտերնյայի, թերականական ձևը բառի նշանակության տարրն է և նրա իրային նշանակության հետ հնչյունական է: Զկա ձև, որի ներկայությունը և գործառույթը գիտակցվեր այլ կերպ, բան նշանակությամբ, այսինքն՝ խոսրի և լեզվի մեջ որիշ բառերի և ձևերի հետ ունեցած կապով¹⁴:

Լեզվում ձևի և բառանդակության գիտակցման դիմուլական ներքանյական ներքանյուն է նրանց հակադրության հարաբերականությունը: Զեր և բառանդակությունը հարաբերական հասկացություններ են: Ա. Արքահանյանը լեզվական բառանդակությունը համարում է արտավեճվական բառանդակությունից դեպք լեզվական արտահայտություն ընկած հետևողական աստիճանական անցնեցնում մի օպակ¹⁵:

Ըստ Վ. Գրեչկոյի, իրականության գիտակցման և արտացըմբան մեջ առաջնահերթ դեր է խաղում լեզվի ձևը: Զեր, այսպիսակ, անհրաժեշտ միջնորդ է հնչյունի՝ որպես նյութի, առարկայական բառանդակության և ընկալիության միջև: Հենց ձևի մեջ են հանդիպում և փոխազդում երկու հականիր աշխարհները՝ մարդու սուրյեկտիվ աշխարհը և նրան շրջապատող օբյեկտիվ աշխարհը¹⁶:

Ձևի և բառանդակության գիտակցման խնդիրը Հոմբուդտին հանգեցնում է նաև, այսպես կոչված, անհատական ձևի զաղափարին, որը հսկելու է զալս որպես ներքին և արտաքին ձևերի վիճակարձ կապ, անցում և ներքանյանցում, որպես ներքին և արտաքին ձևերի՝ ստատիկայում և դինամիկայում միմյանցից անջատ զոյլություն ունենալու, վերջին հաշվով նաև ընկալիություն անհնարինության փաստ: Սա լեզվների անհատական, այսինքն՝ առանձնահատուկ ձևերի ներկայացումն է, որը պատասխանում է այսպիսի կարևոր մի հարցի, թե ինչպես են հարաբերակցվում և միմյանց լրացնում այս կամ այն լեզվի տարրեր կազմերին հասող առանձնահատկությունները, ինչպիսի կապ կամ օրինակ, տվյալ լեզվում բառին և նախադասությանը հասող ուրախ կառուցվածքների միջև: Սա էլ կազմում է տվյալ լեզվի բնուրարանական յուրահասակարյունը: Է. Արայանի բնորոշնամբ, անհատական ձևը նշանակյալ բառանդակության և նշանակիչ արտահայտության հակադրումիանությունն է, նշանի իմաստային ու հնչյունական (կամ որևէ այլ՝ փախարինվող) կրգմերի ամրողությունը: Այն ձևա-

բանուրյան տարր է, քանի որ հանդես է զայխ որպես խմաստայինի և հեջյունականի հսկատեղման որոշակի և նշանայնորեն սփորտուն ճակարդական՝¹⁷:

Զեի և բռվանդակուրյան՝ որպես փիլիսոփայական կարգերի միասնությունը նոյնպես հսկարերական է: Զեի և բռվանդակուրյան հսկասուրյան սողություրը նրանց գործառույթների զարգացման տարրերությունն է: Առարկայի փոփոխությունը սկսվում է բռվանդակուրյանից, որը նրա առավել շարժական տարրն է: Այնուհետև փոփոխում է ձեր, քանի որ այն ավելի կայուն և պահպանողական է: Զեր երբեք անփոփոխ չէ: Սակայն ձեր փոփոխությունը միշտ չէ, որ միանգամից է տեղի ունենում, այլ տվելի հաճախ՝ որպես արդյունք ձեր և բռվանդակուրյան միշտ գոյություն ունեցող հսկասուրյունների աստիճանական սրացմանը¹⁸:

Ինչպես տեսնում ենք, փիլիսոփայության մեջ ձեր հսկադրվում է բռվանդակուրյանը և ոչ սուրստանցին: Ըստ Գ. Զահորյանի, սրա սպատճառն այն է, որ բռվանդակուրյունը կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական¹⁹:

Համեմատելով ձեր և բռվանդակուրյան լեզվաբանական և փիլիսոփայական ըմբռնումները՝ Ա. Արքահանյանը նշում է. «Բռվանդակուրյան և արտասինայտության փոխսարարերության հետ սերտորեն առնչվում է հիմնանյութի և ձեր փոխսարարերությունը: Ձեր և հիմնանյութը հանդես են զայխ միասնաբար, անանջատ: Տվյալ ձեր չունեցող հիմնանյութը տվյալ իրականության մի սլաք բաղադրիչը չէ, այլ նրան նախարդող աստիճանը (ոչ միայն ժամանակային հաջորդականությամբ, այլև գոյարանական ստորակարգությամբ), որը դեռևս չունի ավալ ձեր և այն ստանալով՝ փոխարկվում է հաջորդ աստիճանին: Լեզուն ոչ թե ձև է, ի հսկադրություն հիմնանյութի, այլ ձևավորված հիմնանյութը»²⁰:

Խոսելով ձեր և սուրստանցի անախնոմիայի մասին՝ Զահորյանը ընթերցողի ուշադրությունն է երավիրում այն փաստի վրա, որ եթե սուրստանցն ընկարվում և մեկնարանվում է թիշ թե՛ շատ միանշանակորեն, ասսու նոյնը չի կարելի ասել ձեր մասին, որը տարրեր կերպ է մեկնարանվում ոչ միայն փիլիսոփաների, այլև լեզվաբանների կողմից: «Զեականն», ըստ նրա, լեզվաբանության մեջ հակադրվում է «փմաստայինին», «ճյուրականին» («գոյարանականին»), «փմառութիվին» (ի տարրերություն «քացահայտի ձևանացվածի»), «հասկացականին»²¹:

Ինչպես տեսնում ենք, լեզվաբանության պատմության մեջ բազմաթիվ փորձեր են եղել հակադրելու ձեր ինչպես բռվանդակուրյանը, այնպես էլ սուրստանցին: Արդյունքում որոշակացել են թե՛ ձեր և բռվանդակուրյան, թե՛ ձեր և սուրստանցի փոխսարարերությունները: Հակադրվելով Ֆ. Սոսյուրի հայտնի տեսակետին, որի համաձայն լեզուն ձև է, ոչ թե սուրստանց, ձեր՝ սուրստանցից անկախ լինելու տեսակետը քննադատության են ենթարկել ինչպես Պրահայի լեզվաբանական դարբոցի ներկայացուցիչները (Ն. Ա. Տրո-

բեցկոյը, Ռ. Օ. Յակոբսոնը, ավելի ուշ՝ Ա. Մարտիքեն), այնպէս էլ Գ. Զահումյանը, որը առաջ է քաշել լեզվի ուսումնաժրայրյան գոյարանական տեսակեւոթ՝ իր համբարիհանուր լեզվաբանական կադրավարով, որը հանրափորյուն է առաջն մեկնարանեկու լեզվական գործունեության արտավեզվակուն հիմքերը: Ընդ որում, ըստ նրա, ինչպէս արտահայտության, այնպէս էլ բախանդակության պլանները հանդիս են զայլիս որպէս նյուրական աշխարհի (սուրաստացի) դրսերումներ. մի սուրաստաց (արտահայտիչը կամ նշանակիչը) հիմք է ծառայում մեկ այլ սուրաստացի (արտահայտելի) կամ նշանակելիի) արտահայտման կամ նշանակման համար: Ինչպէս, Զահումյանն այստեղ «արտահայտության պլան» զադափարը փոքր-ինչ ընդլայնում է՝ ներգրավելով նրա մեջ ինչպէս շարժարանությունը, այնպէս էլ հնչարանությունն ու գրաբանությունը՝ արտահայտության պլանի ուսմունքն էլ անվանելով արտահայտարանություն²²:

Անտառարկելի է մնալ, սակայն, որ ձեզ, կապած լինելով ինչպէս սուրաստացի, այնպէս էլ բախանդակության հետ, առավել կայուն է ոչ միայն որպէս վիլխանփայական կարգ, այլև լեզվական համակարգի բաղադրիչ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ю. А. Левинский, Н. В. Боронникова, История лингвистических учений, М., 2005, с. 33.
2. Հմմտ. Ф. Ф. Фортунатов, Избранные труды, т. 1, М., 1956, с. 136.
3. Г. Б. Джакян, Универсальная теория языка. Пролегомены к субстанциональной лингвистике, М., 1999, с. 151.
4. Языкознание. Большой энциклопедический словарь, М., 1998, с. 557.
5. Գ. Բ. Զահումյան, Լեզվաբնուրյան պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 260:
6. Языкознание. Большой энциклопедический словарь, М., 1998, с. 557.
7. Հմմտ. А. А. Реформатский, Введение в языковедение. М., 2000, с. 261-262.
8. Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 442:
9. Էլ. Բ. Ազյան, Լեզվաբնուրյան հիմնություն, Եր., 1987, էջ 314:
10. В.В.Виноградов, Русский язык, М.-Л., 1947, с. 33.
11. Ա. Ս. Արքանյան, Բավանդակության և արտահայտության հարաբերականությունն լեզվում, ԲԵՀ, 1, 1988, էջ 35-36:
12. Նոյնի տեղում:
13. Գ. Բ. Զահումյան, Լեզվաբնուրյան պատմություն, հ. 1, Եր., 1960, էջ 338:
14. А. А. Потебня, Из записок по русской грамматике, т. 1, 2 вып., М., 1958, с. 29, 36.
15. Ա. Ս. Արքանյան, նշվ. աշխ., էջ 44.
16. И. А. Гречко, Теория языкоизнания, М., 2003, с. 195.
17. Է. Ո. Արայիան, Լեզվաբնուրյան տիպաբանության առարկան և «անհատավանի մեզվական ձևի» բացահայտման խնդիրը, ԲԵՀ, 2, 1988, էջ 39-40:
18. Философский словарь, под. ред. М.М.Розенталя, П.Ф.Юдина, М., 1968, с. 383.
19. Г.Б.Джакян, Универсальная теория языка. Пролегомены к субстанциональной лингвистике, М., 1999, с. 9.
20. Ա.Ս.Արքանյան, նշվ. աշխ., էջ 41-42:
21. Գ.Բ.Դжակյան, սկզբանականից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 42-43:

ՀԱՅԵՐԵՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Անսկի Գալայան
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի իմաստություն

Երեխաների քառապաշարի, գործածած քերականական ձևերի, լեզվական այս կամ այն կայուն կապակցության յուրավի ընկալման, իմաստությունան, նոր որևէ նրբիմաստով բառի գործածության բննությունը կամ վերլուծությանը առանձնանում է փաստական նյութի հավաքման յուրահասակություններավ: Ուրվագծված որևէ օրինաչափություն արյունը հատկանշական ու բնորոշ է առևասարակ բռնք լեզվակիրներին լեզվի յուրացման սկզբնական շրջանում, բե՛ռ պատահական խոսքային մի դրսերում է միայն: Գուցե այդ երեսույթը բնորոշ է միայն որևէ անհատի և ընդհանրական բնույթ չի՞ կրում: Մրանք հարցեր են, որոնց պատասխանները կարող են լույս տվոնել առաջին լեզվի տիրապետման գործընթացի օրինաչափությունների բնությանը:

Մանկական խոսքի ուսումնասիրության նյութը՝ երեխաների ամենօրյա խոսքի գրառումները, որ բանավոր խոսքի նմուշներ են (խոսակցական հայերենով, որևէ բարեսոսկ կամ խոսպատճեմ), կատարվում են առանց որևէ խմբագրման, փոփոխության, ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես հնչել են երեխայի շուրբերից: Հատ անհրաժեշտության նշվում է նաև այն իրադրությունը, եթե արտաքերվել է այս կամ այն նախադասությունը, արտահայտվել է հետաքրքիր մի միտք, կամ լեզվի որևէ միավոր գործածվել է ոչ քեզ ընդունված, այլ ուրայն իմաստով կամ խճառույթին նոր նրբերանգով:

Դիպվածային կամ՝ իրադրային նորակազմություններ հանդիպում են շատ երեխաների քառապաշարություն:

Դիպվածային կազմությունների բառակազմական կատալոգարմեր: Այս հատվածում կանդրադասնանը մասնուկների խոսքից բաղած այն օրինակներին, որոնցում առկա են ինքնաստեղծ գոյականներ և ածականներ, խկնորակազմ բայերի բառակազմական կադրապարմերը և նրանց գործածությունը կդիտարկենք խոնարհման համակարգի բնության ընթացքով:

- 1) Դիպվածային կազմություններ գոյականական գործածությամբ.
 - Տատիկ ջան, աշկոցդ բերեն: (Ստեփան, 3 տարեկան)
 - Վա՛յ, ասեղ, չէ, գճոց: (Արուայակ, 6,5 տարեկան)
 - Կծիչն ուզում, կծուկն ուզում: (Լիլիթ, 3,5 տարեկան)

- Կոշիկս տարք կոչկարարի մոտ: (Արտայակ, 6,5 տարեկան)
- Կտրասաղ տուր, բռնդը կտրեմ: (Զարուհի, 3 տարեկան)
- Էս պապայի հարրճ ա, դե, որ խմում - հարքում ա: (Լիլիթ, 4 տարեկան)
- Վարդիրը հեզամբով բացվում են: (Արտայակ, 6,5 տարեկան)
- Միսիջներս դուրս եկան, շուտ տուն գնանք: (Վահեն, 4 տարեկան)
- Պասպիկի նայիչն ա: (Էմնա, 4,5 տարեկան)
- Ման, աղվեսի պատմը պատմիր: (Տարեկի, 2,5 տարեկան)
- Գնամ սափրովիչով սափրվեմ: (Միեր, 2,5 տարեկան)

★

- Աննա՛, տու՞ր մատիտը պրեմ:
- Բա ու՞ր ա սրամդ: (Աննա, 3 տարեկան)

Զրոսնում են այն սպորտիրապարակի մոտ, որտեղ Լիլիթի հայրը առավուները վագրում է.

- Էս պապայի վազն ա: (Լիլիթ, 4 տարեկան)
- Վառը վրաս ա զալս: (Էմնա, 4,5 տարեկան)
- Մոցարտի օրորությունը երգիր: (Միեր, 2,5 տարեկան)

Ընդգծված միավորները ներկայացնենք՝ վակագծերում նշելով նրանց իմաստը:

Աչկոց (= ակնոց)

մրսիչ (= քևերի՝ ցրտից վշաբաղված աղվանազը)

զնդոց (= զնդասեղ)

նայիչ (= հայելի)

կծիչ
կծուկ } (= եղինջ)

պատմ (= պատմուքյոն, հերխար)

կոշկարար (= կոշկակար)

սափրվիչ (= սափրվելու սարք)

կտրատ (= մկրատ)

սրան (= սրիչ)

հարք (= օդի)

վազ (= սպորտիարասպարակ)

հեզանք (= նազանք, քնիքու-

վառ (= զոլորշի)

րյուն)

օրորություն (= «Օրորոցային»)

Գոյականի իմաստով զործածված վերորերյալ 16 միավորներից չորսը պարզ են (հարք, պատմ, վազ, վառ), 12-ը՝ ածանցավոր: Գոյականական իմբը ունեն՝ աչկոց, զնդոց, կոշկարար, օրորություն: Բայական իմբքով են կազմված՝ կծիչ, կծուկ, կտրատ, հարք, մրսիչ, նայիչ, պատմ, սափրվիչ, սրան, վազ, վառ: Ածականական իմբը ունի հեզանք դիպվածային բառը:

2) Դիմվածային կազմություններ ածականական գործածությամբ:

- Մասիսի տակը դաշտագոյմ ա: (Արեգ, 5 տարեկան)
- Կարդում եմ, ես կարդասեր եմ: (Արուսյակ, 5 տարեկան)
- Ես ի՞նչ կռնում ճանապարհ ա: (Սիեր, 7 տարեկան)
- Ի՞նչ մոռացկան կլին ես: (Արուսյակ, 4,5 տարեկան)

Երեխանների խոսքում ածականները սակավ գործածություն ունեն: Դաշտագոյմ (= կանաչ), կարդասեր (= ընթերցասեր), կռնում (= կռներով լի), մոռացկան (= մոռացկու). ածականական կիրառությամբ ինքնաստեղծ բառների նշան օրինակները, ինչպես տեսնում ենք, բաղադրյալ կազմություններ են: Դաշտագոյմ, կռնում միտվորները գոյականական եիմրով են, իսկ կարդասեր, մոռացկան կազմությունները՝ բայսկան:

Հոմանիշների և հականիշների գործածությունը մանկական խոսքում: Մանկական խոսքում նկատել ենք հոմանիշների և հականիշների ուշագրավ կիրառություններ:

Աղքի մեքենայի գանգը լեռով՝ 3,5 - ամյա Լիլիթը նայեց սրտուհանից.

- Ohn՝, կենաք եկավ:

Բերենք մեկ այլ օրինակ:

- Մամա, մի պնդուկ վերցրեցի՝ չի աշխատում, որիշը վերցրեցի՝ էլի չի աշխատում: (=փշացած է)

Հականիշների ընարարյունը ևս որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Ասկածի հակառակ գաղափարը արտահայտելու համար փոքրիկը երթևմն բառային մխավորներ է գործածում, երբեմն չ մխառական մասնիկի միջոցով է բառ կազմում: Գոյների տնկանան ժամանակ, օրինակ, բաց կամաչի հակառակը նշելու համար հաճախ է հանդիսան փակ կամաչ արտահայտությունը (հմման, բաց-փակ, բաց-մուգ):



- Խո՞րմ էիր քննել:

- Խորը չի քննել բարակ լի քննել: (Լիլիթ, 4 տարեկան)

Նշենք, որ մեր հարցին, քեզ ինչպես կասենք «փոքր էիր քննել»-ի հակառակը, մեծահասակներն էլ մեկ բառով պատասխանել դժվարացնեն:



- Չոն քոյլ ե՞ս ուզում:

- Չե, ուժեղ: (Վարդանուշ, 4 տարեկան)

Քոյլ - ուժեղ և քոյլ - սկինդ հակադրության հետաքրքիր կիրառություն ևս նաև հետևյալ օրինակները:

Ունգին խաղաքու հսմար երեխաները բաժանվում են 2 խմբի. Վարդիկ Արտիկը ընկերում է Հասմիկի խումբը:

Հասմիկը դժողու ասում է մյուս խմբի ավագին.

– Տեսնո՞մ եք՝ ինչքան պինդերով եք... Այս Արտիկը բռյլ ա խաղում... (Հասմիկ, 7 տարեկան)



– Մամ, 16տեղ պինդ պաժառ էք: (Մարինե, 3 տարեկան)

Այս հողվածում կյանքարկենք չ Ժխտական մասնիկի բառակազմական կիրառության դեպքերը (երբ երեխան չ-են երբեմն գործածում է ամ- նախածանցի կիրառությամբ), խկրայի Ժխտականի կազման յարահատկությունները բննարկելու ենք խտարինան համակարգի ուսումնասիրության ժամանակ:

– Տատիկը շաբաթ օրն էլ ա աշխատում, չշաբաթ օրն էլ: (Կահե, 4 տարեկան)

– Իմ հսմար չկծու առամի պաստռ կատնեք: (Շողեր, 3 տարեկան)

– Մի խնձորը պոչով ա, մեկը չպոչով ա (Մարզարիտ, 4 տարեկան)

Հականիշների և հոմանիշների կիրառության, ինչպիս նաև նեզլսուկան այլ երևոյթների գործառույթի, առանձնահատկությունների վերաբերյալ ընդհանրացումներ կարելի է անել վաստական հարուստ նյութի կուտակումից հետո մխայն: Առայժմ, խոսափերկ հապճեա եղասիսնզորներից, ուրվագծներ մի ուշագրավ երևույր կա, որ առնչվում է այս կամ այն առարկայի անվանմանը:

Մանդուլը գաղափարի հսմար երեխաները գործածել են հականիշ արմատներով կազմված բառեր: Մի երեխաս ասել է իջարամ, մեկ որիշը՝ բարձրաճայիր:

– Բարձրաճայիրով բարձրաճում եմ: (Նշան, 2 տարեկան)

Մանդուլը գրքային բառ է, խոսակցական հայերենում երե գործածվում էլ է, սպաս շատ սակավ: Համենայն դեսպ, մեր դիտարկումների ժամանակ չի հանդիպել: Այդ գաղափարը չափանաս նեզվակիները արտահայտում են աստիճան բառով, երբեմն հանդիպում է նաև փիլարամ-ը:

Դրափոխություն (մետարեզիս): Դրափոխության կամ եռևառաջության երևոյթը հանդիպում է և բառի, և բառակապակցության ընկալման և վերաբառադրության ժամանակ:

Այսպես՝ պլամի զլոյս ասելու վիճակըն երեխան գործածում էր զլոյսալլան, շաբաթըլորի վիճակըն՝ արլոր շաբաթ, վիխիկ-ը մանկիկի խոսքում դարձել է սիխիկ, հեծանիկը՝ հեծավիմ և այլն:

Բերենք դրավոլսության տարրեր դեպքեր ներկայացնող մի բանի ամբողջական համատեքստեր¹:

Միերը կադարձ դրսից գալիս է ու ասում.

– Սյու հատ օգնե՛ք, ուստ կտորի քար ա մտել: (Միեր, 2,5 տարեկան)

★

– Մա՞մ, իս ի՞նչ ա:

– Կարազի տալո՞ն:

– Տարազի կալո՞ն: (Սուսաննա, 3 տարեկան)

★

Հասմիկը արտասանում է.

– Տատը ճաշ է պատրաստում,

– Պատը կոտր է փայտեցում: (Հասմիկ, 3 տարեկան)

Երեխաները կյանքի առեղծվածի մասին: Երեխաների խոսքին հետևելով՝ տեղեկանում ենք նրանց մտքերին, զգացմունքներին. ի՞նչ են մտածում, ի՞նչ է նրանց մեջ տարափորվել անցնող օրվանից, մարդկանց հետ շփումից, ի՞նչը նրանց գարմացրեց, ի՞նչ են երազում, ինչպես են հասկացել և ինչպե՞ս են վերաբռնադրում հերխարք, բանաստեղծությունը և այլն:

Մանկական խոսքին նվիրված ուսումնասիրություններում փոքրիկ իրազեկորդների մտքերը ներկայացվում են հետևյալ թեմատիկ բաժանմանք.

1) Երեխաները ծնվելու առեղծվածի մասին, 2) Երեխաները կյանքի մասին,
3) Երեխաները մահանալու մասին²:

Մեր հավաքած նյութից բերենք ծնունդ - կյանք - մահ թեմաներին առնչվող մի շարք օրինակներ:

★

– Անձա՛ ջան, ինչի՞ են մարդիկ սալրում, որ պիտի մեռնեն: (Դավիթ, 5 տարեկան)

– Մամա՛, ո՞րտեղից են առաջանում երեխաները, ինչի՞ց: Ես հասկացաւ. Ասադիկիմ դու ես բերել, իմած է՛ պապան, որովհետև ես տղա եմ: (Դավիթ, 7 տարեկան)

★

Ավտորուտում մի կին կատու է զրկել, վերաբերուի արանքից երևում է կստվի զլուխը.

– Պապա, են ծյոծյան կուկու ա բերում: (Հայկակ, 4 տարեկան)

★

Զարարյան Մարինեն, որ ընտանիքի միակ երեխան էր, 2,5 տարեկանում ասում է ծնողներին.

– Ապերիկ առեք, բոյրիկ առեք:

Մի անգամ էլ՝

– Լսվ, որ չեք առնում, զոնե ծխտիկ առեք:

★

Մայրը ասում է.

– Որ զնամ իշխանդանոց, ի՞նչ թերեմ, քոյրի՞ն, թե՞ ապերիկ:

– Մի հատ քոյրիկ, մի հատ ապերիկ, երկու հատ էլ փուչիկ: (Նուկասյան
Լիլիք, 5 տարեկան)

★

– Դավիթ, ի՞նչ թերեմ քեզ համար, ապերի՞ն, թե՞ քոյրիկ:

– Չէ, կապիկ եմ ուզում: (Ջավիթ, 2,5 տարեկան)

★

6 տարեկան Արուսյակը հարցնում է.

– Մամ, առաջին ճարդը ո՞րտեղից ա դուրս եկել, կապիկի՞ց:

– Այո:

– Հա՞յ, ուրեմն Էմման (տատիկը) կապիկի՞ց ա դուրս եկել:

★

– Ես ուզում եմ սկզբից տատիկ դառնամ, հետո՝ մամա, որ չմեռնեմ: (Անի,
5 տարեկան)

★

– Մամ, որ մի փոքր տղայի տնիկն հողի մեջ, շատ տղանե՞ր կածեն: (Արուսյակ, 6,5 տարեկան)

★

– Ես չեմ ուզում մեծանամ, որ չմեռնեմ: Ես կրաքնվեմ, որ չծերանամ ու
չմեռնեմ: Կմտնեմ պահարանի մեջ, որ չմեռնեմ: (Արուսյակ, 4 տարեկան)

★

– Մամս, ինչի՞ո ես շատ ուսում, որ շուտ մեծանամ, մեռնե՞ս: (Արուսյակ,
4 տարեկան)

★

– Մամ, կուզե՞իր դու ես լինեիր:

– Չէ, ես արդեն մեծացել եմ:

– Ես կուզեի՝ ձեռքիս վրա երկու կնօպկա լիներ, մեկի վրա զբած լիներ մ,
մեկի վրա՝ փ: Մ-ն սխմեի՝ մեծանայի, փ-ն սխմել՝ փոքրանայի:

★

Հեռոստացույցով համերգ է:

– Ո՞վ է երգում, մամ:

– Գեղմանացին երը:

6,5-ամյա Արուսյակը զարմանում է.

– Բայ չեն մեռե՞լ:

Երեխաների ասածները հնարավորություն են տալիս հետեւելու նրանց մարդի ընթացքին. ինչ ձևով է կատարվում ընդհանրացումը, ի՞նչ օրինաշափություններ, ի՞նչ պատճառներ են տեսնամ որևէ իրողություն մեկնարանելիս, ինչպե՞ս են բացատրում այս կամ այն երեսոյքը: Այդ մասին են վկայում և նրանց դասողարյունները, և նրանց բազում, բազմապիտի հարցերը, որոնց քննությունը անշափ հետաքրքիր նյութ է և հոգեբանի, և վիխանայի, և՝ մանկավարժի, և լեզվաբանի համար: Աշխարիք պես իին ու նոր, անսպաս ու անվերջանալի են այդ հարցերն ու պատասխանները:

– Մակարյան. տղայի¹ ազգանուն ա, բն² աղջկա: (Հասմիկ, 6 տարեկան)

– Քիրը շնչելու համար ա, բերանը ուտելու համար ա, լավ, բա ո՞նքը ինչի համար ա. հա՛, ձդայնանալու... (Հասմիկ, 4 տարեկան)

★

– Պասիկ, ինչի³ են քո տեսունը իմ ամսունից դրել: (Ուսուայան Առքերա, 5 տարեկան)

– Լավ կիմեր, չլ⁴, պասիկը ճահճի սերմ ցաներ, էդանու ճակիճ աճեր: (Սերգեյ, 6 տարեկան)

– Էս լինձորները զործարանում ե՞ն սարքում: (Արա, 3 տարեկան)

Երեխաների նված հարցերը կարող են դասնալ առանձին վերլուծության առարկան և նպաստել նրանց աշխարհայացքի, մտահորիզոնի զարգացածության պարզաբանմանը, երևակայության և դյատողականության ուսումնասիրությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Դրավիխության տարյեր լեզվեր են վերլուծված հետեւյալ աշխատություններամ. Գվոզդեվ Ա. Ի. //Вопросы изучения детской речи М., 1961, Тюриш П.Т. - Метатезис в детской речи и его аспекты в общей теории языка, в кн. «Психолингвистические проблемы семантики», М., 1983, էջ 209-221.

² Կ. Չուկովսկի, Օգ ճաշ ճանապարհություն մանաւության մասին, Երևան, 1999

ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱՎԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

*Մերգեյ Գալստյան
Երևանի պետական համալսարան*

Իր հինգհազարամյա պատմության ընթացքում հայերենը, այլ խոսքի մասերի բառերի հետ միասին, կերտել օգտագործելու ու օգտագործում է քայ խոսքի մասին պատկանող մի քանի տասնյակ հազարի հասնող բառեր, որոնցից եղ ևդ. Աղյանի «Արդի հայերենի բացարարական բառարանում» արձանագրված է ավելի քան քամ հազարը: Խոկապես կերտել է¹, որովհետև ելակետային ձևերում բայերը հայերենում, առանց որևէ բացառության, բաղադրյալ՝ ածանցափոր և հայկական կազմություններ են՝ վերջադրական -և ածանցի (արդի հայերենում՝ համաժամանակյա մոտեցմամբ -եւ, -ալ) պարտադիր առկայությամբ և կազմված են հիմնավաճանում վերջածանցմամբ (պատել, վագել), ներածանցմամբ² (բռնել/բռչկռտել, գրել/գրվել) կամ նախածանցմամբ (կառուցել // վերակառուցել // թերակառուցել):

Արդի հայերենում գործածվող համադրական բայերը, համաժամանակյա մոտեցմամբ և արդի լեզվահոգեբանական ընկալումը նկատի ունենալով, ըստ հիմքերի խորամասային պատկանելության և ածանցման ընույթի կարելի է բաժանել այսպիսի հմբերի:

ա. այլ խոսքի մասերի հիմքերից վերջածանցմամբ կազմված և կազմվող բայեր: Այսուղի մտնում են -ել վերջածանցով գոյականեներից (անձրենել, առաջնորդել, արդուկել, բժշկել, զաշել, լծել, ճաշել, սղոցել) և ածականներից (կարմրել, բունափորել, մանրել, դժգոհել, պղտորել, սրանտել), -(ան) ալ-ով նույնպես գոյականեներից և ածականներից (գազանանալ, փոշխանալ, առաջշանալ, դաժանանալ), -(ավոր) ել-ով գոյականեներից (կահավորել, սարքափորել, վարկագորել, ֆինանսափորել) և բնածայնական-նմանածայնական հիմքերով -ալ-ով կազմված բայերը (ըլսկալ, դվկալ, այլ կրկնափոր հիմքերով՝ բրկրդիւկալ և ան):

բ. Բայերից բառակազմական նախածանցներով կազմված և կազմվող բայեր (կատարել՝ գերակատարել, թերակատարել, վերակատարել..., նկարել՝ արտանկարել, վերտնկարել..., հարձակել՝ նակահարձակել, նախահարձակել..., գործակցել՝ համագործակցել վերագործակցել ... և ան):

գ. Բայերից բայական ներածանցներով կազմված և կազմվող բայեր (գրել // գրուել, կտրել // կտրուել, կանգնել // կանգնեցնել, խաղալ // խաղացնել, խասնել // խասցնել, փախչել // փախցնել, գրել // գրվել և ան):

դ. Արդի հայերենում գործածության ամենամեծ հաճախականություն ունեցողներից են սյուն բայերը, որոնց հիմքերը արդի լեզվամտածողությամբ որևէ այլ խոսքի մասի հետ չեն կարգանում կապել այսինքն՝ ինքնուրույն

բառային գործածություն չունեն, «մարդու» բայական արմատներ են: Այս խմբի մեջ մտնող բայերը կատուցվածքով բազմազան են՝ զալ, իմասնալ, կարդալ, հասկանալ, մնալ, պարձենալ, ստունալ, ուզենալ, տասնելնալ:

Ե. Համեմատաբար փոքրաթիվ են այն բայակատզմ բայերը, որոնք կազմվել են որպես բարդ բառեր՝ բայ բաղադրադ իմբերով՝ հարցարնելել, ցուցաբերել բարենադրել են:

Բայական բառակազմուրյունը և բայերի ելակետային ձևերի ձևակազմուրյունը, լճդիսներուրյունների եւս միասին, իրարից և զոյսլանների բառակազմուրյունից և ձևակազմուրյունից մի շարք ձևերով տարրերվում են³: Երեն ընդունած ենք, որ լեզվական ցանկացած մոլորդակի բաղադրյալ միավորի հիմքը դրա այն մտած է, որը մնում է, եթե նրանից անջատում ենք տվյալ միավորի ձևավորման վերջին բայրում հավելված բաղադրիչը (բարդ բառի դեպքում՝ արմատը կամ բառը, ածանցավոր բառի դեպքում՝ վերջանցը, նախածանցը կամ ներածանցը են), ապա պարզ է, որ բայերի բառակազմական և ձևակազմական հիմքերը կարող են նոյնանալ առաջնային կազմուրյան այն սկզբնաձեւում, որոնք երկարույր են (արմատահիմք + խորամասային // ձևակազմական -ել/-ալ), աններածանց (ուտել, պատել, լապտել, մնալ, տալ են):

«...է.-ի արտասանության ժամանակ քերանի բացվածքի աստիճանական լուսացումով սասացվում է օժանդակ բայի ա-ն, ճիշտ հակառակը այն ընթացքի, որ բարբառները ցուցաբերում են ա-ից է.-ի առաջացման, այս դեպքում արդեն ա-ի արտասանության ժամանակ քերանի բացվածքի աստիճանական նեղացմանք: Այսպիսի մեկնարանության դեպքում է > ալ գուզարանության սկիզբը ալեար է տեղադրել տրեմայսն տարածքում, որոնցից լեզվական երևոյթը շարժվել է դեպի տրեեր և իրեն լեզվական երևոյթի շարժման ընթացքի վերջին կետ՝ այստեղ ընդգրկել է մեծ տարածք» [ՀԲԱ, 1985, էջ 60]:

Օժանդակ բայի անցյալ ժամանակը բարբառներում դրսերփում է հետևյալ կերպ:

1. պարզ ձևերով, որոնք զործառում են զանազան հեջունական տարբերակներով և եկճնականում նոյնանում են անցյալ ժամանակունենք կազմող դիմարվային վերջավորությունների հետ:
2. բաղադրյալ ձևերով, որի դեսպան ներկայի կազմություններին ավելանուն է որևէ բառ-մասնիկ՝ էր, լաւ, լէ, նէլ:

Օժանդակ բայի պարզ ձևերը առկա են Թիֆլիս, Աստրախան, Ոզն, Սվերդլովսկ, Կարեն, Տրավոլգան, Համշեն, Սուչավա, Նոր Նախիջևան, Պոլիս տարածքում: Նկատելի է, որ ներկա ժամանակում օժանդակ բայի ի ձայնավորով տարբերակ ունեցած բարբառները անցյալում զործառում են է հեջունով ձևերը:

Օժանդակ բայի բաղադրյալ ձևերը ընդգրկում են Ղարադադ, Մեղրի, Կարենան, Ազովիս, Խոյ, Ուրմիա, Մարտան, Բուրդուր, Հաջըն, պարսկահայ տարածքները: Խնչյան նշվել է, դրանք կազմվում են որևէ բառ-մասնիկով, որն ավելանում է ներկայի ձևերին: Ընդ որում բանի որ դեմքի և քվի զարդարությանը տրամահավում է օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերով, ուստի հիշյալ մասնիկները ցոյց են առաջի միայն ժամանակի, այս դեպքում՝ անցյալ ժամանակի իմաստ: Հարկ է նաև հավելել, որ այդ բառ-մասնիկները զործառում են ավագ խոսքածքի անցյալ ժամանակախմատուն ունեցող բռնը ձևերում՝ անցյալ անկատար, փաղակատար անցյալ, ալպակատար անցյալ և այլն:

Մարտան, Խոյ, Ուրմիա, Մալմաստ, Նախիջևան Ազա/ բարբառային զորում օժանդակ բայի անցյալի ձևերը կազմվում են էր մասնիկով՝ զուցան էմ էր, զուցան և էր, զուցան և լը, զուցան և լը* էր, զուցան էր* էր, զուցան լը էր (Խոյ, Կարտլիցի, 363), Բուրդուրում և Հաջընում՝ իոի մասնիկի հարադրմանք, այսպիսի՝ նըստըցընում ըմ իոի (նատեցնում էի), նըստըցընում ըմ իոի նըստըցընում ա իոի, նըստըցընում ըմ իոի, նըստըցընում ըմ իոի, նըստըցընում ըմ իոի [Ն. Մկրտչյան, Բուրդուրի բարբառ, էջ 14]:

Նա:լ // նէլ մասնիկի օգնությամբ են անցյալ անկատարը կազմում Գողբն զավատի որոշ խոսքածքներ՝ Ազովիս, Բիսա, Ցինա, Ուսմիս, Փառակա, Տանակերտ՝ խօսքը ըմ նա*լ, խօսքը ըս նա*լ, խօսքը նա*լ, խօսքը ըը նա*լ խօսքը ըն նա*լ /ՀԲԱՆ, Նախիջևան, Փառակա, 13/

Օժանդակ բայի բաղադրյալ ձևերը լավ /լա, լէ/ մասնիկով են կազմվում Հայրուր, Շաղախ-Շեյխան, Ղարադադ, Դզմար, Կարավարերդ, Կարենան, Մեղրի բարբառային զորում, այսպիսի՝ խոսիս ըմ լա*լ խոսիս լա*լ

խուսիս լա*ի, խուսիս ըք լա*ի խուսիս ըք լա*ի, խուսիս ըն լա*ի [ՀԲԱՆ,
Նարադաղ, Սարդու, 100]:

Աճայշյանը փորձում է բացարեկ օժանդակ բայի բադադրյալ ձևերի
ստացածումը: Այդ պատճառով նա նախ քննում է Աստրախանի բարբառի
անցյալ անկատարի կազմությունը, որտեղ օժանդակ բայի անցյալ անկա-
տարի երկրորդ ձևն է իմ (Լի). Իմնը (Լինը), իմն (Լին): Ըստ Աճայշյանի՝ երե-
սոյ կազմություններամ իրար հաջորդող երկու ի-երը մխանային, ասպա-
կնույնանային ներկայի ձևերի նեա, և համանություն կառաջանար
ներկայի և անկատարի կազմությունների միջև: Քանի որ Աստրախանում
այդ մխացումը չի կատարվել, ուստի և չի հնարիվ որևէ միջոց՝ կանխելու այն.
«Հայց այդ մխացումը կատարվել է Մարադայի, Ազուլիսի և այլ բարբառների
մեջ, որով անհրաժեշտ կարիք է զգացվել զանազանություն ստեղծելու: Մրդ-
ես իմ (ես եմ) և ես իմ (ես եմ), իմգելի իմ կամ իմգելիմ (ուզո՞ւ եմ), բայց նաև
ուզո՞ւ էի» [Հ. Աճայշյան, 1961, 196]:

Աճայշյանը կարծում է, որ իիշյալ համանուն ձևերը միմյանցից
տարբերակելու ամենակարծ և ամենաբնուկան միջոցն էր զործածել անցյալ
անկատարի եղակի 3-րդ դեմքը՝ եր, որ զործածել է Մարադայի բարբառը.
«Նոյնական միջոցներ եղան Ազուլիսի համար եւլ և Սներիի համար լոր,
որոնք, իրեն դերբայ անդեմ լինենք, ավելի հարմար էին որևէ բայի եղակի և
հոգնակի բոլոր դեմքների համար» [Հ. Աճայշյան, 1961, 196]:

Աճայշյանի այս վարկածը կամնավորվում է բարբառային փաստերով:
Օժանդակ բայի բադադրյալ կազմություն ունեցող բարբառային մխավորները
կիմնականում օժանդակ բայի ներկայի ձևերում ունեն համանուն գրյագեր,
որոնք կ ամենայն հավանականությամբ բառ-մասնիկների զործածության
պատճառ են դարձել:

Այսպիսով, դիմարվային քերույթները զարգացման որոշակի ուղի են
անցել և լեզվի զարգացման տարրեր շրջաններում ներարկվել աւարտնույր
փոփոխությունների, որոնց բոլոր միջանկան օդակները պահպանված են
բարբառներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Մեղրու բարբառը, Երևան, 1954:
2. . Հ. Աճայշյան, Լյակատար թերականություն հայոց լեզվի, հո. 4, մաս Ա, Երևան, 1959:
3. Հ. Աճայշյան, Լյակատար թերականություն հայոց լեզվի, հո. 4, մաս Բ, Երևան, 1961:
4. Թ. Կոմիկյան, Մարադայի բարբառը, Երևան, 1967:
5. Դ. Կոտանենյան, Երզնկայի բարբառը, Երևան, 1979:
6. Հայերենի բարբառազիտական ատլաս: Ուսումնասիրություններ և նյորեր.
// Երևան, մաս 1, 1982, մաս 2, 1985:
7. Հայերենի բարբառազիտական ատլասի նյորերի հավաքման ծրագիր, Երևան, 1977:
8. Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Երևան, 1978:
9. Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խոսք, Երևան, 1958:
10. Ն. Մկրտչյան, Բուրդուրի բարբառը, Երևան, 1971:
11. Գ. Զահորկյան, Հայ բարբառազիտական ներածության Երածություն, Երևան, 1972:
12. Օգտագործված են Հայերենի բարբառազիտական ատլասի ծրագրով
հավաքված նյորերը, որոնք պահպան են ՀՀ ԳԱԱ Հր. Աճայշյանի անվան լեզվի
ինստիտուտում:

*Տորդ Դավայան
ՀՀ ԳԱԱ Խնագիտուրյան և ազգագրուրյան իմաստիստուտ*

Հնդկավաճական (հ.-ե.) առանձին լեզուների միջև անցկացվող զուգահեռները հնարավորություն են ընձեւում առավել ճիշտ որաշելու նրանց անդն ու դիրքը մխասնության շրջանում։ Այդ մխասնությանից տարածաշատվելու զարգընթացը, բնակչության, տեղի չի ունեցել մխանգամից, ատոմային սլայքյունի տեսքով։ Իրականում եղել է երկարատև և շարունակական մի զորդընթաց, որը ձգվել է դարեր և հազարամյակներ։ Ընդ որում, նախավեպից սկզբնավեն առանձնացել են ոչ թե լեզուները (ժամանակակից ընկալմամբ), այլ իրար մաս գտնվող լեզվալմբերն ու լեզվայուղերը։

Այս ամենը հաշվի առնելով՝ լեզվաբանների կողմից ենթադրություն է ստուգ քաշվել երրեւ գոյուրյուն ունեցած հայ-հունա-հնդ-իրանական լեզվական սմբռդզուրյան մասին, որը կօգուտ են նաև հայ-հունա-պրիական։ Այդ տեսության հիմքը դրել է գերմանացի գիտնական Ֆ. Շպեկտը, որը բարձրացրել է հ.-ե. սմբռդզուրյանից տարրեր լեզվախմբերի առանձնացման հաջորդականության հարցը՝ համարելով, որ նախ տարածաշատվել են հնդիրանցիները, հույները և հայերը¹։

Նշված տեսակետոր պաշտպաննել են Գ. Զահուկյանը և հայ լեզվաբանների մեծ մասը²։ Ժամանակակից արևմտյան գիտականները, սակայն, սյոյ փարկածն ընդունում են մասնակիութեան։ Օրինակ, 2003 թ. լույս տեսած՝ Ֆ. Կորպալսիդահի հիմնարար աշխատության մեջ, որը նվիրված է հայոց լեզվի պատմահամեմատական հեջունաբանության և քերականուրյան հարցերին, հայերներ դիտվում է որպես արդի ալբաներենին ճառ մի լեզու, և նրա դիրքը համարվում է միջանկայի հունարենի և պատմա-բարյան լեզուների միջև³։

Արևմտյան հնդկավաճանության մեջ զրեք տովերի մեջ են մնում հայ-հնդկական և հայ-իրանական սերտ զուգաբանությունների հարցերը⁴։ Այս ստումով հաստկացվեն հետարքիր և հայ-իրանական առնչությունների խնդիրը՝ հաշվի առնելով հայերներ մեծաքանակ իրանական փախառությունների առկայությունը։ Հայերների իրանական փախառություններին անդրադարձել են Հ. Հյուշմանը, Է. Բենվենիսասը, Հ. Աճայյանը, Հ. Քելին, Ռ. Շմիտը, Գ. Վասարյանը և շատ որիշներ⁵։ Այս խնդրին առանձին մենագրություն է նվիրել Լ. Հովհաննիսյանը⁶։

Ինչ գերաբերում է հ.-ե. մխասնության շրջանուց եկող հայ-իրանական զուգաբանություններին, ապա թե՝ հայաստանյան, թե՝ արաերկրյա լեզվաբանական գիտության մեջ առավել քիչ ուշադրություն է դարձվել այս խնդրին։ Այսուղև, նաև և ստուգ, անսարյան հարկ է ի նկատի ունենալ իրանական եզրի խիստ ընդգրկություն և տարադանակ լինելը։ Այն իր մեջ ներառում է տարրեր պատմա-աշխարհագրական տարածքներում խոսվող բազմաթիվ լեզուներ ու բարբառներ։ Մինչդեռ իրանական լեզվայուղը

¹ Ենորհականություն եմ ԽՍՀՄ նախագահ Հրաչ Մարտիրոսյանին (Աերեան)՝ սույն հոդվածը մանրամասն իրաբար և արժեքավոր դիտարկություններ անելու համար։

հաճախ դիտարկվել է որպես մեկ ամբողջություն: Հայ-իրանական լեզվական գուգարանուրյունների հարցը զրեք միշտ քննարկվել է հենց այդ ամբողջության շրջանակներում:

Ավելի հսմակողմանի և ընդգրկուն ստանալու համար ճիշտ կլինի առանձին հետազոտությունների գոնե հայ-արևածագայի համար առաջարկությունների առկա զուգարանուրյունները: Հայ-արևածագայի համական առնչությունների ուսումնասվիրտան համար հասկապես կարևոր է օսերենի տվյալների համակողմանի ընթուրյունը: Օսերեն ասերպէ՛ ի նկատի ունենք ոչ միայն ներկայումս Հյուսիսային և Հարավային Օսիայուն խոսվող լեզուն, այլև նրա պատճական զարգացման փուլերը ներկայացնող պատճերենք և ինչ այլուրենքներ, որոնք վկայված են միայն առանձին բառածներով և անձնանուններով⁷:

Հայ-օսական հնագույն լեզվական առնչությունների հարցը մեզ օգնում է առավել հստակ պատկերացում կազմելու հայերի՝ ստուգին իրանցինների հետ ունեցած սերտ շփումների մասին: Ամենայն հավանականությամբ, այդ առանձին սերտ շփումները եղել են ենց սլյուրական զանազան ցեղերի հետ: Հնդկաբանական իմքնից եկաղ հայ-օսական զուգարանուրյունները վկայում են հայ-իրանական մերձակցության մեջ առկա առավել կոնկրետ և նաև անուններով⁷:

Սույն հոդվածի նյութը օս-հայկական երեք բացատիկ (Երակլիովի) զուգարանուրյունները են, որոնք պատկանում են զգայական ընկալաբանների հետ կապված հասկացությունների իմաստային դաշտին և արտահայտում են սիրուն ամնչվող նշանակությունները: Դրանք են՝ Եթե՞ «Ճգտեր», «Քաղ-Ճակ» - քաղ-Ճ; Եթե՞ «Չարժեր», բայրությունները՝ ատրփ- և war-z-ըն «Այլեր» - գեղ-Ճ «աստիկ փսխագ»:

1. *Ou. Եթեռ (Դիգորալյան բարբառով՝ Եթեռ)* «Ճգտեր», «ՔաղՃակ» - հայ. բաղդ «Փափազ, լիճ»

Հայերեն բառի ծագումը Հ.Աճառյանի և Գ.Զահորյանի կողմից համար փում էր ամիսյատ, թենի նրանց հայտնի լր, որ Հ. Պետերսոնը հայերեն ու օսերեն ձևերը բխեցրել է միևնույն հ.-հ. bhelg'հ- նախաձևից⁸: Ըստ երեսությին, հայերենում առավել հավանական է -Ճ աճականի անջատումը. այդ դեպքում քաղ- «փղճ» արմատը ձևավ նոյնանում է քաղ-ել «միացճել, կցել», քաղ «կից» արմատին, որից ունենք կողմարադ «կողակից, կիճ» բարբուրյունը: Հնարավո՞ր է արդյոք ենթադրել նաև իմաստային ընդիմանքություն: «Կցել, միացճել» > «ՔաղՃակ» իմաստային զարգացումը բացարելուն որոշ չափով նախատեսմ է հենց օս. Եթեռ բառի «Ճգտեր» և «ՔաղՃակ» նշանակությունների ընթուրյունը:

Հ. Մարտիրոսյանը (Լեյլեն) ուշադրություն հրավիրեց հայ. փաղ- «կից, միացճ» արմատին, որից կազմված են փաղել «միացճել, հարել, շարակցել», փաղութին «պարքերություն, շաղկապատ», ի փաղ զալ «ոչխարենիք զուգավորվելը» բառերը. այդ արմատն ավելի հաճախ օգտագործվում է որպես նախածանց՝ համապատասխան քաղ-, համ-, նոյն- աճանցնելին⁹: Ինչպես նշում է Հ. Մարտիրոսյանը, «փ-ի առկայությունը տվյալ ձևում հնչյունական տեսանկյունից դժվարացնում է այդ արմատի նոյնացումը քաղ-

արմատին: Մեր նյութի համար, սակայն, առավել կարևոր է «կցել շաղկապել» > «զագալորպել» խմատային զարգացումը, որը շատ նման է քաղ- համանուն արմատների խմատային կապին:

Ըստ այդմ, եթե ընդունենք քաղ- համանուն արմատների ընդհանուր ծագումը, ապա ևս. քաղ- ձկի նախնական իմաստը, նավանարար, պեսար է լիներ «կցել միացնել» և հետո միայն «փափագ, փափագել». Այս նույն արմատն է, որ դարձել է նաև նախածանց՝ համ-, շաղ-, շար-, յար-, կից- նշանակարյամբ և բնորոշ է հետարան դպրոցին (Խմնու. բաղարկում, բաղաձայն, բաղդատել ևն):¹⁰

Նոյն բաղ «կցից» արմատից է ծագել բաղեղն «պատառուկ» բառը. «կցել միացնել» > «պատառուկ» խմատային զարգացման համար նաև կանչական է զաղ-ել «ժամկեցնել բարցմել» > զաղ-ձ-ն «պատառուկ, զայլիսու» զույգի հետ համեմատությանը, ինչպես և զեկ / զեղ- «աղորած, պիրկ, ճիգ» / «զեղեցկություն» արմատի հետ բաղդատումը, որից նոյն աճականով առաջացել են հետևյալ ձևերը՝ զեղձ «սասամիկ փափագ, բաղժանք» և զեղձ «բաղեղ, պատառուկ»:¹¹

Այսպիսով, իին հայերնուն ի հայտ են զալիս հետևյալ եռյակ-հոմանիշները՝

բաղ «կցից, միացված» > բաղձ «փափագ, լոդ» > բաղեղն «պատառուկ»¹²

զեկ/զ «պիրկ, ճիգ, զեղեցիկ» > զեղձ «բաղժանք» > զեղձ «պատառուկ»:

Ինչ վերաբերում է *ou. bællən / bællun «ձգուել», «բաղժանք»* բառին, ապա Վ. Արաւը այն թիսեցնում էր իրամ. *var- «ցանկանայ ըմարել» նախաձեից¹³, որի ժամանակ-ձևերը բննարկված են սոորե՝ Յ-ը կետի տակ: Այս սոոր- զարանուրյունը, սակայն, բավական կասկածելի է v > Յ և r > I՝ օսերենի համար անսովոր անցրմաններով, որոնց մասին նշում է նաև Վ. Արաւը: Այդ պատճառով էլ հելլեն բառը հետագայում համարվել է անհայտ սոորզարա- նուրյուն ունեցող բառ:¹⁴

Օսերենուն բառակցիք / Յ/-ն պեսոր է ծագել իրամ. /Յ/-ից և հ.-ե. /Յ/-ից, ինչպես, օրինակ, հ.-ե. *bhel- «քերել» արմատից ունենք իրամ. եթ «քել» > *ou. bar-* ոն «կշռեն, չափել» և հայ. բեռ, բեր-ել: Մինչդեռ իրամ. /Յ/-ն օսերենուն պեսոր է օրինաչափորեն տար /w/, ինչպես warzen բառի դնարում, որն, ի դեպ, ծագում է հենց իրամ. *var- արմատից (տե՛ս N 3): Քանի որ օսերենուն արդեն իսկ առկա է *var- նախածեկի ժառանգը, հետևարար առավել ևս անհավանական է նրանից մեկ այլ՝ հելլեն ժառանգի առաջացումը:

Հաշվի առնելով ող ապածը, բերես, կարելի է կրկին վերաբառնալ Հ. Դատերաստի սոորզարանուրյանը և *ou. bællən «ձգուել», «բաղժանք»* բառի հելլ- արմատը¹⁵ թիսեցնել հ.-ե. ხhel-ց-նախաձեից, որը կարող է նաև հայ. բաղ-ձ արմատի հիմքը լինել: Այս դեպքում զործ ունենք հայ-օսական բացադիկ զուգարանուրյան հետ, բանի որ հ.-ե. ხhel-ց-նախաձեկի ժառանգներ այլ լեզուներում առայժմ հայտնի չեն:

2. *Ou. tælfən* (*դիգորական բարբառով՝ տէլֆոն*) «զուռումու զայ,
շարժվել», «քայլուալ, տրովիել (սիրութ)» - հայ. տարփ «սեր, կիրը»

Հայերն բառի ծագումը Հ. Աճառյանի կողմից համարվում էր անհայտ¹⁶: Գ. Զահուլյանը հայ. տարփ- արմատը համարում էր իրանական փախառություն և համեմատում էլամերեն Տորիծ, Տորիչ բառերի հիման վրա վերականգնվող հիմ պարու. *terpi- «համույր, բավարարություն» բառի հետ, որի մյուս զուգահեռներն են՝ ավեստ. *θrafs-* «գոռություն», սրբ. *tulf* «զերիազեցում» բառերը¹⁷: Բօլոր նշանակած զուգահեռները, սակայն, չեն բացատրում հայ. տարփ բաղմասատի առաջացումը, բանի որ հայերենի նշանակությունն ավելի նախնական և ննդիանոր է, քան իրանական ձևերինը: Նույնը կարելի է ասել նաև հ.հնդ. Երբայի տրպատի «հազենում է, բավարարվում է» ձևերի մասին, որոնք հայերենի հետ է համեմատել Գ. Զահուլյանը¹⁸:

Ըստ Երևույթին, առավել հավանական է հայերենի ծագումը հ.-ե. *terp(h)- / *telp(h)- «շարժվել» նախաձևից, որն, ի վերջո, բնաձայնական ծագում ունի, ինչպես ուստի. Երբեք հայ. տրոփ-յուն (քերևս նաև տրիփի / տրիփի) և այլ բազմարիվ նվազական ու հնդիրանական ձևերի նախարարացուրը¹⁹: Այդ բազմարիվ զուգահեռներից հայերենին ու օւերենին իմաստով ամենամուգ ըրդ տըրե-terp «րիփրիփ (բայրիի)», «արավիյում (սրտի)» բառն է, իսկ /Վ/-ի առկայությամբ օւերենին մոտ է ուստի տելեպատիք ‘Յոլտատեսա, մոտատիք’ ձևը:

Հ.-ե. *terp(h)- / *telp(h)- «շարժվել» նախաձևի բազմարիվ ժառանգ-ձևերից միայն *ou. tælfən* բառն է ձայնավորով և իմաստով համբնկնում հայերենի հետ, ուստի տվյալ դեպքում գործ ունենք հայ-օսական՝ մասնակիորեն բացառիկ (իմաստային) զուգարանության հետ:

Հայերենն, ամենայն հավանականությամբ, զարգացել է «սրտի տրոփիյուն» > «կիրը» իմաստով, ընդ որում՝ ոչ շնչել խոլ /ա/ -ի առկայությունը կարող է բացարձև բառի հնչագաղափարությամբ, բանի որ սպասելի էր հ.-ե. *t > հայ. թ անցում, ինչպես, օրինակ, հ.-ե. *tarp(h)-օ- «փոս, որոզայր, վարմ» ձևից ունենք հայ. բարփիթ, հոմ. տարոս «Ճոկ որսարտ վարմ», *ou. tærf(æ)* «Ճորակ, գոզ, իշվածք», բրակ. Tarto-dizos ևն²⁰:

3. *Ou. warzən* (*դիգ. warzun*) «սիրել», եաւարչəն «սիրանարվել» - հայ. գեղձ «ասամիկ փափագ»

Ըստ Երևույթին, ժամանակին իրավացի էր Հ. Պետերսոնը՝ հայերենն ու օւերենը կապելով հ.-ե. *uel-g-h- «անենալ, ցանկաւթյուն» նախաձևին²¹: Այս հ.-ե. նախաձևի՝ առանց աճականի ձևերը հայտնի են նվազական ու հնդիրանական բազմարիվ լեզուներում, ինչպես օրինակ՝ ավեստ. var-, ուրենան- «ըմարել, մախրմարել», հ.հնդ. նարանու «ըմարություն, փափագ, սեր», ուստի առելու ակամենար», առաջարկ «կամբ», գերման. wollen «ցանկանար», ամզլ. will ևն²²:

Հավանաբար, հ.-ե. *uel-g-h- արմատի տարրերակն էր *uerg-h- «զործել» նախաձևը (որի մի ձայնդարձից հայերենում ունենք գործ բառը): Հ.-ե. *uel-g-h- արմատից իրանական, սլավոնական, գերմանական լեզուներում և հունարենում առաջացել են «քամել, գործել, հմայել, պյորել» նշանակությամբ մի շարք բառեր: Վ. Արաւը սրանց է միացնում նաև *ou. warzən* բառը²³,

որը հնչյունապես երկու հ.-է. նախաձևերից էլ կարող էր ծագել, սակայն իմաստով առավել մոտ է հայերենի գեղ-ծ բառից²⁴:

Ամեն դեպքում, հ.-է. *welg- և *werg- նախաձևերը մոտ են ոչ միայն արտաքնապես, այլև իմաստներով, ուստի դրանք կարելի է պարզապես մեկ արմատի տարատեսակներ համարել: Հ.-է. *welg- «ցանկարյում» և *werg- «պարանք» նախաձևերի քննությամբ ցոյց է տալիս, որ «հնդեվրոպացիների» պատկերացմանը՝ սերն ու տենչանքն անմիջականորեն առնչվում էին դյուրանքի և հմայական հատկություններին: Դա երևում է պահպանված մի շարք ժառանգ-ձևերում, որոնք երկու իմաստներն էլ ունեն, ինչպես միջ.պարսկ. warz- «հմայր, դյուրանք», «կախարդանք», սաղ. *watz (wrz) «մրաշք», ուսու. վօրոշից «կախարդեր», և «տենչալ», բաղդ. վրայական «կախարդ», եռմ. օրգա «միասներիս», «արրազան արարարյուրյում»:

Նշված հասկացությունները, ամենայն հավանականությամբ, անմիջականորեն աղերսկել են հոդագործարյան հետ կապված՝ մեռնող-հատուող աստծո պաշտամունքին և դրան առնչվող ծեսերին: Հունաստանում, օրինակ, օրդիաներն ու միստերիաները սերտորեն կապված էին Դիմիտոս-Բարոսի պաշտամունքին, որը փոքրասիական ծագում ունեցող՝ հոգագործության և առնական բեղմնավորող ուժերը խորհրդանշագործ ասաված էր: Մեծ Հայրում Դիմիտոսը նույնացվում էր մեկ այլ մեռնող-հատուող աստվածության՝ Միկրիս²⁵:

Իրանական լեզուներում, զուր չէ, որ warz- արմատը «հմայագերծվելով» պարզապես նշանակել է «գործել, բամել, արարել», «հողը մշակել», օրինակ՝ պենսա. varəz-, միջ. պարսկ. warzītan, պարսկ. warzīdan (սրանցից փոխառյալ է հայ. վարժ-ել արմատը): Նմանատիպ «հմայագերծ» իմաստներ է ստացել *welg-/*werg- նախաձևը նաև գերմաներենում ու հունարենում²⁶: Ի հակառարյուն բարը նվրովական և իրանական զրոգանելուների՝ օսերենը պահել է բառի միայն մեկ նշանակությունը՝ «սիրել», ինչն էլ եմքը է ասալու ou. warzən – հայ. գեղճ զույգը համարելու հայ-օսական բացառիկ իմաստային զուգաբանություն:

¹ F. Specht, Die Ausbreitung der Indogermanen, Berlin, 1944.

² Գ. Զահորյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 86:

³ F. Kartland, Armeniaca (Comparative Notes), Ann Arbor, Michigan, 2003, viii.

⁴ Նման աշխատանքներից կարենի է նշել, օրինակ՝ Ch. de Lamberterie, Deux isoglosses entre l'arménien et l'indo-iranien – M. Leroy, F. Mawet (eds.), La place de l'arménien dans les langues indo-européennes, Louvain, 1986, p. 48-61.

⁵ Հ. Հրուժման, Ուսումնասիրության հայերենի փոխառության բառից, Վիեննա, 1894; H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig, 1897; E. Benveniste, Sur quelques emprunts iraniens en arménien – Հանդես ամսօրեայ, 1927, p. 761-764; Նոյնի Էլեմենտների պարհապետությունը պահպանվել է առաջնային աշխատանքներում՝ հայության մեջ: Հայոց լեզվի պատմություն, հ. I, Երևան, 1940, էջ 218-323; B. W. Bailey, Iranian in Armenian – REA, 1965, t. II, p. 1-3; R. Schmitt, Iranisches kehngut im Armenischen, REA, 1983, t. 17, p. 73-112; G.C. Asatrian, Kontaktы армянского с новоиранскими языками (дис. на соискание ученой степени доктора фил. наук), Ереван, 1991; B.A. Olsen, The noun in Biblical Armenian: origin and word-formation: with special emphasis on the Indo-European heritage. Berlin, New York, 1999, 857-920;և այլն:

⁶ L.C. Հավիամենիս, Հայերենի լրանական փոխառությունները, Երևան, 1990:

- ⁷ Улупирхертийн мавзуми тутын *B.I. Абасов*, Осетинский язык и фольклор, т. I, Москва-Ленинград, 1949; *B.I. Абасов*, Скифо-сарматские наречия: - Основы иранского языкоизучения, древнесирийские языки, Москва, 1979, с. 272-361; *R. Schmitt*. Andere Altiranische Dialekte: - Compendium Linguarum Iranicarum, Wiesbaden, 1989, Skythisch, S. 92-94.
- ⁸ *H. Petersson*, Arische und Armenische Studien, Lund, 1920, S. 128.
- ⁹ <Անապյանի, Հայկեն արմատական բառարան (ՀԱԲ), հ. IV, Երևան, 1979, էջ 472:
- ¹⁰ Հ. Աճառյանի խոսքերով՝ այս ամանցով «ատրիլորեն բարդմանված են շատ հոյն բառեր» - <Անապյանի, Հայկեն արմատական բառարան հ. I, Երևան, 1971, էջ 395:
- ¹¹ Հմտություն տեղում, էջ 395-399, 505-536:
- ¹² Նոյն բաղ արմատից է ծագում զ-բաղ-իլ «զրադիլի, պարապէմի, մի բանի հետամուտ լիներ», նաև «փարեր» բառը, ընդ որում Հ. Աճառյանը ի հայութ է բերում հետևյալ երլավկ-հոմանիշները. զ-բաղ-իլ > բաղ-են և պատաղ-իլ «զրադիլիք» > պատաղ-իմ «քաղեղ բայցը» - ՀԱԲ, հ. II, Երևան, 1973, էջ 86:
- ¹³ *B.I. Абасов*, Историко-этимологический словарь осетинского языка (ИЭСОЯ), т. I, Москва-Ленинград, 1958, с. 248-249.
- ¹⁴ *J. Cheung*, Studies in the Historical Development of the Ossetic Vocalism, Wiesbaden, 2002, p. 172.
- ¹⁵ Վ. Արամիկ կարծիքով՝ *օս եալ-* արմատը անեցել է մոնի այլ տարրերակ՝ *եար-* «ցանկանար», որի դերայական ձևից կազմվել է եարց «ցնույժ, թել» (հմտություն չունենալու մասին տեսքը) բառը - Նոյն տեղում, էջ 252:
- ¹⁶ ՀԱԲ, հ. IV, էջ 389: Տարիփ- արմատի մյուս ձևերն են՝ տրիփի «սեր, ցանկուրյուն» (որից՝ տրիփո, տրիփանը, տրիփուրյուն) և տրիփի «կրրոս սեր» (որից՝ տրիփի, տրիփա, տրիփանալ): Ըստ Հ. Աճառյանի՝ այս ձևերը պատահական նմանություն ունեն արար. Կը տան «զրգիս, ցանկուրյուն» և Վրտ՝ *տրիփի, ցանկանար* բառերի հետ: Հ. Աճառյանի կարծիքով՝ հայերենից են փոխառույթական վրաց. Ի՞սրա «այրելի, ախործելի, շնորհալի, սրբուն, նորոր», Երան «այրահար» բառերը (Նոյն տեղում): Թերևս, պատահական նմանություն ունի տարիփ «զրտություն մերժելի զարդարություն կապը» բառը:
- ¹⁷ Գ. Զահոնյան, Եղվ. աշխ., էջ 548: «Հնարավո՞ր է հայ. տրիփ / տրիփ տարրերակների կապը և ի.հմդ. տրիփ- «ակերնահեռություն» կամ երան «ժամուրյուն, զրիւրյամք» բառերի հետ: Ինչ վերաբերում է սրբ. Ելմ «գերիագեցուն» բառին, ապա, մեր կարծիքով, տառակել հավանական է երս կապը հայ. բրոյ բրենել բրիել «մնադեմ» (շրջից, բաղդից և այլն) և օս.լիզ. Ելմ «զողի, զորքի» բառերի հետ:
- ¹⁸ Ի.Բ. Ջեսակյան, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 134.
- ¹⁹ Այս բոլոր ձևերի բնուրյունը տեսն *B.I. Абасов*, ИЭСОЯ, т. III, Москва-Ленинград, 1979, с. 255-257. <-կ. տըր- / տըր- արմատի մասին մասն տեսն նաև *J. Pokorny*, Indogermanisches Etymologisches Wörterbuch, I Band, Bern-München, 1959, S. 1077.
- ²⁰ <Անապյանի, ՀԱԲ, հ. II, էջ 162; *B.I. Абасов*, ИЭСОЯ, т. III, с. 267. Կապ ունի՝ արդյոք այս ձևերի հետ *օս. տըր* «զորը (բրոյ)», «ծանկ (իյլմանիւրյուն)» ձևել, որը համարվում է տըր «մնուր» և ար «զորք» բառերի միացման արդյունք - Там же, с. 232.
- ²¹ *H. Petersson*, Եղվ. աշխ., էջ 127-128.
- ²² *J. Pokorny*, Եղվ. աշխ., էջ 1137.
- ²³ *B.I. Абасов*, ИЭСОЯ, т. IV, Москва-Ленинград, 1989, с. 53-54.
- ²⁴ Հնարաբիր է, որ հայութ ծենյարանական ավանդուրյան առասպեսական բառավոր Արան իր Գեղեցիկ մակդիրի պատմառով մլուրների կողմէց, ամենայն հավանականուրյամբ, կոչվել է *Warzan (*հոմ. Վարչանց*) անունով - տեսն *S. Դամալյան*, Օսար պատմագիրներից հիշատակված՝ Հայաստանի ամենատփառ արքան, *ՊՐՀ*, 2007, N 1, էջ 249-261:
- ²⁵ Հմտություն, օրինակ, Թուման Արծունիք և Անանոն, Պատմուրյան Արծունյաց տան, Երևան, 1978, I, Ը, էջ 76:
- ²⁶ *B.I. Абасов*, ИЭСОЯ, т. IV, с. 54.

ԲԱՑԱՐՉԱԿ ԱՆԵՐԵՎՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՍՏԱՏԱՆ ԿԱՌՈՒՅԹՆԵՐԻ

ԶՈՒԳԱԶԵՎԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հովհաննես Զարարյան
«Զանգակ - 97» երաժարակչություն

Խնդրառությունը ստորակարգային հարաբերության մեջ զտնվող շարակյուսական միավորների կապակցության այն եղանակն է, երբ ստորադաս միավորն ընդունում է գերադաս միավորի պահաջած քերականական ձևը, որը կախված չէ զերադաս միավորի քերականական ձևից:

Հայերենում հատկապես բայի և նրա լրացումների կապակցության ժամանակ լինում են դեպքեր, երբ միկնոյն բայի միևնույն լրացումը կարող է ընդունել քերականական տարրեր ձևեր, այսինքն՝ տվյալ բայը կարող է ունենալ խնդրառութական տարրերակներ¹:

Գրական արևելամայերենում ներկայումս կան մի շարք դեպքեր, երբ զուգաձևություն են կազմում «դիմավոր բայ + անորոշի թեր ձև» և «դիմավոր բայ + անորոշի ուղիղ ձև» կապակցությունները²: Ընդ որում՝ դիմավոր բայը կարող է լինել թե՛ պարզ ստորովյալ, թե՛ բաղադրյալ ստորովյալի հանգույց:

Այս զուգաձևությունը կազմող դեպքերի բազմությունը նամասներ չէ քերականորեն, ոճականորեն և ծագումնաբանորեն: Այդ պատճառով հաճախ դվյար է լինում որոշել, թե երբ և որ տարրերակն է զրական-կանոնական, որը խոսակցական կամ օտարարան կամ էլ կերծ զրական ձև: Դրա հետևանքը հաճախակի մեղանչումներն են զրական հայերենի նկատմամբ:

Կանխակալ կարծիք կա, թե ընդհանրապես ավելի հայեցի են անորոշի թեր ձևով տարրերակները, իսկ ուղիղ ձևերը օտարարանություն են: Սա ճշշտ է ճասամք, որի հետևանքով առաջանում են թեր հորդվածներով կերծ զրական ձևեր այն դեպքերում, երբ կանոնական են ուղիղ ձևերը:

Խնդրի մեջ պարզություն մտցնելու նպատակով հավաքել և դասակարգել ենք «դիմավոր բայ + անորոշ դերբայ» կապակցությունների բազմությունը, ապա վերլուծել ամեն տեսակն առանձին:

Այդ բազմության հնքախմբերը հետևյալն են:

1. Անորոշ դերբայը ուղիղ խնդիք է: Օրինակ՝ Փորձում է խարել զերադասնեցիր չուտենի, զերադաս համարեց լրել նախընտրում եմ թիվ խմել նախատեսում է մրցույթ հայտարարել հարմար է զտնում զինը բարձրացնել, շահավետ կիսմարի կրծատել ծափալը, հարկ եմ համարում զգուշացնել,

որոշել է լուծարել, սկսեց ճառ ասել, մոռանում էր հիշեցնել, ցանկանում է համոզվել, ուզում էի ասել, կփափագեր մեր ուշադրույթունը գրավել, տենչում էին հետք շփել, մտածում եմ քողնել, հրամայում եմ խոսել, հրահանգե՛ք գնայ, հորդորում է հանդորժել, առաջարկում եմ ուղարկել, քոյլ է տալիս ենքաղբել:

Անորոշի թեր ձևով (անուկան-տրական հոլովով) տարրերակը հանդիսանում է իրեն կենդ գրավան ձև, զերշտկման հետևանքը (Փորձում է խարելու, զերադասեցիք չուտելու, զերադաս համարեց լուրու, նախընտրում եմ քիչ խմելու, նախատեսում է մրցույր հայտարարելու, հարմար է գտնում զինը բարձրացնելու, շահավետ կիամարի կրծատելու ծավալը, հարկ եմ համարում զգուշացնելու, որոշել է լուծարելու, սկսեց ճառ ասելու, մոռանում էր հիշեցնելու, ցանկանում է համոզվելու, ուզում էի ասելու, կփափագեր մեր ուշադրույթունը գրավելու, տենչում էին հետք շփելու, մտածում եմ քողնելու, հրամայում եմ խոսելու, հրահանգե՛ք գնալու, հորդորում է հանդորժելու, առաջարկում եմ ուղարկելու, քոյլ է տալիս ենքաղբելու):

Խոսակցականում տարածված է այս անդամի արտահայտուրյան երրորդ տարրերակը՝ դիմավոր ձևով (Փորձում է՝ խարի, զերադասեցիք՝ չուտես, զերադաս համարեց՝ լոի, նախընտրում եմ՝ քիչ խմեմ, նախատեսում է՝ մրցույր հայտարարի, հարմար է գտնում՝ զինը բարձրացնի, շահավետ կիամարի՝ կրծատի ծավալը, հարկ եմ համարում՝ զգուշացնեմ, որոշել է՝ լուծարի, մոռանում էր՝ հիշեցնի, ցանկանում է՝ համոզիլի, ուզում էի՝ ասեմ, կփափագեր՝ մեր ուշադրույթունը գրավի, տենչում էին՝ հետք շփեն, մտածում եմ՝ քողնեմ, հրամայում եմ՝ խոսես, հրահանգե՛ք՝ գնան, հորդորում է՝ հանդորժեն, առաջարկում եմ՝ ուղարկենք, քոյլ է տալիս՝ ենքաղբեն): Երբեմն այս երրորդ տարրերակը հնարավոր չէ: Օրինակ՝ սկսեց ճառ ասել:

2. Անորոշ դերայը ենքակա է՝ անորոշ առումով (որոշյալ առման դեմքում զուգաձևուրյունը բացառվում է): Ստորոգյալը հաճախ միայնին բայ է: Օրինակ՝ մեր խնդիրն է մատնանշել թերությունները, նախատակն է ապահովել առաջադիմուրյուն, ընդունված է այդպիս համարել, արգելվում է ծխել առաջարկվում է իրավունքներն սմբազրել օրենքով, պահանջվում է տրամադրել, հարկավոր է հիշել, հարկ է նշել, պետք է նկատի ունենալ, անհրաժեշտ է ներմուծել բավարար է իմանալ, հերիք է խոսել, կարելի է օգտագործել հնարավոր է ենքաղբել, կարենք է զիտակցել, զերադասելի է սկսել, նախընտրելի է լոել, նպատակահարմար է հաշվի առնել, խելամփակ կլինի վերլուծել, դժվար է տարանջատել, անհնար է մոտենալ, դյուրին է հայտարարել, հեշտ կլինի ճշտել, անկարելի է քայլել, անհարմար է ասել:

Անորոշի թեր ձեզ (սեռական-տրակամ հոլովով) տարրերակը դարձյալ կեղծ գրական ձև է, գերշահման հետևանք (մեր խնդիրն և ճատճանչելու թերությունները, ճպատուկն է տպահովելու տառաջադիմուրյուն, ընդունված և այլպիս համարելու, արգելվում է ծխելու, առաջարկվում և իրավունքներն ամրագրելու օրենքով, պահանջվում է տրամադրելու, հարկավոր և իշխելու, հարկ է նշելու, պետք է նկատի ունենալու, տնիքամնշտ է ներմուծելու, բափարար է իմանալու, հերիք է խսելու, կորելի է օգտագործելու, հնարավոր և ներսպիրելու, կարեոր է զիստակցելու, զերայտակի է սկսելու, նախանարելի է լուսու, նախանականարմար է հաշվի տնելու, խելամիտ կինի վերլուծելու, դժվար է ատարանջատելու, անհնար է մոռենալու, դուրիին է հոյտարարելու, հեշտ կինի ճշտելու, անկարելի է բայցելու, անհարմար է տսելու):

Երրորդ՝ խառակցուկոն տարրերակ՝ յիմնավոր ձեռվ, սովորաբար չի կազմվում, թեև երրեմն հնարավոր են դրանց մոտավորապես համարժեք այլպիսի տարրերակներ (հարկ է նշեմ, պետք է նկատի ունենանք, հերիք է՝ խոսեք, անհարմար է՝ տսեմ):

3. Անորոշ դերբայը հետադաս հասկացուցիչ է՝ սեռական-տրական հոլովով: Օրինակ՝ ժամանակ չունեմ մտածելու, կարիք կա իշխեցնելու, հարկ կա վերահսկելու, անհրաժեշտուրյուն կա արգելելու, պահանջ կա սահմանափակելու, պարտավորուրյուն ունեմ ընդլայնելու, ցանկուրյուն հայտնեցին անդամագրելու, իրավունք ունեն պահանջելու, լիազօրուրյուն ունեմ սոուզելու, կարողուրյուն ունեն ընդարձակվելու, հնար չունեն մասնակցելու, հնարավորուրյուն կարամադրեն ծանորանալու, ջանք են գործադրում հասնելու, նպատակ է դրել խոչընդոտելու, առաջարկ կա քվեարկելու, կոչ են անուն իրաժարվելու, խնդիր է ծագել մեկնելու, վտանգ կա սխալվելու, միջոց չկա պլրենելու, առիք կը ներծեռեն քննարկելու, որոշում կայացրին հիմնելու, համաձայնուրյուն կկնքեն կրծատելու:

Անորոշի ուղիղ ձևով տարրերակը օտար լնգումների (ոռուերենի, անօլերենի) աղդեցուրյուն է (ժամանակ չունեմ մտածել, կարիք կա իշխեցնել, հարկ կա վերահսկել, անհրաժեշտուրյուն կա արգելել, պահանջ կա սահմանափակել, պարտավորուրյուն ունեմ ընդլայնել, ցանկուրյուն հայտնեցին անդամագրել, իրավունք ունեն պահանջել, լիազօրուրյուն ունեմ սառագել, կարողուրյուն ունեն ընդարձակվել, հնար չունեն մասնակցել, հնարավորուրյուն կտրամադրեն ծանորանալ, ջանք են գործադրում հասնել նպատակ է դրել խոչընդոտել, առաջարկ կա քվեարկել, կոչ են անուն իրաժարվել, խնդիր է ծագել մեկնել, վտանգ կա սխալվել, միջոց չկա պլրենել, առիք կը ներծեռեն քննարկել, որոշում կայացրին հիմնել, համաձայնուրյուն կկնքեն կրծատելու):

կվերեն կրծատկ): Ուսուերենում և անգլերենում միայն այսպիսի ձևեր են հնարավոր, քանի որ այդ լեզուներում անորոշ դերբայը չի հորավում: Օրինակ՝ Ս մենք ունենալու համար այսպիսի ձևեր են:

Խոսակցականում տարածված է այս անդամի արտահայտության երրորդ տարրերակը՝ դիմումոր ձևով (ժամանակ չունեմ՝ մտածեմ, կարիք կա՝ իշխեցմեն, հարկ կա՝ վերահսկեն, անհրաժեշտորյան կա՝ արգելենք, սպահանջ կա՝ սահմանափակեն, սլարտուվորության ունեմ՝ ընդայնեն, ցանկության հայտնեցին՝ անդամագրվեն, իրավունք ունեն՝ սլահանջեն, լիազորության ունեմ՝ ստուգին, կարողություն ունեն՝ ընդարձակվեն, հնար չունեն՝ ճասանակցեն, հնարավորության կարամադրեն՝ ծանորանար, ջանք եմ գործադրում՝ հսկեն, նպատակ և դրել՝ խոշրնդուի, տուշարկ կա՝ բվեարկենք, կոչ եմ անում՝ իրամարքեր, խնդիր է ծագել՝ մեկնեն, վտանգ կա՝ սխալվեն, միջոց չկա՝ սլրծնենք, առիք կընծենեն՝ ըննարկենք, որոշում կայացրին՝ հիմնեն, համաձայնություն կինքեն՝ կրծատեն):

4. Անորոշ դերբայը հանգման խնդիր է՝ սեռուկան-տրական հոլովով (անորոշ կամ որոշյալ առմումք): Օրինակ՝ օգնեց ձեռք քերելուն, խանգարեց երգելուն, պյուրասավում են հայտնելու, սպարասատ են ուղղվելու(ն), նախապատրաստվել էին վախչելու(ն), համաձայն են ստորագրելու(ն), համաձայնվեցին կրծատելու(ն), ձգուում է ծանորանալու, նպատակատողված են ապահովելու, հակված են կանոնները խափառելու, տրամադիր է զալու, սովոր են համբերելու, ընդունակ է դրժելու, անընդունակ է ընդունելու, հասու է զիտակցելու, պյուրասատ է գոհելու, հոժար է վճարելու, ի վիճակի է պայքարելու, իրավասության վերաբերյալ, կոչված է պաշտպանելու, հարկադրված է լուսու, դատապարտված է պատիժ կրելու:

Անորոշի ուղիղ ձևով տարրերակը օտար լեզուների (ուսուերենի, անգլերենի) ազդեցության է և մեծ տարածում ունի (օգնեց ձեռք քերել, խանգարեց երգել, պյուրաստվում են հայտնել, սպատրաստ են ուղղվել, նախապատրաստվել էին վախչել, համաձայն են ստորագրել, համաձայնվեցին կրծատել, ձգուում է ծանորանալ, նպատակատողված են ապահովել, հակված են կանոնները խափառել, տրամադիր է զալ, սովոր են համբերել, ընդունակ է դրժել, հասու է զիտակցել, պյուրասատ է գոհել, հոժար է վճարել, ի վիճակի է պայքարել, իրավասության վերաբերյալ, կոչված է պաշտպանել, հարկադրված է լուսու, դատապարտված է պատիժ կրել): Ուսուերենում և անգլերենում միայն

այսպիսի ձևեր են հնարավոր վերոհիշալ նոյն պատճառով: Օրինակ՝ Օհ ոմօց մու որօնքքէտ. He is able to fight.

Խոսակցականում տարածվում է այս անդամի արտահայտության երրորդ տարրերակը՝ դիմավոր ձևով (օգնեց՝ ձեռք բերեմ, խանգարեց՝ կրգեմ, սխալրասավոր եմ՝ հայտնեմ, սխալրասաւ են՝ ուղղվեն, նոյնասամարտաստվել եմ՝ փախչեմ, համաձայն եմ՝ ստորագրեմ, համաձայնվեցին՝ կրծանեմ, ձգուում է՝ ծանրանու, նախատակառողված են՝ տասնեռվեն, հակված են՝ կանոնները խախտեն, տրամադիր է՝ զա, սովոր եմ՝ համբերեմ, ընդունակ է՝ դրմի, անընդունակ է՝ ընթանի, հասու է՝ զիտակցի, պատրաստ է՝ զոհի, հոժար է՝ վճարի, ի վիճակի է՝ պայրարի, իրավասու է՝ որոշումներ կայացնի, լիսպրդված է՝ հարցաքննի, կոչված է՝ պաշտպանի, հարկադրված է՝ լի, դատապարտված է՝ պատվիծ կրի):

5. Անորոշ դերավոր նախառութիւն պարագաւ է՝ սեռուկան-տրսկան հոլովով: Օրինակ՝ զնում են բերելու, մոտեցաւ վերցնելու, հրավիրված են մասնակցելու, ուղարկված է ստուգի, գործուղվեց դասախոսելու:

Անորոշի սովոր ձևով տարրերակը օտար լեզուների (ռուսերենի, անգլերենի) աղջեցոյրյուն է (զնում են բերել, մոտեցաւ վերցնել, հրավիրված են մասնակցել, ուղարկված է ստուգի, գործուղվեց դասախոսել): Ռուսերենում և անգլերենում միայն այսպիսի ձևեր են հնարավոր վերոհիշալ նոյն պատճառով: Օրինակ՝ Я приглашаю участвовать. I am invited to take part.

Խոսակցականում տարածվում է այս անդամի արտահայտության երրորդ տարրերակը՝ դիմավոր ձևով (զնում են՝ բերեմ, մոտեցաւ վերցնեմ, հրավիրված են՝ մասնակցեմ, ուղարկված է՝ ստուգի, գործուղվեց՝ դասախոսել):

6. Անորոշ դերավոր անջատման անուղղակի խնդիր է՝ բացառական հոլովով: Օրինակ՝ դադարեց բողոքելուց, հրաժարվում է փաստեր ներկայացնելուց, վախենում է խոստովանելուց, զգուշանում է խսելուց, սարսափում է հանդիսավելուց, խորշում է անկեղծանալուց, զգվում է զործ անելուց, խոսափում է աշխատելուց:

Անորոշի սովոր ձևով տարրերակը օտար լեզուների (ռուսերենի, անգլերենի) աղջեցոյրյուն է (դադարեց բողոքել, հրաժարվում է փաստեր ներկայացնել, վախենում է խոստովանել, զգուշանում է խսեն, սարսափում է հանդիսավել, խորշում է անկեղծանալ, զգվում է զործ անեն, խոսափում է աշխատել): Ռուսերենում և անգլերենում միայն այսպիսի ձևեր են հնարավոր վերոհիշալ նոյն պատճառով: Օրինակ՝ Օհ боится сказать. I am afraid of to admit.

Խոսակցականում տարածված է այս անդամի արտահայտության երրորդ տարրերակը՝ դիմավոր ձևով (դադարեց բռորքի, իրաժարվում է փաստեր ներկայացնի, փախենում է խոսափանի, զգուշանում է խտի, սարսափում է հանդիսավոր, խորշում է անկեղծանաւ, զգվում է զործ անի, խուսափում է աշխատի):

7. Անորոշ դերբայը բացարձակ աներեւայր⁴ է (ուղղական հորվով է): Օրինակ՝ կարող են պահանջնել անկարող է հասկանալ, պարտավոր է տվարտել, պարտավորվում է կատորնել, մտադիր են արգելել ծխելը, մտադրվել ենք մարզվել, շտապում է խոյս տալ, ջանում է հասնել, չեր համարձակվում հարցեր տալ:

Անորոշի թեր ձևով (սեռական-տրանկան հալվով) տարրերակը դարձյալ կենծ գրական ձև է, գերշտկման հետևունը (կարող են պահանջելու, տնկարող է հասկանալու, պարտավոր է տվարտելու, պարտավորվում է կատորելու, մտադիր են արգելելու ծխելը, մտադրվել ենք ճարգվելու, շտապում է խոյս տալու, ջանում է հստենելու, չեր համարձակվում հարցեր տալու):

Խոսակցականում տարածված է այս անդամի արտահայտության երրորդ տարրերակը՝ դիմավոր ձևով (կարող են պահանջնեն, անկարող է հասկանա, պարտավոր է ափարտի, պարտավորվում է կատարի, մտադիր են արգելեն ծխելը, մտադրվեն ենք մարզվենք, շտապում է խոյս տա, ջանում է հասնի, չեր համարձակվում հարցեր տա):

Անորոշ դերբայով արտահայտված այս կարգի անդամները մեծ մասամբ կարող են ունենալ թե՛ նախադաս, թե՛ հետադաս զործածություն: Նախադաս դիրքը թեև սպական հաճախական է, սպական ավելի ուժեղ է այդ դիրքում գործածեւթյունը վերանում է, ուստի հստակ զատկում են ուղիղ և թեր ձևերը: Այդ դիրքում նաև ավելի պարզ է երեսում այդ կառույցի խսկական բնույթը՝ իրեն նախադասաւորյան անդամ: Մինչդեռ հետադաս դիրքը բռյալ է, և այդտեղ, որպես կանոն, տեղի է ունենում ուղիղ և թեր ձևերի տարրերակման չեղորդացում, և անորոշ դերբայով արտահայտված վերոնիշյալ բռլոր անդամներն էլ ձգտում են ուղիղ ձևով լինելու: Այս ձգտումը նուև հասկելությանության վերացման, մասնավորապես քանականացման, անվաճական ուղիղ ձևերի տարածման միտումի արտահայտություն է:

Այսպիսով, այդ կարգի անդամների խսկական ձևը պարզելու համար պետք է ստուգում կատարել նախադաս դիրքում: Օրինակ՝ փոքրեցի համոզել(ու) > համոզել փոքրեցի, անհնար է մոտենալ(ու) > մոտենալ անհնար է, իրավունք ունեն պահանջել(ու) > պահանջելու իրավունք ունեն,

խաճգարեց երգել(ուն) > երգելուն խաճգարեց, իրավիրեց դաստիոսել(ու) > դաստիոսելու իրավիրեց, խուսափում է խաճիխպել(ուց) > խաճիխպելուց խուսափում է, շտապում է խոյս տալ(ու) > խոյս տալ է շտապում և այլն: Այս առողջողության վոխակերպումը միայն մի քանի դեպքերում է վիճելի արդյունքներ տալիս: Օրինակ՝ սպասել(ուն) սովորել է, մրցել(ու) նա պարասպրված է, կրծատել(ուն) հսմածայնվեցին, խոստովանել(ուց) վախենում է և այլն:

Սառացման մեկ այլ միջոց է անորոշ դերքայը որեւէ զայսկանով փոխարինելը, որի դենքում գուգածեարյունը բացառված է: Օրինակ՝ փորձում է հազուածը, սրահանջվում է մասնագետ, կարիք կու հաճզափ, օգնեց տղային, զնում եմ աշխատանքի, սրահանատվում է ելույրի, իրածարվում է խոստումից, շտապում է տուն և այլն: Ստիայն որոշ դեսպլերում (հստելապես 7-րդ կետում) այսպիսի վոխակերպում հնարասփոր չէ. (օրինակ՝ ջանում է հասնել, չը համարձակվում խոսել և այլն). սրտածար տվյալ ստորոգյալի խնդրառական առանձնահատկությունն է:

Լինում են նուև այս կառույցի երկու կամ ավելի տարստեսակների հսմալցուրյուններ: Օրինակ՝ կարող են սրտհանջել ներկայանալ ծանոքանպատ, նպատակ զնել խոչընդոտելու մրցակցելը, որոշել և հորդորել արգելելու ծխելը, մտադիր են արգելել ծխել սովորեցնել աղջկներին և այլն:

Ոչ բոլոր քայերի դեպքերում է առկս «անորոշի քեր/ուղիղ ձև» գուգածեարյուն: Հաճախ միայն մեկ ձև է հնարասփոր (օրինակ՝ անտանելի է քայլելը, սրյամաններ ստեղծել մրցակցելու, ձեռք քաշեց հսմողելուց, հսաս կրկնելուն և այլն), կամ միայն 1-ին ու 3-րդ (քեր կամ ուղիղ ձև և դիմավոր քայ) տարբերակներն են հնարասփոր (օրինակ՝ զիրք չունեմ կարդալու/կարդամ, սիրում են երազել/երազեմ, կոտցավ ջուր խմելու/խմի և այլն):

Այս կառույցի վերոհիշյալ բոլոր տարատեսակների դեպքում (2-րդից քացի) գուգածեարյունը, որպես կանոն, եռեզր է: Անորոշ դերքայի քերփուծ տարբերակով եզրը սովորաբար լրիվ դերքայսկան դարձված է (քեկուզ առանց լրացման): Օրինակ՝ խաճգարեց իմ երգելուն: Չըերված տարբերակով (քացարձակ աներեւոյրով) եզրը կարծես միշտնկյալ օլոսկ է դերքայսկան դարձվածի և երկրորդական նախադասուրյան (դիմավոր քայլով լրացման): Միշել: Օրինակ՝ խաճգարեց իմն երգել: Դիմավոր քայլով եզրը յարատեսակ սեղմակած երկրորդական նախադասուրյուն է: Օրինակ՝ խաճգարեց իմն երգել: Այս եզրին հաճապատասխանում է լրիվ երկրորդական նախադասուրյանը տարբերակը (խաճգարեց իմն, որ երգեմ), որը տարբեր է լրիվ

դերբայտկան դարձվոծին համարժեք երկրորդական նախադասությունից (խանգարեց, որ ես երգեմ), թեև դրանց խորրային կառայցը նոյնին է (խանգարեց ինձ, որ ես երգեմ): Այլ դեպքերում փոխակերպների այսպիսի տարբերություն չի լինում (պատրաստ է, իր կյանքը զոհելու, սրատրաստ է, իր կյանքը զոհելու, սրատրաստ է՝ իր կյանքը զոհի, պատրաստ է, որ իր կյանքը զոհի):

Այսպիսով, այս կատայցի՝ անորոշի թեր ձևով տարբերակների, անկախ ճիշտ կոմ սխալ լինելուց, հական են թեկալիքներ իրեւ ավելի հոյեցի, ավելի զրուկան կազմություններ: Այդ սրատրաստով, երբ ճիշտ տարբերակը ուղիղ ձևն է, թեր ձևը հանդիսան գալիս որպես գերշտկնան արտահայտություն, որպես կեղծ գրական կազմություն (օրինակ՝ փորձում է խարեւու, անհրաժեշտ և ներմուծելու, չի համարձակվում հարցեր տալու և այլն): Մինչդեռ երբ ճիշտ տարբերակը թեր ձևն է, ուղիղ ձևը հանդիսան գալիս որպես այլ լեզուների ազդեցություն (օրինակ՝ կարիք կա իմշեցնել, կռչված է պաշտպանել երավիրքած եմ մասնակցել, վախսենում է խաստվանել և այլն) և անվանական ուղիղ ձևերի տարածման միտումի արտահայտություն:

Տարբերակների հասարակական-գործառական բաշխումը որոշելիս սկսար է նկատի ունենալ, որ անորոշ դերբայակ արտահայտվում լրացման խնդրասական երկու տարբերակները (սոդուկան հոլովով և տրական կոմ բացառական հոլովներով) տվելի շատ պաշտոնական, զրագոր և հոսուկապես զեղարքվածատական խոսքին են հասուն: Ուսական կրություն ունեցող խոսքին բնորոշ է ուղրականություն տարբերակը: Բանավոր, հասկալված անկաշկան խոսքում զերակշռում է սեղմված երկրորդական նախադասությամբ տարբերակը:

¹ Խնդրատական տարբերակների մասին տե՛ս նաև Զահոնիյան 1974, էջ 466-487:

² Տե՛ս նաև Ռ. Իշխանյան 1986, էջ 208, 212, 219-221:

³ Սրանց՝ ուղիղ խնդիր լինելու իմենափրամը տե՛ս Ռ. Իշխանյան 1986, էջ 191-195:

⁴ Անորոշ դերբայն ուղղական հոլովով կարող է լցացնել մեզործական սեփական քայլքին՝ իրեւ սովոր խնդիր (որոշեցի մեկնել կցանծիսնայից տեսնել ստիռեցրեց երգել), այլև շնոր և կրտիրասկան սեփական քայլքին (պատրաստվեմք մկնել շկարպացայ զար, զզուշանո՞ւ եմ խասել): Այս վերջինները կըշին են բացարձակ աներևոյք (Գ. Սևակ), բացարձակ անորոշ (Ռ. Իշխանյան) կամ էլ համարվում բայական բաղադրյալ սուրբովայի մաս (Ռ. Արքահանյան 1976, էջ 159): Օքերքած անորոշ դերբայով նոյն կազմի լրացման հարցում են սուանալ նաև մի շաբթ բարայրյալ սուրբովայներ (մատողի և մակներ հարկադրված է խաստվանել շեմ կարող երգել և այլն):

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԱԳԱՎԱԶԸ

Օթևայի Խոսկոտրյան
ՀՀ ԳԱԱ ՀՀ. Աճառյանի ամփան լեզվի ինստիտուտ

Խորենացին իին գրական հայերենի ամենահմուտ ճշակողներից մեկն է, որը լեզվական իրադրյումները կիրառել է նախասկազրկված կերպով՝ ծառայեցներկ զարդարական և լեզվաշինական խնդիրների: Նա առաջին հերթին ծգուել է մեր լեզուն ճշուել ու հասցնել հունարենի զարգացման սատիճանին՝ ինչպես զիտական տերմինարանուրյան, այնպես էլ ոճարտահայուսական համակարգի բնագավառներուն:

Պատմուհոր գրական ժառանգությունն բազմակողմանիորեն ուսումնասիրվել է: Ի թիվս այլ հսքերիք՝ հետազոտողները ուշադրություն են դարձրել նուև նրա լեզվին և արել արժեքավոր դիտողություններ:

ՆԱԿԻՆՅԱՆԻ այսպիս է քննուազքել Խորենացու լեզուն «... Մովսէ ծերութեան ալիրով ծաղկած, աւելի խսիսկան ոճով, աւելի պերճարան լեզուով կցանոյ արտսիայտուրյան շնորհել իր մասմանիքներուն: Նա տորիների ընթացքին աւելի զարգացնցած է իր նուարը սկաշարը, աւելի խորացած խնասատափրաբեան ուսումներու խորը»¹:

«Նրա լեզուն, – գրում է Ստ. Մալխասյանցը, – արվեստուկան է, և բարձր, որպէս զանազանվութ է: Փոլվատուի և Փարաեցու գրերն ըողովրդական լեզվից, նու փայլում է ճոխուրյումք, բառերի արվեստական, բայց պատշաճ ու ներփական չափավորաբարյումք, կանոնավոր քերտկանուրյամբ քեւ սառուզաբանուրյան, քեւ շարադրանուրյան մեջ՝ չնայելով, որ երթեան շատ երկար պարբերություններ է գործածում, ոչ մի անգամ խոսրի արտանորսնուկան կասը չի խզվում, այլ սասացվում է մի բարդ, բազմահարկ և զնողեցիկ դասավորված կարուցվածք: Շաղկաւաների, կրծատված նախադպուրյանների նպատակարձար գործածությամբ ոչ միայն խոսրը պարզ և հսկանալի է դարձնում, այլև ընթերցողին միջոց է տալիս հետեւելու հեղինակի նուածողության եղանակին: Նա լեզվի փարախ է և քերականուրյան ընձեռած բոլոր միջոցները հմտորեն ծառայեցնում են իր մտքերն արտահայտելուն»²:

Խորենացու լեզվին Ստ. Մալխասյանցն անդրադարձել է և «Խորենացու առեղջածի շուրջը» աշխատուրյան մեջ, հունարան դպրոցի գործունեության և ժամանակի հարցի քննուրյան կատակցուրյամբ: «Խորենացու պատմուրյան լեզվի ընդհանուր նկարագիրն է ճոխ և ընալիք հայկարանուրյան, որի մեջ տեղ-աւել ցրված են հունարանուրյան տարրեր, ինչպես կանաչ դաշտի վրա գոյնեցույն ծաղկիներ, որոնցով դաշտը զարդարվում ու երփներանց է դառնում, առանց սակայն ընդհանուր կանաչուրյանը կորցնելու: Պատմուրյան այն հատկաները, որոնք գերծ են հունարանուրյան տարրերից, և այդպես է նրա մեծագույն մասը, այնքան ընտիր են, դասական հայերենի ոգով, որ դժվար է զանազանել հայկարանուրյան լավագույն տիպարների լեզվից»³:

Խորենացու լեզուի բարձր է գնահատել նուև Մ.Աքեղյանը՝ տակառվ. «... նրան ոճը, իմշշան և հաճախ գարդարուն ու պերճ է, բայց թնդասնոր առմանը շատ սլաք, մեկին է, թերեւ, շատ կանոնավոր ու լյուրին, ճիշճամայն ախտրժելի, երբեք չոր ու ցամաք»⁴:

Խորենացին մեծ լեզվաշխատարար է: Նա քերականական միջոցների հնուա զորածարյամբ արտահայտում է իր մարերը: Մարերի Խոջորդականությունը պարզ ու արտադրանական է, շարադրանքը՝ կուռ և ամրողական և հնարավորությունը և տալիս հետևելու դեմքերի ընթացքին ու հեղինակի մեկնարանություններին: Հունարան դարոցի ներկայացնեցիների օրինակով, առանց սակայն ներարկվելու նրանց ծայրաներություններին, նու առեղծել է մի շարք նախածանցավոր կազմությունները: Հարուստ և նուև Խորենացու ոճական և ճարտասանական միջոցների գինանցը: Նա կիրառել և ճարտասանական հետաքններ ու պատկերավորման միջոցներ՝ նմանություն, հոմեմաստություն, հարցում, բացականչություն, բարտություն և այլն, որոնց շնորհիվ ստուդենտ է պատկերավոր խոսքի երաշափ օրինակներ և առավել ազդեցիկ ու նարասուկապատ դարձրել իր տաելիքը: Խորենացու «Հայոց պատմությունը» աչքի և ընկննում իր հսկուած բառուած բառաստիչարար, այնաւել զանում ենք բազմաքիվ նորաստեղծ բառեր, իմաստուն ճարեր, թևավոր խոսքեր, սուոյրներ, որոնց հետազայում բազմիցս անդրադարձել են այլ հեղինակներ՝ դարձնելով իրենց աշխատությունների բնարանը կամ ծառայեցնելով իրենց ստեղծագործական նպատակներին⁵:

Խորենացու լեզվի ու ոճի նասխն առավել մանրամասն ու հանգանանալից հետազոտությունը մինչև օրս մնում է Խորենացուն նվիրված հստափուծ Վ.Աւարելյանի «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության» աշխատաթուրյան մեջ⁶: Ըստ Վ.Աւարելյանի հաշվարկների՝ Խորենացին գրքանձել է ապելի քան 800 քառ, որոնք իրենից առաջ գրական լեզվի մեջ չեն զարգացվել ու մինչև օրս լայն տարածում ունեն մեր լեզվում: Հատկապես հունարենի ազդեցությունը նրա կազմած բառերից շատերը պահպանել են իրենց կենսառակությունը: Խորենացին իրեւ ժառանգություն մեզ է բողեք պետական-բարպարական, տագնական, հասարակական այլառյ փոխարարելություններ արտահայտող և ժողովրդի անտեսական, շինարարական կյանքի արտացըլլող ու մեր գրական լեզվի բառապաշտի առանցքը կազմող բազմաքիվ բառեր, որոնք հարստացրել են նուև հոյերենի գիտական ակրեմնարանությունների⁷:

Խորենացու բառապաշտը թննություն է տակ նուև Լ.Հովհաննեսյանը և բացահայտել մի շարք բառեր նրա «Հայոց պատմության» մեջ, որոնք չեն արձանագրվել Հայկագուն բառարանում⁸:

Ներկա հեղինակների ստեղծագործությունների բառապաշտը փիճակագրական թննությունից հետազոտուղները պարզել են, որ յարաբանչյուր հեղինակի համար կարեկի է բացահայտել առավել և նվազ հաճախականությամբ հանդիս եկող բառեր և դրանց բանականությունների հիման վրա

որոշակի եզրակացությունների հանգել տվյալ հեղինակի լեզվի և ոճի սահմանափակությունների մասին:

Խորենացու երկի բնագրային համարարրատի և հաճախականության բառարանի տվյալներից պարզվում է, որ «Հայոց պատմության» բառագրծածնների ընդհանուր բանակն է՝ 56445, առանձին բառամիավորների (զիմարտերի) բանակը՝ 6969, մեկ անգամ զործածվում բառերի բանակը՝ 3584: Բառերի միջին հաճախականությունն է՝ 8, սակայն տասնամյա բառերի հաճախականությունները խիստ տարրեր են՝ նվազագույնը՝ մեկ, իսկ առավելագույնը՝ 4550: Առաջին հինգ ամենահաճախական բառերը պատկանում են այսպիսի կոչված սպասարկության համարի մասերի թվին, որ որպես կանոն, ընդհանուր լեզվական օրինաչափություն է⁹: Նվազող հաճախականությունների բառացանություն ունեցող բառերը, որոնց մեջ Խորենացու ոճի հաճախականությունը 13-րդ դիրքը գրավում է նաև 539-ից մինչև 301 հաճախականությունը ունեցող բառերը, որոնց մեջ Խորենացու ոճի հաճախականությունը 6-ից մինչև 13-րդ դիրքը գրավում է նաև 539-ից մինչև 301 հաճախականությունը ունեցող բառերը, որոնց մեջ Խորենացու ոճի հաճախականությունը 6-ից մինչև 13-րդ դիրքը գրավում է առաջինը բիում և տակածազործարյան բավանդակությունից, բանի որ երկը նվիրված է Հայուսառի պատմությանը, իսկ երկրորդը արտացոլում է Խորենացու երկի ոճական կարևոր առանձնահաճախականությունները՝ երկասուրյունների հարստությունը և հեղինակի աշխայից պատմելածելուը: 300-ից մինչև 100 հաճախականությունը ունեցող բառերի մեջ կան քե՛ լեզվում ընդհանրապես՝ հաճախական գործածությունը ունեցող բառեր, քե՛ հասունավես Խորենացու «Հայոց պատմության» համար ժամբային-ոճական պայմանավորվածությունը ունեցող բառամիավորներ (ազգ, գոր, արքայ, աշխարհ, բազուար, ճախարար, կողմն, պատերազմ, բազալորդիմ, բազար, ինչպես նաև հասուն անուններ՝ Պարս, Արտաշէս, Արշակ, Շասրու, Խոսրով): Այդպիսի բառերի թիվը ավելի մեծ է հաշորդ՝ 100-ից մինչև 10-ը հաճախականության բառերի խճռում, որտեղ զգալի բանակ ներկայական կազմում բայերը (150): 9-ից մինչև 2 հաճախականությունը ունեցող բառերը, որոնց բանակն է՝ 2657, որևէ հասուն լեզվանական կամ կատուցվածքային խճրավորնան չեն ենթարկվում: Առանձին հետաքրքրաւթյուն են ներկայացնում մեկ անգամ զործածված բառերը, որոնցից շատերը Խորենացու անհատական բառակերտնան արդյունք են: Ընդհանրապես պեսոր է ասել, որ երկու և մեկ անգամ զործածված բառերի հաճամատանությունը (տոկոսային հարաբերությունը բառազործածությունների ընդհանուր բանակի ենա) տվյալ հեղինակի բառապաշտի հարստության ու բազմազանության չափանիշ է: Տվյալ դեպքում Խորենացու երկու մեկ և երկու հաճախականությունը ունեցող բառերը կազմում են հաճապատճառաբար 3584 և 2048 միավոր (միասին 5632), որ կազմում է բառարանային բառերի թվի 80,8%-ը, իսկ միայն մեկ անգամ զործածվածներինը՝ 51,4 %-ը, որը բացառիկ արդյունք է, եթե ինչենք, որ ճնշ և հարուստ բառապաշտառ հայտնի հեղինակ Ա. Պուշկինի լեզվի բառարանի տվյալներով այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 48 %¹⁰:

«Հայոց պատմության» բառային միավորները բառակազմական տեսակետից արտացոլում են Վ դարի գրաբարի բառակազմական օրինաչափությունները: Առկա են հաճադրական ու վերպուծական տիպի բոլոր ինքնական կատալոգներն ու ենթակազմակարները: Հաճադրական կառուցների մեջ գերակշռում են հոդակապատօք բառերը, որոնք պարզ երկարագործիչներ

կաղապարների մեջ սպելի բան երեք անգամ գերազանցում են անհողության ձևերին: Անհողության ձևերը հիմնականում ձայնավորվ սկզբով երկրորդ բաղադրիչով են՝ բազմարտևաս, դիմադրելի, աշխարհավեր և այլն: Այսպիս սուլավ դեսպերում երկրորդ բաղադրիչը կարող է սկզբել բաղաձայնով՝ այժմամ, այժմափ, ձեռնոտ, ոճեմդիր և այլն: Քիչ բվով օրինակներում անողությանի փոխարեն հանդիպում են և շաղկատրվ ձեեր, օրինակ՝ այրեմի, տարևատ, եւմնուր: Կաղապարների վիճակագրական բնույթունը սպազում է, որ Խորենացու երկում և ընդիանքասալս V դարի գրաքարի բառապաշտում համբեկնում է ածանցավոր կաղապարների (նախածանցում և վերջածանցում) հսմանասնորյանը, այսինքն Խորենացու լեզվում արտացորված է այն առանձնահատկությունը, ըստ որի նախածանցումը զգալիորեն զիջում է վերջածանցմանը, ինչպես բառերի ընդիանքուր բվով, այնպես էլ կաղապարների բազմազանորյանը: Ենթար, «Հայոց պատմորյան» մեջ հանդիպում ենք 175 նախուծանցավոր բառ՝ ի ասքընորյունների բվին, սպաս այն որոշ չափով նվազում է ի հաշիվ բայերի առաս գործածուրյան, որոնք հիմնականում պատկանում են ածանցավոր կաղապարների բվին: Բայերի առավել հաճախական գործածուրյունը Խորենացու լեզվի ոճական առանձնահատկությունն է (Խորենացու բառապաշտուի մեջ՝ հսմանդրական և վերջուծական կազմորյան բայերը նիստին կազմում են 27,7 %, իսկ V դարի բառապաշտուի համեմատուրյանը՝ պակելի բան 33 %: Այս հսմանանքը կարող է հաշվի առնելի Խորենացու վերագրվող երկերի բառապաշտուի վիճակագրական բնույթյանը դրանց հեղինակի որոշակիացման խնդրի լուծման մեջ:

Խորենացին՝ որսելս հանարան դպրոցի ներկայացուցիչ, գործածել է այդ դպրոցի սանեղծած նախածանցներով բառամխավորներ (քե՛ բայեր, քե՛ անուններ), սակայն չափավոր բանակավ: Նրան հաստոկ չեն հանարան դպրոցի ծայրահեղությունները և արհեստական կտզմուրյունները: Դրա վկայությունն է նաև այն, որ հանարան դպրոցի բառակազմական կաղապարներով բազմաթիվ բառեր, որոնք գործածել են Խորենացին, պահպանել են իրենց կնճամատկությունն ունենալու այսօր: Այդ բառերից կարելի է հիշատակել՝ առարկորդներ, սովորեր, արտասահման, արտասանուրին, բաղդատել, գերազանցել և այլն: Նվազ գործածական են արտաճառել, արտափայլել և նման կտզմուրյունները:

Խորենացու «Հայոց պատմորյան» բառային միավորների համեմատուրյունը V դարի մյուս լինենորույն հեղինակների և բարգմանական որոշ սանեղծագործուրյունների բառապաշտուի ենտու մի կողմից բացահայտում է վերջիններին հետ ունեցած մերձավորուրյան ասահմանը, մյուս կողմից՝ Խորենացու երկի արժեքը՝ նշված ժամանակաշրջանի հայերենի բառապաշտուի հարասուրյունը ներկայացնելու առումով: Նվազագույն մերձավորուրյունը նկատվում է, մի կողմից Խորենացու, մյուս կողմից՝ Կորյունի, Եղիշիկի և Եղիշեի բառապաշտուի միջև, որ բացատրվում է վերջիններին սանեղծագործուրյունների ծափակի փոքրուրյանը և Խորենացու երկի համեմատ ունեցած ժանրային ասքընորյուններով: Թարգմանական երկերից զոյզ համբեկնութեանք նվազագույնն են «Աղեքսանդր Մակեդոնացու պատմուրյան» հետ, քեւ այդ երկի բարգմանուրյունը մեծ հավասարական հայ բանասիրուրյան

մեջ վերտպրիում է Խորենացուն: Այստեղ զոյզ հանդիսումների նվազագույն բաննակը թերևս կարելի է մեկնարաննել ժանրային և թեմատիկ մեծ տարրերու յուններավ: «Հայոց պատմության» բառապաշտի հետ առավելագույն մերձավորույթն ցուցաբերում են ինքնուրույն ստեղծագործություններից Դաւար Փարսկեցու «Հայոց պատմությունը», իսկ բարզմանական երկերից «Պիտոյից զիրքը»: Այս երեսուր կարելի է բացարձել նշված երեք երկերի հեղինակների միևնույն դպրոցին պատկանելու հանգամանքով, ինչպես նաև «Պիտոյից զրբի» ազդեցությամբ ինչպես Խորենացու, այնաև էլ Փարսկեցու վրա: Հայտնի է նաև, որ Փարսկեցին իր «Պատմությունը» շարադրելիս օգտվել է Խորենացու բնագրից՝ որպես սկզբնաղբյուրից: «Պիտոյից զրբի» հետ Խորենացու երկի բառապաշտի առավել մերձափորության բացահայտումը հետագա բանափական հետազոտությունների հետ միասին կարող է լրիս սփոռել ճարատանական այդ երկի հայերեն բնագրի ստեղծման հանգամանքների վրա: «Պիտոյից զրբից» հետո ըստ բանակի երկրորդ տեղում են Աստվածաշնչի և Խորենացու բառապաշտի միավորների զոյզ հանդիսումները: Դրանք բացի մեծ բանակից բնորոշվում են նաև բազմազանությամբ, սրանց մեջ հանդիսում են կյանքի տարրեր բնագավառների առարկունների, երևանյանների, զործողությունների անվանումներ: Սա բացարձում է Աստվածաշնչի բովանդակության հարատուրյամբ: Մյուս կազմից Աստվածաշնչը եղել է Խորենացու հիմնական սկզբնաղբյուրներից մեկը: Այն բազմակողմաններեն օգտագործվել է ոչ միայն Խորենացու, այլև այդ ժամանակաշրջանի բոլոր հեղինակների կողմից և խոր ազդեցություն բռնել նրանց վրա թե՛ զարա վարախոսական, թե՛ հոգլուք ու մշակութային, թե՛ լեզվական առունով:

Խորենացու բառապաշտի միավորների մեր կատարած համեմատական բնությունից պարզվում է, որ բառերի բավականին սովոր մի խումբ (1010 բառ) զուգակեռ զործություն չի ունեցել մեր նշած սկզբնաղբյուրների մեջ և ՆՀԲ-ում թերթում է միայն ոչ շրջանի հեղինակների հղումներավ: Իսկ այդ բառախմբի մեջ էլ առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն բառամիավորները, որոնք բերված են միայն Խորենացուց բաղկած բնագրային վկայություններով: Նշված բառամիավորների բանակն է 208, սրբացից մի բանիսը, անկասկածաբար, Խորենացու ստեղծած հեղինակային նորաբանություններից են, ինչպես՝ արքայամանուկ, զահարուր, զեղեցկաղիմակ, գասարկակաց, երկնայլզ, իրականարին, կարկաչալասարին, հեղուատուած, միազգուս, յոտկանճակաց, յիշատակումն, որձարարեսյ, պատերազմուկան, սաստկակառոյց, տափակարիք, բայերից՝ ամունարին, բազմամարդացուանել, կայծակնածածանշեցուանել, դիրածել, ետեղագրել, ընդդիմակայել, ընթերցասիրել, կուսակցել, հսայծնեսել, վսեմանալ, վախաճակարաննել և այլն, -ուրիշ ածանցով՝ աշխարհակալութին, սաստարանուրին, դիսպաճգուրին, դիսագներգուրին, ետեղապահուրին, ժահաղմուրին, համստոսապարին, համճայրարանուրին, ծշմարտսասատուրին, եղուցհանուրին, ողջարանուրին, վերջակացուրին և այլն:

Այսպիսով, Խորենացու «Հայոց պատմության» բառապաշտի վիճակագրական բնությունը և համեմատությունը այլ սկզբնաղբյուրների բառապաշտի առավելագույն առանձնահատուրություն ունի ճշմարտսասատուրին, եղուցհանուրին, ողջարանուրին, վերջակացուրին և այլն:

բյունը, հարսառությունը և բազմագունությունը, որի մասին վկայում են մեկ անգամ կիրառված բառերի առառությունը (ամբողջ բառապաշարի կեսից ավելին), Վ դարի լեզվավիճակին հատուկ բառակազմակրոն բազմագուն կադապարների և ենթակադապարների իրացումը, ինչպես նույն միայն Խորենացու երկում վկայված բառաժիշտավորների գործի բանակը: Համեմատությունը ՆՀՇ-ի բառացունկի հետ բացահայտում է բառերի մի խումբ, որոնք արձանագրված չեն ՆՀՇ-ում և սլեպ է տեղ գտնելու հետազայտութ ստեղծվելիք՝ զրաբարի բառարանների մեջ, որպես իբն հայերենի բառազանձի անկապտելի մաս:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

¹ Ն.Ակինյան, Ղևոնդ Մրկուս Խորենացի, Վլիերնա, 1930, էջ 187:

² Մոլիտա Խորենացի «Հայոց Պատմություն», Խերածություն, Եր., 1940, էջ LIX-LX:

³ Ստ. Մայիսայանց, Խորենացու առեղծվածի շուրջը, Եր., 1940, էջ 81:

⁴ Մ.Արեւան, Երկեր, հ. Գ, էջ 316:

⁵ Գ.Թուության, Մոլիտա Խորենացու առույները, Եր., 1991:

⁶ Վ.Աստրելյան, Ալեքարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջ 174-190:

⁷ Հնմտ. Օ.Խաչատրյան, ճարտարապետական և շինարարական տեքմինները Մոլիտա Խորենացու «Հայոց պատմության» մեջ. Գլուխկան աշխատությունների ժողովածու, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հրատ., հատոր II (22), Եր., 2004:

⁸ Լ.Հովհաննիսյան, Նոր հայկական բառարանում չվկայված բառեր 5-րդ դարի ինքնուրույն գրականությունից, ԴԲՀ, 1990, հ. 2:

⁹ Հնմտ. Ռ. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանի» տվյալների հետ:

¹⁰ Տվյալը բաղել ենք Բ. Ղազարյանի «Հաճախականության բառարանը հայոց լեզվի մինիմում-բառարանի հիմք» աշխատությունից, «Բառազիտուրյան և բառարանագրության հարցեր» ժող., Եր., 1972, էջ 117:

Անակիա Հաճեյան
ՀՀ ԳԱԱ Հր. Աճայշանի անվան լեզվի ինստիտուտ

Նշված հնագանդ բառանունները խմբավորել ենք՝ նկատի ունենալով դրանց բառավարարի ընդեմաբարյունը՝ իր: Հոդվածի շրջանակում անդրսպառնալու ենք դրանցից յուրաքանչյուրի բառարքնությանը:

Ա. Բլիթ բառանունը ՆՀԲ-6 բացատրում է իրեն «Գնտուկ կակուղ հացի. Նկանակ եփեալ ի վուան, կամ ի վերայ մոխրոյ կամ ի տասյալկի խղավ...» (հ. I, էջ 491): Ըստ ՀԱԲ-ի՝ «քոլորակ կակուղ հաց»: Արտահայտել է նաև վոլուսպերական նշանակորյուններ՝ բլիթ քզյ «չորտցրած բուժ», «խասդողի հյուրից պատրաստված չոր բաղցրավենիթ» (հավանաբար՝ պատեղ) [ՀԱԲ, I, էջ 454]:

Բլիթ բառանունը խիստ գործուն է նաև արդի հայերենում. ԺՀՀԲԲ-6 ներկայացնում է բառանվան թե՛ բուժ, թե՛ վոլուսպերական բազմորդիվ նշանակորյուններ. 1. Բոլորակ վորքիկ հաց: 2. Բոլորակ թլավածքի տեսակ, զարս: 3. Պատճի թլիքսն զլովալ: 4. Մեղրալսորիմիսի մեծ կտոր: 5. Քաղցուից կամ պաղակյուրից չորացած բոլորակածն զանգված» և այլն [ԺՀՀԲԲ, հ. I, էջ 323]:

Բլիթ բառանունը հայերենի բարբառներում դրսեռիկ է թե՛ հնչյունական, թե՛ բառակազմական տարրերակներով՝ թք. բլիթ, Եք. բըլիթ, Ալոց. բըլիմք, Խոտջ. բիլիթ, Խրք. բըլիզ, Մկ. Վելիթ, Ոզմ. բըլեր, Ղրք. սլուլիթ, Ծմ. սլոլիթ և այլն [ՀԱԲ, I, էջ 454]:

Նշենք, որ իկ/իգ վերջածանցով վկայված տարրերակը հավատում է, որ, իրոք, բնույթ կիմնական ձևույթին զուգակցված երկրորդական ձևույթները՝ իր, -իմք, -էր տարրերակներով, նույնական ածանցական արժեք են դրսեռել և «քնոր» «լսմորուզունդ» նշանակորյամբ արմատից ձևավորել են «Բոլորակ կակուղ հաց», «Կլոր, ուսուցիկ խմբեղեն» և այլ բառիմաստներ:

Բլիթ բառանվան արմատը ստուգաբանել են թե՛ Աճայշանը, թե՛ Զահուկյանը:

Աճայշանն այս կապակցությամբ մասնավորապես նշել է. «Տախի եմ այստեղ մի վորքիկ ցանկ զավատական բառերից համեմատված հնդեվրոպական այլ լեզուների հետ, ենտեւաբար և «գնիկ հայերեն» (ընդզծումը Աճայշանին է): Թվարկվածներից մեկն է. «Բույ «լսմորի զունդ» (Ազլ. սիւ Զոր. բնույթ, Ղրք. Ծմ. սլոլ) < հնիս. եհօլ/արմատից...»¹ [ՀՀՊ, I մաս, էջ 119]:

Աճառյանը արմատի հիմնական նշանակությունն է համարել «ուոչի» (բնիմսաս), որից առաջացել են մի կողմից՝ «քարձրանալ, միևն կողմից՝ «զնդան» (ուուցիկ) կերպարտներ առնեն» նշանակությունները: «Գ-նդան» գաղտվարի համար առաջադրել է զու: բոլոր արմատը «փանորից կտրուած մ.կ զունս, որ մի հաց կդառնա» (ՀԱԲ, I, էջ 461):

Զահուկյանը «քուլ (*ԵԽԱ-1) «խմորի զունդ» նշանակությամբ բառանունը նախասխն ընդգրկել է հայ բարբառների բառային հենարանուրյունների շարքում² [ՀԲՆ, էջ 284]: Այսուհետև սարմատը համարելով նեղեալրասակալսն բարբառային ծագման աստղանիշով զետեղել է հ.-ե. մյուս լեզուների հետ հայերենի դրսերս բառային զուգարանուրյունների այլուստկոմ. ըստ որում՝ հիմնաձևը նոյնակա ներկայացրել է շնչեղ ձայնեղով, 1-ն զգիկով առունձնացրել է՝ «*ԵԽԱ-1, թ. *քուլ (>*սյուն)»՝ թերևս համարելով աճական³ [ՀԼՊՆԺ, էջ 114]:

Բոլոր բլիր բառանունները Զահուկյանը ներառել է՝ բարփմատապյին թեմատիկ 5-րդ խմբում՝ «Ուտելիք և ըմպելիք. կերակրի սլատրաստում և ամսնեղեն»: 5.52 բլիր. 5.531 թ. բոլոր (>սյուն) «խմորի զունդ»³ [ՀԼՊՆԺ, էջ 210]: Այսուհետև Զահուկյանը եզրակացրել է, որ «...բլիր, բոկեղ, բրրո. բոլոր (>սյուն) «խմորի զունդ» նշանակությամբ բառերը ցույց են տալիս, որ վաղնջակայերին լավ ծանոր է եղել հացազործուրյունը»³ (ՀԼՊՆԺ, էջ 263): Այսպիսով՝ Զահուկյանը հավաստել է հ.-ե. բնուլ (*ԵԽԱ-1) արմատի ու նրանից ածանցված բլիր և այլ տարրերաձևերի առկայությունը վաղնջակայերենում: Ի՞ դեպ, աշենք, որ Զահուկյանը բլիր բառանունը բվարկել է նաև հնագոյն հայերենի բառասպաշարի հիմնաշերտում՝ հոմանիշային շարքերում. բոկեղ - բլիր - մկանակ - պամ³ [ՀԼՊՆԺ, էջ 394]:

Հարկ է նշել, որ թե՛ Աճառյանը, թե՛ Զահուկյանը փաստորեն չեն արժեարկ բառանվան վերջին բաղադրիչը՝ դիր: Կարծում ենք՝ դիր-ը բառակազմական երկրորդական ձևույր է՝ ամվաճակերս վերջածանց, որ հիմնտկան ձևույրից սերել է բառանվան նոր՝ արմատի բնիմսատից ածանցված նշանակություն. «Խմորազնդից (բնուլ) սլատրաստված (քաված, եփած կամ տապակած) տուոցիկ, փրամ հացամքերային ուտեսա»:

Այսպիսով՝ բլիրը բնիկ հայերեն բառանուն է՝ հ.-ե. արմատով և, բնականաբար, հայեցի ածանցով:

Բ. Գ-ալիր բառանվան բուն նշանակությունները, ըստ մեզ հայտնի թե՛ հիմնայերենի (ՆՀԲ, Առձեռն, ՀԱԲ), թե՛ արդի հայերենի (ԺՀԼԲԲ, ԱՀԲԲ) բառարաններում ներկայացված են զրեք համանան:

Ա. Տաճարի, ապարանքի, տան սլատրաստված կամ ցանկապատած բացօքայի բակ. «Գ-ալիր քահանայալեսին», «Գ-ալիր տանն արքունի»:

Բ. ծածկած նախասարան՝ եկեղեցու, դամբիքի, տան նախասանենյակ. «Եկեղեցու զավիրը լցված էր վիրավորներով» (Գ.Գ-եմ):

գ. Ոչխարի փարախու զոմ «Գալիք ոչխարսց»: Աճառյանի վկայությամբ հայերենի հաստկապես արևանյան տարրածքի բարբառներում գերիշխող է եղել բառանվան «Եկեղեցու գալիք» նշանակությունը:

Գալիք բառանվան փոխարեւացված նշանակությունները իհան հայերենի մտկարդակությունների մեջ ընդգրկել են.

ա. Հոգևոր հավատավիքների որբար՝ «Եկեղեցի», «Երկնային արքայություն», «Սրովիտագույր», «Ձի՞նչ եղիցի հասաւար գալիք յերկինա»:

բ. Ընդհանրապես արտահայտել են «բնագավառ», «ոլորտ», «անտահորիզոն» նշանակությունները. «Հեղեղնացի փիլխառվայիցի կարծիք (վասն աշխարհի) արտաքրոյ է մերս զարաց» կամ «զարացս մերոց»: «Փոսիազ այնմ զարաց» (Լմք.) [ՆՀԲ, հ. I, էջ 533]:

Ա.Սուրիխայանը «Հայոց լեզվի հոմանիշների բառարություն» գալիք բառանունն իր արդիական նշանակություններով ներկայացրել է իրեն բայց բառանվան հոմանիշ. «Քակ գ. 1. Գալիք, շրջագալիք, 2. Փարախ, մոլկադտեղիք, քեր (ոչխարների)»⁶ (էջ 110):

Բառակազմական, հաստկապես բառարարդման՝ թե՛ հիմ, թե՛ արդի հայելինի կադապարներում գալիք-ը դրսերվել է հիմնականում իրեն բաղադրաց հիմք՝ հիմ հայ.՝ սրավրէազարիք, վայրազարիք, ճախազարիք, տեղանուններում Նորոզավիք, Շենգավիքիք. Կազմակերպ գործառել է նաև իրեն սերոց հիմք՝ տրդի հայ. Գալիքապահ «Գալիքի՛ բակի պահապահ, դրասպահ» [ԺՀՀԲԲ, հ. I, էջ 374]:

ՀԱԲ-ում թերված են զալիք բառանվան տարրեր ստուգարանություններ: Ինչպես նշում է Աճառյանը, «Հներիք Համամ. թեր. արմատը դնում է զալ նախտիքը (՝): Նորերիք Lag. Եթզ... զենդ. զաշաօօի՛ «արօսու», սնսկը. զաշանդ «արօսավայր» բառերի հետ: Պատկանեան... սլրս. զան «կրով» բառից, ... Հինք. զոտիք բառից. Patruhany....հնիսու. ռահեհա - «եիսւսկ» արմատից» [ՀԱԲ, հ. I, էջ 528]: Աճառյանի վկայությամբ Հյուրշանը մներթել է սրաւոց մեծ մասը՝ համարելով ոչ հավաստի: Աճառյանն էլ հերթել է Հիներեարավլյենտեսնի (համառ.՝ Հինք) ստուգարանությունը. Վերջինս զալիք բառանունը բխեցրել է. զոտիք բառից:

Ակ. Զահորելյանը գալիք բառանվան ստուգարանության շորջ հսյանել է հետևյալ տեսակները. «Ուրարտական հ-ով հիմքերի տառատության պայմաններում կարելի է հայերենի ի հոդված ունեցող և չստուգարանված բառերի մեջ ևս փնտրել ուրարտական իմքերեք»⁷ [ՀՀՊՆԺ, էջ 440]: Թվարկված 79 բառերի շարքում Զահորելյանը նշել է նաև զալիք «ճախանունյալք» բառանունը:

Նախորդ տարիներին հրատարակված զաւաք և զաւառ բառանունների ստուգարանությանը վերաբերող մեր հոգվածներում⁷ նշանակած բառերի զալ բաղադրիչը դիտել ենք իրեն հ.-ե. արմատ՝ նոյնացնելով զաւակ և զաւեղ բառերի՝ Աղայանի, Զահորելյանի նշան հ.-ե. *զիշ-/*զիշս արմատին (7, էջ 82.

8, էջ 105): Գառ արմատի բնիմաստը հայերենում համարել ենք «ծայրամաս, հետմամաս»։ Կարծում ենք՝ զալիք բառանվան զառ բաղադրիչը նոյնակա արմատական ձևույթ է եղել և կրել է նոյն բնիմաստը. այսպես. եկեղեցի և զալիք բառահարաբերության մեջ եկեղեցու պաշտամունքային արարողությունների սրակը ընկալվել է իրքն կառույցի հիմնամաս՝ նաև իր դերակատարությամբ, իսկ նրան հարող, նախարդող օժանդակ հատվածը՝ զալիքը, որ նախասրահ է կամ եկեղեցու ցանկապատաժ բակ, ընկալվել է իրքն եպսամաս - ծայրամաս։

Զալիք բառանվան նոյնիսկ փոխարերացված նշանակություններում հիմնամաս - ծայրամաս բառիմաստային հակադրությունն առկա է եղել: Հիմնամասը՝ «Երկնային արքայությունը», ընկալվել է իրքն խորրային - երկնային, տներեւոյք: «Մրգլէտազալիքը» դիտարկվել է իրքն Աստծու գորքի՝ իրեշտակեների երկնային բնակավայր, այսինքն՝ «Երկնային արքայության» զալիք: Իսկ երկնքին՝ երկրից տեսանելի հատվածը ընկալվել է իրքն «Երկնային արքայության» նախազալիք։

Այսպիսավ՝ վստահ ենք, որ զալիք բառանվան արմատն ունի հենցվրապական ծագում, իսկ իյր բաղադրիչը, ինչպես արդեն նշել ենք, ակնհայտորեն գործառել է իրքն անվանակերտ ածանց՝ զառ արմատի բնիմաստից՝ «հետնամաս, ծայրամաս», ածանցելով նոր նշանակությամբ բառանում՝ Զալիք «նախասարակ», «նախասանեյակ», «եկեղեցու բակ»։

Գ. Խործիք բառանունը ՆՀԲ-ն բացատրել է իրքն «խոտ. խուց. աղքատին յարկ կամ սենեակ միայնակեցաց», ըստ որում՝ նշել է նաև կառույցի նյուրը՝ «որպիս թէ խրձամքը կազմեալ» [ՆՀԲ, I, էջ 985]: Ի դեպ, խործմն նշանակել է նաև «եղեցնուտ, շամբ»։ Չուփույանը այն բվարկել է ուրարտական հիմքեր ունեցող բառերի վերսիշյալ շաբրում, իսկ խրճիքը՝ ննազոյն հայերենի բառապաշտի հիմնաշերտում՝ խոտ - հիտ - խրճիք - տաղտուր [ՀՀ.ՊՆԺ, էջ 440, 400]:

Աճայիսնը խրճիք բառանունը բացատրել է իրքն «լսցիկ, հյուղակ». բվարկել է նաև բառանվան զրավոր ավանդված տարրերակեներ՝ խրճիք, խործիք, խրճիկ (փոխ. ըրդերենում) [ՀԱԲ, II, էջ 432]:

Արդի հայերենում խրճիք բառանվան բռն նշանակություններն են.

1. Հասարակ հողածածկ կտորով . զյուղացու տուն. հյուղ. խոտ:
2. Առհասարակ փոքր՝ անշոր տուն. (... աղքատի խրճիք...) [ԺՀԼԲԲ, հատ. II, էջ 593]:

Աճայիսնը Խորին բառանվան ստուգաբանության բառահօդվածում մեջբերել է նաև Տերվիշյանի կարծիքը, համաձայն որի՝ հայերենի խրճիք, կարք, որը բառերը թասում են հնիս. kart «հիտեր» արմատից: Նշված են նաև հ.-ե. այլ լեզուներից բերված զուգահեններ, որոնք առնչվում են հիմնականության կարք, որը բառերին [ՀԱԲ, II, էջ 431]:

Ի դեպ, հայրի է նշել, որ Աճայիսնը նոյնպես անդրադարձել է վերսիշյալ խործմն բառանվանը՝ բվարկելով բառային, հնչյունական ու ձևաբանական

տարբերակներ. *Խարձն* - *Խարծ* - *Խարժի* (վերջինս նշանակել է «անպատճ ծառեր», խորջուր), *Խարձումք* - *Խարձամց*, *Խարչ*՝ բալթն էլ «եղեցբուտ, շամք, եղեցնաշամք» նշանակություններով [ՀԱԲ, II, էջ 346]: Չի բացառվում նաև *Խարձն/Խարձն* բառանվան՝ ուրարտական հիմքով ծագումը, ինչպես ենթադրել է Զահառլյանը, թե «Ուրարտերենք և հայերենք» աշխատարյան մեջ գրել է. «Հայ-ուրարտական զուգայիշպատճերի առաջին շերտը կազմում են, այսպէս կոչված, «տարրական» ցեղակցության բառերը, մասնակորսակես ձայնարկությունները, բնածայնությունները, մանկական բառերը, որոնք, անկախ լեզուների ցեղակցական փոխարարերություններից և սրբութական շփումներից, կարող են նմանություններ ունենալ բոլոր լեզուներում» (4, էջ 137):

Խորձն և *Խորժի* բառանվանների նշված բառը տարբերածները ի մի բերելով՝ *Խարձն/Խարձն*, *Խարժի*, *Խարձումք* (հոգի), *Խարչ*, *Խորժի*, *Խորժիր*, *Խորժիկ*, և վանկարար ձայնավորը բացատելով՝ ակնառու դարձավ դրանց արմատական ձևայրի բաղադայնական կազմի յուրօրինակ կոչտ բնույրը՝ *Խորժ(ն)*, *Խորչ*, *Խործ*, *Խորչ*:

Կործում ենք՝ սրանք կարենի է դիմարկել իրեն բնաւայնական ծագում ունեցող արմատներ: Սու է ակնարկում նաև ՆՀԲ-ի՝ *Խորժի* բառանվան բացատրությունը՝ «որպէս թե *Խորժամբք* կազմեալ», այսինքն շեշտվում է խորժիր՝ եղեցնաշամքով կառուցված լինելը: Հայտնի է, որ նախնական խորժիների շինանյութը եղեցներն ու չորացած կամ անստուդ ծառերի ճյուղերն են եղել (Խարձի): Գրանք ունեցել են կոչու բնածայնական հատկանիշ, որն էլ կործում ենք, արտացոլվել է բարպիկած արմատներում և ձևափորել դրանց բնիմաստը. «կոչու ձայներ արձակող» (Եղեցն, չոր ճյուղեր, շամք, շամբուտ):

Վերոբերյալ բաղադայնական կապակցություններում արմատական բուն տարբերն են՝ *Խորչ* (հմնտ. նաև *Խորիկ*, եղեցնախայիկ) «չոր ճյուղեր՝ վառելու համար, չորացած փայտի կտրմելով», զոմարսած ծ, ջ, ճ, շ սոլուկան-շալկան սաստկական տարրեր՝ աճականներ (ըստ Աճայանի՝ ածանցիչներ): Աճայանը հարցականով սրանց է միացրել նաև Վանի բարքարի՝ նոյն նշանակությունն ունեցող *Խորիկ* կամ *Ճոր-Խորիկ* բառերը [ՀԱԲ, II, էջ 425]: Այս տարբերակի *-իկ* վերջածանցը հափառում է, որ *Խորիկի* *իվ-ն* էլ է ածանց, և երկուսի արմատն էլ՝ *Խորչ*, բնածայնական է: Ի դեպ, նշված արմատը զործարել է բազմաթիվ տարբերակներով, կրկնածանցումներով [ՀԱԲ, II, էջ 424-427]:

Այսպիսով, կարծում ենք՝ *Խորժիր* բառանվան արմատն է *Խործ* բնածայնությունը, որի բնիմաստից՝ «կոչու ձայներ արձակող», *-իր* անվանակերտով ձևափորել է *Խորժիր* բառանվանը՝ «կոչու ձայներ արձակող շինանյութերից պատրաստված կացարան, տնակը» նշանակությամբ:

Գ. Կմճիր/Կմճուր բառանվանը ՆՀԲ-ն բացատրում է իրեն «Լուծի ըիր. ցոռուկ խոզի և վարազի, և որոց նման են նոցա» [Խ. I, էջ 1105]: Գրեթե հսմանման բացատրություն է տալիս նաև Առնեն բառարանը. «Լ. Կնճուր,

խոզի թիր, զագանի դամնչը՝ թերանք» (Էջ 443): Արդի հայերենում զործածական է նաև 2. «Փղի կիճիր», «Փղի երախի դուրս ցցված, երկարավուն քրի մաս՝ պատիճ», 3. «Սեղվի, ճանճի և ընդհանրապես միջատների առջելի մասում երկարավուն երասա, որը սնվելու և պաշտպանվելու օրգան և հանդիսանում» և այլ՝ փոխարերական նշանակորյուններով [ԺՀՀԱՌ, հ. III, էջ 153]: Բառանվաճ արճատն է կիճճ «վայրի խոզ՝ վարագ» նշանակորյանք, բաղադրված է *իր/որ* զուգածեւ տծանցով՝ կիճիր/կիճոր: Արդի հայերենում զործածական է կիճիր-ը:

Աճայշանը կիճճ (կամ կիճջ) բառանունը «վարագ, արու վայրի խոզ», որից կիճասդէմ «խոզի կերպարանը ունեցող», կիճանալ «փարարտանար», «ամբարտանիլ», կասկածով համարել է իրանական փոխառություն. «Թերեւ իրանական փոխառություն է». «հմմտ. սլրսկ. կոյ վիրխարի փիդ», որ և կոյշառ: Աճայշանը նշել է նաև Մատի կարծիքը. «Մատ «փոխառեալ է դնում կովկասեան լեզուներից. հմմտ. լսզ. դեջի «վարագ», մինքը. դեջի «խոզ», վարաց. դորի «խոզ»....» [ՀԱԲ, II, էջ 591]:

Ինչպիս նշել է Զահորկյանը, «Հայերենը չի պահպանել խոզի հնդեվրոպական անվանումը (*sus), այլև ընդհանրապես խոզի հետ կապվուծ հնդեվրոպական անվանումները. խոզ, վարագ, խոնկոր անվանումները համեմատաբար ուշ են համարեն եկեր»³ [ՀԼՊՆԺ, էջ 260]:

Ի դեպ, վարագ - կիճճ բառանունները Զահորկյանը բարեկել է հնագոյն հայերենի բառապաշտականի համանիշային շարքերում (ՀԼՊՆԺ, էջ 407):

Զահորկյանը «վիճճ» բառանունը նախ հարցականով բարեկել է հայերենի բարբեկական փոխառությունների շարքում՝ «այլև, թերեւ, կիճճ», ապա բարիմաստային թեմատիկ խաճերում՝ «Յ. Կենդանիներ... 3.32 կիճճ (?)» [ՀԼՊՆԺ, էջ 595, 596, 597]: Զահորկյանը, սակայն, մասնավորապես շեշտել է, որ «կիճճ» բառանվաճ փոխառության «հնարավոր աղբյուրը՝ (չյե՞ «խոզ») զորիկ է հ.-ից (հետագու հավելում հայերենո՞ւմ):»: Ուստի նկատի ունենալով, որ «ըստ Աճայշանի՝ բարբեկական բառերը փոխառություն են հայերենից», ենթադրել է երրորդ միջնորդ աղբյուր՝ ուրարտերենը [ՀԼՊՆԺ, էջ 595]:

Ի դեպ, Աճայշանն էլ է նշել, որ հատկապես մշակութային արժեք ներկայացնող փոխառությունները, որ ինքը կովկասյան և համարել, «փրայխ խալդենին բառեր են թե՝ հայերենի և թե՝ կովկասյանների մեջ բափանցած»¹ [ՀԼՊ, I մաս, էջ 217]:

Զահորկյանը կիճիր բառանունը հարցականով ներառել է հայերենի՝ հ.-ե. մյուս լեզուների հետ ունեցած բառային զուգարանությունների առյուսակում. «*gengi- կիճիր?, 4.231 – (Մարմնի մասեր, մարմնական զործառություններ և պլայմաններ), ուռնզն(?)» (Էջ 209):

Այդուսկում Զահորկյանը նախ նշել է հ.-ե. նախաձեւերը՝ Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգարանական բառարան»-ի տվյալներով՝ [*geng-, g*ong-], ապա նաև հատկապես հայերենի համար փերականզնվող նախաձեւը՝

**gengi-* + կիմիր?, (կիմին?, կիմնդ?) (Էջ 125): Զատային գուգարանորյուն-ների աղյուսակում թիվով բառանված նախաձեռքը գուգարանորյուններ են դրսերել հնդկ.¹⁺?, սլավ., բալք., հուն., իտա., գերմ. լեզվախմբերի հետ:

Զահուլյանը վաղնջակայերենի բառապաշտիքի հիմնաշերտում, ինչպէս նաև բառիմաստոյին թեմատիկի խմբերում բայրեկի է բարբառային ծագմամբ կմճիլ «զնդվել» նշանակորյանք բայ³ [Հ.ՊՆԺ, Էջ 216, 276]: Ըստ երևոյթին՝ արժան է «կիմն» (հմտա. նաև՝ կիմիր). Այ դեռ, փոփ կիմիրը կարող է ծավվելով կնճոտվել զնդվել:

Ամփոփելով նշենք, որ ակ. Զահուլյանը փաստորեն երկանել է կմճիլ բառանված սառուցանորյան խնդրում՝ հարցականներով ներկայացնելով իր արտահայտած կարծիքները: Կիտարկենք, սակայն, որ հ.-ե. լեզուների հետ հայերենի ունեցած զուգարանորյունների աղյուսակում կիմիր?, (կիմին?, կիմնդ?) բառանունների դիմաց Վեց լեզվախմբերի սյունակներում դրական նիշ՝ + է արձանագրված (հնդկ.-ք. հարցականով? +?): Սա նշանակում է, որ ակ. Զահուլյանը չի բացառել կմճիլ բառանված հ.-ե. ծագման վարկածը:

Լ.Հովհաննիսյանը կմճիլ «քիր» և կմճիլ «քուսանուն» բառերը, որ վկայված են իին հայերենում V դարից՝ իրքն հայոց լեզվի իին շրջանի իրանական փոխառություններ, դասել է իրանական տարարժատ համանունների շարքում (Էջ 206, 211)⁹:

Ամփոփելով «կիմիր» բառանված շորջ ծափալված դիտարկումները՝ նշենք.

Ա) բառանված ծագումը իմմանականում թիվով է արժատական ձևույթի հասպածով՝ կիմճ. Զահուլյանը, ըստ երևոյթին, հարցականով արժատի տարք է համարել նաև -ի բաղադրիչը՝ **gengi-*, սուսնց մնկնարանորյան: Այսուամենայնիվ, բառանվան -իր հատվածը դարձայլ մնացել է ստվերում:

Բ) Կիմճ արժատի ծագումնաբանության խնդիրը առկաս է, քնիկ է, քե՞ փոխասյալ. Երեւ փոխասյալ է, իին իրանական փոխառությա՞ն է, քե՞ կովկասյան-քարքվելական. անմիջակա՞ն փոխառություն է, քե՞ խալդերենուրարաւերենով միջնորդափորված: Հազարամյակների խորքից հանող այս խնդիրներին դժվար է միանչանակ լուծում տալ:

Գ) Այսուամենայնիվ, խնդիրը կարելի է որպէս չափով հատակեցնել, երեւ առանձին թիվով բառանունները դիտարկենո՞ւ նաև -իրով հանգող իրենց համախմբում: Բյիր, զալիր, լործիր, կմճիլ բառանուններից առնվազն երկուում դյիր և կմճիլ, տարանջատվում են հ.-ե. բայլ և կիմճ հնավանդ արժատական ձևույթները: Մյուս երկու բառանուններում զալիր, լործիր, մեր առաջարկած սուուցարանորյանք հնարավոր ենք զանում նաև հ.-ե. զալ- և լործ- արժան երի տարանջատումը իր անվանակերտ ձևույթից:

Նշված հնավանդ բառանունները, որ գործառել են վաղնջակայերենում և հնագույն հայերենում, բառակազմական մակարդակում անշուշտ նախապես զիտակցվել են իրքն բաղադրյալ: Սակայն իին, միջին և արդի հայերենում

թերեւս -իր ձևույրի տահմանավակ զործառության հետևանքով մրտզնվել է նրան սկզբանցական նշանակությունը: Խնչակն նշում I. L. Հովհաննիսը, «Շնչտ այնպիսն, ինչպիս վաղմջակայերենից կամ հնագոյն հայերենից զրաբարին անցուծ բաղադրյալ բառերից շատերը զրաբարյան փուլում այլևս անարտինի են դարձել, նոյն ձևուկ զրաբարից արդի հայերենին անցած շատ բաղադրյալ կազմություններ այլևս չեն զիտակցվում որպես այդպիսիք...» (էջ 126)¹⁰: Ի դեմք, Զահուկյանը իր «Հին հայերենի վերջածանցների ծագումը» աշխատության մեջ -իր վերջածունեց չի դիտարկել⁵: Սա նշանակում է, որ իին հայերենի բառակազմական մակարդակում այն այլևս զործուն չի եղել:

Այսպիսով՝ հ.-ե. արմատների արկայությունը թիր, զսիր Զահուկյանի՝ հարցականով նշած կմմժիր, ինչպես նաև բնաձայնական արմատով լորժիր բառանուններում իիմք է տալիս հնագոյն հայերենի բառակազմական մակարդակին վերագրելու նաև -իր ածանցական ձևույրի զործությունը:

ՀԱՍՏԱՏՈՒՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՀԲ- Նոր բառզիրք հայկագետն լեզվի (ՆՀԲ), հատ. I, Եր., 1979:

ՀԱԲ- Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, I, II:

ԱԲ- Առնեոն բառարան հայկագետն լեզուի, Վեճետիկ, 1865:

ԺՀԼԲԲ- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. I, II, III:

ԱՀԲԲ- Էդ.Արայան, Արյի հայերենի բացատրական բառարան:

ՀՀՊՆԺ- Գ.Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն (Մաս) (ՀՀՊ), Եր., 1940:

2 Գ.Զահուկյան, Հայ բարբառավիտության ներածություն (ՀԲՆ), Եր., 1972:

3 Գ.Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան (ՀՀՊՆԺ), Եր., 1987:

4 Գ.Զահուկյան, Ուրարտերենի և հայերենի, Ուրսրուու-Հայստան, Երևան, 1988:

5 Գ.Զահուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմտական բերականության հարցեր, սկզ. II, Եր., 1998:

6 Ա.Սորիհասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967:

7 Ա.Հանեյան, «Գոտի» բառանվան ստուգաբանության շուրջ, Նյութեր Մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված զիտամուղավար, Եր., 2005:

8 Ա.Հանեյան, «Գալատ» բառանվան ստուգաբանության շուրջ, Զահուկյանական լորեցություններ, Եր., 2006:

9 Լ.Հովհաննիսյան, «Հայերենի իրանական փոխառությունները», Եր., 1990:

10 Լ.Հովհաննիսյան, «Բառերի ստուգաբանական և բառակազմական վերլուծությունը հայոց լեզվի զարգացման տարրեր փուլերում», Զահուկյանական ընթերցություններ, 2006:

Հավրենտի Հռիսաննիսյան
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյամի աճվան լեզվի ինստիտուտ

Գրաբարում երաժիշտ բառը հաճախական չէ: Մեծարիվ չեն և այդ արմատով կազմությունները:

Մեր ավալներպ Վ դ. ինքնուրույն գրականության մեջ կա մեկ վկայություն. «Քաղցրացուցանելու ոճանոց գլաւզու երաժշտական և զերզու հերանուական» [Եղիշ. 64]: Աստվածաշնչում վկայված են երաժիշտ և երաժշտական բառերը երկուական անգամ¹: Գրաբարում երաժիշտ արմատով սպանդված մյուս կազմությունները (երաժշտակ, երաժշտարար, երաժշտանամ, երաժշտապետ) հետինգերորդարյան են և իմանականում առկայանում են հունարենից կատարված բարգմանուրյուններում: Ամենայն հավանականությամբ ժողովրդախոսակցության լեզվում երաժիշտ արմատով կազմությունները զործածական չեն եղել:

Երաժիշտ բառի ծագումը ստույգ չէ: Բառաձեկց կարելի է ներառել իրանական ծագում՝ բարիմասսային որոշակի փոփոխությամբ:

Երաժշտություն բարին հոմանիշ նուազի իրանական ծագումը հավասարի է: Վերջին ըստ ՆՀԲ-ի ունի «եղանակար ծայն բարբառոյ և զործենաց. եղանակ. տաղ, զեղզեղ. դայլայիկ» խմաստները: ԱԲ-ն նշում է միայն «երգ, եղանակ»: Այդ իմաստներն են նշված և Արմատական բառարանում: Թեև ՆՀԲ-ն Վ դ. ինքնուրույն զործերից հետու է միայն Եղիշեի գիրքը (մնացածները բարգմանական գրականությունից են), սակայն բառը առկա է այլ զործերում ևս. «Նուազ փանջան և յերզ ցցոց և պարոց ասեն յիշատսկա» [Խոր. 27]: «Անդ կատարելո նուազ սաղմոսարանին» [Ազար. 241]:

Բազմիմաստ է երգ բառը. ըստ ՆՀԲ-ի «Նուազ ձայնի. բան երաժշտական. օրինաբանութիւն. գովեստ. շարական. տաղ»:

Գրաբարում հաճախական է բառի «երգ, տաղ» խմաստով զործածությունը: Ահա մի բանի օրինակ. «Որ զայս ի յերգ արկեալ հեզնեն» [Ոսկ. Մար. II, 421]: «Եւ երգելն զերզու նորա... և ոչ որ կարէ զիտել զերգ նոցա» [Յայտ. Յովի. ԺԴ. 3]: «Անտրասում ուրախութեամբ երզս ի բերան առեալ... ասէին ձայնի» [Եղիշ. 80]:

Երգել գրաբարում նշանակամ է նաև նվազել Հմնու. «Եւ արդ երգեսցոր նուազու այնախի հոգույն, որ անկեալ դնի և յայլմէ ի զրոց և ի նմին խոկ ի Դարայ» [Ոսկ. Պատղ. II, 391-392]: «Եւ խնդրեսցեն տեսան մերում այր մի որ զիտիցէ երգել բնարաս» [Ա. Թագ. ԺԴ. 16]: Ուստ. "... поискаль человека, искусного в игре на гуслях"²:

Բնագրային որոշ օրինակներում երգել, թէ^o նվազել իմաստը հատակ չէ: Հմնա. «Եւ ամենայն ժողովուրդն զուարձացես հարկանէլն զփողս եւ

երգին նուսգարանօքն երգս և օրինին գօրհնութիւն» [Ա.ՄՇ. ԻԳ. 13]: Այդպէս է և հետևյալ օրինակը. «Տեսէք ինձ այց մի որ բարոր երգից, և ածեք զնա առ խա» [Ա.Թագ. ԺԶ. 17]: Ընդգծված համապատասխանում է հուն. պալլօ-ին, որը ունի և երգել, և նվազել իմաստը: Ուստիքն Աստվածաշնչում բարգմանված է: «Հայդите мие человека, хоромо играющего и представьте ко мне»:

Երգել-ի իմաստային տնիստակուրյան պատճառով է, որ Խորենացու երգիք ձեռամբ-ը տարրեր մեկնարանուրյուններ է ասացել: Ահա այդ հասկածը. «... և յուրախանակն զինուվ, տեսնալ Տրդատոյ զիին մի, զի յոյժ զեղեցիկ էր և երգիք ձեռամբ, որում անոն էր Նուզինիկ...» [Խոր. 195]: Ստ.Մալլասայանը մեզ հետաքրքրող հաստվածը բարգմանել է նվազում էր ձեռներով:

Պրոֆ. Հ.Քարսեղյանի կարծիքով «Ստ.Մալլասայանի «երգիք ձեռամբ»» «նվազում էր ձեռքերով» բարգմանուրյունը վաղուց հաստատված և միանգումայն ընդունելի բարգմանուրյուն է»³:

Հիշենք, որ երգիք ձեռօր բառակապակցուրյունը կա և Աստվածաշնչում «... Դամիք երգիք ձեռօր իրով» [Ա. քազ. ԺԹ. 10]: Ուսւ. «И Давид играл рукою»:

Հաշվի առնելով երգել բարի բազմիմաստուրյունը՝ դժվարանում ենք կողմնորոշվել երգել ձեռամբ-ի տարաբնույթ մեկնարանուրյունների զնահատման հարցում, բայց քանի որ հերանասական շրջանի արվեստին՝ վարձակներին վերաբերող հասկացուրյուն է, ապա հակված ենք կարծելու, որ երգել ձեռամբ-ը «ձեռքի շարժումներով ուղեկցող երգ, նվազ է»⁴:

Սադմութ Աստվածաշնչային հասկացուրյուն է՝ երրայեցիների քնարական նվազը և հատկապես Դամիք Մարգարի երգերը և դրանց ամբողջուրյունը, որը ձեռք է բերել նաև «կողեւոր երգ», «երգ» իմաստները. հմտու. «...Եւ մեծաւ պաշտմամբ, սադմոսիք և երգովք հոգեւորք ... յուդարկէին» [Բուգ. 73]: «Չոր առեալ Վահանույ և Հմայելի ... սադմոսիք և արինուրեամբ... յԱւշական եանին» [Կոր. 94]:

Սադմութ երգուրյանն առնշվում են կցուրդ և մեսեղի հասկացուրյունները: Կցուրդ-ը ՆՀԲ-ն մեկնում է «կցուած երգոց, կամ սադմուսց, տուն մի սադմոսի կցեալ խորեսորդ ատորն...»: Մեսեղին ըստ Արմ.-ի երեկոյան սադմութերգուրյան կցուրդն է: Բառը հունարենից կատարված վոխառուրյուն է:

Երգել, նվազել իմաստն ունի և զբարարում ոչ հաճախական ոգել բառը. «Երգս առեալ զոչեն ... պարանեալ՝ երգ նոր ոգեն ձայնի» (ՆՀԲ):

Երգիչ բառը զբարարում նվազ հաճախական է: Վ դ. ոչ բարգմանական զբականուրյան մեջ այն կիրառել է միայն Ազարանցելոսը (2 անգամ): «Չուփս փափկութեան տացես ըմպել արժանեացն ըստ բանի հոգեւորական երգչին» (280): «Աշակերտելոց իցեն յազգս ազգաց ըստ բանի հոգեւորական երգչին» (471):

Նշված օրինակներում երգիշ բառի ընդհանրական «երգասաց, երգ կատարող» խմանը հստուկ չէ: Երգիշը այս օրինակում վերաբերում է Աստվածաշնչի Դավթին՝ Խոգեոր երգչին:

Երգիշ բառով երեք վկայություն կլ կա Աստվածաշնչում, որից մեկը բերում է ՆՀԲ-ն: Ահա մեկ օրինակ կա.

«Եւ եսես՝ եւ ահա կայր ի վերայ սեսան ջաս օրինի խրում, եւ երգիշը և փողարք շարք զարքայի» [Ղ. Թագ. ԺԱ. 14]:

Այսուել կլ դարձյալ մեզ հետաքրքրող բառի խմանը հստուկ չէ: Նկատված է, որ երայերենում երգիշ բառի փոխարեն իշխան է: Նոյնը և ուստեղեն քարզմանորյան մեջ. «И видит, и вот, царь стоит на возвышении, по обычайю, и князья и трубы подле царя»:

Վ դ. գրաբարում գուսան «Երսմիշա, երգիշ» դարձյալ ճիւղ հաճախական է: Վկայել է Բուզանդը (չորս անգամ), իսկ Խորենացին էլ ունի գուսանական (մեկ անգամ). «Բայց բէպէս և ոչ ի բուն մատեանսն, սակայն որպէս Մար Արա Կոտտինայ պատմէ՝ ի փոքրունց ունանց և յանճշանից արանց, ի գուսանականէն այս գուսանի ժողովեալ ի դիւնի արքունեաց» (47-48): Երկու օրինուկ էլ բերենք Բուզանդից. «Աչօրն յառաջ կոյս աշուցեալ հայէր ընդ պլասլէս ամբոխս գուսանեացն» (196): «Ըմպէին անդ զինի բոզօք և վարձակօք և գուսանօք» (41):

Այս վկայություններից իսկ ենթադրելի է, որ գուսանորյունը, գուսանական արվեստը հիմնականում վերաբերում է նախաքրիստոնեական մշակույթին, և V դ. հեղինակները, լինելով քրիստոնեորյան ջատագովներ, արհամարհանքով ու թենադասաւարար էին վերաբերում դրան:

Հ.Մաճակալունին, որը հայտնի է իր «Քատերամերժ» հայացքներով, «Վասն անարէն բատերաց դիսակոնաց» ճառաւմ գուսանորյունը հաճարում է մերժելի, այլդ սովորություն. «Զի չար է սովորութիւնն, չար են և յորդորիչը նորս՝ զինի եւ գուսան եւ սատանայ» կամ «Զի ուր կառակը եւ գուսանը են և խաղ եւ ծաղը լիտիք, անդ եւ դեկ ընդ նոսա ի պարու անցունեն եւ սերմանեն բազում աղտեղորդիւն» [Մանել. 1228-1229]:

Ահա մի հասկած կլ Բարսեղ Կեսարացու «Աեցօքայից». «Եւ գայն ոչ տոնուն ի մխա, թէ գուսանորդիւնն իրավք պատիք արուեստիք զավականութեան նշանակ գործէ: ի տեսողս իր եւ իրը առականաց են անդ, որոց սառաջի տմենայն մարդկան դիմին ծանակորդիւնքն» [Վեցօր. 100-101]:

Հետեւնգերորդդպրյան մատենազրույթան մեջ կլ գուսանական արվեստը չի խրախուսվում. դա ակնհայտ է, օրինակ, Սիմեոն Աղձնեցու մի գործում. «Զանցի նուազ գուսանացն մոռացումն ստուն ահեղ ասուրն դաստատանին եւ լինին պատճառք կրտսաւան ամբարձու մարդկան»⁵:

Աստվածաշնչում գուսանը, բնականարար, նոյնայն հաճախական չէ: Վկայված են հետեւյալ օրինակները. «Միրէ զիտիցե՞մ ինչ ի մէջ բարոյ եւ

չարի ... կամ թէ լիցե՞ն տակային զձայն գուսանուց և վարձակաց» [Բ.Թագ. ԺԹ. 35]: «Արարի ինձ գուսանս և երգեցիկ՝ արս և կանայս...» [Ժող. Բ. 8]:

Ուստերենը Ս.Գ.քրի նշված օրինակներում գուսան բառի դիմաց ունի պես: Ի դեպ, ուստերենը պես է բարգմանում նաև այն դեպքներում, երբ հայերենի համապատասխանությունը ոչ թէ գուսանն է, այլ «ասդմոսանուազքք» Հնան. «Եման պես, սահ Խոլա...», «Հնան սադմոսանուազք» [Ա. Մեաց. Զ. 33]: «И певцы синовья Асафевы.» «Еи սադմոսանուազքն որդիր Աստ-փայ» [Բ. Մեաց. ԼԵ. 15]:

Ըստ Վկայված օրինակների գուսանները նաև կանայք են: Հմատ. «Երսաժիշտ էր, տուցաներ զգուսանս կանայս և վարձ առնոյր» (ՆՀԲ): ՆՀԲ-ի մեկ այլ վկայության գուսանի կիմ վիճեղը պարզ է դասնում միայն հունարեն համապատասխանությունը. «Կանիսնցին իշխանը հանել զօրինութիւն ի մեջ գուսանաց և զովչաց» (Խուն. Երիտասարդութեանց): Գուսանի վերոհիշյալ կիրառությունը հաճախական չէ, այդ իմաստով երեմն զործածվում է վարձակը՝ ի հոկադրություն գուսանի: «...կամ թէ լիցեն տակային զձայն գուսանաց և վարձակաց» [Բ.Թագ. ԺԹ. 35]: Ուստերեն՝ «И буду ли в состоянии слышать голос певцов и певец?»:

Երգիշների սեռային տարրերակումը արտահայտվում է նաև այրկին բառերի միջոցով: «Եւ տմենայն իշխանքն արք և կանայր ասացին զողրսի ի վերայ Յովսեան...» [Բ.Մեաց. ԼԵ. 25] (իշխանանք՝ երր. բնագրում երգեցողը): «Որք էին երգեցիկը սադմոսասացը արք և կանայր՝ երկերիր բառասուն և հինգ» [Ն Էնմ, Է. 67]:

Խաղ-ի երգ իմաստը գրաբարի բառարանները չեն արձանագրում: Բայր, ինչպես նաև յնադ ասել «երգեր», խաղ կոսպել «երգ հորինել» կապակցությունները զործածական են բարբառներում: Երեւ հավաստի է Խաղ-ի հ.-ե. ծագումը [Զահուլյան, 1987, էջ 134, 176], ապա կարելի է ենթադրել խաղ «երգ»-ի զոյտքյունը գրաբարում՝ հաշվի ատմելով նաև բառի «ծաղը, ծանակ» իմաստը՝ նաև ժողովրդախոսակցական խաղ ու պար կապակցությունը:

Տաղ-ի համար գրաբարի բառարանները նշում են և «երգ» իմաստը: Ըստ Արմ.-ի «երգ, բերրուած, սուանաոր», Գ.-Զահուլյանը երգ-ի հոմանշային շարքում թերում է միայն տաղ բառը⁶: Աճառյանը նկատել է, որ դասական գրաբարում տաղ-ը չի զործածվել, ավելացնենք, որ հետդասական շրջանի իմքնուրույն գրականության մեջ էլ այն հաճախական չէ: ՆՀԲ-ի վկայած օրինակներից էլ հատակ չէ տաղ «երգ» իմաստը: Տաղ-ի զործառական շրջանակները ընդլայնվել են միջնայնամյան շրջանից:

Ուրեմն՝ տաղ-երգ հոմանիշային շարքը կարելի է ընդունել խիստ վերապահությամբ:

Իմաստային ենթախմբում ամենազբաժանականը երգ բառն է, որը բառակազմական զործուն բաղադրիչ է: Երգ բաղադրիչով գրաբարյան կազմություններն են. երգաբան, երգաբանել, երգաբանութիւն, երգագիր,

Երգագրել, Երգագրութիւն, Երգակ, Երգիչ, Երգակից, Երգակցել, Երգակցութիւն, Երգաւեսն, Երգածայնութիւն, Երգայարդար, Երգասողութիւն, Երգասարադիւն, Երգել, Երգեցիկ, Երգեցող, Երգեցողական, Երգեցողութիւն, Երգիչ, Երգող, Երգողարարարաս, Երգողական, Երգողասէք, Երգողութիւն, Եղերեցութիւն, զուգերգող, կարաւերգիչ, նախերգաբար, նախերգակ, նախերգել, նավաերգութիւն, նուսգերգել, նուսգերգություն, նուսգերգիչ, ողբերգագին, ողբերգակ, ողբերգական, ողբերգակեճ, ողբերգել, ողբերգող, ողբերգութիւն, ողբերգակութիւն, պարերգակ, պարերգող, պարերգութիւն, սաղմոսերգ, սաղմոսերգել, սաղմոսերգող, սաղմոսերգութիւն, սաղմոսերգություն, սաղմոսերգութիւն, բնարերգակ, բնարերգութիւն, բնարերգող, օրիներգարար, օրիներգարաս, օրիներգատ:

Քննարերգող բառը ՆՀԲ-ն շունի: Ուսկերերանի գործերից մեկում այն կա: «... ոչ գրնարկն և ոչ զոյլ իմեր. ... այլ գնաւափարէն և գրնարերգողէն...» [Ոսկ. Պոդ. II, 143-144]:

Կարաւերգիչ և նուսգերգիչ բառերը նոյնական չունի ՆՀԲ-ն: Գրանք մեզ հանդիպել են Սիմեոն Աղձնեցու Վերահիշյալ գործում. «Եւ զնուարգերգիչ բնարից սաղմուաց», «արդ ծանեսու քշնամին, եթև մեծ զեն են կարաւերգիչք իրոյ շարութեան...»⁷:

Մի շաբթ կազմությունների բառակազմական հիմքերը բառարաններում վկայված չեն (Եղերերգ, ողբերգ, զուգերգ, պարերգ, նախերգ, տաղերգ, օրիներգ): Մի շաբթ բառերում էլ երգ արմատի հիմնական իմաստը մրացնված է: Օրինակ՝ բառ ԱՌ-ի նախերգաբար նշանակում է «վաղուց», նախերգակ՝ «նախլնաց բան», նախերգան՝ «սկիզբ»:

Նուազ բարադրիչով են հետևյալ բառերը. նուազածու, նուազակից, նուազայարդար, նուազաբան, նուազաբանական, նուազատը, նուազել, նուազերգ, նուազերգել, նուազերգիչ, նուազերգութիւն, նուազութիւն, աննուազ, յարմարանուազ, բանցրանուազ: ՆՀԲ-ն յարմարանուազ բառը չունի: ԱՌ-ն մեկնում է «քրազմութեամբ երգ»: Մեզ հանդիպած օրինակում բառը ունի բերլս «զավ երգ, սպաշչած երգ, երածշառություն» իմաստը: «Ուստի և զամենայն յարմարանուազն ինչեցեք, որ ոչ զմարդիկ միայն այլ զվերին գօրսութիւնն իրծուցեցյոց» [Ոսկ. Ծառ. 447]: Ակնհայտ է, որ երածշառություն իմաստային խմբի որոշ միավորներ հերանասական մշակույթին, գեղջուկ, ժողովրդական երգարվեստին բնորոշ բառեր են: Գրանց խկությունը ակներև է դասնում նաև մատենագրության տվյալ հատվածի համատերսություն: Գեղջուկ երգերը տկաներվել են հերանասական շրջանից, զոյսաւեճ նաև բրիտոններկան շրջանում, և ինչպես նշում է Ն. Թափմիկյանը, «Հայաստանում վաղ սփյուռսափյանական հարաբերությունների կազմավորման շրջանում ձևավորվում է հայկական քրիստոնեական եկեղեցին, որն ստանձնելով ավաստափյուրյան պաշտոնական գաղտփարախոսի դերը, իր հսկողության տակ և առնում եսոյց մշակուրային, այդ բառը և երածշառական կյանքը...

անկախությանից Հայստանում փառ ավատատիրական շրջանում շարունակում են ծաղկել աշխարհիկ երգ-երսաժուական ճյուղերը»⁸:

Արվեստագետը նշում է շեր և շոխը կրօվող երգիծական երգերը: Առաջին վկայված է Հ.Մամիկոնյանի գործում, երբ թշնամուն հայրենուց հետո Վուհան Կամսարականի և Լարսպ Պալբանու ընդառաջ են գոյիս «որք գեղջի երգօր և պարոր», որոնք «շեր հանեալ տալին «կերտն զազանը զմարմինս դիսկացն և զիրացան, կուզն կերեալ ուռեալ իբրև զարց» (ն.ա.):

Սովոր (նուև սովինչը) վկայել է Ստ.Մյունիցին. «Զկասաւկերգութիւն աշխարհօրէն... զեսպերականն և զիեզնականն տանել ճառս և սովս, որպէս ուսմիկքն սովորաբար ստեղծութեն առ այնոսիկ»⁹:

Պար(ել) հսուկացուրյունը արտահոյափում է հիմնականում սար, կարաւանն, կայք, խաղ, ցուց բառերով: Պարը, պարելը բրիտաններյունը չէր խրախուսում: Գրաբար ճատենազրույթան մեջ սայ հսասատող բազմաթիվ վկայություններ կան: Ահա մի հսուկան «Ետնենազիրը հայոց»-ից. «Չէ մարք բրիտաննից ի հարսանիս երալ են կաքանել կամ պարու զայ, այլ սպարկելառութեամբ ընթրիս ուտել են ճաշակել որպէս են փայել և բրիտաննից» [1964, 227]:

Բնականարար, պարել հսուկացուրյունն արտահոյափում բառերը մեր մատենագիտուրյան մեջ ըիչ են: Նվազ հաճախական են հսուկային կայքել և ցուց բառերը:

Կայքել Վ դարի հեղինակներից վկայել է թերևս միայն Ազարանցեղոսը. «Երգս առեալ բարբառեցան կայքիր վագելով, ցուց բարձևալ մարդկան» [Ազար. 99]:

Ցուց-ը Արմ.-ը մեկնում է «Ուրախութեան խաղ, երգ, պար, կայքին»:

Բացի վերոնիշյալ օրինակից վկայել է և Խորենացին. «Հինքն Արամազնեայց ի նուազ փանդրան և յերգս ցցոց և պարոց զայսոսիկ տան յիշատական» [Խոր. 27]:

ՆՀԲ-ն կայքեմ բառով ոչ բարգմանական գործերից վկայություն չի բերում, իսկ ցուց-ով Խորենացու և Ազարանցեղոսի վկայություններն են: Ցուց-ի ՆՀԲ-ի բացատրույթան մեջ «պար» խմասար ցայտուն չէ: «Ուրսէս թէ ցունօք, այսինքն ցնծորին (անհաջող ստուգարանուրյուն - Լ.Հ.) կամ ցոյցը ուրսխուրեան, հանդէս, ձայն նուազաց կամ նուազ ձայնից. շաշին. շառաչին»: «Պար» խմասար չի նշում և ԱԲ-ն: Ցուց բառի «պար» խմասար ակնհայտ է հասկապես Խորենացու վերոնիշյալ վկայության մեջ:

Ցուց(ը) բառը Արմ.-ում ստուգարանված չէ: Ուշագրավ մեկնություն տնի Ստ.Մալխասայանը. «Ցուց կամ ցոյցը. պարի մի տեսակի անունն է, բայց որ տեսակի՝ որպէս չէ: Տարբեր կերպով են հասկանում: Քանի որ բառը գործ է ածվում պար բառի մոտ, որ տառացի նշանակում է կլոր պար, բոլոր պար, երբ պարողներն իրար ձեռքից բռնած մի շրջան են ձևացնում՝ կարծում ենք, թե ցուցը հակառակությամբ պետք է նշանակե կենու պար, ինչպես է լիզորին

(լեզվինկան): Ազարաւունքներսի մեջ այս բառի գործածությունը («կայրիս վասքելով, ցուց բարձևալ զբարպարամէջսն լցին») հարմար է զայխս մեր ենթադրած նշանակության¹⁰: Խաղաղ «պարեր» իմաստով հավասարի վկայություններ մեր ձեռքի տակ չկան: Այն ենթադրելի է խաղալիկ-ի «պարու, պարուիի» իմաստից, «Դարձեալ առցես գրմբուկ քա եւ եցես ընդ ժողովս խաղալկաց» [Երեմ. ԼԱ, 4]: Ուստի, «Снова будешь укращаться тимпаниами твоими и выходитъ в хороводѣ веселящихся»:

Պար(եր) և կաքակ սառավել հաճախական են. դրանք վկայված են Վդ. և ինքնուրույն, և՝ բարգմանական զբականության մեջ, թեև, ինչպես նշել ենք, սպարելու գործողությունը բրիստոնեական բարոյականությունը չի խրախուսում:

Հ.Ռոկեբերանը, մեկնելով Աստվածաշնչի ոսկիրճ կարաւակին [Ես. Գ. 10] հսկավածք, գրում է. «զայս ոչ խճ սակաւ կատուրեան օրինակ է, զի ամենենին և աշօր և հսնդերձիր և ոսկիր և զնացիր մերկացեալ զցածուրին՝ ի կատուրին կործանելին... իրեն բարողը իմն են տնդամքն հստիս խաղալիքը. զի գործինակ նկարչաց խառնեալ զերանզ՝ զի՞նչ կամիցին պատկեր նկարել նկարիցեն, նոյնպէս և անդամոյ մարմնոյ խաղալիկը՝ զբար մտացն հսկաստեան նկարեն և յայտ յունդիման ամենեցուն ցուցանեն» [Ռոկ. Ես. 36]:

Բուզանդը, խստելով Ներսես Մեծի մահից հետո զլուս բարձրացնող հերանուական ծեսերի և սովորույթների մասին, գրում է. «Ասրո յետ մասուսն Ներսիսի յորժամ զմեռնապան լսյին, փողովք և փանդրովք և վճօր զիոնան պարուցն կաքաւելով..., արք և կանայք պղծութեամբ ճիւղութեամբ ... զմեռելսի յուղարկելին» (193):

Ինչպէս նշում է ակադ. Գ.Զահոռելյանը, հայերենում «չի պահպանվել պարելու գործողության բնիկ հնդկաբական մասնագիտացված անվանում. խաս(ամ) բառը, եթե այն իրոք բնիկ հ.-ե. բառ է, բազմիմաստ է» [Զահոռելյան, 1987, 266]:

Եթե որոշ օրինակներում դժվար է զանազանել պարել և կաքավել-ի նրբիմաստային յորսահստակությունները, ասկա օրինակներ էլ կան, որոնք հուշում են, որ պարել բառով արտահստափած հսկացությունը կասպ ունի պար-ի նախանական նշանակության հետ՝ «զուրջ, շրջան»: Կարելի է ենթադրել, որ պարել սկզբանապես նշանակել է շորջպարը նաև խճրապարը, իսկ կաքաւել-ը՝ մենապարը, ոչ շորջպարը: Ի դես, պարել-ի այդ նրբիմաստը երեսում է և մատենազրույթն վկայած տվյալներից: Հճմա. «Յորս և դր հայեցեալ տեսէր շուրջ զատառածային սեղանովն պարելով զտդայսն» [Փարալ. 35]: «... և սորս որպէս օրիորդը պարեն շորջանակի հսնդերձ չորիս եղանակօր, բազում բարեկարգութեամբ մնան միմեանց և յանկարծակի երագուհաս ի հակառակն ոչ փոխարեկին, այլ զուգակշին ի մեջ անցուցանել ոչ խտփանին» [Ռոկ. Շատ անդրիական, Թ. 776]:

Աստվածաշնչում գործածված են պարել-ը և կաքաւել-ը:

Ուշադրության արժանի է մի հաճգամանք ևս. Բիբլիա-ի ույսատեղի դիմաց [Բ. բազ. Զ. 16, 21, Ժող. Գ. 4, Մատթ. ԺԱ. 17, ԺԴ. 6, Մարկ. Ղ. 22] հայերենում կարաւել է: Հմատ. «Եսես զԴափիր արքայ զի կարաւելք և նուազելք զմուսզարանն» [Բ. բազ. Զ. 16]: «Ժամանակ կարաւելոյ» [Ժող. Գ. 4]: «Եւ ի մատենել դասերն Յերովիլայ և ի կարաւել» [Մարկ. Ղ. 22]: Ուստ. «Կօրծա վայդաւ ձեւուց Սիլոմսկու ույսատեղ» [Ուստ. ԻԱ. 21]: Հատվածի հայերեն համապատասխանակի է. «Եւ յորժամ տեսանիցէր թէ ելամեն դասերը բնակչացն Սերպիլայ պար առեալ պարուր»:

Հիշյալ օրինակներից ակնհայտ է դատնում ոչ միայն այսել-ի և կարաւել-ի հաճախականության պատկերը, այլև դարձյալ հստատվում է, թէ պար, պարել-ը ենթադրում է շորջպարը:

Հայ բարգմանիչը պատահականորեն չէ, որ Պատ. ԻԱ. 21-ում գրում է պար առեալ պարուր, իսկ մյուս հստվածներում՝ կարպիկ: Նա քծվինդրորեն հետեւել է հունարեն բնագրին, որտեղ Պատ. ԻԱ. 21-ում հետաքրքրաց համապատասխանակը հուն. Ιωρέβια-ն է՝ «զորջալոր, երգ-պար» (հմատ. ուստ. հօրօնություն): Իսկ մնացած օրինակներում հսնդիալող կարաւել-ը հուն. օրինականի-ն է՝ «սարեր»:

Ահա մենք վկայություն ևս Աստվածաշնչից՝ հայերեն և ուսերեն: «Երբն յուրախությունները սիրաք մեր և դպրձան ի սուզ օրինութիւնը պարուց մերոց» [Ողբ. Երեմ. Ե. 15]: Պրեկրատիւս բացա սերդա հաշեց: հօրօնությունը համարակալու առաջակայտությունը առաջակայտություն է:

«Պարել» հմաստավ կարս արմասից գրաբարում առկա են հետեւյալ կազմությունները. կարաւածել «կարավելով, պարի նման», կարաւարան «պարելու անդ», կարաւել, կարաւեցուցանել, կարաւիչ «պարադ», կարաւորին ...

Պար արմատով՝ պար առնուլ «պարել», շորջպար բոներ», գուգապարեն «պարակից լիներ» (գուգապար բառարանները չեն վկայում), կոծալար «կոծողների, լացկանների պար»:

Երաժշտական գործիքներ: Գրաբար մատենագրությունը ավանդել է երկու տասնյակից ավելի լարային, փողային և հարվածային երաժշտական գործիքների անվանումներ: Զարմանալի է, որ այդ անվանումներից բնիկ հայերեն բառեր չկան, եթե չհաշվենք երգարան բառի երգ արմատը: Ընդհանրական են երգարան և նուազարան բառերը. «Եւ բանզի նորա գերգարանն ունիին, որ են նուազարանք, բանզի ասէ: թէ գուտեաց նոցա կախեցար գերգարանս...» [Պող. II, 22]:

Իրանական լեզուներից են հետեւյալ բառերը.

Բարբուտ, բմբուկ, տալիխ, վիճ, նուազ(արտն):

Բարբուտը վկայվուծ է ուշ շրջանից՝ եզակի օրինակով (Ուռիայեցի), որը թերում է և ՆՀԲ-ն. «Նստան ի զինարբուտ, սիրեցին գրաբարու և զերզ զուսանաց»: ՆՀԲ-ն բառը մեկնում է: «նուազարան. ազգ բնարի»:

Հունարենից են՝ բամբիոն, երգիոն, սադմոս(արտն), սրինգ:

Երգիտնը Արմ-ը բացարձում է «մի անսակ նուազարան»: Այսինքն՝ այդ գործիքի բնույթը հստակ չէ: ՆՀՂ-ն լի մեկնում է. «քառ յն. օրգանոն. այսինքն՝ զործի նուազաց. նուազարան, որ առ նախնիա կը որպէս մրսլալ, այսինքն սրինգ թերանով փշելի բազմարիս եղեղամքը աշխաճանարար. ևս և բազմավիող ջրահնջակ. և առ յեախն շինեցա մերենայ բազմավիող, որ առայ զծայն ահեղ եղամքարեր օդով բրոց՝ համեղեր բախմամբ ճառաւեց»: Հետո երգեկոնի բնույթը այլ է եղել, այլ է վկայում և հենակյալ օրինակը. «Որպէս և յերգիտն արունատապես ընդ մի թերան փշէ և բազմարիս փշոցն հստարակ զոշեն...» (ՆՀՂ):

Ասորեսնից են՝ ծննդայ, շեփորայ, բնար (ջնար): Աճառյանը չի ընդունում, որ բնար և ջնար նոյնի բառերն են (տե՛ս Արմ., ջնար բառականացածը):

Մի շաբթ բառերի ծագումը հստակ չէ. գատիկ/գաւիճ, կտակարան, սրուիկ փող: Գատիկ/գաւիճ-ը Արմ-ը հսմարում է սխալագրություն և ուղղում՝ վիճ (Տե՛ս Արմ., Գատիկ բառականացածը):

Կտակարան գործիքի տեսվանում գրաբարի բառարանները չեն վկայում: Աստվածաշնչում կտ մի այսպիսի նախասառարյուն. «Ի մէջ ուռեաց նոցա կտիւնցոր զիտակարան մեր» [Ստեղ. ԱԼ. 2]: Երրույթենի հսմասատաս-խանակը՝ գրնար. հոն. օրգան. ուսուեն բարգմանությունը. «ին արձախ, ոսքեւ եց ուսուել մասն արքայի արքայի հարցը պարզ չէ:

Սրուիկ-ը նոյնպիս գրաբարի բառարաններում չկտ: Այն մեզ հսմնիակել է Ս.Եփրեմի կցուրթներում. «Սրուիկ եսրկանն երխասարդը և ջնարատը եր-գեն ջնարիր» [Եփր. կց. 6]: Խերեւս բառի գուգակնեներ են ուս. սւիրել, բոլդ. սւիրօլ-ը, բայց գրաբարյան վկայության բան աղբյուրի հարցը պարզ չէ:

Մատենագրության մեջ ավանդված են նաև մի բանի երաժշտական գործիքների մասեր՝ լոր, աղի «լոր», կնտնտոց, հարփէ, եղջիւրահար...

Կա վկայության գործիքների կազմության, գործառության և հիշերսնային առանձնահատկությունների մասին. օրինակ՝ փողը որպէս բանակի (ասգմական նվազարան), նրս պղնձյա և եղշերյս տեսակները, սասպիռող, գրաբարիող անվանումները¹¹: «Չոք մարգութէն ասագավող զնու անուանել» (ՆՀՂ): «Ի ձայն մեծ զալարափողոց զիյր զունդսն ասիալէր» [Եղիշ. 118]: «Եւրեսողի բնարն զրերէ բան զամենայն զործիս լաւագոյն է» [Փիլ. ՆՀՂ]: «Որպէս զշորեքաղեան երգարան տես դու զմեօք» (ՆՀՂ): (Երգարան այստեղ երաժշտական գործիքի անվանում է): «Տասնադես սադմոսարանաւ սադմոս ասացէք նմա» [Սաղ. ԼԲ]:

Երաժիշտ, որեւ. զործիքի վրա նվազող հստակացությունը գրաբարում հաճախ արտահայտվում է երաժշտական գործիքի անվանում + հար բաղադրիչով: «Եւ առհասարակ թմրկահարը և սրնգահարը, բնարահարը և փողսահարը իրաքանչիր արտեսոք սկսվէս ձայնիր բարբառեցան» [Բուգ. 196]:

Նուսպանուն երաժիշտն է, նվազողը, խակ նուսպայարդարք նուև երգայարդարք՝ երթինողը՝ երգահանը: «Տուր ծայբ բարբառայ նուսպանուոց ի մեջ ցնծացելոց» [Դատ. Ե. 11]: «ԱՄԾՆՅԻԼԱ նուսպայարդարք ճանաչէր և ԶԱՅՆՈՒՓԱԽԵՍ... երգահան... [Եւս. Քր. II 200]:

Աստվածաշնչում՝ Սադմոսներում, վկայվոծ երաժշտական գործիքների անվանումների բարգմանուրյուն վերաբերյալ նրանկատ և ուշագրավ դիտուրկումներ ունի Լ.Տեր-Պետրոսյանը: «Սադմոսների հայերեն բարգմանուրյուն մեջ նկատվում է մի չափազանց հետաքրքիր երևոյք: Այնտեղ, որտեղ հունարենում և մյուս բնագրերում իշխատակվում են երաժշտական գործիքներ, հայերենը դրանց անվանումները փայսարինում է վերացական «օրինարանական» բառերով:

Նա բերում է բարգմարիկ գուգահենոներ. ահա մի բանի նմուշ. (տպագրական դժվարություններից խուսափելու համար հունարեն համապատասխանութերը չենք նշում):

	Հայերեն բարգմանուրյուն		Ցորանանից և մյուս բնագրեր
ՃԸ. 3	օրինեցէր զնա ի ձայն օրինուրեան	ի ձայն փողոյ	
ՃԸ. 4	օրինեցէր զնա ցնծուրեանք գովեցէր զնա ուրախուրեանք	բնրկա և պարուք	
ՃԸ. 5	օրինեցէր զնա ի բանս բաղցունս	աղեօք և տաւղան ի ճնծդայս բաղցունս	

Սադմոսների բնագմանուրյան այս յուրահատկուրյունը ըստ Լ.Տեր-Պետրոսյանի վկայում է, «որ հայ եկեղեցում երաժշտական գործիքների գործածուրյունը մերժված է եղել»¹²:

Նկատելով, որ այնուամենայնիվ Սադմոսներում երաժշտական գործիքներից կան ասդմոսարան, փող անվանումները, Լ.Տեր-Պետրոսյանը գրում է. «Թու ինչու է հանդուրժվել տասնադի սադմոսարան անվանումը, պարզ է. ըստ երևոյքին Հայաստանուն այդպիսի գործիք չի եղել, և սադմոսարան բառն էլ կասպած լինելով սադմոս-ի հետ, հավասացյալների մոտ որևէ հերանուական իշխողուրյուն չի արքնացրել: Իսկ փողը, ինչպես հայտնի է, հնում ոչ այնքան նվազածուրյան գործիք էր, որքան հանդիսուրյունների, տոնախճրուրյունների տղղունշան»¹³:

Նկատված է նաև, որ Աստվածաշնչի մյուս գրքերում երաժշտական գործիքները հայերեն բարգմանուրյան վերաբառադրվել են իրենց համարժեքներով: Սադմոսներում այդ անվանումների տարափոխվելը Լ.Տեր-Պետրոսյանը բացատրում է, որ «ասդմոսներն էին կազմում այսշտուներգուրյան իմմասկան բովանդակուրյունը»¹⁴:

ՀԱՍՏԱՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Աբ Առնեան քատարան հայկագենան լեզուի, Վեճեստիկ, 1865:
- Ազար Ազարանցեպս, «Պատմութին Հայոց», Տիգլա, 1909:
- Արմ. Աճայուն Հ., Հայերեն Արմասութան քատարան, հատ. 1-4, Եր., 1971-1979:
- Բուզ. Փատոսի Բուզանդացոյ Պատմութին, Ս.Պետերբուրգ, 1883:
- Եղիշ. Եղիշէլի, Վասի Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1957:
- Խա.Քը. Խանջանայ, Կեսարացոյ ժամանակականք (Զրոնիկոն) իրկանասնեայ, Վեճեստիկ, 1818:
- Եփր. Լց Կցորդը երանելոյն Եփրիմի, Խորին Ասորաց (իրատ. Ն.Ալիբեան), Վեճեմնա, 1957:
- Խոր. Սավսիսի Խորենացոյ, Պատմութին Հայոց, Տիգլա, 1904:
- Կոր. Վորիմ, Վարք Մաշտոցի, Եր., 1941:
- Մանդ. Յովիսն Մանդակունի, ճառը. (ուն Մատենագիրը Հայոց, հատ. Ա, Անրիկաս-Լիքանան, 2003):
- Նշք Նոր բազգիր հայկական լեզուի, հատ. 1-2, Վեճեստիկ, 1836-1837:
- Ռոկ. Ես. Յովիսն Ուկերեանի, Մեկնուրին Եսայեայ մարգարի, Վեճեստիկ, 1880:
- Ռոկ.Պոդ. Յովիսն Ուկերեանի Մեկնուրին բրոյն Պօլոսի, Վեճեստիկ, 1862:
- Վեգոր. Բարեկ Կեսարացի, Յաղագու վեցօրեայ արարչորեան, աշխատասիրայշտը Ա.Մուրալյանի, Եր., 1984:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Տե՛ս Համաքարքա Հին և Նոր կտակարանաց, Երաստին, 1895:

² Այս և հետագա հղումները տե՛ս Բնձնա. Կորի շայածունութիւն Վետխու և Նորու շայածունութիւն Առաջին համար, Ա. Առաջին և Երկրորդ համարները, Երևան, 1994:

³ Տե՛ս Հայերենացիտական միջազգային Երկրորդ գիտաժողով, գելուցումների դրույթներ, Եր., 1987, 32:

⁴ Երգել Ճեղումքի, ցցոյ երգ, բուեսոց երգի մասին տե՛ս Հ.Ստեփանյան, Հին Հայաստանի երաժշտական մշակույթի հարցերը Սրբ.Լիսիցյանի աշխատավորություններում, (Ծիրակի հայոցլուսական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատավորություններ, VI, 2003, էջ 104-109):

⁵ Տե՛ս Անդրյան մատենաւշար, Ա, Եր., 2003, էջ 191:

⁶ Գ.Զահորյան, Հայոց լեզվի սպառնություն. նախազրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 386

⁷ Տե՛ս Ամեմյան Մատենաւշար, էջ 189, 190:

⁸ Դ.Թահիմյան, Գրիգոր Նորեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Եր., 1985, էջ 15:

⁹ Տե՛ս Հ.Ածոնդ, Դիոնիսոս ֆրակիական և արմատական տոլկօվածություններ, Ս.Պետերբուրգ, 1915, էջ. 193:

¹⁰ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն. աշխարհաբար բարձմանությունը և Ժեկնարանությունները Ստ.Մավստայանի, Եր., 1981, էջ 464:

¹¹ Այս մասին տե՛ս Հ.Հարությունյան, Հ.Ալիբեան, Նվազարանները իին հայոց բանակոմ (Ծիրակի հայոցլուսական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատավորություններ, IX 2006, էջ. 81-84):

¹² Լ.Տիր-Պետրոսյան, Սաղմոսների հայերեն բարզմանությունը և նրա նախօրինակը, «Եղմանձին», 1975 Ա, էջ 48

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նշի. աշխ., էջ 41-51:

ԺԱՍՄԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԵՎԱՅԻՆ ՆԱԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՍԱԶԲՈՒՆՈՒՆԵՐԸ

Լիանոս Հովհաննես
Երևանի պետական համապատասխան

Լեզվի ձևային նկարագրության տղթության տուաշուցումը բառներորդ դարի լեզվաբանության կարևորագույն նվաճումներից է, քեզ լեզվական փաստերին ձևային մոտեցման և նոյնիսկ դրանց կատալոգությին ներկայացման տաղմերը հայտնի են եղել դեռևս անտիկ շրջանում և հիմ հնականության մեջ: Հիշենք թերուով Վաստոնի՝ խորի մասերի ձևական դասակարգությունը: Կամ Պանինիի թերականական համակարգության սրայանական սիմվոլների կիրառությունը: Սակայն որպես լեզվաբանական ուղղություն՝ ձևային նկարագրությունը պարտական է կառուցվածքային լեզվաբանության առաջացմանը, որն իր հերքին ձևավորվեց որպես հակագղեցություն մի կողմից՝ ավանդական նկարագրական լեզվաբանության հիմնական հուսկուցությունների անորոշ ու ոչ ճշգրիտ ձևակերպումներին, մյուս կողմից՝ նրա հակագղեցությանը լեզվական երևույթների տրամաբանական և հոգեբանական մեկնարանություններին: Այսպիսով, ձևային նկարագրության առաջացման ներքին նախադրյալ կարելի է համարել զուտ լեզվական-լեզվաբանական չափանիշների որոնումները և նկարագրության լիակատարության ու անհակասականության ձգուությունը: Ձևային նկարագրության հետագա առաջացնացի արտաքին զորդումներն են եղել բաներորդ դարում համակարգային տեխնիկայի հարատև զարգացումը, որի անհերաժեշտ մասն է կուզմում նաև ինֆորմացիոն տեխնոլոգիաների լեզվական ապահովությունը:

Լեզվի ձևային նկարագրությունը կամ կադաստրությունը ներառում է, որ նկարագրության մեջ մենք պետք է զործ ունենանք բացահայտ և միաւշանուկ կերպով սահմանված երակեալույին օրյեկտների, նրանց միջև եղած հարաբերությունների ճշգրիտ ձևակերպումների և այդ օրյեկտներից այլ օրյեկտներ ստանալու հատուկ կանոնների հետ: Այս տեսակետից ձևային նկարագրությունը նուև մարենաստիկական է՝ հասկացությունների ու զործողությունների միանշանակության և ճշգրտության առանձինք: Յուրաքանչյուր իդեալական ձևային նկարագրություն կամ կադաստր մարենաստիկական համակարգ է՝ ոչ այնքան մարենաստիկական սիմվոլների կիրառմանք, որքան նկարագրության ճշգրտությամբ ու անհակասականությամբ¹:

Հայերենի թերականության ձևայնացման կամ կադաստրային ներկայացման ուղղությամբ նախկինում կատարվել են որոշակի աշխատանքներ, սկսած դեռևս անցյալ դարի 60-ական թվականներից², բայց դրանք մի կողմից՝ եղել են հստվածական, մյուս կողմից՝ հետապնդել են որոշակի մասնավոր խնդիրներ կամ նախատեսվում չեն եղել կիրառվելու անդեկտական տեխնոլոգիաներում: Այսօր խնդրի դրվագքը ավելի լայն է, քանի որ նկատի ունի հայերենի թերականական կառուցվածքի բոլոր նույնարդություններ ձևացմանը և նկարագրության արդյունքների ավելի բազմակրողմանի կիրառությունը՝ հայերենով տեղականության ստացման ստացման, պահպանման, նշանման, փոխակերպման և հաղորդման սրահանջները բառ ամենայնի բավարարելու տեսակետից:

Լեզվի ձևային նկարագրության սկզբունքները մշակելիս պետք է հաշվի տանել տվյալ լեզվի կառուցվածքային տառանձնահատկությունները և այն կոնկրետ նպատակը, որին ծառայելու է այդ նկարագրությունը:

Ներկա փորութ հայերենի ձևային նկարագրության հիմնական նպատակը կը համակարգային ծրագրերին ծառայեն է: Հայերենի ներսակամքը և նրա հասղող գործառնությունը տևելու կատարման տեխնոլոգիաների բնագավառում մեծ հետանիաբներ է բացում ինչպես տեխնուական-լեզվարտնական, այնպես էլ գործառնուական խնդիրների բաժնան առաջ, որի համար անհրաժեշտ նախապայման է հայերենի բերականության լիուլատար ձևային նկարագրության ստեղծությունը և դրա համապատասխանեցումը համացանցային այլևսոյ ծրագրերի:

Համակարգային լեզվարտնության բազմազան խնդիրների շրջանակում³ հայերենի համար ներկայումս առավել արդիական ու հրատասայ են տեքստային իրավունքներ մշակումը և մերենական բարգմանուրյունը: Համակարգային լեզվարտնության բոլոր բնագավառների համար էլ որպես նախադրյագ և ենաւազու գործացման գրավական պետք է ստեղծվեն հայերենի լեզվական պաշտպանները (ուսուրաները): Լեզվական սրաշաբները բնական լեզվի փաստերի ամբողջությունն է ներկայացված համակարգիներին մատչելի տևորու, այսինքն՝ ենանց ձևային նկարագրությամբ: Սովորաբար լեզվական սրաշաբների մեջ են մասնութ բնական լեզվի գրավոր կամ բանագոր տեքստերը (կրապուները), բառարանները, լեզվի բերականական համակարգի նկարագրությունը, դրանք ներկայացնող տերմինային համակարգը կամ մետալեզուն: Պայմանականորեն դրանց մեջ կարելի է բնդրվել նաև ծրագրային գործիքները, որոնք հենարավորություն են տալիս օգտագործելու, փոխակերպելու և համալրելու այդ պաշտպանները:

Ժամանակակից հայերենի, ինչպես և ամեն մի այլ լեզվի ձևային նկարագրությունը կարող է կատարվել տարբեր հայեցակետերից: Կարելի է լեզուն ներկայացնել ինքն իր մեջ որպես անկախ ինքնուրույն ներփակ (լատինենու) համակարգ՝ առանց այն կապելու որևէ այլ համակարգի հետ: Այս մոտեցումը վերարեքութ է առանձին լեզվի տեսության բնագավառին, ապահովում է լեզվի համարժեք նկարագրությունը և խուսափում է լեզվական կատացվածքը այլ համակարգերի տպդեցուրյանը ենթարկելուց: Երկրարդ մոտեցումը՝ լեզվի նկարագրաբարյունը այլ համակարգի (այդ բարձ՝ արհեստական լեզուների) տերմիններով ու սկզբունքներով, տիպարանական-զուգադրական լեզվարտնություն խնդիրներից է, ապելի գործնական բնույթ ունի և, կախված կոնկրետ նպատակներից, կարող է ժամանակ ու զանրեր խնայել, սակայն այս դեպքու հենարավութ է մասնակի տվյալ լեզվի յուրահատկությունները:

Հայերենի կառուցվածքի ձևայնացման ներկա փոլութ որպես հիմնական սկզբունք բնդրման է հայերենի ինքնուրույն ձևային նկարագրությունը: Սա նշանակում է, որ արյունը պետք է լինի հայոց լեզվի անկախ նկարագրությունը և ենթերի ու ծրագրերի մի ամբողջություն, որը հենարավորության կատահայերենի կառուցվածքը ներկայացնել համակարգային այլայլ ծրագրերի տերմինային համակարգերով և ենանց միջավայրում:

Նշենք նաև, որ լեզվի յուրաքանչյուր նկարագրություն կարող է կատարվել երկու ուղղությամբ՝ արտահայտության պլանից և արտահայտության

միջոցներից դեպի բավարարակություն պատճ և ընդհանրապես՝ բավարարակություն սլաքից դեպի արտահայտություն պատճ: Առաջին դեպքում ներկայացվում են լեզվական ձևերը, և պարզվում է, թե ինչ բավանդակություն է նրանց համապատասխանում, երկրորդ դեպքում նաև բացահայտվում են բավանդակության տարրերը, պատճ որոշվում նրանց արտահայտություն միջոցները: Ներկայումս հայերներ ձևայնացած նկարագրության մեջ ընդունված է առաջին ուղղությունը, այսինքն՝ սկզբնապես տրվում են արտահայտության պահի կադապարներն ու նրանց իրացումները, այնուհետև անցում է կատարվում բավանդակային կողմին:

Եվ վերջապես, լեզվական կադապարները կարող են լինել ինչպես վերուժող, այնպես և սերող կամ համադրող: Առաջին դեպքում անհրաժեշտ իրացելումը (ինֆորմացիան) բարդում է աճրողական տերասից նրա տարրերի, բառերի, օժանդակ մասնիկների վերլուծության ու նոյնացման և նրանց միջև եղած հարաբերությունների ճանաչման ճանապարհով, երկրորդ դեպքում՝ նախապես արքած ասարքերից սերման որոշակի կանոններով ստեղծվում է աճրողական անքառային ինֆորմացիու: Ինչպես նշում է Գ. Զահորելյանը, «Համադրության ժամանակ մենք փաստորեն հանդիսանք ենք քերում դիմավորիկ մոտեցում՝ ցոյց տալով միավորի ստացումը (սերումը), վերլուծության ժամանակ հաճախ ստասակի մոտեցում՝ ցոյց տալով պատրաստի միավորի (սերման արդյունքի) բարադրիչների կատարվածքային փոխարարութերությունը»⁴: Կովիսած առաջադրված մասնակներից՝ օգսագործողը դիմում է վերլուծիչ կամ համադրիչ ծրագրերի և համարատասխան լեզվական պատշաճների հենքերին: Շատ հաճախ, մասնավորապես մերենական բարգանառության ժամանակ, զորք ենք ունենած միաժամանակ քեզ վերլուծող, թե սերող կադապարների հետ:

Վերևորդ է ասել, որ յորաքանչյուր բնուկոն լեզու բարդ և ոչ միասնար կատարվածք ունի և ձևայնացման համար այնքան էլ հարմար օրյունիւ չ:

Ժամանակակից արելեխահայերն զրուկան լեզվի ձևային նկարագրությունը նոյնական զգալի դժվարություններ ունի, բայց որ այդ լեզուն աչքի է ընկնում քերականական կարգերի (կատեգորիաների) առաստորյանք և դրանց արտահայտման միջոցների բազմազանությունը: Սա նշանակում է, որ միենույն քերականական խնամարք կարող է արտահայտվել բազմաթիվ տարրերակային ձևերով, որոնց կիրառումը պահանջում է որոշակի պայմաններ: Օրինակ՝ հայերնեն ունի հոլովական զարգացած համակարգ (ի տարրերություն հոլովակ չունեցող լեզուների): Գոյս կանոնների հոլովակ մեջ կարելի է առանձնացնել 9 արտաքին քերման և 4 ներքին քերման հոլովակայեր, որոնք իրենց ենքրին ունեն ենթատեսակներ՝ կապված հոլովակների կազմության համար հիմքերի տարրեր ձևավորման հետ: Եթե նրանի ունենանք, որ հոլովական մեջ տարրերակայում են նաև անվանական և դերանվանական տախեր, և հոլովակները ընկը ըստ տարրեր հետազոտողների ընդունվում է 5-ից մինչև 7, ասսու պատճերը ավելի կրաքարեն:

Բայց խոնարհումը նոյնական ձևառատ է: Հայերնենի բայց ընդհանրապես հարուստ է քերականական կարգերով (եղանակ, ժամանակ, դեմք, թիվ, սեռ, խնդրասություն, կերպի և դասի դասեռություններ և նույնական հարացույցում յուրաքանչյուր բայած ունի հասուն ձևավորություն և ասենք, անզլերե-

նում), ինչպես նուև գոյուրյան ունի անկատոն բայերի զգալի քանակ, որոնք շնորհած են խոնարհանք թվականուոր օրինաշափուրյուններից: Այս ամենը ստեղծում է նկարագրաւրյան մեծ ծովայ և ճանրամասների առաստրյան:

Մյուս կողմից՝ ձևային նկարագրաւրյան զգալի դժվարություններ են սուսունում նուև հայերենի տիպորտնական բնույթի պատճառավ: Հայանի է, որ հայոց լեզուն առավելապես պատկանում է կցական լեզվաախին, այսինքն՝ թերականական իմաստները իմբնականում արտահայտվում են հասուն մասնիկների կցումով, առկայն ունի նուև անշտուտկանուրյան և թերականուրյան զգալի տարրեր: Ընդ որում ձևաբանական հարացույցների մեջ դրանք համար հանդիսան են զալիս միաժամանակ կամ փոխնիվուս: Անշտուտկանուրյունը արտահայտվում է առավելապես բայի խոնարհան մեջ, երբ մասնակային ձևերը կազմվում են զերբարյալ և օժանդակ բայով, օրինակ՝ զնում են, զնացել էի են, հարադրավար բայերի կազմուրյան մեջ, երբ բայով բարդություններն ունեն հարաբերական ինքնորույցնուրյան, օրինակ՝ ծափ առայ, առաջ բժիշկներ են, ինչպես նուև անվան համակարգում կապական կառույցների տառանուրյանք՝ սեղանի վրա՝ առայ մռայ առաջ են: Թեքականուրյան տարրերը առավելապես հանդիսան են զալիս հոլովճան համակարգում ներփակ թերման ձևով, այսինքն՝ հոլովական իմաստն արտահայտվում է ոչ քեզ վերջապարուրյանք, այլ եթքի ճայնափորի փոփոխուրյանք (ենթագայուրյանք), օրինակ՝ հայր-հոր, ստուճ-տաճ են: Ներքին թեքումը հատկապես արտահայտվում է դերանվանական հոլովճան մեջ, երբ ուղիղ և քեզ հոլովական ձևության արտահայտվում է ոչ քեզ վերջապարուրյանք, օրինակ՝ ես-իմ, զու-քո, կամ հատուկ սահմանագիծ չկը եթքի և վերջապարուրյան միջեւ, օրինակ՝ մեմք-մեր, ճա-ճրա: Ասկածը վերաբերում է հայերենի ձևաբանական համակարգին:

Ավելի բարդ է շարահյուսական մակարդակի ձևայնացումը, քանի որ այսան զոր ունենք մի կողմից՝ բաների թե՛ իմաստային, թե՛ թերականական կոսպակցելիուրյան (այդ բայում խնդրասուրյան), մյուս կողմից՝ շարադասուրյան հետ, որ շատ դեպքերում անհատական է և ընդհանուր օրենքների և հատուկ չափանիշների ավելի թիզ է ներարկվում, քան ձևաբանուրյանք: Հատկապես նախադասուրյան մեջ բաների շարադասուրյան որոշանակ համար անհրաժեշտ է նկատի ունենալ լեզվական և արտապեզզվական մի շարք գործներ, որոնց ձևայնացումը բարիկան լուրջ խնդիր է: Բացի այդ, երեւ ձևաբանուրյան մեջ կարելի է խոտել լիսկանուր նկարագրուրյան մասին, որին, կարելի է ասել, զիերեւ հասել են ձևային նկարագրուրյանք զբաղվող հայ լեզվաբանները, շարահյուսուրյան մեջ այդպիսի կատարելուրյունը դեռ հետու է, քանի որ նախադասուրյանները լեզվի մեջ անվերջ բազմուրյուն են ներկայացնում, և միշտ կարելի է զանել նոր համակցուրյուններ, որոնք դեռ նկարգրված չեն: Նախադասուրյունների կառուցվածքային կադապարներն անշուշտ վերջապար են, քայլ դրանք ունեն իրացնումների մեծ բազմացնուրյուն:

Ելեկազ այս առանձնահատկուրյուններից՝ հայերենի ձևային նկարագրուրյունը պետք է ընտրի այնպիսի եղանակներ ու միջոցներ, որոնք բայց կատան նվազագույն կանոնների օգնուրյանք նկարագրել առավելագույն բայով օրյենկաներ:

Սակայն ձևային նկարագրության փորձաքարտը ի սկզբանե և մինչև օրս մնում է իմաստների, այսինքն՝ լեզվի բովանդակության սլասի ձևային նկարագրությունը: Առաջարկել են իմաստային վերլուծության բազմութիվ կադարձներ՝ (սկզբող իմաստաբանություն, բաղադրական վերլուծություն, իմաստային բազմապատճենների և այլն), բայց դրանք մեծ հաջողության չեն հասել, քանի որ խիստ դժվար է հաստիքը ձևակերպել ելավետությին իմաստային կատակարգականները, առանձնացնել բովանդակությին պլանի նվազագույն միտվորները և նրանց տարրերակիչ հատկանիշները, ինչպես արդյուն և արտահայտության պյանի միավորների և նրանց տարրերակիչ հատկանիշների նկարագրություն դեպքում:

Այս տեսակետից հետևնկարային է Գ. Զահորեանի ստեղծած՝ լեզվի ընդհանրական կադարձը, որը «ճախատանկած է որպես ամեն մի օրյեկտի նկարագրության միջոց, լեզվաբանական վերլուծությունն ու համադրությունը կատարվում է թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան բոլոր օրյեկտների նկատմամբ կիրավող՝ ինդուկտիվ եղանակով ստացված և դեղուկայի ճանապարհով ստուգված որոշակի բնորությունը միջոցով: Եթե՛ բնորությունը նեղ իմաստով մեկնարաններ որպես հատկանիշ, ապա կարելի է առել հետևյալը. ստրատանցիոնալ լեզվաբանության մեջ հատկանիշի հասկացությունը (քանի Յակրուտնի մեկնարանության ավելի լայն իմաստով՝ բնորությունի հասկացարյունը) հարուրեալցվում է հարաբերության (Ելմակի մեկնարանությամբ) հասկացության հետ: Համարվում է, որ դրանք կապված են վիճակարգ փոխանցունույնությամբ և փոխարինելիությամբ, այսինքն՝ հատկանիշը հենվում է որոշակի հարաբերության, իսկ հարաբերությունը որոշակի հատկանիշի վրա»⁵:

Լեզվական միավորների հարաբերակցային առնչությունների վրա է հիմնված և UNL համացանցային լեզուն, որը շրջանառության մեջ է, դրվել վերջին ասամայիսկներում⁶ և նախանակած է տեղաբերի բովանդակությունների համար: UNL-ը բնուկուն լեզուներից անելիս համարզ է, այն չի կարող և նպաստակ չլինի ներկայացնել բոլոր լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները, այլ հենվում է ընդհանուր հատկացական կուտեղրիսների, լեզվական միավորների միջև եղած ունիվերսալ հարաբերությունների և քերականական կարգերի իմաստային բնորությունների (տարիքանաների) վրա, իսկ ինքը չունի կրնկրեալ քերականական կառուցվածքը: Որևէ լեզվի UNL-ային նկարագրության համար բնուկուն լեզվի բերականական առանձնահատկությունները պետք է ներկայացվեն UNL համակարգի համապատասխան հասկացական կարգերով, հարաբերություններով և տարիքաներով: Վերջիններս UNL-ում արտացոլում են օրյեկտիվ իրականության առարկաներն ու նրանց միջև եղած հարաբերությունները, որոնք այս կամ այն լեզվում կարող են արտահայտվել տարրեր բառային ու քերականական միջոցներով:

Ներկա հաղորդման մեջ մենք հասարակության չունենք ավելի մանրամասն կանգ առնելու հայերենի ձևային նկարագրության բնագավառում կատարված նոյնիսկ տեղանակարեալ աշխատանքների նկարագրության վրա, նշենք միայն, որ վերջին տարիներս դրանց մեծապես նախանական են ՀՀ պետական զիտական հաւշվողական համակարգների ստեղծման նպատա-

կային ծրագրի շրջանակներում հայոց լեզվի համակարգչային ապահովման, ինչպես նաև UNL-ի հայկական ճաղույթ ճշակման աշխատանքները:

Չափ կարևոր է նշել նաև, որ հայերենի ձևային նկարագրույթունը ունի ոչ միայն զարծնական մեծ նշանակություն հայոց լեզուն ժամանակակից ինֆորմացիան տևանողագիսների բնագավառում որպես հաղորդակցման լաւագության միջոց ներգրավելու առողջություն, այլև անսական նշանակալիք արժեք հայերենի կառուցվածքի ավելի ճշգրիտ, լիակատար և զատ հնարավորին անհուկասական նկարագրույթունը ստեղծելու տեսակենալից: Բավական է նշել, որ հայերենի ձևանական համակարգի ձևային նկարագրույթունը հնարավորություն է ավելի բացահայտելու բայսական, անվանական ու դերանվանական հարացույցների ինչպես կանոնակիր կազմությունների, այնպիս էլ բոլոր տարրերակային ձևերի, շերտուների ու անկանոնությունների ամրագական պատկերը՝ ճշգրիտ բավական տվյալներով և դրանց ավտոմատ վերլուծություն ու սերման հնարավորույթուններով:

ԾԱՌՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Հմմտ. Ю. Դ. Առքսյան, Իдеи и методы современной структурной лингвистики, М., 1966, с. 93.

² Այլ մասին տե՛ս Ռ. Ուուտյան, Լեզվի ձևային բնույթունը հայ լեզվաբանության մեջ, սույն ժողովածու, ինչպես նաև՝ Լ. Հովհաննիս, Հայերենի թերականության ձևայնացում և համբուղանոր ցանցային լեզվի հայերեն նորույն նշակում, Արևելագիտության հարցեր, VI, Եր., 2006:

³ Համակարգչային լեզվաբանություն է այն ամենը, ինչ կապված է լեզվաբանության մեջ համակարգչիների օգտագործման հետ: Դա կարող է ունենալ քե՛ տեսական-հետազոտական, քե՛ գործնական բնույթ: Մասնավորապես, արդեն ավանդական են դարձել այնպիսի գործնական բնագավառները, ինչպիսիք են մայրենի և օտար լեզուների ուսուցումը, բառարանագրույթունը, ավտոմատ խմբագրումն ու սրբազումը, լեզվական միավորների հաճախականության որոշումն և այլն: Ավելի քարդ տեսական խմբիներ են սպարտակատ հաղորդակցական գործներացի կազմակարումն՝ բնական լեզվով մարզու և համակարգչի հայորդակցումն, արենատական լեզուների ստեղծումն, մերենական բարձմանուրբունք, տերսով բովանդակության ավտոմատ հանաչումն, որը ենթադրում է իմաստի ձևայնացում, և որի համար բարդական չեն նիսյ լեզվական գիտելիքները, և այն: Հմտությունը լեզվաբանության մեջ, Եր., 2004:

⁴ Գ. Զահելկան, Հարահյուսական ուսումնասիրություններ, Եր. 2003, էջ 11:

⁵ Գ. Բ. Ջայական, Универсальная теория языка, Прологомены к становлению языковой лингвистики, М., 1994, с. 32.

⁶ Hiroshi Ucida, Meiyng Zhu, Tarcisio G. Della Senta, Universal Networking Language, Printed in Switzerland, 2005.

Հայկանոց Մեսրոպյան
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի տնօւմն ինքի իմաստիուտ

Աճառյան տոնը անցել է գարզացման մի բանի փող՝ իրենքանց ստունալով տարրեր բանավանումներ:

Հստավանդաբարյան՝ տոնը Հայուսաւանում սկզբնավորվել է մ.թ.ա. 2492 թ. օգոստոսի 11-ին, երբ Հայկ նահապետը ապանել է աստրաբարդելսական բանակալ Քելին և սկիզբ դրել քաղաքական տնօւմնայրյան: Ի նշանավորումն այդ հայրանակը՝ ինը հայկական տոմարով այդ օրը հստարվել է տարփա տառչին օրը՝ տարեգումիս, որ կոչվել է Նավասարդ: «Նավասարդի 1-ը միտմանանակ հայոց շարժական տոմարի տարեգումին էր և այս ավանդույթը փոխանցվեց սերնից սերտան և գրանցվեց հայ քրիստոնյան մատենագիրների կողմից» [Շ. Վարդապետին, Հայոց տօնացրույցը, Երևան, 1999, էջ 14]:

Արևային տոմարսկան տարփա սկիզբը՝ Նավասարդը, տոնվում էր աշնան թերթակավարին և թերթյան պատրիերաբարյանը, և ի նշանավորումն դրա՝ Բագավանում տեղի կան ունենում համամոդովրդական հանդիպություններ՝ լինջույրներ, գոհարերուրյաններ, երգ ու սրբ, շնորհավորանքներ ու բարեմադրանքներ: Նավասարդի 1-ը (օրսնունը՝ Արեգ) համապատասխանել է նաև հայոց նախարիխաւոննական դիցարանի գերազույն աստված Արամագիսի տոնին:

Աճառյան տոնների եեւ են կոստվել նուև Տիրի, Վանատորի տոնաւիճորյունները:

Տոնի բավանդակային եիմքը և երկարակեցուրյունը ենքաղը են տալիս, որ հայերների բարբառներում պեսար և պահպանվոծ լինեն աճառյան տոնի դիցարանական կերպարներին, տարփա եղանակներին, քրիստոնեական սրբերին բնորոշ բանավանումներ: Սակայն նյորերը այլ պատկեր են երկայացնում: Աճառյան տոնի բանավանումնական տարրերակները տյդրուն էլ մեծարիվ չեն: ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտուրյան բաժնում առկա բարբառապիտական նյորերը և հայերների բարբառներին նվիրված մենագրությունները ցոյց են տալիս, որ այդ տոնաւոննը նշող բնուանքնը մի բանի տարրերակ է պահպանված: Կարելի է ենթադրել, որ հայերների բարբառներուն ոչ թե չեն եղել տարրեր բանավանումներ, այլ պարզապես մոռացվել են տեղը զիջելով առավել նորին:

Տոնի հնագույն՝ ինը հնդկերն նավա-սարասա, և իրանյան նավասարանատու բաներին հսմարժեք հայահոնչ նավասարդ անվանումը ժամանակակից գրական հայերներուն այլև գործածենի չէ, և դրան փոխարինում է բնիկ հայերն ամ արճասար ներառող բանացի բարգմանուրյունը՝ ամ+ա+նոր=ամանոր, երբեմն էլ նաև տարեմուտ, տարեզորու: Բնիկ հայերն ամ արճասար կազմված ընդհանուրիհայերներուն ամանոր բառը, որի նասին վկայում է Ազարանցեղորաց, հայերների բարբառներում գործածական չէ: Այն դասվում է գրական հայերների երկու տարրերակներին բնորոշ նոր տարի,

Կապսմայ, տարեմուտ, տարեզօլոյս ձևախմբաւային մխավարմների շարքին: Ժամանակակից գրական արևելահայերենում առավելարար զործածական են Նոր տարի և Ամսանոր ձևերը:

Սակայ թվով տարածքների բնորոշ են տարեմուտ բառի հնչյունական ստորերակները՝ տարեմուդ (Բյուրականի Երևանի նայլա), տարեմուտ (Հաղպատ), տարեմուտ (Կարսի Չողավար), տարեմուդ//տարեմուդ (Կարս) և այլն:

Դիտարիենք ամսանոր հասկացորդյունը համախմբաւայինող բարբառային տարրերակների կիրառական ստունծնահատկորդյունները:

iii) **Նոմիսասրբ:** Այս ամսանորն կազմված է իրանան ունա «նոր» և sārd «աստիք» բաղադրիչներից [Հ. Աճայան, Հայերենի արմատական բառարան, Երևան, 1974, հ. 2, էջ 435]:

Արդի հայերենում աելի է ոճեցել բառիմասափ նեղացում և մասնաւորում: Նախկին բնդիսնրասական տարեմուտ, տարեսկիզր իմաստը, բրիստունուրյան հաստատման հետևանքով դարերի ընթացքում ասեմանափակվելով, ներկայումս ոնի միայն հերանասական բժրութամ:

Սակավարիվ բնակավայրերում նախասրբ բառը (ամսանոր իմաստով) ունի հետևյալ հնչյունական տարրերակները. նոմիսայդ//նոմիսաօրդ (Հաճըն), նրգանսադ (Ազուլա), նրգանսարք (Վարարան)՝ «նոմասարդի մէկը, որ մինչև հիմա տօնում են. տարուայ մէջ այսօր միայն եփում են հերիստ, ինչպէս որ Պօլսում յունուարի 1-ին եփում են անուշապուրք» [Հ. Աճայան, Հայերեն արմատական բառարան», հ. 2, Երևան, 1973, էջ 493]:

Սալմասափ և Երևանի բարբառանուրում նախասրբը բառն ունի այլ իմաստ. «նոյեմբերի 13-ը, երբ նախարարողն է և երբ փարձված ծառաները արձակվում են. Սալմասափի բորբերը և զործածում են այս բառը նախարարող իմաստով [Հ. Աճայան, նոյն տեղում]:

Արարատյան բարբառի Նորքի խոսվածքում պահպանված է նոմիսասրբայի օր բառականակցորդյունը:

Նոմիսարդի 1-ը, Գրիգոր Լուսավորչի և Տրդաս քազակորի սահմանուծ կարգի համաձայն, ստուգել է նաև որպիս Հովհաննես Կարապետի տու [Հ. Ալիշան, Համապատում, Վենետիկ, 1901, էջ 89-91]: Սակայն բարբառներից որևէ մեկում սրբականված չէ Հովհաննես Մլրտչի տաճանը առնչվող բառանվանում:

բ) **Կաղանդ:** Հ. Աճայանը կապսմայ բառը կասպում է հունարեն calenda՝ «ամանոր» բառի հետ, որն էլ ծագում է լուսիներեն օալ՝ «կոչել» բայից:

Արևոտնայերենին, ինչպես և բարբառների մի ստվար խմբի բնորոշ է կապսմայ բառը՝ իր հնչյունական տարրերակներով [Հ. Աճայան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 493]: Հայսմափորքը և Տամարացոյցները ես նշում են, որ կապսմայ բառը «ամանոր, տարեզդուխ» խմանաներով բնորոշ է. միայն արևմտահայերենին, հետևարար և արևմտյան խմբակցության բարբառներին: Այն ունի բարբառային հետևյալ սրատեղերը. կապսմայ (Վան, Երգիշիս, Մոկս, Երևան, Սալմասափ, Խոտքուրի Միջին բաղ, Քասասափ, Սալսրկերանի Վարին Հնդրագ-Քյուրագ-

դարս, Արճակը Մանդան, Բիբլիայի Պատշենեց), կաղամճ (Ծատախ), կաղամք (Կոպ, Արարկիր), կաղընջ (Երգնկա), գաղամդ (Ոզիմ, Ռոդուրո, Սերսստխա, Խորքերդ, Խարքերդի Բազմաշեն, Հարուսի, Սատոնի Մթշկեդ, Քդիի Հարդիք), զ'աղամնի՞ (Աղարազար), զաղարի/զաղս * (Աղամերեզ), զաղամնի (Սուչավա), զաղընջ (Զմշկածազ), զաղընջ (Պոլխա), կաղընչ (Վիստլիս, Կարին), կաղինտ (Ծալկայի Դարուո, Գանձատ, Մեծ Սամար), կաղոնցի/զաղօնչ (Ակն), կաղամնի (Բուլսնուխ), կ'ըրդնոց (Սատոնի Մթշկեդ), կաղընչօց (Մուշ), կաղինջ (Շիրակ, Մամգուրո, Աղամրտուրի Աղամսան, Բեժանո), կաղիմք (Բալխո), զաղամնի (Զեյրոնի), զաղամնի (Սկելիխո), զաղընչիս (Հաչըն), զ'աղընչոս (Բեյլոն), կաղընչիս (Մարաշ) և այլն:

Նոր տարբատ առնին առնչվող ամսանորյա նվերները և կաղոնինի համար պատրաստվող բաղցրեղենը ևս բարբառներում ունեն տարբեր անվանումներ, օրինակ՝ զաղամնի՞/զաղընջ՝ «կաղամնին պատրաստված մի տեսակ բաղցրեղեն» (Նոր Նախիջևան), զաղընջաս (Զեյրոնի), կաղընչօց, (Բուլսնուխ)՝ «կաղամնին նվեր» և այլն:

Երգնկայի բարբառն բնորոշ է կաղընչի բարբ, որն ունի «կաղամնիի առիվ մնելին նվեր տաքը խմատը»:

Ենչալես տեսնում ենք, կը ճյուղի նշված բարբառների և խոսվածքների շարքում բացառարյուն է կազմում արևելյան խճակցուրյան Երևանի բարբառ:

Դ) *Տոճի բրիսոռնեական բաւունվանումները*: Հերանոսական բառանվանումից անցումը բրիսոռնեականին մխանգամից չի կատարվել: Որոշ ժամանակական տարբերություն առնի բովանդակային կողմերը և բառանվանումները հանդիս են եկել զուգահեռտարար: «Դեռևս 5-րդ դարի առաջին կեսում ապրող Բյուզանդական պլասմարյան հեղինակը վկայել է, որ Հռոմեանեա Մկրտչի հիշատակի օրը համբնկել է՝ «գտօնս նասասարդաց»-ի կամ «նասասարդաց ժամանակօք»-ի հետ: Հայոց մեջ միշտ համադրվել են Նավասարդի 1 // Գարնանամուս // տարբատ առնուկան սկիզբ // արևային տարբատ սկիզբ // Արամագիի տոճի օր համարժեներները, հասել են միջնադար և համադրվել քրիստոնեական սրբերի տոճերի հետ» [Դ. «Հարցամյան, նոյն տեղում]:

Ազարանգեղոսի «Պատմուրյան մեջ Հռոմեանեա Կարապետի տոճի օրվա հաստատման հետ առնչվել և եիշատակվել է Ամանորը: Հնում անսնորը կապվել է նաև զարնամ՝ բնուրյան զարբոնքը նշանավորող Բարեկենդանի հետ: «Զգարնանամուս տարենուտ անուանեին ամենայն ազգը», – գրում է Անանիա Շիրակացին՝ ճանավորաբար նկատի ունենալով հայերին և երրայեցիներին խեն Անանիա Շիրակացի, Տիեզերագիտուրյուն և տոճար, Երևան, 1940, էջ 76]: Հռոմեանեա Սարկավագ Ինստիտուտները Նավասարդի 1-ը համբնկեցրել է զարնանային զիշերահավասարի օրվա հետ [Հռոմեանեա Ինստիտուտների Մատենագրուրյունը, Երևան, 1956, էջ 263]:

Քրիստոնեուրյունը արևել պետական կրոն լնդունելուց հետո ամսանորը սկզբնական շրջանում երբառաւ է նաև Քրիստոսի ծննդյան տոճակատարուրյունը: «Հայոց նկեղեցական տոճական տարբատ սկիզբն լնդունվեց

Քրիստոսի ծննդյան և աստվածահայտնության տոնը, որը 5-րդ դարի սկզբից, քերևս ավելի վաղ, մինչև Սահակ կարողիկասի և Մտշոց վարդապետի մահը (441-442 քք.) տոնում կին հունվարի 6-ին: Այդ են վկայում «Կատոնք ընթերցուածոց», Անդրեասի 200-ամյա Տոմար-Տոնացոյցի տվյալները, ինչպես նաև Եփրեմ Ասորու չորս ավետարանների համարարքանի մեջնորյան քարգ-մասնությունը» [Ռ. Վարդամյան, Հայոց տոնացոյցը, Երևան, 1999, էջ 95]:

Հայոց քրիստոնեական տոնացոյցում Քրիստոսի ծննդյան և հայության օրը՝ հունվարի 6-ը ևս, համարվել է ասրեմուտի տասաշին օր: 6-րդ դարում Հռվիտնեան Գարեղենացի կարողիկասը նույնական հունվարի 6-ը համարել է տարվա սկիզբը: Այս երեսուրը իհմք է դարձել մի շարք տարածքներում նոր տարի հսկացությունը քրիստոնեական թրոնումով բնկալելու և քրիստոնեաբար կոչելու: Առաջին հայոցքից կարող է բխալ, թե տեղի է տեսլեցել բայխմատի ընդլայնում և հունվարի 6-ին կատարվող Զրորիների՝ Քրիստոսի մկրտության ծիսական արարողության տնօվանումով կոչվում է տարեմտու հսկացությունը: Սակայն տոնարական գրականությունը հսկատուկն է ցույց տալիս: Քրիստոնեարյան հաստատումով Արտամազդ տատուն նվիրված Նավասարդյան տաճին փոխարինելու է նկել Քրիստոսի ծննդյան և սաստվածակայտնության տոնակատարությունը:

Այսպես, ենական բարբառներում տական են ջրօրիներ բարի հնչյունական տարբերակները. ջրօրինեկ' (Ապարանի Ղալայշի, Արագած, Ատմա), ճրօրինանք (Ծինուհայր), ճրօրինար (Գորիս), ճի՛րօրինանք (Խոճորեսկ), ճի՛րօրինանք (Զարահունչ, Գորիսի Խոտ, Վաղատուր), ճի՛րօրինանք (Վերին-շեն, Շռուն) և այլն:

Քույսնուխում և Սասունի Հռուեր զյուղում հաստատասխանաբար գրանցված են սյրսոյ զատիկ և զաղիզ արտահայտությունները, որոնք «ամանոր» հսկացությանը ներառի են առնում հունվարի 6-ը: Այսպես ևս Համշենում և Արտամեատում համապատասխանաբար ունենք զալօնեար և կաղամադ բառերը՝ «աստվածակայտնության տոն» խմասում:

Ե) Նոր տարի. 18-րդ դ. Սիմեոն Երևանցու տոնարով, նաև զատ հույսան տոնարի, հայերը հունվարի 1-ը ընդունում են որպես տարվա սկիզբ՝ իմբնականում պահապանելով հերանոսական երթեանի ամսանորյա ծեսերը: Հավանաբար այդ դարում էլ ամսանորը նշան բառերը մի խումք բարբառներամ մոռացվում են: Տեղը զիշելով նոր տարի որոշիչ-որոշյալ բառակապակցության հնչյունական տարբերակներին:

Բարբառների զերակշխ մասում գրանցված է նոր տարի որոշիչ-որոշյալ կտպակցությունը՝ բարբառային հնչյունական տարբերակներով: Այսպես՝ նոր տարի (Կոպ, Ապարանի Վարդենիս, Օհանավան, Խզդիրի Հայավերիս, Մանազկերտի Էզնախոչա, Բաղնաս, Ծալկայի Ղարու, Մամզար, Բյուրական, Բասենի Ալիճագրակ, Սպարկերտի Տոսու և Վերին Հռնիրու, Ալալքապարի Ալաստան, Պտղնի, Քուլսոնուխի Լիզ, Գյարուներ, Այնքապի Ջոշլ), նոր տարի (Խոտքոջորի Միջին բաղ, Խորի Շեն, Թաղավանը, Աչաջոր, Արտաշատ, Մասիս, Շորիշկան, Մրգաշտու), (ը)նոր տարի (Նախիջևանի Մեծոփ) նոր

տարի (Ախալքալաքի Բեմանո), նոր տարի (Բյուրական, Անտառուտ), նոր տարի (Չատախ, Քայսզեսի Կարմիր զյուղ), նոր տարէ (Հարերը, Մուժումբար), ընօր տարէ (Հարերը, Զանյարստ, Մադաղիս, Ղոզունչի, Ղարաղլաս), նօրսարի (Նորը), նօր դարի (Սասունի Հոսներ, Արմաշ), նօր դարի (Գելենգուզան), նօր դարի (Սասունի Գոմբ), նօրյարի (Չիրլուխու), նոր դարի (Սասունի Քոփ, Ընզուգնակ, Սաղյուն), նէր դարի (Հաճշենի Ուսին, Բալլուդ), նօյ դարի (Համշեն, Շանիլ, Սամսոն, Օրմօնքօյ, նէյ դարի (Համշեն, Բալլուդ):

Ուսին, Բալլուդ) և այլն:

Ինչպես նկատելի է, ներկայացված տարածքները ընդգրկում են և արևելյան, և արևմտյան խճանկացորյան բարբառներ և խոսվածքներ:

Բարբառային մի քանի տարածքներում առկա են նոր ածականի բազա սպարակերեն հոմանիշի հեջունական տարբերակները՝ բաժն տարի (Քասաղ), բազու տարի (Վերին Շաճրաբակ, Ղափան, Աչաջոր, Նավիջևանի Ույս, Նորաշեն, Շահումյան), բազա տարի (Հաղպատ, Ափնչ, Բալանուխի Լիզ, Կարսի Չոլախպո, Նախիջևանի Կ'աղ), բազու տարէ (Շարտար, Զափար, Հարերը, Ասաջածոր, Ղարաղլաս) և այլն:

Նշված ձևերից տարբերվում է Տիգրանակերտի բարբառի թօլէ ձեր, որը հավանաբար ևս ծագում է լատիներեն օալու «կոչեր» բայից:

Նոր տարփա տոնի համար անվանում չի արձանագրված Ղափանի շրջանի Վերին և Ներքին Խոստանան և Ղարաբաղի Ուրգուրուն բնակս-վայրերի խոսվածքների տեսքերում: Կարելի է ներադրել որ նշված տարածքներում զործածելի են եղել ընդունված տարբերակներից, հոտկապես նոր տարի բառակապակցությունից տարբեր ձևեր, որոնք բարձրախոսները չեն նշարերել:

Այսպիսով, ամսնոր հսկացորյան բարբառային բառանվանումների բննությունից ցոյց է տալիս, որ դրանք բավականին սակավարիվ են՝ չնայած ամսնորյան տոնի բռվանդակային հարսանությանը, դիցարանական ու բրիտանիական եիմքին, բնուրյան երևույթների հետ սերտ առնչակցությանը, հարսանությանն ու խմասաւային բազմազանությունը:

ԱՐՅՈՒՒՐՆԵՐ

Ալիշամ Դ., Հիմ հաւատք կամ հեքանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1910:
Պօղոսէան Ե., Նոր տարոյ տօնը իին և նոր հայոց քոլ, Վիեննա, 1952:
Հարդարան Ռ., Հայոց տոնացույցը, Երևան, 1999:

ԳՈՅԱԿԱՆԻ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Ժամանակակից
ՀՀ ԳԱԱ Հր. Ածաղյամի աճիւնի լեզվի իմաստիուտ

Հայերեն բարբառներում գոյականի հոլովման համակարգերի ընդհանրական, չտփանիշային (ևսալբնային) կադարարում բացառական հոլովք, մյուս հոլովների նման, ոնի գործառական որոշակի որոր: Արտահայտուրյան պատճեն եիշյալ հոլովքի իմաստային յուրահատկությունները դրանքում են կցական (համադրական) և վերլուծական (հարադրական) կառուցվածքներով:

Բացառականի կցական կառուցվածքով բարբառային մխավորները իրենց սուսաննահատկություններով և մոտենում, և հեռանում են միջանցից: Բարբառներին ընդհանրապես ավելի բնորոշ է գոյականի հոլովման կցական ձևը:

Ինչպես հայտնի է, գրական արևելահայերենում գոյականի բացառական հոլովմանի կազմուրյան վերաբերյալ կան տարրեր մոտեցումներ: Եթե որպես թերույթ դիտենք միայն -ց-ն, ապա տվյալ հոլովի հիմք կհամարվի սեռական (արական) հոլովածելք: Օրինակ՝ ուղ. սեղամ - սեռ. (արական) սեղամի - բաց, կամ՝ ուղ. այզի - սեռ. այզու - բաց. այզուց. Հոգնակի բիկ. ուղ. սեղամներ - սեռ. սեղամների - բաց. սեղամներից, ուղ. այզիներ - սեռ. այզիների - բաց. այզիներից և այլն: Իսկ եթե սեռականում գոյականը վերջանում է բաղաժայնով, հիմքը ձևավորվում է բնի (հիմքակազմ) -ի ձայնավորով: Այսպես՝ ուղ. բույր - սեռ. բրոջ - բաց. բրոջից, եղբայր - եղբայր - եղբարից:

Սեկ այլ մոտեցմանը կարելի է նաև բացառականի հոլովական վերջավորուրյուններ համարել -ից, -ոց ձևույթները: Տվյալ պարագայում մեծ մասամբ որպես հոլովային հիմք է վերցվում բարի ուղղական հոլովք, միայն որոշ դեպքերում՝ սեռականը: Մեր կարծիքով արևելյան բարբառների ըննուրյունն ավելի հարճար է կատարեն՝ ընդունելով իմաստականում մեկ ձևային հիմք՝ սեռական (արական) հոլովք, քեզետ քիչ չեն այն բարբառային միավորները, որոնցում բացառականի հիմք է ծառայում ուղղականի ձևը:

Հայերեն բարբառային մխավորներում գոյականի բացառական հոլովի կառուցվածքի դրսերումները իմաստականում նույնանում են գրական լեզուների՝ արևելահայ և արևմտահայ, եիշյալ հոլովին, ուստի վերլուծուրյունը կատարում ենք նոյն ալգորիթմով:

Քննուրյունը կատարել ենք համաժամանակյա կտրվածքում՝ օգտվելով 20-րդ դարում լրաց տեսած բարբառային մենագրություններից և լեզվի իմաստառափակ բարբառագիտուրյան բաժնի հավաքած նյութերից:

Բարբառների արևելյան խճակցության մխավորների մեծ մասում, ինչպես՝ Արտաստան, Աստրականի, Զուլայի, Բայսագետի, Սևանիշենի, Ղազախ-Եփրամյանի, գոյականի բացառական հոլովք կազմվում է՝ սեռական հոլովածենին ավելացնելով -ց թերույրը: Օրինակ՝ ուղ. հաց - սեռ. հացից, բացից - բացարի - բացարից, զլիմի - զլիմուց.

Հոգնակի թիվ. ուղղ. հացեր - սեռ. հացերի - բաց. հացերից, բարպարեր - բարպարերի - բարպարերից, զ/կիճիճեր - զ/կիճիճերի - զ/կիճիճերից:

Սեռականում բաղադայնահանգ զոյսկանների բացառական հոլովում - ց-ն ավելանում է, իմքանակազմ - ի ձանափորից հետո, ինչպես՝ զրական արևելահայերենում: Օրինակ՝ ուղղ. ախազը - սեռ. ախազը - բաց. ախազը +ի +ց, ուղղ. բաշիր - սեռ. բաշիր - բաց. բաշիր +ի +ց:

Խճիդր առարկան հոլովում նոյն կառուցվածքն ունեն նույն սեռականում - առ թերոյիր ունեցող զոյսկաններիք: Այս դեպքում, սակայն, ձայնափորների հորանջը փոխվում է, - և ձայնափորում: Օրինակ՝ ուղղ. կրճիկ - սեռ. կրճկու - բաց. կրճգու + ն +ի +ց, ուղղ. ախազի - սեռ. ախազս +ն +ի +ց, վախս - վախսավս - վախսավս +ն +ի +ց, հերս - հերսա - հերսու +ն +ի +ց: Հարկ է նշել, որ -վս հոլովնան սպառկանող՝ ժամանակ ցոյց տվող որոշ զոյսկանների բացառականը բարբառներում կտպման է նույն ուղղականի ձևից: -ի կամ -ու իմքանակազմ ձայնափորների օգնությամբ: Այսպես՝ ուղղ. օր - սեռ. օրփա, խև բացառականը՝ օրից, ուղղ. ասարի - սեռ. ասարիս - բաց. տարոց:

Արևելյան խմբակցության մի շաբթ այլ բարբառային ճյուղփորներում (Թքիլսի, Կովեն, Մերփի, Բուրդուր, Խոյ - Սարագս և այլն) զոյտկանի բացառական հոլովք կտպման է՝ ուղղականի, որոշ դեսքելում է սեռականի, հոլովաճենի սպելացնելով - և վերջավորությունը ե' եպակի, ե' հոգնակի բվերում. եզ. թ. ուղղ. աշխասրը - բաց. աշխ(ա)րքէ, ուղղ. մշղիս - բաց. մշղիսէ (Թք.), ուղղ. զան - բաց. զաննէ «զանից», ուղղ. տամէ - բաց. տամէ կամ տրնէ (Կով.), ծառ - ծառէ, կարսալ - կարսալէ, բար - բարէ (Մեր.): Հոգնակի թիվ. ուղղ. աշխասրըներ - բաց. աշխասրըներէ, մշղիսներ - մշղիսներէ, զաններ - զաններէ, տրնէր - արնէրէ և այլն:

Վերոհիշյալ խմբակցության եզրային տարածքների ճյուղփորներում (Ղարաբաղ, Շամախի, Հավարիկ, Ազուլիս) զոյտկանի բացառական հոլովն ունի -ա/այ թերոյիր: Այն, ի տարրերության վերը նշված բարբառների, սպելացնում է ուղղական հոլովաճենին: Այսպես. ուղղ. րօրէն - բաց. րօրնս, ուղղ. մարր - բաց. մարրս, ուղղ. կիճի - բաց. կիճին (Կրр.), ուղղ. տախասազ - բաց. արխասազ, արխասազ - արխասազ (Շմլ.), ջաղաց - ջաղաց, լայնձօր - լայնձօրս (Հվրի):

Կարտրաղի, Ազուլիսի, Մելրու բարբառներում և Արտրաւյանի որոշ խոսվածքներում մեկից ավելի փանկ ունեցող զոյտկանները հոգնակի բվի ուղղականում ունեն - մէ, - մի կամ կլ - անի վերջավորությունները: Սակայն թեր հոլովներում իմշյալ հոգնակերտները մշատավս փոխարինվում են - մէր տծանցով, որին էլ հավելվում է տվյալ հորվական վերջավորությունը: Ուղղ. եզ. թ. ամսան - հզն. թ. արքան/քնէ, բարնի կամ ամսաննի, խև հոգնակի բացառական կիճնի արքան/քնէրէ, բարներս, եզ. թ. ուղղ. ջ/ճնդացնէ (- նի, - անի), հզն. բաց. ջ/ճնդացնէրէ, ջ/ճնդացնէրս:

Արևելյան խմբակցության բարբառներում -ը հոգնակերտ ունեցող զոյտկանների բացառականի իմքրը հոգնակի բվի սեռական հոլովաճեն է,

որին ավելանում են բացառականի՝ եզակի բվի վերջավորությունները: Արանք էլ հիմքին երեմն մխանում են -ի հիմքակազմ ձայնավորով և -ց, -է կամ -ա վերջավորություններով: Օրինակ՝ ուղղ. հերսոն - սեռ. հերսոնց - բաց. հերսոնցից, յէզմիր - յէզմիրի - յէզմիրից (Արա.), ախպէրը - տիսայօրց - արխայօրցա, ըլչըրկլըրը - ըլչըրկօրտնց - ըլչըրկօրտնցա (Նք.): Եսկ Մեղրու բարբառում, օրինակ, հոգնակի բվում -ը ուժանց ունեցող գոյականները հոլովինիս -ը-ն փոխարինում են -ներ հոգնակերտով, այսինքն՝ այս դեպքում նոյնական զործում է-ներ հոգնակերտ ունեցող գոյականների բացառական հոլովի կազմության օրենքը, ինչպես՝ ուղղ. թէուր - սեռ. թէուներու - բաց. թէուները:

Ինչպես արեւելյան բարբառների ուսումնասիրողներն են նկատում, դրանցում և եզակի, և հոգնակի բվերի բոլոր բերկուած ձևերում գոյականին հասունի է հոլովարյունը (որոշյալ, ասացական): Եվ բացառական հոլովը, հոգնակավան՝ -է, -ա բերույթներ ունեցող, հիմնականում զործուում է -ն որոշյալ հոլով. եզ. թ. բաղարէն - հզն. թ. բաղարէնըն, ախպօրէն - ախպէրնէրէն, աղճէն - տղճէրէն, բաղդարտն - բարդարնէրտն, տաման - տղճէրտն, ախպօրան - ախպօրցան:

Կարարատի, Մեղրու, Ազույխի բարբառային մխավորները բացառականի հոլովական խմասուն արտահայտում են նույն վերլուծական կամ նկարագրական ձևով: Այն կազմվում է սեռական հոլովականով և -(հ)անս, -(հ)անից, -(հ)ենից, -նան հետադրություններով: Բարբառագետները (Աճառյանց սկզբան) սովորաբար այս կառուցվածքը համարում են ինեց բացառական հոլովածել: Հիշյալ համադրական ձևը հիմնականում զործածվում է անձի սպոնտով: Օրինակ՝ եզ.թ. ուղղ. խօյսա - բաց. խոյսէն(ն) անժա, հզն. ուղղ. խօյլըր - բաց. խօյօրցն անժա, եզ.թ. ըրխու - ըրխուն(ն) (հ)է նից, հզն. թ. ըրախէր - ըրախօց (հ)է նից, եզ.թ. մարր - մարրօ մայն, մա՛ ըրիկ - մարրօց նայ: Պատահում է, ինչպես օրինակ՝ Մեղրու բարբառի Կարսափարերի խովածքում, որ նշված կառուցվում զործառող - (հ)անի հետադրությունը մխանում է հոլովական հիմքին, և ամրուղ բառը ստանում է մեկ շեշտ, այսինքն՝ այն դասենում է մեկ հոլովածել: Այսինքն կազմությունը հավասարապես կիրառվում է և անձի, և իրի առումով. ուղղ. ըրճուր - բաց. կալճի - կալճնանանն նի, ախպիկ - ըխչըրկաննանն նի, հզն. թ. ըխչըրկէրը - ըխչըրկէրտնանն նի և այլն [Հ. Սուրացյան, 1967, էջ 113, 117]: Եսկ Կարճևանի խովածքում գոյականի բացառականի խմասուն արտահայտուած հարտադրյանք ձևերը հասունի են թե՛ շնչառվորներին, թե՛ առարկաներին. ուղղ. աշունը - սեռ. բշօնքա(ն), բացառականի խմասուն՝ բշօնքան հէնից, կամ՝ ախսայիր «նորայը» - սեռ. ախսայուր - բաց. ախսայուր հէնից [Հ. Սուրացյան, 1960, էջ 95, 99]:

Արևմտյան խճակցության բարբառներում բացառական հոլովի համար թե՛ եզակի, թե՛ հոգնակի բվերում հիմք է ծառայում ուղական հոլովածելը: Արան ավելանում են բացառականի -է(ն), -ի (Ավել.), -ն բերույթները: Այսպես. ուղղ. Խոց - բաց. Խոցէ, ամճրէլւ - ամճրէլւ / սմճրէլւ, դումճ

«ուսնձ» - զմբճի, ամման - սմմ՛լ(Յ) (Պոլիս, Երգնկա, Ավելիս, Մուշ, Տիգրանակերտ, Սասուն), ուղղ. Խաց - քաց. Խացը(Հ (Հաճշեն) և այլն: Իսկ ներքին քերծան և -վա հողփման սլատկանող գոյականների համար բացառականի հիմք է ծառայում սեռական հողփածելը. օրինակ՝ ուղղ. քոր - սեռ. քրոջ - քաց. քրոջը, քրջեր - քրջերին - քրջերինէ:

Արևելյանի նմտն, արևելյան տարրածքում էլ է գործառում բացառականի - ց թերույրը (հատկանի Վաճի բարրառում): Այսուղ նոյնական այն միանում է սեռական հողփածելին. ուղղ. Խաց - սեռ. Խացի - քաց. Խացից, աղիկս - աղիքսու - աղիքսոց, հզն. թ. Խացիկը - Խացիկի - Խացերից, աղիքսմիկը - աղիքսմէրու - աղիքսմէրոց:

Հետաքրքիր է նշել, օրինակ, որ ծամփա բառի բացառական հողփը Հաճշենում կազմվում է ինենց ուղղականի ձևից. ուղղ. ջօմպս - քաց. ջօմպաց(ըմ) «Բամփից»: Այս բարբառում յուրօքնակ կառուցվածք է ցուցաբերում հոգնակի բվի բացառական հողփը: Նախ սրա թերույրը դրվում է նեղակի ուղղականի վրա, ապա միայն բառին կցվում է հոգնակերս մասնիկը: Այսպես. եզ. թ. ուղղ. ջօմպս - քաց. ջօմպաց(ըմ), հզն.թ. ուղղ. ջօմպինի - քաց. ջօմպացմուն(Յ), եզ. ուղղ. ասու - քաց. ասուց(ըմ), հզն. թ. ուղղ. ասուք - քաց. ասուցնէրում: Ինչպես բերված օրինակից է երեսում, այստեղ -թի դիմաց սովոր է -էր հոգնակերպ [Ածանյան, 1947, էջ 90-91]:

Բացառականի մյուս -մէ թերույրը գործառում է հիմնականում անձ ցոյց տվող բառերի հետ : Այն դրվում է գոյականի ուղղական կամ սեռական հողփածելերի վրա: Օրինակ՝ ուղղ. ախչիկ - քաց. ախչիկմէ, տրդա - տրդամէ. կամ՝ ուղղ. քոր - սեռ. քրոջ - քաց. քրոջըմ, մէր - մօր - մօրմէ: Ա.Այսթեղյանն այս երեսույրը, որը առկա է նաև արևմտյան գրական լեզվում, բացառում է այն հանգամանքով, որ հիշյալ թերույրը ծագում է անձ ցոյց տվող դերանվանական հողփածելերից [Այսրմյան, էջ 11]: Թրիլիսի բարբառում, սակայն, -մէ վերջավորուրյունը կարող է դրվել նաև անշունչ առարկաների բացառական հողփի վրա : Օրինակ. Թե կու պակսիմ, թիզ կու պակսիմ, Ծովեմնեն ապագ չի պակսի [Մայար-Նովա]: Հիշեցնան կարգով սատենը, որ Թրիլիսիում թիզ չեն Ալաշկերախց, Երգրումից և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից զարդածները, հետևաբար՝ բարբառը կարող էր կրել այդ տարածքի բարբառային միավորների ազդեցուրյունը :

Վերլուծական ձևերով բացառականի հիմաս է արտահայտում գոյականը նաև այս՝ արևմտյան խմբակցուրյան բարբառային միավորներում: Այսուղ էլ հարադրական կառուցվածքը հասուն է հասկանական անձ ցոյց տվող գոյականներին: Եթե բացառականը ավյալ բարբառային միավորում կազմվում է -է (Յ), -ա/ա թերույրներով, ապա վերլուծական կառուցյաները կազմվում են մօւէն // մօրէն, մէնէ(Յ), մընէն հետոսդրաբյունների օգնությամբ, որոնք դրվում են դարձյալ սեռական հողփածելի վրա: Իսկ եթե գործառում է բացառականի -ց ձևույրը, որպես հետադրուրյուն վերցվում է մօւ/նից բառը: Օրինակ՝ քաց. մօրէն - վերլուծական՝ մօր մօդէն (զիդէցու),

բրոօճէն - բըրօշ մօղէն (Մուշ), ախսճրգննի - ախսճրգննի մընն (Համշեն), ախչըլկանից - ախչըլկա մօտից, խօրից - խօր մօտից (կըպինյանն) (Վան):

Որոշ դեսպէրում, ինչպէս օրինակ՝ Երզնկայի բարբառում, մընն հետադրությունը ճիշտցել է անձ ցոյց տվող գոյականին, և կտագնիել է կցուկան կտուոյց: Այսպիսով բացառական հոլովում ատեղծվել է նի նոր զուգաձևություն. ուղղ. Արշագ - բաց. Արշագմէն // Արշագինմէն // Արշագինմընէ, ուղղ. ախսպէր - սեռ. ախսպօրմըն [Կոստանդյան, էջ 66]:

Ինչպէս վերը նշեցինք, նման երևոյց է դիտվում նաև արևելյան խմբակցության Կարավաքերդի խոսվածքում:

Այսպիսով՝ քննուրյունը հանգեցնում է հետեւյալ եզրակացությունների:

Կորեկի է առանձնացնել խնդրո առարկու հոլովին վերաբերող յորսակատկությունները, որոնք բնորոշ են և արևելյան, և արևմտյան խմբակցության բարբառային միավորներին: Այսպէս. թերույքներից ամենասարածվածը - *ց*-ն և լ, որը, սակայն, ավելի հասուկ է արևելյանին: Խսկ -է թերույքը գործառում է արևմտյան և երրեմն էլ հանդիպում արևելյան բարբառներում:

Հայերեն բոլոր բարբառային միավորներում խնդրո առարկու հոլովում գործառում է Խոդը (որոշյալ ստացական):

Երկու խմբակցությունների բարբառները մեծ ճատաճը ունեն բացառականին հոլովային իմաստի՝ անձի և իրի առումների ձևային տարբերակիվածություն: Անձի առումի դեսպրում համայստ է կիրտավում վերլուծական կառուցվածքը, ընդ որում, անձ ցոյց ավող որոշ զոյականների բացառականին թերույքներով հոլովածները գործածական չեն: Տվյալ հոլովային իմաստը միայն վերլուծական ձևով է արատահայտվում, ինչպէս՝ մասիրությունների // մօտից, պասպիրությունների // մօտից, խոլիսին անա, տղջին անա, մանմուն անա : Ի դեմք, արևելյան բարբառներում նույն երևոյթն է տակա նույն ներգոյական հոլովի կառուցվածքում՝ սեռական հոլովածների և մեջ կապի սպարությամբ:

Հետադրություններից անա, (*հէճէ*, անից, հէճից, մընէ // մէնէ ձեւերը օժանդակ բառեր են և ինքնուրույն գործածություն չունեն: Հանդիպում են միայն բացառական, խսկ անապ, (*Աէճափ* հետադրությունները նաև զարժիշկան հոլովների կառույցներում: Խերեւու դա է պատճառը, որ դրանք որոշ բարբառային միավորներում՝ Կարավաքերդ, Երզնկան և այլն, միանալով բացառականին կմաքին, վերածվել են հոլովական վերջավարությունների):

Կարարադի բարբառում նկատվում է բացառական՝ մէստս «վրայից, անձից», զարժիշկան՝ նէստափ «վրայով, անձով» ձեւեր ունեցող հետադրության նաև ինքնուրույն զարծածություն՝ (խոլիսին) նէստան վէտ ա կամ, (ըլշըրկան) նէստափը տղջագ առ տամ:

Ինչ վերաբերում է արևմտյան տարածքում հանդիպող մօղէն // մօտից հետադրությանը, այն ինքնուրույն մօտ / դ բարի բացառական հոլովածներ է:

Հայերենի արևելյան և արևմտյան բարբառային միավորներում արկա են երկուսին էլ բնորոշ հաստիսնիշներ, որոնք վայսներբափանցման արյունք են, ինչպէս օրինակ՝ Վանի բարբառում բացառականին և -ց, և -է վերջավորությունների գործառությունը:

Այնուամենայնիվ, որոշ հստկանիշներ տարածքային տոհմանափակակությունը ունեն: Կարարադի բարբառում զոյականի բացառական հօրդի - առաջ քեզոյքը կարելի է հսմարել այդ տարածքին բնորոշ հստկանիշ: Համշենում հսնդիպում է միայն քնային - այս վերջասփորտությունը: Իսկ մէ՛ջ ձևույրը գործառում է արևայան տարածքում: Բացառական հօրդի վերջուժական կառույցում օգտագործվող մօալի, մօալի հետագրությունները հստուկ են արևայան բարբառներին, իսկ անսանթանը՝ Պարարադի:

ՕԳ-ՏԱԳ-ՈՒԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այսրիցմ Ա., Ջննական քերականություն աշխարհաբար կամ տրդի հայերեն լեզվի,
Երևան, 1987:

Աճայան Հ., Ջննարյան Ազգական բարբառի, Եր., 1935:

Աճայան Հ., Ջննարյան պատահայ բարբառի, Եր., 1941:

Աճայան Հ., Ջննարյան Համշենի բարբառի, Եր., 1947:

Աճայան Հ., Ջննարյան Առայի բարբառի, Եր., 1953:

Աճայան Հ., Ջննարյան Վաճի բարբառի, Եր., 1953:

Աղայան Է., Սեպոն բարբառը, Եր., 1954:

Բաղրամյան Ռ., Կողենի բարբառը, Եր., 1961:

Բաղրամյան Ռ., Շամալի բարբառը, Եր., 1964:

Դավիրյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային բարտեզը, Եր., 1966:

Լուսենց Ա., Արեջի բարբառը, Եր., 1982:

Կոստանդյան Դ., Երգմիրսի բարբառը, Եր., 1979:

Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Եր., 1978:

Հանաճյան Գ., Սվեյխայի բարբառը, Եր., 1996:

Մորոցյան Հ., Կարճեանի բարբառը, Եր., 1960:

Մորոցյան Հ., Կարավարերի բարբառը, Եր., 1967:

Մորոցյան Մ., Շատալի բարբառը, Եր., 1962:

Մարգարյան Ա., Գարիսի բարբառը, Եր., 1975:

Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառ, Եր., 1989:

Պողոսյան Ա., Հայուորի բարբառը, Եր., 1965:

Զահորյան Գ., Հայ բարբառագիտուրյան ներածուրյան, Եր., 1972:

Բարբառագիտական նյութեր՝ համարված լսու ՀԲԱ ծրագրի:

ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտ. - Արարատյան

Դրբ. - Դարարադ

Խթ. - Խթիլիսի

Միլ. - Մնորի

Կող. - Կողեն

Շմլ. - Շամալիսի

Հիլկ. - Հավարիկի

Սվի. - Սվեյխիա

ՀԱՅՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Գայանե Մշհրայրյան
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի իմաստության

Հայ իին և միջնադարյան մատենագրության մեջ ձայնին նվիրված որեւ սահքողական աշխատություն մեզ չի հասել: Այնուհանեղերծ, ուստինասիրությունները վկայում են, որ բերածանաւական միարք զարգանում էր քերականական, փիլիսոփայիկան-տրամարանական հետազոտություններին շաղկապիծ: Ի դեպ, քերականությունն էլ հետու դեռևս գոյություն չուներ իրեւ ինքնուրույն գիտություն: «Քերականությունն ատեղծվում է, մասամբ դիմուկակի-ճարտասանական, մասամբ ֆիլորդիական, մասամբ էլ փիլիսոփայական լեզվաբանության (օնոմատիանիկայի) պահանջներով,- զրում է Գ. Զահորյացը: - Քերականության հարցերը դիմուկակի-ճարտասանական լեզվաբանության մեջ անխոսափելիորեն արծարծվում էին մայրենի և օտար լեզուների ուսուցման, ճարտասանական հմտությունների մշակման, իսկ օնոմատիասանական լեզվաբանության մեջ՝ իմացարանական և տրամարանական հետազոտությունների հետ կապված: Քերականությունն՝ որպես անկախ դիսցիլինի ձևավորումը պարտական էր ֆիլորդիական լեզվաբանությանը: Այդ սաստառապ էլ քերականությունը հետու ակնհայտ ֆիլորդիական բնույթը ուներ և ներկայացնում էր ֆիլորդիական բոլոր գիտելիքների շտեմարանը»¹:

Հին տերասերի բանահրական ուսումնասիրությունը, անշուշտ, նախատել է լեզվի համակարգմանի բնույթյանը: Ահա թե ինչո՞ւ երկար ժամանակ քերականությունը նույնացվել է զրականությանը: «Ես արդ ստուգարանեալ լինի քերականությին»՝ զրականութիւն. Անոն իսկ քերականութիւն՝ զրականութիւն ասի ըստ Հոմերոսի», - զրում է Ստ. Սյունեցիմ²: Պ. Գայիրը հսկելում է. «Քերականութեան սեռու ի զործոյն է առեցեալ, զի զորօթիւնակ քերէ ճախարակն զփայտն... այնալս եւ քերականութիւնն որպէս թէ քերէ զիսոս մեր ուս ի լինի ուղղախօսութիւն»³:

Հոյսների նմանողությամբ հայ իին քերականները զիր բառը բխեցնում էին քերել բայից: Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»՝ քեր-ը մեկնվում է իրեւ բնիկ ծագման արմատ և նշանակում է քերած կամ զրած բառ: Բայի քերական և քերրող բառերից նշվում են նաև Մովես Կապտնեկանակացու «Պատմութիւն Աղուանից» աշխատության մեջ հանդիսադր շարադրենակ՝ շարադրված և սրբագրեն բառերը՝ նաքրել սրբագրել իմաստներով⁴:

Ենտագույում արդեն քերականություն տերմինի իմաստը նեղանում է, և նշանակում լեզվի կառուցվածքի նկարագրություն, իսկ երբ ձևավորվում է լեզվաբանությունը՝ իրեւ առանձին գիտություն, քերականությունը դառնում է լեզվաբանության բաժիններից մեկը:

Այսպիսով, թերականական մեկնողական երկերում արծարծվող բազմաբնույթ սկզբունքներին և հարցադրումներին զգացման մշակվում էին նաև որոշակի ուսմունքներ, ինչպես՝ խոսրի նասերի ուսմունքը, ստուգաբանական ուսմունքը, ուսմունքը մարդկային ձայնի և ասուի մասին:

Ընդհանրապես միջնադարյան թերականների երկերում հաճախ միենույն հասկացույթունը նշելու համար հօնանիշներ էին առանձնացնում: Օրինակ՝ հաջողի համար կիրառում էին ձայն և բարրար տերմինները: Ընդ որում նրանք կարող էին նշել՝

ա) բարդույթուններում գործածվող կրկնակ բաղադայնների կազմից հնչյունները, ինչպես՝ ձայնակիցք, բարրառակիցք.

բ) միայն ձայնափորի հնչումը, օրինակ՝ ձայնափոր, երկրարրար:

զ) Այդ հասկացույթունները չտարրուշված կերպով նշանակում էին նաև մարդկային ձայն ընդհանրապես⁵:

Գ. Զանուկյանը գրում է, որ մեկնիշների երկերում տառը և հաջողնը հասուակ չեն տարրերակիցք: Տառը գործածում էին ոչ թե զիր խնատդիվ, այլ զրի հնչյունական համարժեքի նշանակույթամբ: Ի դեպ, Խորենացու «Պատմության» մեջ ևս զործածվում է հշանազիր զրացարակայալույթնը⁶:

Հետաքրքիր է, որ տառը ընկալվում է իրոք տարր բանի համարժեքը: *Տառեր (տարրեր)* բառը հունարեն τά' 'στοιχεῖα' տարրեր, լինենաւներ բառի բարգնանուրյունն է, որի հիմքում հողը, ջուրը, օդն ու հորին են: Ինչպես այդ չորս տարրերից զոյսնում է աշխարհի, այնպիս էլ տառերից զոյսնում են վաճկը, բառը և բանը⁷:

Հատկանշական է, որ երաժշտուկան ձայների սկզբնասրատանունները բնիւյա հետագառողները (Կոմիտաս, Բ. Քոչեարյան, Ռ. Արայան, Ն. Թումանյան, Ա. Արեւադյան) նշել են, որ Հայուատանում ձայնային համակարգը սկսել է ձևավորվել դեռևս նախաքրիտուններկան շրջանում: Այդ ժամանակ ձայները կասում էին ոչ միայն չորս տարրերին, այլև երկնային լուսաւուներին, բնորյան գանսօնն երևույթներին, կենդանական աշխարհի, արեկանների, մարգարենների անուններին: Օրինակ՝ Կոմիտասը «Հայոց եկեղեցական եղունակները» հոդվածում նշում է, որ Ս. Պարքեից ասաց՝ 4-րդ դարում, տակուին հերանուական շրջանում հաշվի տանգած զիտավոր ձայներանակները չորսն են և համաստատասանում են բնորյան չորս տարրերին⁸:

Խորիդյանշական է, որ Վահագնի ծնունդը սրաւերադ դիցարանական հասկածում ևս տուկս են բնորյան այդ չորս տարրերը. օդը՝ երկինք, եղող՝ երկիր, ջուրը՝ ծով, կրակը՝ բոց:

Ի դեպ, ձայների զոյսման տարրերը բնույթի սկզբնասրատանուններին անդրադարձել են նաև Դ. Ալիշանը: Հայկական երաժշտույթան ձայների կարգավորումը վերագրելով Ս. Պարքեին՝ նա գրում է. «Ըստ բույ տասն արարածոց ի չորից ձայնից Ժ բարդեցաւ. եւ չորս ձայնիք ի չորս տարերցս ունին զգոյս. որպէս եւ Ա ձայն ի հողոյն, եւ Բ-ն ի ջրոյն, Գ-ն ի յօդոյն, Դ-ն ի հրոյն. եւ ի չորս ձայնիցն բաժանեաց չորս կրդմ. վաս եւ վերջ երկու սաւելին: Որք ունին եւ այլ յատկութիւնս. զի Ա ձայնն ի հիսնականն է, Բ-ն ի

Կրկնասեռության դրսերումներից մնելով կարելի է դիտել ներքին խնդրակ կառուցվածքը, որ ավելի զգալի է ոճական անհաստիկանությունը: Օրինակ. «Պատերազմեցան հականերու պատերազմ մը», «Ասանի երազներ շատ երազեց Սովի», «Տալստակներ կը բնանան մեծ քունը զիշերուան», «Միրոյ տօնը կը տօնեն», «Աշնան միզապատ սու՞զը կը սպա», «Կը տառապի տառապաշներն ամբողջ»⁵ և այլն:

Վերջապես, արևմտահայերենում ևս բայի իմաստային հեռացումները հաճախ հասցնում են համանունության, որտեղ կրկնասեռություն չպետք է տեսնել: Այսպես, ապշառքել բայի ներգործականը «շպրտել» և չեզոքը «հուզվել իրարանցման մեջ ընկնել» իմաստներով ներկայացնում են տարբեր բայեր, որ կրկնասեռություն չի կարող լինել: Նույնը կարելի է տեսնել լինդվիլի բայի «խեղդվել» կրավորական-չեզոք և «վասպանել» ներգործական նշանակությունների մեջ, նաև մժել («խմորը հոնցել» և «մշուշը պատել»), մշջել («իրար խասնել» և «քունը տանել»), մշել («մանրել վշրել» և «խանձվել»), շիրել («խայրել կծել խարազանել» և «կարկել»), շորավիլ («վալել» և «շտապել փութալ»), օծտել («իրարից առանձնացնել ցրել» և «ծիերի անսանձ զնալը») և այլ բայերում:

Այսպիսով, արևմտահայերենը, լինելով միջին հայերենի լեզվաբերականական շատ իրադրությունների ժառանգորդը, հստակեցնում է կրավորական (-վի) և չեզոք (-ի) սեռերի ձևակազմական բնորագիրը, ինչը հասկանալի է դարձնում ներգործական-չեզոք իմաստային կրկնասեռության ոչ մեծ բանակը: Միաժամանակ ընդգրկուն են կրավորական-չեզոք սեռային անցումները՝ որպես կրկնասեռության ոչ այնքան իմաստային, որքան

բերականական դրսեռումները: Եթե հստակ է -իլ վերջուվորուրյամբ չեղոր սեփ բայերի նաև կրավարակուն գործածուրյունը, ապա -վիլ վերջավորուրյամբ կրավարական բայերը չեղոր սեռով զգալի գործածմամբ հանդերձ նախագասուրյան մնջ չեն ունենում ներգործող խնդիր, բայց դրս առկայությունը հստակ զիտակցվում է: Արևմտահայերենում նկատելի է նաև ինքնատիպ ոճական արտահայտուրյուն ունեցող ներքին խնդրով կտրուցվածքը:

¹. Ռ. Ա. Սարապետոյան, Արևմտահայերենի դասագիրը, Երևան, 2006, էջ 143:

². Ա. Ե. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ զրական լեզուներ, Երևան, 1985, էջ 214:

³. Ռ. Ա. Սարապետոյան, Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երևան, 2000:

⁴. Ա. Ե. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991:

⁵. Տիւ Վ.Ա. Քոսյան, Արևմտահայերենի բառականակցուրյունները. Երևան, 1986, էջ 127:

ՀԱՍՏԱԴՈՒՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գ.Զ - Գրիգոր Չոկրանյ, Երկեր, հատոր 1, Երևան, 2001:
- Դ.Վ. - Դանիել Վարուժան, Զոն, Երևան, 1975:
- Հ.Պ - Հակոբ Պարոնյան, Երկեր, Երևան, 1979:
- ՍՄ - Միսար Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1981:
- Պ.Դ. - Պետրոս Դուրյան, Տրոտորիչք, Երևան, 1973:
- ԱՎ - Ախմանճոր, Դ. Վարուժան, (Հ.Պ.), Երկեր, Երևան, 1979:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ռ. Կ. Սարապետոյան, Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երևան, 2000:
- Ռ. Կ. Սարապետոյան, Արևմտահայերենի դասագիրը, Երևան, 2006:
- Ա. Ե. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ զրական լեզուներ, Երևան, 1985:
- Ա. Ե. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991:
- Վ.Ա. Քոսյան, Արևմտահայերենի բառականակցուրյունները, Երևան, 1986:

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀՈՍՏԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ
ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Նեկտար Միմոնյան
ՀՀ ԳԱԱ Հր. Աճայշանի անվամ լեզվի իմաստիուս

Հոմանիշուրյունը լեզվական ընդհանրական երևոյք է, որ հատուկ է լեզվի գրերե բարք նշանային մակարդակներին: Այն առավել մեծ չափով դրսեր վում է լեզմների բառային կազմում բառապաշտում:

Հոմանիշների նկատմամբ հետաքրքրությունը դրսերպել է շատ վաղ ժամանակներում: Դեռևս շումերները կազմել են շումերակալկանական գանձագամ՝ բարգմանաւկան, բացասարական, այդ բվում նուն հոմանիշների բառացանկեր¹: Մ.ք.ա. I դարում շին լեզվաբան Ցան Սյունեց կազմում է բարրասագիտական առաջին բառարանը՝ «Բարբառներ» Վերնագրավ. բառարանում բերվում են հոմանիշներ տարբեր բարբառներից, և արվում է դրանց տարածական բաշխումը²: Հին հնդկական բառարաննազրության մեջ ևս ուշադրություն է դարձվել բառի ձևի և իմաստի փոխարարերության հարցերին՝ համանունությանը, բազմիմաստությանը, հոմանշությանը: Բազմիմաստ բառերի բացասարությունների ժամանակ տրվել են հոմանշային շարքերը³:

Հայ բառարանազրության սրատության մեջ հոմանիշների առաջին ձևոսգիր բառարանը բվագրվում է XII դարով. դս «Հանդէս բանասանդաց փականունաբար ստորոգիլ նորավարժից սակա բառ է զեղչուկ» բառարանն է, որում լեզգրկվել է շուրջ 160 բառահոլված. բերվում են, ինչպես երևում է վերնագրից, ոչ միայն բանասանդական, այլև բարբառային, մողովրդախոսակցական հոմանիշներ⁴:

Հոմանիշներ պարունակող հաջորդ բառարանն է Արանսս Տիրոյանի «Հանրազրությունը» (Վենետիկ, 1907), որը, ըստ Հր. Աճայշանի, «... պարունակում է հայերեն հոմանիշների ճնշ բառարան»⁵:

Առաջին բառարանազիրը, որի բառ նայառական է եղել կազմել հայերենի հոմանիշ բառերի բառարան, Հովի. Գայսյանն է («Բառարան գանձարան հայերեն լեզվով», Գահիրէ, 1938):

Հայերենի հոմանիշների առավել լեզգրկուն բառարան է Ա. Սուրիխասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» (Երևան, 1967), որը պարունակում է 83000 բառ և դարձվածարանական միավոր, որմբ արտացելում են արդի հայերեն գրական լեզվի բոլոր շերտերի՝ արեւելահայերենի և արևմտահայերենի, գրաբարի, միջին հայերենի և բարբառների հոմանիշային իրադրությունները:

2006 թ. հրատարակեց Ռ. Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարանը», որում տեղ են գտել V-XI դարերի հայ ինքնուրույն և բարգմանական երկերում գործածված հոմանիշ բառերը: Նյութը բաղել է, ինչպես նշում է հեղինակը, «Նոր բառզիրք Հայկակեան լեզվի» (Վենետիկ, 1836-37 թթ.) և իր «Գրաբարի բառարան» (2000-2004 թթ.) բառարաններից:

Ներք ասվածից կարելի է եզրակացնել, որ հայ բառարանագրության մեջ կատարվել է բավական մեծ հավաքչական աշխատանք՝ հայերենի գարգացման տարրեր շրջանների բառապաշտից հոմանիշների ընարության, համակարգման, հոմանիշների բացատրության (անը Ա.Սուրխանյան «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան», Երևան, 2003 թ.), ուղղությամբ:

Բառագիտության նարցերին նվիրված հետազոտություններում (Էդ.Աղյան, Ա.Մուրզիսյան, Ա.Սուրխանյան և ուրիշներ) հոմանիշներին անդրադարձել են՝ նպատակ ունենալով նշել նրանց առաջացման արդյուրթները՝ լեզվի հիմ և նոր շրջանի բառեր, գրական և բարբառային, արեելահայ և արևմտահայ տարրերակներ, զգացական և վերաբերմունքային տարրերաբյուններ և այլն:

Հոմանիշներին վերաբերող դիարքումներ են հանդիպում ռաճանական ուսումնասիրությունների մեջ, որոնցում հստկապես ուշադրությունը սեղմում է այս կամ այս հեղինակի բառընարության նպատակներին ու խնդիրներին:

Հայտնի է, որ հոմանիշները իմաստային մերձավորության կամ նոյնական հիմքի վրա առանձնացված բառաշարքեր են, որոնց մեջ կարող են ընդգրկվել բավական մեծ թվով բառեր՝ հաճախ այդ շարքերի առաջին և եզրային օրինակների միջև եղած իմաստային նշանակալի տարրերություններով։ Առանձնացվելով իմաստային մերձավորության հիմքի վրա՝ հոմանիշների գործածության մեջ ընդգծվում, հստուկ կարեղություն են տրվում նրանց իմաստային նրբերանգների տարրերությանը, ինչպես նաև կապակցելությանը, զուգակցելությանը լեզվական այլ մխավորների հետ։

Սուսացվում է այսպես, որ հոմանիշային շարքերի առանձնացման ժամանակ ուշադրություն է դարձվում մերձավոր կամ նոյն իմաստների արտահայտությանը, խև այդ շարքերի մեջ մտնող առանձին համանիշների թվության ժամանակ առաջին պլան են մդվում նրանց արտահայտած իմաստների, ինչպես նաև զործածության, կապակցելության տարրերությունները։

Հոմանիշների ուսումնասիրություն կարելի է կատարել՝ նկատի ունենալով նաև նրանց բառակազմական առանձնահատկությունները, իմաստային տարրերությունների կամ մերձավորության խնդիրները պայմանավորելով բառակազմական տարրեր ձևադրեների առկայությամբ (հմմտ. հզր - զորեղ - զորավոր, տկոր - անկար - ապիկար, զուեղ - զունավոր - զույնզզույն, դժվարնեղ - անպատճեղ, դժբախ - ապարախան և այլն):

Հոմանիշությունը հստուկ է նղել նաև հ.-ե. լեզվին. այդ են վկայում հ.-ե. լեզուներում սլահարսնված մեծարիվ հոմանիշ արմատները, որոնք ամփոփված են Կ.Դ.Քարի հնդիկարապական լեզուների հոմանիշների բառարանում⁶, որը այդ կարգի միակ, բայց ոչ լիակատար բառարանն է։

Հիմ հայերենի բայլական հոմանիշ արմատներին կարելի է անդրադարձանալ նաև այլ անսանլյանից՝ քննության առնելով այն բայլերը, որոնք ուղեկցվում են բառակազմական տարրերի՝ նախյիշների, աճականների տարրերություններով, ինչպես և ձայնդարձի տարրեր աստիճաններով։

Այստեղ կանդրապատճենք իին հայերենի այն հոմանիշ բայերին, որոնց արմատական ձևերին զուգահեռ առկա են նաև տարրեր նախամանիկներով տարրերակներ, տարրերակներ, որոնք համար ուղեկցվում են իմաստային տարրերություններով⁷:

Հին հայերենում կան բավական մեծ բվոլ բայեր, որոնց պարզ արմատական ձևերի կառջին զոյթրյուն ունեն զ-, յ-, ընդ- նախամանիկներով ձևերը: Հատկապես մնածաբանակ են զ-ով բայերը (ականել - զականել, այրել - զայրանալ, արդել - (յարդարել) - զարդարել, անցնել - զանցնել արկանել - զարկանել աչաղել - զաշաղել, եռալ - զեռալ, իջանել - զիջանել և այլն): Զ-ով սկսվող հ.-ե. ծագման արմատներ հայերենում չկան, եթե զ-ն նախամանիկ չէ: Զ- նախամանիկով բայերը կարելի է բաժանել երկու խմբի: Մի խմբը են կազմում այն բայերը, որոնց զ-ով ձևերը արմատականներից տարրերված են սաստկական իմաստի արտահայտությամբ: Երկրորդ խմբի բայերի առանց զ-ի ձևերից կարելի է բաժանել իմաստավորական չի ընձեռում որոշելու նրան քերած իմաստային նրբերանզը:

Առաջին խմբի բայերից է զայրանալ բայը. այն կազմվել է հ.-ե. ծագման այրել բայից զ- նախամանիկով:

Այրել բայը հանգում է հ.-ե. *-էտ(ե)- «կրակ» նախաձեկին⁸: Այս արմատը վկայված է նաև զենդեկմում՝ *-էտա՛ «կրակ», լատ. .ձեր, ունք. առև. «սև», հինդկ. ձհարան- «կրակապաշտ քահանա»: Հայերենում զոյականական իմաստը պահպանված չէ: Ինչպես նշում է Հք.Աճառյանը, այր պարզ արմատը «հոյր բափի մրցությամբ կորած է»⁹:

Այրել արմատից զ-ի հավելվունվ կազմվել է զայրանալ բայը, որը նախապես նշանակել է «առաքանալ, բորբոքվել», իսկ հետագայում փոխարերար՝ «սաստիկ բարկանար»¹⁰:

Այն, որ կրակ նշանակությամբ արմատներից կարող են ծագել զայրանալ, զայրույր նշանակությամբ բառեր, հաստատվում է նաև հ.-ե. այլ լեզուներում վկայված իմաստային զարգացումներով: Հ.-ե. *բար- արմատից (այն հայերենում արտացըլված է հոյր «կրակ» նշանակությամբ, և որից բայսուրմատի կրկնությամբ առաջացել է հայերեն հրաերել «բռբռորել, դրդել» իմաստով բայը) ծագել են լատ. հորդա, հորդա «փառարան», հորօ, եղ «զայրանալ, մղլզնել», հորօ «զայրույր, կատադրյուն», ինչպես նաև ֆր. հու- «կրակ» և նույն «զայրույր, կատադրյուն» բառերը:

Կարելի է հիշատակել նաև հայ. *բարկ* → *բարկանալ* իմաստային անցումը:

Իմաստային նման զարգացումներ են նկատվում արդեմ - զարդարեմ, եռալ - զեռալ, իջանել - զիջանել և այլ բայերի մեջ:

Հետաքրքրական են ընդ- նախայիրավ կազմված բայերի իմաստային տարրերությունները: Անդրադաստինը դրանցից մեկին: Հայերեն կող պարզ արմատը, որը հանգում է հ.-ե. *ց"ը- նախաձեկին, զարարում պահպանված չէ (հայերեն բարբառներում այն առկա է «կրկօրդ» իմաստով): Կող տալ, կրանել → կոկորդ իմաստային անցումները արտացըլված են նաև հ.-ե. այլ

լեզուներում. հմմտ. լսու. ցուա «կոկորդ», ցլոտի, -իր «կուլ տալ», ուսու. ցլոտայ, ցլոտօք, ցլոտկա և այլն: Կամակ բայի խոնարհման հարացոյցուն պահպանված եկող ձևում վկայված է արմատական ձայնափորք: Արմատի ընդ- նախադիրով ձևերում՝ բնկղճու, բնկղմել, կող արմատը հանդես է. զախի թղ լծորդ հնչյաններով. այս աւարքերակները դրակարում են որոշակի իմաստային տարրերույթուններ: «Նոր բառզիրը հայկակեան լեզուի» և հասորում (էջ 1101) կեմուտ բառակողվածում բերվում են բնկղճու և բնկղմել բայերի իմաստները. առաջինը բացատրվում է «զեղեալն ի բերան ... վայրաքերեկ բնի կոկորդն որպես զումպ ջրայ», իսկ բնկղմելը՝ «վարժասաւյզ առնել, անհետ առնելք»:

Հայերենի հոմանիշների իմաստային նման տեղաշարժերը զուգահեռներ ունեն հ.-ե. մյուս լեզուներում: Այսպիսի ընդհանրույթյունները վկայում են հ.-ե. լեզուներին բնորոշ սիստամական հանրույթների (ունիվերսալիսների) առկայությունը լեզուների ոչ միայն կառուցվածքային, այլև իմաստային զարգացումների մեջ:

1. Տե՛ս Գ.Բ. Զահորկյան, Լեզվաբանության պատմություն, հ.1, Երևան, 1960, էջ 14-15:

2. Նոյն տեղում, էջ 18:

3. Նոյն տեղում, էջ 30:

4. Տե՛ս Գ.Ա. Գասպարյան, Հայ բառարանագիտության պատմություն, Երևան, 1968, էջ 33-34:

5. Տե՛ս Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, (այսուհետ՝ ՀԱԲ), հ. I, Երևան, 1971, էջ 7:

6. Buck C.D. A Dictionary of selected Synonyms in the principal Indo-European languages, Chicago-London, 1949.

7. Նոյն արմատից սարբեր նախամասնիկներով հոմանիշ բայերի կազմության նկանակը շատ զործուն է ոռուերենում. այսպիսի հոմանիշ բայերի ուսումնասիրությանը նվիրվել են առանձին աշխատություններ (տե՛ս Ամինովա Ա.Ա. Գլագոլյան սинонимներու հայության պատմությունը, 1988):

8. Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch, I, Bern-München, 1959-19694

պ. 69.

9. Հր.Աճառյան, ՀԱԲ, հ. I, 1971, էջ 175:

10. Նոյն տեղում:

*Սուսաննա Տիգանի
ՀՀ ԳԱԱ ՀՀ Աժանյամի անվան լեզվի իճատիտու*

Ինտերֆեյսը ԷՀՄ-ն ցուցասարքին միացնող հաղորդակարերի (նաև ցուցասարքերի) համակարգ¹ է, որի լեզուն մեր հանրապետության պատկան մարդինները դարձրել են հայերեն ու զցելով համացանց՝ հաճճել օգտվողների լայն շրջաններին: Խ՞նչ է այն ներկայացնում:

Նշենք, որ ցանկացած մասնագիտական բնագավառ, որում են գոյուրյան սպասողի պայման, տերմինների նշակալուծ, հղված համակարգով է ներկայանում. Վերջինս, ինչպես իմաստային, այնպես էլ կառուցվածքային տեսակեաններից ունի իր առանձնահատուկ նկարագիրը: Մի դեպքում գերակայում կամ հաճախական են, ասենք, -ուժ-ով կազմված բայանունները, օրինակ՝ թեկունում, արդարացում, վավերացում, ներում, համաներում և այլն (պարզ դարձավ, որ խոսքը իրավաբանական տերմինների մասին է), այլ դեպքում դարձյալ նոյն բառակազմական մասնիկի առկայությամբ (անզայացում, բորբոքում, ցնցում, դիակիզում և այլն) նաև -ուրյուն-ով կազմուրյունների առկայություն՝ շնչարգելուրյուն, անլուրյուն, անարյունուրյուն, անքնուրյուն, ցրասահարուրյուն² և այլն (այսուղի էլ պարզ է, խոսքը բժշկական տերմինների մասին է): Այս շարքը կարելի է շարունակել ինչպես մեր մանրամասն ուսումնաապարած անտեսագիտական, այնպես էլ նրածչական, ճարտարապետական ու այլ բնագավառների տերմիններով:

Դրանցից ամեն մեկը խիստ կարգավորված է թե՛ իմաստային, թե՛ կառուցվածքային տեսակներից, ու հետազու համարումները կատարվում են լեզվական համաստասահման կադապարներով:

Հարցը բոլորովին այլ է մեր այս ուսումնասիրության բնագավառում՝ ինֆորմատիկայի տերմինահամակարգում:

Microsoft ընկերաբարյունն ու նրա հայկական գրասենյակի դեկանար Գ-րիգոր Թարենյանը համապատասխան պայմանագրվածությամբ համաձայնության են եկել Հայաստանում իրականացնել Windows-ի հայկական տարրերակը, որը հայկական շալկայում կիայտնի ընթացիկ տարվա ստունքը, իսկ Microsoft Office 2007-ը՝ մինչև տարենիքը³:

Իսկ առայժմ մենք ունենք ցանցում զցված այսպիսի հայերեն. աշխատանքն սկսում ենք մեկնարկել պատուհանից, որը պարունակում է

1. Ծրագրի մատչումը և լելյայնները. սրա գործառույթն է «Ընտրում է որոշակի գործունարքամբների (օրինակ՝ Ռատայնի զննման կամ էնակ-ների (հավանաբար՝ նամակների՝ U.S.) ուղարկման) համար լրելայն ծրագրեր, որոնք մատչելի են Սնկնարկային ցանցից, սեղանից և այլ սեղագրություններից»:

2. Պիտույքներ՝

- ա) բառասենար, որը ստեղծում և խմբագրում է բարդ ձևաչափով զրկածքային փաստաբղերը
 բ) համաժամեն. սա արդիացնում է անզիթ խմբագրած նյութերի, օրինակ՝ փաստաբղերի, օրացույցերի, էլեկտրոնային ուղերձների ցանցային սրատնեները
 գ) համախույզ-ը ցուցադրում է համակարգչի նիշքերը և պահանջները
 դ) հրամանի հուշակ-ը կատարում է զրկածքային (հրամանատուդային) գործառույթներ

- 3.Այս համակարգում պահեստավորված նիշքեր
- 4.Համագույնագործած փաստաբղեր (պարունակում է համակարգչի օգավողների միջև համագույնագործած նիշքերը և պահանջներ)
- 5.Կոչա սկսվածակավարներ
- 6.Սարքեր հեռացվելի պահեստով
- 7.Մանրամասներ. այս հասավածք ցուցադրում է չափ, նիշքի տիպ և այլ տեղեկույթ՝ ընտրված միայնի մասին
- 8.Տեղափոխում է ընտրված միայները ծեր ընտրված տեղը:
- 9.Ընդգծված «տերմինները», «տերմինային կապակցություններն» ու «նախադասությունները» հիմնականում հրահանգներ են. բայց ոչ մեծ մի ընտրածի՝ ինտերֆեյսի լեզվի մասին սրատկերացում կազմելու համար՝

մեկնարկել	փշովկ	բաշել պահանջ
տեղեկայր	արդիացնել	ճրիչի և տեսուխցիկի մոզ
մատչում	միուր	սարքերի պատկերակներ
լույսայն	միացրել	ուժգնորյան կառավար
գործունուրյուն	հրամանի հուշակ	մկավառակի աստմանատիչ
ոստայն	լուսրված միայր	դիմքերի դիտակի
հետախույզ	բարյ ձևաչափով	զրկածքային փաստաբղեր
ուղարկել	կոչա սկսվածակավար	
տեղադրություններ	անզիթ խմբագրած նյութեր	
համաժամեն	համօգտագործած նիշքեր և պահանջներ	
նիշք	սարքեր հեռացվելի պահեստով	
պահանջ	զրկածքային (հրամանատուդային) գործառույթներ	
դիտել համակարգի տեղեկույթը		
ուղարկում և ստանում է էլ-փոստ և լուրախմբի սղերձներ		

Ակամայից հիշում ես Հռվիսանիսյանի՝ իր ժամանակին զայրություն զրած հետևյալ տաղերը. «Չառ անզամ հայերն զրածը, երե ոռուերենից է քարզմանած, պլափի նորից ոռուերենի շառ տաս, որ հասկանաս, քե ինչ է ուզում ասել զրոռը»⁴:

Մեր պարագայում պլափի անզերնի շառ տալ, նախ՝ հասկանալու տերմինների իմաստը, և ապա՝ քննելու դրանց կառուցվածքը: Ինչեւ, այս՝ երեք տասնյակի հասնող տերմինները ըստ կառուցվածքի այսպիսին են՝

անորոշ դերբայրվ արտահայտվածներ՝ արդիոցնել, մեկնարկել, ուղարկել, համաժամեն, չեղարկել, դուրս զրվել, տեղակայել, նիրին (կան նաև որոնել, դիտել, հավելնել հետացնել և այլ՝ կանոնավոր ու տեղին քառա-

գործածություններ, որոնց թիվը փոքր է). սրանք՝ Եղիսկ կազմությունները, օրինաչափ և ճշգրիտ գիտությունների համար (իշխենք մարդկանատիվական՝ ապացուցել արտածել, գումարել, հանել, դուրս բերել ու հազարավոր այլ տերմինները),

-ում -զոյսկանակերտ ածանցով կազմվածներ՝ աջակցում, կապակցում, համօպաւուրծում, ընտելացում, մատչում,

-ույր-ով՝ տեղեկույր, միայր,

-ուրյուն-ով՝ զործունություն, տեղադրություն,

-քով՝ նիշը, միացը, տեսք և այլն, ինչպես նաև այսպիսի կազմություններ՝ կարծատ, պանուկ, հուշակ, ռատայն, հետափույզ, ընտրյալներ:

(ii) Վար ածանցակերպով կազմված միակ՝ սկավառակավար տերմինը, որ այսուղե հանդես է գալիս «զործիք» իմաստով, չկա Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»:

Խ՞ն եզրակացության կարելի է հանգել այս ամենից:

1. Հայերեն չեն նախադասությունները ինչպես կառուցվածքի ու շարադրասուրյան, այնպիսի էլ իմաստային տեսակետներից (հմմտ.)՝ Ընտրեք այս տուփը, որպեսզի միայն դուք մատչում ունենաք, Տեղափախում է ընտրված միույթները ձեր ընտրված տեղը, Առկա միացքների ցուցակը դիտելու համար կտացքեր սյատեղ, Ռուպրեկտ և ստանում է Լ-վուստ և լուրավամբի ուղերձներ, Այս խնդիրները զործադրվում են ընտրված նիշքերին ու պանուկներին, Ցուցադրում է նիշքեր, պանուկներ, ծրագրի կարծատներ և միույթներ սեղանի վրա և այլն):

2. Առկա են սխալ բառազործածություններ, օրինակ՝ արդիացնել-ը Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ներկայացված է՝ անս արդիականացնել հասնանարարականով, մատչում-ը, որ մատչելի, հասանելի դարձնելն է այս պարագայում և առհասարակ, կարելի էր ավելի խելամիտ բառային միավորավ ներկայացնել, լուրախամբ-ը, որ ըստ երևոյթին լուրերի խումբն է, նույնպես բառակազմական ճիշտ կաղապարավ պիտի կիրառվեր և այլն:

3. Ածանցավոր ոչ ճիշտ կազմությունների զործածության օրինակներ.

սկավառակավար-ը -(ա)վար ածանցակերպով կազմված միակ՝ ոչ անձ ցույց տվալ տերմինն է ըստ «Հայոց լեզվի հանգարանարանի» տվյալների⁵. բռնը տոկա կազմությունները՝ սպարաստավար, մեքենավար, վագոնավար, կոռուկավար, հաղորդավար և այլն՝ զործող անձներ են:

4. Եվ վերջինը, բայց ոչ երկրարդականը. մոտահոգությունն է (ինչը դրենց զբելու այս մասին), թե որքան անտարբեր պետք է լինել մայրենի լեզվի, անպատճառապահանատու՝ նրանում ներդրված նոր տերմինահամակարգի նկատմամբ, որ առանց որևէ իրավասու կազմակերպության կամ մասնակետի ենտ խորհրդակցելու՝ համացանցում տեղադրելը այսպիսի, մեղմ ասած, անհերեքությունը:

Ավելին, Microsoft ընկերությունը Հայաստանում կյանքի է կռչելու իր հիմնական ծրագրերը, որոնցից առաջնայինն ու առաջնակարգը այսպիսի հայերենն արդեն տեղադրած (իմաստավայրիս արած) համակարգիչներով

դսլրոցներն ու համալսարաններն (ամբողջ կրթական ռորտը) տպահովելի 1, որսլեսզի քոլոր ուսանողներն ու դսաավանդողները Microsoft-ի ծրագրերից անվճար օգտվելու հնարավորություն ունենամ⁶:

¹Տե՛ս Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Եր., 1988, էջ 192:

²Օքինակները բաղկած են Արևմտահայ տշխարհաբարի եպիսքանական խորհրդի հրատարակած Ուղևույցներից, Ֆրանսիա, 2002:

³Նյութերը բաղկած են համացանցից:

⁴Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 15:

⁵Հայոց լեզվի հանգարառան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Եր., 1976, էջ 537–538:

⁶Նյութերը բաղկած են համացանցից:

ԼԵԶՎԻ ԶԵՎԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ռոբերտ Ռուբայան
ՀՀ ԳԱԱ Հրամանակի անվան լեզվի ինստիտուտ

Նոր գիտական ուղղությունների պատճերյունը քննելս դժվար չէ նկատել, որ դրանք հիմնականում սաղմնավորվել են ոչ բազային գիտական օջախներում: Բացառություն չեն նաև լեզվաբանական նորագույն ուղղությունների հիմնադրամներում: Այն ՀՀ դ. 60-ական թվականներին տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման ինստիտուտում, իսկ հետագայում աշխատանքները շարանակվել են ՀՀ ԳԱԱ Հ. Աճարյանի անվան լեզվի ինստիտուտում: Ակադ. Զահարյանի կողմից լեզվաբանական գործընթացների ճշգրիտ վերլուծության և օրյեկտիվ զնահատման շնորհիվ այստեղ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին այդ ուղղությունների գործացման համար:

Ներկայացնելով ՀՀ դարում լեզվաբանության զարգացման ընթացքը՝ Գ. Զահարյանը նշում է [Զահարյան 1978, էջ 68-69], որ համակարգային-օպերատորներ լեզվաբանության ձևավորման մեջ կարելի է առանձնացնել կրիտիցիզմի (ՀՀ դ. I բառորդ), տակտոնմիզմի (ՀՀ դ. II բառորդ) և դինամիզմի (գեներատիվիզմի) (ՀՀ դ. III բառորդ) փուլերը, և եթե երկրարդ փուլում հետազոտողները ծգաւում լին ստանալ լեզվի օրյեկտիվ և սպառիչ նկարագրություն, իրականացնել բուն լեզվաբանության և այլ գիտակարգերի ճշգրիտ ստեղծանագուտում, ստեղծել բոլոր լեզուների համար նկարագրության ընդհանուր սկզբունքներ, բացահայտել լեզվի կառուցվածքի՝ որպես որպատճեն ստորակարգության, և նրա տարրերի բաշխումը, ապա երրարդ փուլում ստուգին պլան է քաշվում լեզվական համակարգի դինամիկ ուսումնասիրությունը, առաջնային է համարվում լեզվի մեխանիզմի կաղապարումը, ընդհանուր հատկանիշների համակարգումը և լեզուների գործացման դիտարկումը իրեն որոշ իդեալական կառուցվածքի դրսուրումներ (տարրերակներ): Միաժամանակ նաև ընդունում էր, որ լեզվաբանության կիրառական ուղղությունները լեզվի տեսության զարգացման ու խորացման աղյուրներից են, որոնք դարձել են տարրեր գիտությունների փոխօրոժունեության և փոխադարձ հարահացման դաշտ: Իրեն ապացույց՝ կարելի է նշել հաշորյականությունների ձևային փոխակերպումների տեսությունը, որ լեզվաբանության մեջ հայտնի է որպես սերող և փոխակերպական քերականություն: Այն սաղմնավորվել է դիսկրետ մաքենատիկայի բնագավառում, այնուհետև լայնորեն օգտագործվել հաշվողական տեխնիկայի ու ծրագրավորման բնագավառում, իսկ նրա առանձին մասնավոր տար-

բերակներ հաջողությամբ կիրառվում են բնական լեզուներով տրված տվյալների վերացնական համար:

Լեզուն իրեն երևոյք, կազմակերպված է որոշակի ձևով, և նրա ցանկացած արտահայտություն ենթարկվում է որոշակի կանոնների, որոնք սարսափում են ոչ միայն առանձին արարերի, այլև նրանց համալիմերի վրա: Հարկ է նշել նաև, որ, ի թիվս այլ գործոնների, լեզվաբանական տեսարյունը բարդանում է նաև նրանով, որ լեզվական կառուցվածքներում առկա ընդհանուր հստկանիշներից ոչ մեկը սպարտադիր չի համարվում, քանի որ նրանք ունեն հավանական բնուրագրեր:

Մասնագիտական գրականուրյան մեջ ընդունվում է լեզվական միտվորների և նրանց համականիշների դասակարգման ու նկարագրության երեք մակարդակ՝ ձևական, իմաստային և հսրաբերակցային: Առաջին սատիճանում քննություն առարկան ձևն է (արտահայտության ալլունը), երբ անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում իմաստային կողմին, և ձևի սառունասիրագրությունը կարծեն դասունում է ինքնանպատակ: Երկրորդ անհրաժանում քննության նիմնական ստարկան իմաստն է, իսկ երրորդ անհրաժանում՝ լեզվական միավորների միջև սուլկա հարաբերակցային հարաբերությունները:

Գիտագրութնական աշխատանքներում չխսավելու համար պետք է տարբերակել լեզվի ձևայնացում և լեզվի ձևային նկարագրություն հասկացությունները:

Լեզվի ձևայնացում նշանակում է որևէ բնական լեզու նկարագրելու համար նրա նիմքի վրա ստեղծել մի ձևային լեզու: Փորձը ցույց տվեց, որ այդ եղանակով ստեղծված ցանկացած նկարագրադասային լեզվում առաջ են գալիս նույնականի, գուցե և ավելի շատ բարդարյուններ, ինչպայմանավոր նկարագրվող բնական լեզվում: Հարկ է նշել, որ XX դարի կեսերին բ.գ.դ. Վ.Գրիգորյանի գլխավորությամբ ձևաբանության բնագավառում կասարվող աշխատանքները ընթացնում էին ռուսերենի և հայերենի ձևայնացման ուղիղվ:

Լեզվի ձևային նկարագրությունը ենթադրում է մարենամատիկական մերոդների և կադարարների կիրառությունը լեզվական (այլև լեզվաբանական) միավորների և երևոյթների նկարագրության համար:

Վերցնենք, օրինակ, մի այնպիսի լեզվական միավոր, ինչպիսին բառն է: Մասնագիտական գրականուրյան մեջ տրվում է բառի 300-ից ավելի սահմանում [Ռմելեւ]: Երբեմն բառի պարզագույն սահմանում օգտագործվում է, այսպես կռչված, համակարգչային սահմանումը՝ բառը տողում բացատից բացատ ձգվող տառակապակցությունն է: Միանգամայն պարզ է, որ այս սահմանումը զուրկ է լեզվաբանական հիմքից: Բերենք մի երկու սահմանում ևս:

Պ.Կուգնեցովը բառը սահմանում է այսպիս: Այն հնչյունական հաջորդականությունը, որը կարող է սահմանավակվել ցանկացած տեղությամբ դադարներով, սունվազն մեկ ինքնուրույն բառ պարունակող հնչյունական

հաջորդականություն է: Այս եղանակը որոշված հնչյունական հաջորդականությունը, որի ներսում չի կարող գետնդվել մի ուրիշ հնչյունական հաջորդականություն, տուսնձին, ինքնորբայն բառ է [Կոչեցօք]:

Ակադ. Է.Աղայանը զունում է, որ բառ կարող է կոչվել այն հնչյանը կամ հնչյունավունքը, որն ունի կանկրետացած իմաստ և անկախ գոյություն ու գործածություն [Աղայան]: Հետազայում «հնչյուն», «հնչյունավունք» և «կոճկրեատացած իմաստ» բառերը փոխարինվեցին «հնչույր», «հնչույրալումբ» և «բառային իմաստ» բառերով, և ստացվեց բառի ավելի ընդհանուր սահմանում, որը, ինչպես պնդում է Է.Աղայանը, լիովին բնորոշում է հայերենի բառը: Մեյն պնդում է, որ բառը այն հնչույրալումբն է, որը ենթարկվում է բերսկանական մշտկման և այլն, և այլն: Այսօր, կախված նախազգվող համակարգին ներկայացվող պահանջներից, իմբը է ընդունվում բառի այս կամ այն սահմանումը: Նոյն բանը կարելի է պնդել լեզվական այլ միավորների վերաբերյալ:

Ինչպես զիստրյան ցանկացած նոր ձևավորված բնագավառ, այնպես էլ կառուցվածքային լեզվաբանությունը զերծ չմնաց անհաջողություններից: Կառուցվածքային լեզվաբանության անհաջողությունների պատճառներից մնելը ստացված զիստական արդյունքների չիմնավորված զերազնահաստումն էր: Հաճախ մասնակի լուծումները ընդլանքացվում էին ողջ համակարգի համար՝ առաջարկվող մերողները դիմումով որպես լեզվի զիստական ընկալման միակ ընդունելի եղանակ, որ բացառում է լեզվի նկարագրության այլ մերողների գոյությունը:

Այդ ընդհանուր մտայնությունն իր արձագանքը գտավ նաև հայ լեզվաբանության մեջ:

Այսպես, Է.Աղայանը զրում է, թե լեզվի կառացվածքային վերլուծությունը, օրինակ, լիսվին արդարացրել է իրեն ինչպես լեզվի համաժամանակյա, այնպես էլ սպառմական ուսումնասիրության բնագավառում: Դա մի մերսդ է, որը հնարավորություն է տուխս առանց հակասությունների (ընդգծումը՝ Ռ.Ռ.Ա.), սպառիչ վերլուծել լեզվական միավորները և ստանալ օրյեկտիվորեն ճշգրիտ արդյունքներ, իսկ սա մեծ նվաճում է լեզվաբանության համար: Եթե հավելենք նաև Ռ.Իշխանյանի այն պնդումը, թե պետք է խուսափել հոլովների իմաստային բնորոշումներից, որանց անհրաժեշտությունը հսկվի թե զգացվի հոլովների ձևաբանական ստույգ նկարագրությունների դեսպան, և թերևս ամենից ավելի նպաստվածարմար է հոլովները բնորոշագրել ըստ հոլովանից կամ հոլովակերտ թերույթների և հետո բվարկել յուրաքանչյուր հոլովի շաբակյուսական կիրառությունները, սակա պարզ կդրսնա, թե ինչպիսի գնահատումների էր արժանանում կառուցվածքային լեզվաբանությունը մեզանում:

Ակադ. Գ.Զահորյանը, ինչպես լեզվաբանություն մյաս քնազավուներում, այստեղ ևս գրավում է հավասարակշխա դիրք: Նախ նա Ժառում էր լեզվի անհակասական նկարագրության հնարավորությունը՝ նույն լեզվական համակարգի ստեմաններում մնալու դեպքում, այնուհետև՝ զանում էր, որ համբնդեսանուր ուղղությունը պետք է քննութագրվի իրք սուրստուցիչնաւ մոտեցում, որը, ի հակադրություն կառուցվածքային մոտեցման, նպատակաւողակած է ոչ միայն նկարագրելու, այլև, ենթերկ լեզվաբանական համակարգերի կառուցման միասնական Ակդրուներից, մեկնարանելու այն ոչ իրքն ներփակ համակարգ, այլ իրականության արտապատկերում, որն ըմբռնելի կլինի, երես կառուցվի աշխարհներական ընդիւնուր տեսությունը և կիրառվի լեզվի՝ որպես նրա դրսաբուներից մեկի նկատմամբ: Այս մոտեցումն ունեցավ իր արձագանքը, և որպես օրինակ նշենք առելքին հեղինակի «Ժամանակի լեզվաբանական հայեցակետը» աշխատանքը [Սրբագրական]:

Զևսյին նկարագրության դասական օրինակ է բ.գ.դ. Լ.Հովսեփյանի «Գրարարի բառակազմություն» աշխատանքը:

Զեարանական երեսուրների նկարագրության մեջ կարևոր ներդրում էր ակադ. Գ.Զահորյանի կողմից զրո մասնիկի գաղափարի զարգացումը, որի վորձերն արվել են դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին [Գ.Զահորյան, 1967]: Այն իր հետազու ծավալումն ստացավ 1974 թ. հրատարակած «Հայոց լեզվի տեսության միմունքները» մենագրության մեջ: «Զրո մասնիկը կարող է միաժամանակ հակադրվել մի քանի մասնիկի: Այս դեպքում կունենանք յուրաքանչյուր մասնիկին հակադրվող զրո մասնիկ՝ քաղաք-ներ-ի-ն – քաղաք +0+0+0» [Զահորյան 1974]: Այս դրույքը հիմք հանդիսացավ ժամանակակից հայերենի անվանական և բայսական բառափոխությունների ձևային նկարագրության համար:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ անմասն չի մնացել լեզվական միավորների վիճակագրական բնութագրերի վերլուծությունների հետ կապված խճդիրներից, որոնց վճռման մեջ մեծ ներդրում ունեն բ.գ.դ. Ա.Սարգսյանը, բ.գ.դ. Բ.Ղազարյանը: Բ.գ.դ. Օ.Խաչատրյանի աշխատակցությամբ փորձել ենք պարզել Մ.Խորենացու «Հայոց պատմություն» երկի մի քանի քանակական բնութագրեր: Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ երկը արժանի է ավելի խոր և համակողմանի քննության:

Մասնագիտական զրականության մեջ ընդունվում է քերականությունների երեք տիպ՝ նկարագրական, ստատիկ և դինամիկ: Նկարագրական քերականության մեջ լեզուն նկարագրվում է առանց ձևերի հատուկ ընթարության: Ստատիկ քերականության մեջ լեզուն դիտվում է որպես ստատիկ կառուցվածք: Սերող քերականությունը սպորադար դինամիկ քերականություն է:

Ըերենք սերող քերականության մի տարրերակ:

Արտածումը (դեղուկցիսն) լսյն առումով մտածողության ձև է, եթե նոր միտքը տրամարանական օրենքներով արտածվում է նախապես ընտրված որոշակի տվյալների համախմբից: Մտքերի այդպիսի հաջորդականությունը կոչվում է արտածում, իսկ նրա ամեն մի բաղադրիչ՝ կամ ապացուցող միտք, կամ արքունակ, կամ նախորդ մարքերի արտամարանական հետևանքը: Նման դատողության վերջին միտքը նոյնական կոչվում է արտածում:

Եթե այս պնդումը արտահայտենք միենայով, ապա կատանանք հետևյալ արտահայտությունը.

$D \Rightarrow G(B)$.

որտեղ

D – արտածումն է,

G – նախադրույթների համախմբումն (անվանենք քերականություն),

B – արտածման բաղադրիչներն են:

Կիրառելով $D(G.B)$ ներկայացումը լեզվի (խոսքի) կառուցվածքը նկարագրելու համար՝ կստունանք հետևյալը.

պարբերության մակարդակում՝ պարբերություն $\Rightarrow G_1$ (նախադասություն),

նախադասության մակարդակում՝ նախադասություն $\Rightarrow G_2$ (բառակապակցություն, նախադասություն),

բառակապակցության մակարդակում՝ բառակապակցություն $\Rightarrow G_3$ (բառ, բառակապակցություն),

բառային մակարդակում՝ բառ $\Rightarrow G_4$ (ենթածեռայք),

ենթածեռայքին մակարդակում՝ ենթածեռայք $\Rightarrow G_5$ (ենթահնչույք),

ենթահնչույքին մակարդակում՝ ենթահնչույք $\Rightarrow G_6$ (ենթահնչույք):

Տրված D -քերականությունը լիովին համահունչ է ակադ. Գ. Զահորյանի այն պնդմանը, թե լեզվական ամեն մի օբյեկտ դրսություն է բաղկացած կանության հատկանիշով, որն ընդորվում է օբյեկտների ներքին և արտաքին կողմերը: Ամեն մի օբյեկտ կարելի է բնութագրել նրանով, թե ինչ գոյություն ունի նրա ներսում, և ինչ՝ դրսում, այսինքն՝ ներքին հատկանիշներով ու հարաբերություններով և արտաքին հատկանիշներով ու հարաբերություններով (Ճայակա 1978, էջ86):

Լեզվի կառուցվածքի նկարագրության ժամանակ վերին ծայրագույն միավորը կարող ենք հասնալ պարբերությունը, իսկ առորին ծայրագույն միավորը՝ ենթահնչույքը: Այն դրսություն է ենթահնչույք՝ անբաժանելի հնչյունական միավորները, որոնք ծառայում են բառեր կառուցելու և նրանց հնչյունային ձևերը տարրերակելու համար:

Պարզ է, որ եթե որպես ելակետային միավոր ընդունենք ենթահնչույքը, ապա

ենթածեռայք $\Rightarrow (G_5, G_6)$ (ենթահնչույք),


$\Rightarrow (G_4, G_5, G_6)$ (ենթահինչույր),

$\Rightarrow (G_3, G_4, G_5, G_6)$ (ենթահինչույր),

$\Rightarrow (G_2, G_3, G_4, G_5, G_6)$ (ենթահինչույր),

$\Rightarrow (G_1, G_2, G_3, G_4, G_5, G_6)$ (ենթահինչույր):

Ակադ. Գ. Զահորելյանը, ընդհանրացնելով ձևային նկարագրությունների հետ կապված հարցերը, ընդունելով տարածական կարգերը (բաղկացականություն, պարունականություն) իրքեւ հիմք (երկշափ տարածություն), հավելելով ևս երկու հատկություն՝ որպականություն և ընթացայնություն, այնուհետև նշանայնությունը իրքեւ լեզվական հոտկանիշ, արդյունքում ստանում է 5-չափանի տարածություն, որտեղ նկարագրելի և լեզու (տես զծապատկերը):



Մեկնարաններ այն. եթե ընդունենք նշանայնություն, ընթացայնություն և որպականություն հատկանիշների բացակայությունը, տպա կատանանք Ա ուղղանկյունը, որի զագաբները համապատասխանում են տեղ (0), չափ (1), կարգ (2) և թիվ (3) հասկացություններին, որոնք բնուրագրում են տարածության կարգերը: Այժմ տարածության հասկացությանը համապատասխանող Ա հարթությունը պրոյեկտենք որպականության հատկանիշի առանցքը: Մենք կստանանք մի նոր հարթություն (B), որը ներկայացնում է նյուրականություն կարգերը՝ ուղղություն (4), ճկ (5), կախում (6), կազմ (7): Այլ կերպ ասած՝ եթե արված համակարգը փոխակերպենք

այնպես, որ **տարածության** հասկացության կարգերի համար առկայանան որուկանություն հատկանիշը, ապա **տեղ** հասկացությունը՝ կվերածվի **ուղղություն** հասկացության, չափը՝ ձևի, կարգը՝ կամուման, քիզը՝ կազմի:

Այս բոլոր կարգերի համար ընդհանուր է Ընթացայնություն (Վիճակայնություն) հատկանիշի բացակայությունը: Եթե առկայացնենք Ընթացայնություն հատկանիշը, ապա կատանանք ևս 8 կարգ՝ **Նպաստակ(ակնա), Ժամանակ(Վիճակածե), Տևողություն, Պատճառականություն, Հերացք, Վիճակակազմ, Բազմասյատիկություն**:

Այս բոլոր 16 կարգերը բնուրագրվում են **Նշանայնության** հատկանիշի բացակայությամբ: Եթե ավելացնենք նաև այդ, ապա կարաղ ենք արդեն ներկայացնել նարդու հոգեկան աշխարհին վերաբերող կարգեր՝ **Նշանային ուղղության, Նշանային տեղի, Նշանային ձևի, Նշանային չափի** և այլն:

Միաժամանակ մենք պետք է համաձայնենք, որ ժամանակակից լեզվարտնության մեջ կիրառվող նորագույն մերոդները՝

ա) բավականին բարդ են,

բ) ունեն փորձարարական բնույթ և կապված են հսկայական փաստական նյութի մշակման հետ,

գ) լեզվաբանից պահանջում են ճշգրիտ գլուխությունների, ինչպես մաքւեմատիկական վիճակագրության, մաքւեմատիկական կադապարման տարրերի իմացություն և համակարգիչների օգտագործման հմտություն:

Եթեև վերջարան կարելի է ասել, որ մերենական բարգմանությունը լեզվի ձևային նկարագրությունների փորձաքարտ է:

Առաջին փորձը տեղի է ունեցել 30-ական թվականներին, երբ ծագումով հայ Գևորգ Արծրունին մշակեց բարգմանության մեքենան, որն օգտագործվում էր բառերի և բառակապակցությունների բարգմանությունների համար:

Երկրորդ փորձարկումը կատարվեց 70-ական թվականներին: Հայ մասնագետները արտոնագիր ստացան ուստերենից հայերեն բարգմանող մեքենայի ստեղծման համար:

Երբորդ փորձարկումը կստարվում է այսօր: Շրջանառության մեջ է դրվել UNL գանցային լեզուն, որը նարատակառողջված է տեքստերի խճառատային բարգմանուրյուններին: Այն հենվում է լեզվական միտվորների հարաբերակցային առնչությունների վրա, որոնց արմատները մենք գտնում ենք ակադեմիկոս Գ. Զահորկյանի վերջին աշխատանքներում [Ճայույն 1999]

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աղայան Է.Բ., Ժամանակակից հայերենի հորովումը և խոնարհումը, Երևան, 1967:
Իշխանյան Ռ.Ա., Արդի հայերենի հորովումը և խոնարհումը, Երևան, 1971:
Հովսեփյանի Լ., Գրաբարի բառակազմուրյունը, Երևան, 1987:
Զահորկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
Զահորկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության եխունքները, Երևան, 1974:
Ոստույան Ռ., Լեզվի ձևային նկարագրուրյան հետ կապված մի բանի լսնդիրներ, 2005:
«Համբառապահական զիտամալովի նյարդերի ժողովածու», Երևան-Համաձար, 2005:
Ճայույն Գ.Բ., Общее и армянское языкознание, Ереван, 1978:
Ճայույն Գ.Բ., Универсальная теория языка, Москва, 1999:
Кузнецов П.С., Опыт формального определения слова, "Вопросы языко-
знания", 1964, 5.
Урутян Р. Лингвистический аспект времени, в кн. "Математические
модели в лингвистике", Ереван, 1988.
Шмелев Д.Н., Проблемы семантического анализа лексики, М., "Наука",
1973.

Ռ.Ռուտյան

Ն.Սահակյան

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյամի ամփաճ լեզվի իմսայիառու

Տիեզերքի առարկաներն ու երևոյթները մարդու զգայաբանների միջոցով արտացոլվում են նրա ուղեղում՝ ստեղծելով աշխարհի պատկերը։ Սակայն կրթօնքն ըե իրականության արտացոլումը վերաբռնդում է աշխարհի թեկուց և հարաբերականորեն ամրողացնելու պատկերը, փաստորեն կնշանակեր աղքատացնել իրականության պատկերը։ Իրականում աշխարհի արտամարտական կադարձարումը անանառնելութեն և հաստատապես ենթադրում է լեզվական պատկերը, որը երբեմն համընկնում է նրա հետ, երբեմն էլ հակասում մեծ մասամբ նրա համեմատությամբ հանդես գալով ինչ-որ չափով տեղաշարժված։¹

Այս կապակցությամբ ակադ. Գ. Զահեռլյանը գրում է. «Համընդհանուր լեզվաբանական կադարձարի կառուցմանը պես ու նպատակառդդված լինի ոչ միայն նկարագրելու, այլև, կնելով լեզվաբանական համակարգերի կառուցման միասնական սկզբանքներից, մեկնարաններու այն ոչ իրքն ենթափակ համակարգ, այլ իրականության արտապատկերում, որն ընդոնելի կլինի, եթե կառուցվի աշխարհընկալման ընդհանուր տեսությունը և կիրառվի լեզվի՝ որպես նրա դրսերումներից մեկի նկատմամբ»²։

Պոյները, իրենք իրականության մեջ աւկս օրյեկտներ, նշանայնության հասկանիշով արտապատկերում են լեզվում, այդ պատկերը տարրեր լեզուներում տարրեր նշանակումներ կարող է ստանալ:

Իրեն օրինակ թերենք ծիածանի գոյների անվանումները, որոնք, ի տարրերություն հայերենի և ռուսերենի, անզլերնում վեցն են:

Հայերեն	Կարմիր	Նարնջագույն	Դեղին	Կանաչ	Երկնագույն	Կապույտ	Սանտչակագոյն
Ոտոսերեն	Կրաս-ովայի	Օրանժե-վայի	Ժել-տայի	Զելե-նայի	Голубой	Синий	Фиолето-վայի
Անգլերեն	Red	Orange	Yellow	Green		Blue	Purple

Մեր խնդիրն է գտնել զունանումների համարտուսախանակներ հայերենում և ռուսերենում, որը բոյլ կտա սպարզելու զունանումների բազմազանությունը և դրանց բանակական կազմը նշված լեզվում էրում։

Զանի որ լայսը, նրա տարրապատճեմը և համադրությունը ֆիզիկական երևոյթներ են, ապա այդ բնագավառուից ընդունենք մի քանի դրույթներ՝ որպես մեր եղրակացությունների հիմք։

Հայտնի է, որ մարդուն տևաանելի սպիտակ լույսը միատարր չէ, և այն տարրալուծելիս առաջանում է մի գունավոր շերտ, որի մեջ գույները դասավորվում են ըստ ալիքային երկարությունների (անս աղյուսակ 1):

Աղյուսակ 1³

Զգացողություն (գույնը)	Ալիքի երկարությունը nm = 10^{-9} m
Կարմիր	770-630
Նարնջագույն	630-590
Դեղին	590-570
Կանաչ	570-500
Երկնագույն (մով)	500-470
Կապույտ	470-435
Մանուշակագույն	435-390

Անշուշտ, գույների հման մեկնաբանումը պայմանական է, քանի որ իրականում գույների միջև սահմանագծերը հստակ չեն. առաջանում են բազմաթիվ տողեր, որոնց շնորհիվ էլ անցումը մի գույնից մյուսին հարք է: Գործնական նպատակներով որպես հիմնական գույներ ընդունվում են կարմիրը, կանաչը և կապույտը, որոնցից համադրվում են բոլոր գույները: Ժամանակակից համակարգիների օգնությամբ կարելի է համարել 15625000 երանգ:

Գունային տոների բնական սանդղակը սպեկտր է, որի մեջ մշտապես սկավառակում է գույների միևնույն հաջորդում՝ մասնաշակագույնից մինչև կարմիր: Խառնելով եզրային մանուշակագույն և կարմիր գույները՝ կատանանք սալեկարի գունային անցումներ, որոնք անվանվում են ծիրանի: Մարդու աչքը կարող է տարրերակել մոտ 180 սպեկտրային գույն, որից 30-ը բաժին է հասնում ծիրանիի երանցներին:

- Օպտիկայում բացահայտվել են գույները խառնելու հետևյալ օրենքները:
- 1) Սպեկտրային գույները խառնելու ստացվում է սպիտակ:
 - 2) Միատեսակ երևացող գույների (անկախ դրանց ծագման եղանակներից) օպտիկական խառնուրդը տալիս է միևնույն արդյունքը:
 - 3) Ամեն մի գույնի համար կարելի է ընտրել այնպիսի մի գույն (կոչվում է լրացուցիչ գույն), որոնք խառնելու ստացվում է սպիտակ (տե՛ս աղյուսակ 2):

4) Ոչ լրացուցիչ գույներից ստացվում են գույներ, որոնց գունային տոնը գրավում է միջանկալ դիրք խառնվող գույների նկատմամբ (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 2⁴

Գույն	Կարմիր	Նարնջագույն	Դեղին	Կանաչ	Լեռակագույն	Կալորի	Մանուշակագույն
Լրացուցիչ գույն	Կապտականաշալուն	Կապույտ	Մանուշակագույն	Ծիրանի	Դեղին	Նարնջագույն	Դեղնականաշալուն

Աղյուսակ 3

	Մանուշակագույն	Լեռակենի կապույտ	Երկնագույն	Կապտականաշափուն	Կանաչ	Կանաշափուն դեղին	Դեղին
Կարմիր	Ծիրանի	Մուգ վարդագույն	Բաց վարդագույն	Սպիտակ	Բաց դեղին	Ուկեգոյն դեղին	Նարնջագույն
Նարնջագույն	Մուգ վարդագույն	Բաց վարդագույն	Սպիտակ	Բաց դեղին	Դեղին	Դեղին	
Դեղին	Բաց վարդագույն	Սպիտակ	Բաց կանաչ	Բաց կանաչ	Կանաշափուն դեղին		
Կանաչափուն դեղին	Սպիտակ	Բաց կանաչ	Բաց կանաչ	Կանաչ			
Կանաչ	Բաց կապույտ	Ծովակնագույն	Երկնագուն կանաչ				
Երկնագուն կանաչ	Ծովակնագույն	Ծովակնագույն					
Երկնագույն	Լեռակագույն կապույտ						

Հարկ ենք համարում նշել, որ անհրաժեշտ է տարբերել գույների խառնելը ներկերի խառնելուց. Վերջիններս իրար խառնելով հնարավոր չեն սուսակ սպիտակ գույն:

Ահա զոյների այսպիսի բազմագունուրյունը ցանկության ենք զուգադրել Խամաստասիստ զունաւունների հետ, որոնք ամրագրված են նշված երկու լեզուների բառարաններում:

Համեմատառյանը սկսենք սպեկտրի հիմնական զոյները նշանակող զունաւուններից: Է.Աղայանի «Արյի հայերենի բացարարակոն բառարանուն» սպեկտրի համար նշված է յոր հիմնական զոյն, սակայն նարնջագոյնի և մանուշակագոյնի համար «Փրքե սպեկտրի հիմնական զոյն» նշունները բացակայում են: Մանուշակագոյնը (իրքեւ սպեկտրի հիմնական զոյն) չի նշված նաև ոռուերենի բառարանում⁵: Այսինքն՝ սպեկտրը բառ հայերենի բառարանի ունի հինգ հիմնական զոյն, ըստ ոռուերենի բառարանի՝ վեց, իսկ իրականում՝ յոր:

Մեր կարծիքով դեղինի երտոնքներն արտահայտող զանանունները հայերենում ավելի շատ պետք են լինեն, քան ոռուերենում (ատորներուն ենք այդ զունաւունները⁶ և դրանց բարգմանուրյունները բառ «Հայ-ոռուերեն բառարանի»): Փակագծերում տրված բարգմանուրյունները հեղինակային են):

Բնակագծերում բառացուցում է մեր պիտույք:

Նման արյուներներ են ստուգվել նաև ոռուերենի բառարանների օգնությամբ կատարված փորձերից:

դեղին, ճիշի դեղնուցի կամ ոսկու զոյն ունեցող	желтый (золотой)
դեղիր, դեղին, դեղնավուն	(желтоватый)
դեղ-դալար, կանաչ	(незрелый, зеленый)
դեղձագոյն, դեղձի զոյն ունեցող	персиковый
դեղձան, բաց դեղնավուն, խարայաշ	светло-желтый (соломинный)
դեղձանագոյն, դեղձան զոյն ունեցող, խարովշագրույն	(ярко-желтый)
դեղնազօրչ, դեղնին տվող գորշ	темно-желтый
դեղնազոյն, դեղին զոյն ունեցող, դեղին զոյնի	желтый
դեղնադարչնազոյն, դեղնին տվող դարչնագոյն	(желтовато- коричневый)
դեղնադգոյն, դեղին ու դմզոյն	(бледно- желтый)
դեղնարուխ, դեղնին տվող բուխ	(темно-желтый)
դեղնարույր, դեղնազոյն, դեղին բուլում՝ զոյնով	(желтой масти)
դեղնամեռ, բաց դեղին, դեղնավուն	(желтоватый)
դեղնախառն, դեղին զոյնի պես խառն մեկ որիշ զոյն ունեցող	(с прожелтью)
դեղնականաչ, դեղին տվող կանաչ,	желто-зеленый
կանաչական	
դեղնականաչավուն, դեղին տվող կանաչ,	желто-зеленый
կանաչավուն	
դեղնակապտագոյն, դեղին տվող կապոյն,	(желтовато- синий), (синевато- желтый)
կապտափուն	

դեղնաւկապտափուն, դեղնին տվոր կարսոյտ, կապտափուն	(желтовато- синего оттенка)
դեղնաւկարմիք, դեղնին տվոր կարմիք	желто-красный
դեղնաւկարմավոն, դեղնին տվոր կարմիք	(желтовато- красного оттенка)
դեղնաւկինամոնագույն, դեղնին տվոր կինամոնадогуյն	(желтовато- коричневый)
դեղնաւկրմակ, դեղնին տվոր ճերմակ	желто-белый
դեղնաւմբոյն, դեղնին գույն անեցոյն, դեղնագույն	желтоватый
դեղնաւնարինջ, նարնջի նման դեղին, օսուրցազուրց դեղին	(апельсиновый)
դեղնաւնարինցագույն, նարնջի նման դեղին, նարնջազուրց դեղին	(оранжево- желтый)
դեղնաւշնկավուն, դեղնին տվոր շիկավուն	(желто- русый)
դեղնաշիկավուն, դեղնին տվոր շիկավուն	(желто- рыжеватый)
դեղնաւաշխետ, դեղնավուն աշխետ, դեղնին տվոր աշխետ	(каурий) рыжеватый
դեղնաշոքք, դեղնավուն, կրեմի գույնի	(кремовый)
դեղնասպիտակ, դեղնին տվոր սպիտակ	(желто-белый)
դեղնասպիտակագույն, դեղնին տվոր սպիտակ	(желто-белый)
դեղնասպիտակալուսին, դեղնին տվոր սպիտակ	(желто-белый)
դեղնատվարդագույն, դեղնին տվոր վարդագույն	(розовато- желтый)
դեղնաւլին, դեղնին տվոր, քաղ դեղին	желтоватый
դեղներանգ, դեղին երանց ունեցող	желтоватый
դեղնորսակ, դեղնին տվոր, դեղնավուն	желтоватый
դեղնուկ, դեղնավուն, դեղնորսակ	
լասրոյաշ, ոսկեգույն դեղնին և շագանակացայնին տվոր գույն	русый, светловолосый

¹ Բրուոյան Գ.Ա., Փիլիպփայորյան և լեզու, Երևան, 1972, էջ 31-31:

² Ճյայկու Ռ.Բ., Սնունչալուայթական տեսակականություն, Մասնակի համար և առաջարկ աշխատակիցների համար, Երևան, 1999:

³ Առքերս Ուսուցյան, Վահագիմիք Սահակյան, Web-պլուայն, Երևան, 2002:

⁴ Կոխլինգ Խ. Սправочник по физике, Москва, 1982:

⁵ Словарь русского языка, т. 1 – 4, М., 1985-88:

⁶ Է.Ալյալյան, Արդի հոյերինի բացադրական բառարան, Երևան, 1976:

ՀՀ ԳԱԱ Կ. ԱՃԱՋԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԽԵՍԻՏՈՒՏ

ԶԱՌՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ-2007

Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ
(Երևան, ապրիլի 3-4, 2007թ.)

Институт языка им. Р. АЧАРЯНА НАН РА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ-2007

Доклады республиканской научной сессии
(Ереван, апрель 3-4, 2007 г.)

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA

JAHKULIAN READINGS-2007

Republican Scientific session reports
(Yerevan, April 3-4, 2007)

ԵՐԵՎԱՆ
ՎՎ
«ՎԱՆ ԱՐՅԱՆ»
2007

Հրատարակիչ-խմբագիր՝
Վան ԱՐՅԱՆ

Համակարգչային ժեռավորումը՝
Ո. ՈՒՌՈՒՏՅԱՆԻ

Չափը՝ 60X84, 1/16: Ծավալը՝ 12 տպ. մամուլ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300 օրինակ

Տպագրվել է «Վան Արյան» իրատարակչատան տպարանում

[2000 րդ.]

Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0170662

A

II

95293